

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

U. Ujruuap
Ujruuap
yuu
yuuuuhle 1925jo

291.99
UR-74

ARMENIAN LIBRARY
401 SHAWMUT AVE.

JAN 18 1933
JAN 23 1938

JUN 9 1940

MAY 25 1941

OCT 19 1941

NOV 9 1941

NOV 23 1941

MAY 29 1943

JUN 13 1943

JUN 27 1943

JUN 4 1944

AUG 6 1944

JAN 14 1945

MAY 27 1945

OCT 14 1945

JUN 30 1946

MAR 9 1947

JUL 6 1947

AUG 10 1947

1158
AUG 17 1947

NOV 9 1947

SEP 5 1948

DEC 19 1948

OCT 8 1950

AUG 5 1951

AUG 19 1951

JAN 13 1952

FEB 17 1952

~~MAR 28~~ 1954

FEB 18 1955

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ. — ԹԻՒ 4

891.99

S-74



ՄՐԲՈՒՀԻ ՏԻՒՍՈՒՐ

Ա Ր Ա Ք Մ Ի Ա

Կ Ա Մ

ՎԱՐԺՈՒՀԻՆ



Կ. ԳՈՂԻՍ

—
1925

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒ Հրասարակչական Ընկերութիւնը քաջալերուելով ՍԻՐԱՆՈՅՇԻ գրած ջերմ ընդունելութեան՝ մեր ընթերցողներուն բուն պահանջին գոհացում տալու համար, ձեռնարկեցինք հրասարակել սոյն հեղինակուհիին՝ ԱՐԱՔՍԻԱ կամ ՎԱՐԺՈՒՀԻՆ :

Վասան ըլլալով քե ներկայ բարեբու ապականուած շրջանին մէջ լաւ բան մը բրած եղանկ սոյն խիստ բարոյեացուցիչ երկին Բ. Տպագրութիւնը ի լոյս բնծայելով. լեզուն եւ ոճը անաղաղս պահեցինք այն համոզմամբ որ լաւագոյնն է :

20 Մարտ, 1925.

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐԸ



ԱՐԱՔՍԻԱ

Կ Ա Մ

Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի Ն

Ք Լ Ո Ւ Խ Ա.

188... տարուան Բարեկենդանի օր մ'էր : Բերայի փողոցաց մէջ տարօրինակ շարժում կար : Անհամար գիմակներ խուճր խուճր կ'անցնէին զիրար ընդհարկանելով, իրարու զրգոյիչ խօսքեր ուղղելով, խնդարով, գլորելով, երգելով, ճիչեր արձակելով :

Բարեկենդանը կարծես մասնաւորապէս կարգազրուած է ի սիրտիս ընկերային խոնարհագոյն գասուց, որպէս զի իրենց աննպաստ վիճակը ճանաչելով՝ անոնք ջանագիր լինին ուրանալու գայն, պահուելով վայրիկ մի այլ և այլ զգեստուց ներքեւ, և առժամանակեայ տարբեր վիճակ մի փոխ առնելով՝ ուրիշ անձնաւորութիւն մի ձեւանան, և այսպէս իրենց ազքատութիւնն ու զժրագոյթիւնը մոռնան կեղծ երանութեան գիմակին ներքեւ : Ուտոյի Բարեկենդանի նիւթական կատակերգութեան մէջ բարոյականի կատակերգութիւն մ'ալ կը գոյանայ, այնչա՛փ մարդիկ իրենց եղածէն այլ և այլ տարբեր երեւոյթներ կը ներկայեն :

Եթէ նոյն պահուն և սահմանեալ ժամանակի համար միայն ազքատն իւր ախուր վայրկեանները կը մոռնայ կենդանութեան և խրախճանաց հոսանքէն մղեալ, հարուստը կենաց ճոխ միօրինակութիւնը կը ճգնի ընդհատել, իւր ձանձրոյթը փարատել, և պարսպոյ նեղանալի ժամերը գոնէ ձայնիւ, աղմկով, նուա-

զարանով, հացկերոյթով, սրբով, շարժմամբ և տար-
օրինակ կենդանութեամբ զբաղեցնել:

Մինչ փոխ անուամ անչուք զգետուց ներքև
աղքատը իւր չքատարութիւնը կը ծածկէ, ինչպէս և
զէմբը կ'սքողէ կեզտոտ դիմակի ներքև, նոյն միջո-
ցին զեղեցիկ տիկնայք, փայլատակող աչօք, գոհ իմն
կերպարանօք զոր կ'ազգէ իրենց դիմական շնորհաց
գիտակցութիւնը և հանգերձեալ զուարճութեան մօ-
տալուտ յուսով, այլ և այլ խանութիւնը կը խոնին, մին
ծաղիկ մի կը գնէ, միւսը մետաքսեայ կերպաներ,
երրորդ մի՝ ծպտուելու զարդեր, և չորրորդ մի՝ գիմա-
կան աղքատութիւնը ծածկելու և կամ շրեղութիւն-
ներն սեղցնելու արուեստական միջոցներ որոնելու
համար, երեկոյթի և կամ այլ և այլ ազգային ու տար-
ազգային պարահանդէսից մէջ փայլելու ու զօճեր բնե-
լու արամազրութեամբ:

Հո՛ւ՛ որմին վրայ կ'զամ Ազգ մի նոր հանգէս մի,
նոր զուարճութեան աղբիւր մի կ'սակեալ յագեցած հա-
րուստին: Հո՛ւ՛, նոր թատերական ներկայացում մի կը
խոտտանայ զրգիս տալ հիւճեալ ու մաշած կրից և
զգացմանց: Երրորդ Ազգ մի վիճակահանութիւն մի կ'ի-
մացնէ ճակատագրին գոհից ի նպաստ: Այդ հանգէսին մէջ
բազմաթիւ շքնաղ և շնորհալի տիկնայք իրենց սրտին
զանձուց փսմ թեյադրութեանց անալով՝ ժպտով,
քաղցր բոտով, ազնուական և քնքոյչ ձևով ի պայ-
քար կը մտնեն զիրար գերազանցելու յօժարութեամբ,
ի պէտ թշուառաց ստուարացնելու համար այն յումա-
ներն որք հարուստին զբաղանէն պիտի ելնեն, և կամ
զթոտ սրտերէ պիտի բղխին:

Երկնային և արդարեւ կնոջ նազանքը՝ երբ այն
կը ծառայէ աչքէն լեղի արտօսը մի ջնջելու, անօթու-
թենէ ծնած հառաչը խափանելու, և կամ մայրենի

սիրտը կը թնոյ վիշտը թեթեւցնելու: Յայնժամ զթու-
թիւնը զեղեցութեան ու շնորհաց ներքև անձնաոր-
եալ կ'ապաստանի: Գթութիւնն անթառամ ծաղիկ մ'է
որ կը ծլի մարդկային՝ մանաւանդ կնոջ սրտին տը-
տին մէջ:

Մինչ ուրեմն ամեն կողմ գոհունակութեան ազմիա-
լից ձայներ, շաչիւն կտուայ, շարժում և երթևեկու-
թիւն կային, բնոյճակառակն Բերայի առանձնացեալ ու
անչուք փողոցի մը մէջ երեք փոքրիկ սննեակներէ բաղ-
կացեալ կիսուեր տան մի մէջ՝ արտասուաց ու հառա-
չանաց բարեկենդանը կը աօնուէր:

Ո՛վ սրտածմլիկ հակապատկեր կենաց, մերձ այն-
չա՛փ խնդութեան ու խորխճանաց՝ այնչա՛փ սուղ և
յուսահատութիւն:

Այդ անակին մէջ կը բնակէր տարարազ Վարսամ-
եան բնտանիքը, երեք անձերէ բաղկացեալ: Հայր մի
կաթուածահար՝ ոչ այնչափ ամաց բեռէն ճնշուած,
որքան բազմին հալածանքէն: Այդ մարդը բարեսիրտ,
զգայուն և քաղցրարարոյ էր, բայց մտաւորական կա-
րողութեամբը սովորական կարգի անձերէն շատ վեր
չէր բարձրանար: Փոսք գործունէութեան ու խնայու-
զութեան՝ յաջողած էր գոհացուցիչ հարստութիւն մի
հաւաքելու: Բայց զայն կրկնապատկելու տենչն զրգեց
զՊ. Վարսամեան՝ Պօրտալի խաղերուն զիմել: Մեծամեծ
յոյսերով մտաւ նա յայդ զբամական վայր անիծից՝
ուր մէկ վայրկեանի մէջ աճաղին հարստութիւնք կը
քայքային, և ուսկից բնչաւէտը դուրս կ'ելնէ կտուա-
րելապէս աղքատ՝ հոգեւոյն մէջ մահը կրելով. և յայն-
ժամ նա իւր անգորբաւէտ բնտանիքը ճոխութեան և
առատութեան մէջէն հանելով՝ յանկարծ կը գահալիծէ
զայն զրկանաց և անօթութեան գողը:

Նոյն տխուր բախտին վիճակուեցաւ և Պ. Վար-

սամեան, յոյսերը փշրուած, քասկը պարպուեալ, պարտաւորեցաւ ունեցածները վաճառել պարտքերը գոցելու համար. և այսպէս զիւր բնտանիք մասնեց կատարեալ աղքատութեան, ինչպէս և զիւր անձ անգործութեան՝ կաթուածահար լինելով յուսահատութեանն սաստկութենէն:

Բայց ինչ որ Պ. Վարսամեանի վիշտը կը զայրացնէր՝ այն պաղափարն էր որ կ'ընծր մերձաւոր ազգականաց մին, ի մահի՞ճ մահու, իրեն յանձնած էր իւր որբ որդւոյն նիւթական շահուց վրայ հսկելու նուիրական պաշտօնն. և ահա պատանեկին հարստութեան մէկ մասը կ'ոչնչանար Պօրտալին մէջ երբ ինքն ի կորուստ կը դիմէր: Սակայն գումարին մեծագոյն մասը ազատելու յաջողելով, Պ. Վարսամեան փութացած էր յանձնել զայն Սիսակ երիտասարդին որ ի Փարիզ կը գտնուէր նոյն պահուն՝ ուսմունք առնելու համար, և որ հարկ եղած տարիքն ունէր իւր շահուց վրայ ինքն անձամբ հսկելու համար վերջապէս:

Բայց այդ տառապելւոյն կիներ թէեւ աղքատութեան զաւակ էր, այլ մեծամիտ և ամբարտաւան բնութիւն մ'ունէր: Ուստի յուսահատութեամբ կը մտչէր առանց համակերպիլ ուղելու այն տխուր վիճակին որ զէպրերը պատրաստած էին իրեն: Ոչ ամուսնոյն զժընժակ գիրքը, և ոչ ալ աղջկանը տառապելի կացութիւնը կարող կը լինէին յաղթել իւր գոռոզութեան, և զրգել զինքը աշխատութեան մէջ ապրուստի միջոց մը որոնելու:

Իսկ այս երկու ամուլից գուստրն՝ Արաքսիա, կարծես չհաշխարհիկ ծաղիկ մ'էր որ օդէ և լոյսէ զրկուած տեղուց մի մէջ կը բողբոջէր գեղանազ և կը բուրէր անոյշ:

Բնութեան հրաշալեաց մէջ բնորեկագոյնն է կոյսն որ գեղով ու պարկեշտութեամբ կը փայլի: Երբ Արաքսիա կը նայէր՝ աչերէն արեւ կը ցոլար. իսկ երբ կը ժպտէր՝ կարծես թէ շրթունքը կոկոն մ'էր որ ի լոյս կը բացուէր: Իսկ գլուխը ծռած սեւ երկայն մազերն երբ կուրծքէն վար կը կախուէին, կարծես թէ սոց երբ կուրծքէն վար կը կախուէին, կարծես թէ սոց արձան մ'էր տխուր ուսնեօք սքողեալ, ա՛յնքան իւր ճերմակ կանոնաւոր գծագրութիւնը այդ մութ շրջանակէն առաւել պայծառ դուրս կը ցայտէր: Երբ կոյսն կը քայլէր՝ թուէր թազուհի մի որ կ'ընթանար ի գահակալութիւն սրտերու, այնչափ իւր բարձր հասակը յինքն ունէր վսեմ պարզութիւն:

Սքանչելի ինչ է ըստ ինքեան գեղեցկութիւնը, բայց կրկին յարզ կ'ստանայ այն՝ երբ կիներ կ'անդիտանայ իւր առաւելութիւնը և կը ներկայանայ զուտ պարզութեանը մէջ, առանց արուեստական սեթեւեթի խօսքերու, շարժմանց և նայուածոց, ինչպէս որ էր մեր օրիորդը: Բայց որպէս զի նա բնութեան կատարեալ հրաշալիք լինէր, օժտուած էր խելքով և սրտով նաեւ, ինչպէս և զօրաւոր կամքով. իրեն համար ուղիւր՝ կարենայ էր:

Էականեր կան որք գաստիարակուած կը ծնանին կարծես. հետեւարար մտաւորական կամ բարոյական որ և է խնամք այնպիսի զարմանալի արդիւնք կ'արտադրեն այնպիսեաց վրայ որ անհամեմատ կերպիւ կը գերազանցեն չափն իրենց մատակարարուած խնամոց:

Արաքսիայի ծնողքն՝ երբ տակաւին իրենց նիւթական կարողութիւնը կը ներէր, ջանադիր եղած էին տալ իրենց գտեր այն գաստիարակութիւնը որ սովորական ինչ եղած է արդի ժամանակ, այսինքն ոչ թէ միտքը ստուգապէս ճոխացնելու նպատակաւ, այլ լոկ արտաքին զարդ մի տալու համար: Հայերէն գրել և

կարգալ չափա սրապէս, նոյնպէս և գաղղիերէն՝ այդ բառական համարում է ի մեզ պանծալու համար թէ օրինաւ որ գատտիարակութիւն մի չնորհում է օրիորդի մը ։

Բայց ոչ այնպէս մտածեց Արաքսիա, զի անոր խոհուն միտքը անյազ էր ուսման մասին ։ Գիտութիւնը հանք մ'էր իրեն համար որ հետզհետէ անոր խաւերը պեղելով ևւս քան զեւս կ'ուզէր խորն իջնել, ու որչափ խորը թափանցէր՝ նոյնչափ կը ձգնէր յատաջ երթալ, մերձենալ գիտութեան անյատակ յատակին որ շարունակ խոյս կուտար իրմէ ։

Յետ աւարաման մայրենի լեզուին հետեւեցաւ գաղղիերէնին, օղնութեամբ գիտուն գասատուի մի որ ուսման ովկիանը կը ծառայէր անոր հետաքրքիր մտաց առջև ։ Օրիորդն ուսումնասիրեց մանաւանդ հին և նոր փիլիսոփայութիւնը, բաղդասեց, քննեց, մտածեց, և վերջապէս այդ բնթերցումն նպաստեց իրեն, փոխանակ բոլոր հաստատում սովորութեանց, կարծեաց և նախապաշարմանց կուրօրէն հետեւելու, ինքնիրեն ազդու կամք մը գոյացնելու և այլոց վրայ ներդրածելու ։ Գծեց անձին շաւիղն ուր պիտի բնթանար, մտածելու և գործելու ազատութիւնն ուզեց ունենալ, և նոյն ազատութեան մէջ, սակայն արժանապատուութեամբ վեր կանգնել իրր կին առաքինի, և անդամնել բնկերային գաճաճներն որք յօրիորդս կը պարստեն՝ մտածելու, խօսելու և արբութեամբ սիրելու ազատութիւնն, քանի որ մարդս ազատութիւն և սէր վայելելու համար ծնած է ։

Արաքսիա կ'ուզէր բնութենէն չնորհում իրաւունքն պահել անձին, կ'ուզէր օգտակար անհատ մը բլլալ՝ առանց իրր լսի բնկերային զարդ հանդիսանալու, թէև մօրը հետ հակապատկեր մի կը ձեւացնէր

կարծեաց և զգացմանց մասին, սակայն առանց բնութեան վհատելու կը մրցէր մօրն բնոյզմ և անդեղուուն քայլիս կը յարատեւէր նոյն շաղին մէջ որ գծած էր ինքզինքին ։

Գ Լ Ո Ւ Ք Բ,

Ոչինչ այնչափ մարդս կը ձմիէ որչափ ուրախութեան ձայները յուսահատութեան մէջ ։ Հողին կ'զգայ տարբերութիւնն այն որ կը փրէր գոճ էակաց և իւր նսեճ վիճակին մէջ, և այդ բաղդատութիւնն առաւել ևւս ցաւոց բեւր կը ծանրացնէ ։

Քարեկենդանի երկարաձիգ վանկերը երբ վարսամեան բնասնեաց ականջը կը հասնէր՝ իրենց հոգւոյն վէրքն առաւել ևւս կ'արթնէր ։ Մէն մի հասաչ սրափ փոխանակ ազատօրէն գուրս ելնելու զոչդն փոփանք պատճառելով, բնոյճակառակն իւր բնթայրին մէջ կիսատ մնալով յետս կ'ընկրկէր, և այն հասաչը՝ իրր շիթ տառապանաց, սրտին վրայ սասելով անոր շարժումը կը գանգաղեցնէր ։

Ձգայտուն հայրը կը լսէր այդ խրախճանայ հնչիւններն, և ցաւալից ակնարկ մի կը նետէր իւր սիրելի գոտեր վրայ, սրուն ոչ միայն ուրախութիւն չէր կրնար պատճառել այդպիսի ուրախատիթ տօներու միջոցին, այլ և նոյն խեղ սեղանի պարզ խնճոյք մի անկարող էր մատակարարել անգամ ։ Գորովազութ հայր մի առ ոչինչ կը համարի իւր ցաւերը, ամեն բանի կարող է համբերել, միայն թէ իւր սիրոյն ծնունդը զերծ մնայ վշտերէ և զրկմանէ ։

Պ. Վարսամեան իրր յանցաւոր կը նայէր կնոջը, և իրր թէ ինքն կամաւոր պատճառ լինէր իրենց թշուառ

կացութեան, ոչինչ կը համարձակէր բռնի և ոչ իսկ ողբայ բացարձակապէս: Ինքն իրեն կը հիւժէր, և գտերը սիրոյ նայուածքին և գուրգուրալից խնամոց մէջ կը գտնէր միսթարութիւն, մանաւանդ այն գտնն պարագայից մէջ որք հետեւանք էին կնոջը կծու յանդիմանութեանց:

Կան այնպիսի կանայք որ զոգցես կ'ուզեն բազմակից լինել իրենց ամուսնոյն բարեբաւտ աւուրց, և չեն ներք որ և է զժբաղգութիւն ուսկից իրենք բաժին պիտի ունենան: Իբր ընտանեաց ստտան սրբամտութիւն և գանութիւն կը չնչին, և զժգոհութեան թոյն կ'արձակեն իրենց շուրջը:

Այդ կարգի կանանց կը վերաբերէր և Տիկին Վարսամեան: Հակակրութեամբ կը նայէր ամուսնոյն առանց ի նկատ առնելու այդ հէքին թշուառ կացութիւնը: Նա մանաւանդ այդ հակակրութիւնն առաւել եւս կ'արձարձէր հաստատելով իւր անկարողութիւնը զաւելին մատակարարելու կենաց անդորրն ու շքեղութիւնը: Տիկինը եթէ անտիրտ ամուսին էր, ընդհակառակն մայր էր գորովագութ:

Կինը չատ հակառակորդներ, թշնամիներ, զրպարտիչներ ունեցաւ. բայց ո՞վ արդեօք համարձակած է մօր սուրբ անունը սրբապղծելու: Կինը ամբողջ իւր սիրտը ու հոգին մայրենի զգացման մէջ բովանդակած է, այսինքն իւր էութիւնը ուրիշ փափուկ էութեան մէջ ամբիտիւմ է, և անով փսիմ անձնութեան պատկերը հանդիսացուցած է: Անոնք որ չար մայրեր են պարզապէս մայրութեան ճիւղներն են, անարժան մօր սրբազան անունը կրելու. հրէջներ են սոսկ որք կը յղանան և ծնունդ կուտան:

Տիկին Վարսամեան կը լսէր ցնծութեան աղաղակները փողոցին մէջ, և անոնք նոյնչափ խայթոցներ

էին իւր մայրենի սրտին, և նոյնչափ սլաքներ իւր սրտմտութեան: Աննպատակ կերթար կուգար մէկ սենեկէն միւսը յուզեալ կերպարանօք և քայլուք: Վերջապէս իբր թէ ընկճեալ ցառոց սաստկութենէն, նրստաւ աթոռակի մը վրայ իրենց գրեթէ կիսամղրկ սենեկին մէջ ուր բազմած էին այրն ու գուտորն, և աչերը յառելով աղքատիկ սեղանի մը վրայ որ մաքուր բայց հին ձերմակ կտաւով ծածկուած էր, յուսարեկ ըսաւ.

— Արաքսիա՛, ահա՛ և քու Բարեկենդանդ. ահա՛ քեզ մեր արտունջներն և արտասուքը իբր զուարճութիւն և խնջոյք... կանդ առաւ, կլլեց հեծկտանք մի, և ապա յարեց. ահա՛ քեզ, զո՛ւտոր իմ քիչ մը հաց ու պանիր, սեղանը ցոյց տարով:

Արաքսիա հօրը քովէն ելնելով ի հապճեպ գէպ ի մօրն ընթացաւ, և ձեռքը բռնելով ու համբուրելով զայն, ըսաւ.

— Մա՛յր, բաւ է ինձ որ դուք ողջ առջ լինիք և լաւագոյն Բարեկենդան չեմ խնդրեր: Ես երիտասարդ եմ, քսան տարի ապրած եմ տակաւին, կեանքն ինձ համար է, ժամանակ ունիմ վայելելու զայն: Բայց զո՛ւք, մա՛յր իմ, զո՛ւք պէտք ունիք կենաց վայելմանց:

— Զայդ հօրդ ըսէ, որդեա՛կս:

— Մա՛յր, մի՛ ընդ վայր յանդիմաններ հայրս. ինքը չեղա՞ւ արդեօք առաջին զոհն իւր տարապայման վիճակին:

— Թո՛ղ առաւել լըջամիտ լինէր, և իւր գրամներն ընդ վայր վտանգի չենթարկեր:

— Բայց, մայրի՛կ, այնչա՛փ գործունեայ և կարող անձինք նոյն զժբաղգութեան չհանդիպեցա՞ն արդեօք:

— Թող աւելի զԳՅՅ լինէր, և խաղի երազոց չմատներ իւր հարստութիւնը: Պարզամիտ մարդուն

վերջն անշուշտ այս կը լինի: Անոնք որ անկարող են իրենց ընտանեաց յաջող ապագայ մի պատրաստելու գոնէ չամուսնանան և շատ մը անմեղներ դժբաղդութեան թող չգատապարտեն:

— Սակայն, մա՛յր, փառք հօրս՝ բազմաթիւ տարիներ երջանիկ ապրեցանք: Եթէ ինքն անկարող է արդ մեր ապրուստը հողալու, իմ պարտքս է աշխատիլ՝ և ըստ կարողութեանս, հանդիստ կացութիւն մը ապահովել ձեզ:

— Գարձեա՛լ աշխատութեան խնդիրն յատա՞յ կը բերես, Արաքսի՛ա:

— Մի՛ նեղանար, մա՛յր, բայց այս պիտի լինի հանապազօրեաց խօսակցութեան նիւթս մինչև որ թոյլ տաս ինձ մեր ասօրեաց ապրուստը հողալու:

— Ցառօք կը նկատեմ մինչև աչգ աստիճանի նուաստանալու յօժարութիւնդ, Արաքսի՛ա:

— Արք՝ որք երկրացի իշխաններ են, կը նուաստանա՞ն արգեօք գործելով, մա՛յր.

— Բայց այգ տարրեր խնդիր է, զի արք ծնած են իշխելու համար:

— Արեւմն աշխատութիւնը ոչ մ'է քանի որ անով զօրաւոր եղած է հակառակ սեւը:

— Բայց անոնք մեծ պաշտօններու կիրառութեամբն է որ մեծ հանդիսացած են աղջիկս:

— Եթէ արանց ամենքն ալ բարձր գիրքերու ձրկաէին, որո՞նց արգեօք սահմանեալ պիտի լինէին անշուք պաշտօնները, մա՛յր: Մարդկութիւնը սանդուղ մ'է որ ամենէն ստորին աստիճանէն կ'սկսի մինչև ցրարձրագոյնն հասնելու համար. առաջին աստիճանը արձամարձելի չէ քանի որ միւսներուն ներդաշնակութեան կը ծառայէ:

— Գո՛ւտոր իմ, գո՞ւ կ'ուզես լինիլ արեւմն այգ

առաջին աստիճանը ասկից մարդիկ արձամարձտ քայլիւ անցնին երթան բարձրագոյն կէտի մը ելնելու համար: Գու ուրեմն կը կամի՞ս անդսնելի լինիլ, եպիսկոպի լինել, այլոց հրամաններն ընդունիլ և անոնց քմահաճոյից խաղալիք լինել:

— Եթէ մտաւորական կարողութիւնքս կամ զիտութեանս չափաւորութիւնը զիս համեատ աշխատութեան կը հրաւիրեն, ինչո՞ւ իմ բուն արժէքս ձանձկելով արժանաւորագունից զերազանցութիւնը չընդունիմ: Ինչո՞ւ կ'ուզես որ նուաստանամ այլոց հրամանատարութեան ներքեւ լինելով:

— Զայց, չգիտեմ, գո՛ւտոր իմ:

— Գի՛տէ մա՛յր, ամեն աստիճանի պաշտօններն պատասխանատուութեան մ'ենթարկուած են, նա մանաւանդ գործին կարեւորութեան աստիճանին կը համապատասխանեն մարդկանց ստանձնած պատասխանատուութիւնը: Թագաւորներէն անգամ համար կը պահանջուի, կը տեսնես ուրեմն որ ոչ ուրեք կայ կատարեալ անկախութիւն գիրքի:

— Բայց գու ի՞նչպէս կը խորճիս չէ՞ս զլար որ եթէ ընտանեաց մէջ գաստատութեան երթաւ, աղախնոյ մ'աստիճանին պիտի իջնաս:

— Ետիս, մա՛յր, տակալ միտք մի որ ուսմունք կը սովորեցնէ, ոչ երբէք կը նուաստանայ:

— Եւ սակայն քանի՞նքն կ'արձամարձեն զայն տրուած թոշակն ի նկատի առնելով:

— Ինչ որ օրինաւոր վարձատրութիւն մ'է խրդձամիտ աշխատութեան, պատուաւոր է ամեն ժամանակ յաչս իմաստուն և լրջամիտ անձանց: Իսկ բթամտաց զատողութիւնը կ'անդոտնեմ, մա՛յր:

— Եւ սակայն ամենքը իմաստուն չեն, և տկարամիտք կը կազմեն մարդկութեան ստուարագոյն մասը:

— Ինչ որ խեղացի անձանց հաւանութեան և ծափահարութեան արժանի է, անմտաց հակակրութեան և թշնամանաց առարկայ է ընդհանրապէս: Քանի որ կա՛մ առաջին կա՛մ երկրորդ տեսակ մարդկանց ջատագովութեան կամ պարտաւնաց պէտք է վերջապէս ենթարկուիլ, անտարակոյս որ նախապատիւ կը համարիմ գովուիլ յառաջիններէ և չհաւնուիլ երկրորդներէն:

— Բայց չե՞ս մտածեր որ տունդ դուրս այլուր բնակելովդ ընկերային վիճակդ կը խոնարհի, հետեւապէս՝ եթէ հարկ է որ ազատօրէն խօսիմ քեզ, անչուք ամուսնութիւն մի կրնաս երազել միայն:

— Մա՛յր, չեմ փափաքիր ամուսնանալ ինձ ապապագայ մի ապահովելու համար միայն, ես կարող եմ աշխատութեամբս թէ՛ դքեզ և թէ՛ զիւ ապրեցնել: Այլ թ՛յլ տուր ինձ յայտնել քեզ թէ ոչ երբէք բազմակից կը լինիմ անձի մի որ փոխանակ յարգելու զիս գործելու և աշխատելու տրամադրութեանցս համար ընդհակառակն կ'արհամարհէ զիս: Այգպիսի զաղափարաց տէրերն ես կ'այցականեմ, որով անհնարին է ինձ ամուսնանալ այնպիսեաց հետ մա՛յր:

— Ինչ որ կ'ուզես, ըսէ, ես չեմ ներեր որ մեր ընտանեաց անունն իբր վարձկան ստանձնելով՝ տնէ տուն շրջիս:

— Անօթութենէ կ'ուզե՞ս որ մի մեռնիլ ուրեմն, մա՛յր:

— Մինչև ցարդ չմեռանք փառք այն գոյգն օգնութեան որ մեր բարեկամուհին կը հասցնէ մեզ:

— Նախ, մա՛յր, այդ տիկինը բաւական հարուստ չէ, հետեւաբար անհնար է անոր օգնութեան վրայ վստահիլ միշտ: Երկրորդ՝ մի՛ մոռնար թէ ճշմարիտ մութրացկանի գեր կը խաղտնք քանի որ զրամ կ'ըն-

դունինք ստանց որ և է ծառայութիւն մատուցանելու փոխարէն:

— Բայց ո՞վ պիտի խմանայ թէ, մենք այլոց օգնութեամբ կ'ապրինք քանի որ այդ տիկինը չի յայտներ զայդ մէկու մի:

— Մա՛յր, ի՞նչ հարկ որ արիշները գիտնան երբ մենք գիտենք թէ ապօրինաւ որ օգնութեան առարկայ ենք. մեր խիղճը, մեր արժանապատտութիւնը բողբոջ չի՞ բառնար արդեօք: Բաժին կ'ունենանք տրիշի գոյքին, ստանց արգարացի իրաւունք մը ունենալու այդ գոյքին վրայ: Պարզեւատու տիկնոջ ասջեւ մեր գիրքը նուստս չէ՞ արդեօք երբ կարող ենք գործելու և կը վարուինք իբր թէ անկար լինէինք: Դու ինքդ գասէ և վճռէ: Յիշէ՛, որպիսի՞ խոնարհ ձեւ մի կ'ստնուս մէնք մի անգամ որ մեր բարեբարութիւն խոր յուման ձեւացող մէջ կը սպրդէ: Պարզեւատուին փափուկ և ազնուական ընթացքը արդեօք մեր խոնարհիլը կըրնա՞յ քօղարկել նոյն միջոցին:

5692-70

Գ Վ Ո Ւ Ք Գ.

Մինչ այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար, անտատուար խումբ մի գիտնական որ մարդկանց որք փողօցէն կ'անցնէին գուարթ ազազակներով օդը թնդապնէլով:

Օրիորդն բնազգամբ պատահանէն դուրս հայելով տեսաւ յանկործ թէ խոր ընկերութիւններէն մին գէպ իրենց տունը կ'ուղղուէր, և զայդ փութաց մօրն իմացնելու: Տիկինը յագուելով ընթացաւ ի հասցեայ գէպ ի սեղանն ուր զրուած էր հայն ու պանիրը, և զտնոնք մէջտեղէն վերցնելով՝ ընդ փոյթ՝ գուարթ գիմօք ընդունեցաւ զհիւր խոր գտներ:

Արախիս կամ



Սա՛ պարզ ու սիրուն երիտասարդուհի մ'էր, խարտեաչ և թարմ, խօսքերուն և զգացմանց մէջ անկեղծ: Բազմն այնչափ իրեն ժպտած էր մանկութենէն ի վեր որ կարծես թէ պէտք չէր ունեցած երբէք ստել կենաց ու մարդկանց: Փո՛հ կոյսն էր որ լիաթոք կը վայելէ գարունը իւր բուրմունքով և կը հրճուի նորա երգերով ու գոջներով. ինչպէս և կը վայելէ կեանքն իւր հանդարտ գուարթութեամբ: Միակ զաւակ հարուստ ծնողաց՝ նոցա յոյսն էր և լոյսը: Անգորր կենաց և գոհունակութիւն, չափաւոր ձիրքեր մտաց և առատ գանձեր սրտի, միշտ գուարթ կերպարանք մի, ա՜նա պատկերացած կը լինի մասամբ մեր աչաց՝ օրիորդ Վարդանոյշ Երանեան:

Մանկութեան ընկեր Արաքսիա՛ի բարեկամութիւնն աճած էր իրենց հետ: Երբ վարդանոյշ բացաւ սիկ գուարթ օր մ'ունէր տօնելու առաջին հրաւիրեալն Արաքսիան էր: Եւ երբ սա ախաւր էր, բարեսիրտ կուսին աչխոյժ կերպարանքին վրայ վայրկեանական մութքով մի կ'անցնէր:

Հոգի մի որ չէ առապած չ'ըմբռներ ըստ բաւականի այլոց ցաւը քանի որ հազիւ անոր մակերեւոյթին կը հաննի: Ո՛ւր գուշակէ նա թէ մէն մի ծալք սրտի վշտով ձեւացած է, թէ փոխանակ լուսատու և հարթ յատակի՝ սիրտը խաւար և խորունկ խոռոչներ կը պարունակէ, քարանձաւներու նման ուսկից բանտարկեալ հոգմբ սաստիկ սուլելով գուրս կը ցայտէ, նոյնպէս և բանտարկեալ հառաչը սեւ խորշերէն վիժելով, մոնչելով շուրջ կը ժայթքէ:

Թէև Տիկին Վարսամեան ամեն ճգամբ կը ջանար ծածկել իրենց հրաւորութիւնը օտար աչքերէ, սակայն խիտ անկատար կերպիւ կը յաջողէր. զի ազբատութիւնն հրէջ մ'է որ իւր ստակալի գլուխը կը ցցունէ ակ-

ոաները կրճտելով, այնչափ զրկանքն և նօթութիւնը կը գրգռէ զայն:

Բայց եթէ նշմարելի էր ամենուն սոցն բնտանեաց նեղ վիճակը, ոչ ոք կը գուշակէր սակայն թէ յետին ազբատութեան հասած էր այն, այնչափ Տիկինը մեծամեծ խօսքերով ջանադիր էր իւր բուն վիճակը ծածկել:

Ուստի Օրիորդ Վարդանոյշ ընդոստ քայլով սենեկէն ներս մտնելով, և Տիկինը ու իր ամուսինը բարեւելի վերջը, մօտեցաւ իւր ընկերուհւոյն անհամբեր լինելով անոր հազորդելու ու բախտ թիւնն որ լիապէս գրաւած էր իւր սիրտը:

— Գիտե՞ս, սիրելիս, ինչու եկած եմ, բաւա.

— Ոչ, պատասխանեց Արաքսիան:

— Ուրեմն կ'իմացնեմ քեզ թէ այս զիչեր մտերմական երեկոյթ մ'ունինք ուր երեսուն կամ քսոսասուն անձինք ներկայ պիտի գտնուին, և եկայ այժմէն զքեզ առն տանելու, եթէ Տիկին մայրը չ'ընդդիմանայ:

— Մանսանդ որ սիրով կ'ընդունիմ հրաւերդ, աղջիկս, բաւ Տիկինը: Արաքսիան ոչինչ ունի բնելիք հոս, ազատ է նա. թո՛ղ երթայ գուարձանայ, զի մենք իւր հօրը հիւանդոտ վիճակին պատճառաւ ոչ հացկերոյթ տալու և ոչ երեկոյթ մ'ունենալու կարող ենք:

— Որչա՛փ ուրախ եմ, գոչեց Վարդանոյշ, ուրեմն պիտի ընկերանա՞ս ինձ արդ, Արաքսիա:

— Գիտես, սիրելիս, յարեց խեղճ կոյսն, որչա՛փ հաճելի է ինձ հետդ գտնուիլ ոչ թէ այլոց ընկերութիւնը վայելելու համար, այլ պարզապէս քու կիւնդ, բայց անհնար է ինձ սիրուն հրաւերդ ընդունիլ այսօր, քանի որ հայրս անկարող է տեղէն շարժիլ, և մայրս ինձ ընկերանալ: Այսպիսի խորհրդաւոր գիշեր մի անպատշաճ է որ աղջիկ մի իւր ծնողքը թողու առանձին՝ այլուր զբօսանք սրտնելու համար:

Հայրն ու մայրն միաբերան բողոքեցին, Վարդա-
նոյչ բիւրիցս կրկնեց իւր ազերսանքը, բայց Արաք-
սիա հաստատ մնաց իւր սրոշման մէջ:

Վերջապէս երբ Վարդանոյչ տեսու թէ անհնար է
իւր բարեկամուհւոյն միտքը փոխել՝ տխուր գիմօք
ելաւ տեղէն մեկնելու գիտաւորութեամբ: Կր հիանար
անոր ծնողատէր զգացմանց վրայ իրօք, բայց կը ցա-
ւէր զայն մասնակից չընելուն իւր ուրախութեան:

Մինչ հրածեչտի ողջոյնը կուտար երիտասարդու-
հին, Տիկին Վարսամեան ըսաւ անոր.

— Եթէ հրաւիրեալներ չունենայիր այս գիշեր
զքեզ վար կը գնէի մեզ հետ Բարեկենդան քնելու:

Օրիորդն չնորհակալ եղաւ այդ քաղաքավարական
բառերուն համար առանց մտքէն անցընելու թէ իւր
սիրելի բնկերուհին հանդերձ բնտանեօքն միայն պա-
նիրով ու հացով պիտի հանգիստագրէին Բարեկենդանի
վերջին գիշերը:

Գ Լ Ո Ւ Թ Գ.

Երբ առանձին մնացին, հայրն քաղցր կշտամբա-
նօք մեղազրեց զիւր գուտոր զբօսանաց գնացած շի-
նելուն համար, և յայտնեց թէ իւր տխուր հոգին պիտի
ցնծար գիտնալով թէ իւր սիրելի զաւակը գոնէ նոյն
գիշերն ուրախ ժամեր կ'անցընէր:

Յայնժամ տառապելոյն կինը սօք ելնելով և իբր
վագրուհի անոր առջեւ կանգնելով ըսաւ անգութ
եղանակաւ.

— Եթէ կ'ուզէիր զաւակդ գո՞ն ու երջանիկ տես-
նել, թ' ոչ ջանայիր այսպիսի աղքատութեան չմատ-
նել զմեզ: Ի՞նչպէս կ'ուզէիր որ մեր աղջիկն երեկոյցի

երթար երբ այլոց զգեստուց շքեղութեան չէր կրնար
հաստարիկ իրենները:

Երկու լուռ արտասուք սահեցան խեղճ մարդուն
աչերէն, և զլուխը խոնարհեցնելով կուրծքին վրայ
անխօս մնաց, ինչպէս սովորութիւն ունէր ընելու.
զի մէն մի անգամ որ կնոջն առջեւ խօսելու փորձ
կ'ընէր, նա կը պանծեցնէր զիւր բերան խիստ յան-
գիմանութեամբ:

Արաքսիա դէպ' իւր հօրն ընթանալով անոր գլու-
խը բազկացր մէջ առաւ ըսելով.

— Հայր, վաստճ եղիր որ զգեստուցս պատճառաւ
չէ որ չընդունեցայ բնկերուհւոյս հրաւերը. զի իմ
զարդուցս պարզութիւնը ինձ ամօթ չբերեր, ընդհա-
կառակն կը պարծիմ անով. այլ եթէ մերժեցի՝ պատ-
ճառն այն է որ չուզեցի ձեզմէ հետ անցընել այս-
պիսի գիշեր մի:

— Այսպիսի՞ գիշեր մի, պանիր հա՞ց ուտելու հա-
մար, աղջիկս գոչեց մայրը գառնութեամբ, մինչ աչերն
տարօրինակ կերպիւ կը փայլէին, և այտերն կարմիր
էին իբր զհօր:

— Մա՛յր, մեր համեստ սեղանը նախապատիւ կը
համարիմ քան այլոց մեծահաց կոչունքները: Մտունդն
որ ձեզ կը բաւէ՝ եւս առաւել կը բաւէ ինձ:

Այս խօսքերն արտասանելէն վերջը կոյսը գլուխը
կոթնցուց հօրը ուսին վրայ տակից վերուցած էր խօ-
սելու համար, և զգաց թէ լուռ արտօսք մի՞ իբր շիթ
լուռ ցաւի, իւր դէմքին վրայ կը գլորէր լոխն:

— Հա՛յր, հա՛յր. ո՞ն մի՛ լար, հոգիս կը ձմրես,
գոչեց յուսահատօրէն աղջիկն, նորա պարանոցին
վրայ իջնալով:

Իսկ աիկինը թթին տակէն քանի մը խօսքեր
մրմնալով հեռացաւ, և ուրիշ սենեկի մէջ առանձնա-
նալով անկողնոյն վրայ տարածուեցաւ:

Արաքսիա քիչ մի ետքը մօրը ետևէն գնաց տեսնելու համար թէ ի՞նչ կ'ընէր նա: Բայց սենեկին գուռը կիսարաց լինելով տեսու զիւր մայր տարածուած, և կարծելով թէ կը ննջէր, առանց բնա ձայն հանելու հօրը քով վերադարձաւ:

Տառապեալ մարդը նօթու թենէ նեղուելով սակաւ ինչ ուտեստ խնդրեց: Արաքսիա փութաց անմիջապէս բերելու պանիրն և հացը զորս իւր մայրը մէջտեղէն վերուցած էր օտար աղջկան այցելութիւնն իմանալով: Եւ մինչ այդ համեստ ճաշը հօրն առջեւ կը զետեղէր, կոյսն կարիփեր հօգուով, բռնի իմն գուարթութեամբ գոչեց. « Հայրի՛կ, փռցթ չէ եթէ մենք եւս այլոց նման մեծափարթամ սեզան չունինք այսօր. բա է որ ողջ լինինք և ամեն ինչ լաւ է ու գոհացուցիչ: Բայց փտտահ եղիր որ հետեւեալ տարին՝ եթէ ապրիմ, լաւագոյն Բարեկենդանի գիշեր մի կ'անցնես»:

Ենզճ մարդն ոչինչ պատասխանեց, այլ անխօս և անհառաչ, իրեն ներկայացուածը կերաւ, մինչ իւր գուտորն ամեն ճիւղ կը թափէր գուարթապէմ երեւալու, ու կատակներովն ջնջելու նոյն պարագային տխուր ազգեցութիւնը:

Տիկին Վարսամեանի լապտակալութիւնն երկարելով օրիորդն վերադին գնաց ակնարկ մը նետելու մօրը սենեկին, ամենայն զգուշաւորութեամբ սակայն զինքը չարթնցնելու համար եթէ ի քուն էր: Բայց մեծ եղաւ իւր զարմանքն երբ ականջին հասան խեղցուած կոծեր ու ձայներ: Սիրտ ի թունդ խեղճ աղջիկը մօրը քով ընթացաւ և յուզեալ եղանակաւ «Մայր, գոչեց, գուկը տառապի՛ն առանց զիս գոչելու:»

— Բաւական չէ՞ զտառապարտութիւնդ այդ ծերը իննամելու, և հարկ է քեզ ուրի՞շ ծանրութիւն մ'ալ արդ:

— Ա՛հ, մայր պարտքս չէ՛ արդեօք հոգալ զձեզ. դուք ինձ համար որչա՞փ զոճեր կատարեցիք. ամեն ծառայութիւն և ամեն սէր փախարխուտ թիւն չի՞ պահանջեր արդեօք:

Գ Լ Ո Ւ Ն Ե.

Տիկինը սատուիկ մարմնական ցաւերովն ու գալարումները, խօտակցութիւնն ընդհատեց: Ենզճ Արաքսիա ամեն խնամք կը մատակարարէր հիւանդին, զինքը կը շփէր, կը ծածկէր, կանացի զեղեր կը պատրաստէր: Բայց ի՞նչ են այգպիսի տկար միջոցները ախտի մ'առջեւ, որ զօրաւոր և էական զարմաններու կը կարօտէր:

Բժշկի ստիպողական պէտքը զգալի կը լինէր. բայց զնա վարձատրելու միջոցը կը պակսէր: Արաքսիա անմիջապէս իրենց բարերարու ձին յիշեց, և երկտող մը ուղղելով անոր իրենց անհնարին վիճակը խմացուց: Բայց նամակն ապարդիւն մնաց, զի այդ տիկինը բացակայ էր, և ազգականի մը տան մէջ կը տառապէր քայնալիսի հիւանդութեամբ իմն որ զինքը մէկ շարթուան մէջ ի մահ տարաւ, բոլորովին անպաշտպան թողլով Վարսամեան բնասնիրն՝ անոնց յուսոյ վերջին նշոյլն ևս չիջուցանելով:

Սակայն տառապելոյն վիճակը կը ծանրանար. տենդ, գառանցանք, ոչինչ կը պակսէր ողորմելի Արաքսիան սարսափեցնելու համար: Վերջապէս երիտասարդուհին զիմեց իւր սիրելի բարեկամուհոյն, և Վարդանուշ մօրն հետ ի միասին սուրաց յօցնութիւն անարեկ կուսին:

Այս վերջինը առանց իրենց աղքատութիւնը ծայրայեղ լինելն յայտնելու՝ իմացուց թէ նեղը կը զբաւնուին: Եւ եթէ այգպիսի զգուշաւորութեան կը զիմէր՝

ոչ թէ մեծամիտ խորհուրդներէ զրդեայ էր առ այդ, ոչ թէ ազբառու թեան էն ամաչեալուն համարէր, այլ մօրը գոսող խորհրդոց հպատակելու մտք էր պարզապէս, թէ եւ ներքնապէս պարսառելով՝ կը յարդէր զանոնք:

Բաւական օրեր տեսեց հիւանդին ծանր կացութիւնք: Բայց փառք Վարդանայի անձնուէր օգնութեան, Արաքսիային ծառայութեան բեր կը թեթեւնար, զի նա հիւանդ տիկնոջ մօտ գիշերները կը արքանէր, և ցերեկները ամեն խնամք թէ՛ Տիկնոջ և թէ՛ անոր կաթուածահար ամուսնոյն կը մտակարէր:

Եթէ կայ ինչ վեհմ աշխարհիս վրայ՝ ճշմարիտ բարեկամութեան պատկերն է, յորում երկու ազնիւ հոգիներ հանդարտ և միօրինակ հուրով կը վառին առանց փայլատակաց, առանց չոնդիսնի և առանց ցոյցի: Բարեկամութեան տեսողութիւնն հնարաւոր է նոյն իսկ չափաւորութեանը պատճառաւ, զի ինչ որ անչափ է և սարօրինակ՝ կ'սպասի իւր սաստիկութեամբն իսկ, ինչպէս է զոր օրինակ բուռն և այլանդակ սէրը:

Բարեկամ մի կը նուիրէ զիւր զգացում անձի մի մասնակցելով նորա ուրախութեան ինչպէս և վշտին: Իսկ սիրահարեայ սիրտը կը միանայ պաշտած անձին հետ, անոր հետ կը ձուլուի, այնպէս որ իւր պաշտելոյն համար գործելովն՝ անձին համար կը գործէ զարձակ: Բարեկամութեան մէջ կատարեայ անձնու իրութիւն կայ, իսկ սիրոյ մէջ վեհմ անձնասիրութիւն:

Վարդանայի մօր թափանցող աչքը շատ վերահասու եղաւ այն ազբառութեան ստակալի ստտիճանին, որուն քողին ներքեւ կը մաշէր տարաբաղը ընտանիքն Վարսամեան: Տիկին Երանեան առանց զգացնել տարու հոգաց ամեն պիտոյքը սոյն չբաւոր անձանց՝ իբր թէ իւր հասուցած գրամական օգնութիւնը

պարզապէս փոխատութիւն լինէր և ոչ թէ ոգորմութիւն:

Եթէ մեծ է սղորմած սիրտը, եւս առաւել մեծ է իւր նուէրը մատուցանելու ազնիւ եղանակաւ, երբ կը ջանայ չվիրաւորել այն գիւրազգամ հոգին որ նուստանայր կ'իմանայ շնորհապարտ մնալու ժամանակ:

Արաքսիա ոչ եւս կարենալով ծածկել ընտանեկան գազանիքը զոր Տիկին Երանեանի փափուկ ընթացքն անպիտանալ կը ձեւացնէր, խոստովանեցաւ վերջապէս իրենց գտնուած թշուառ կացութիւնը յայտարարելով իւր հաստատ գիտաւորութիւնն ընտանեկացն ապրուստը հօգալու, քանի որ բնաւ յուսոյ նշոյլ չկար իրենց համար ոչ ուրեք:

— Ո՛հ, զոչեց Վարդանայ, ինչո՞ւ գանձեր չունիմ քու վրայ թափելու համար, Արաքսի՛ա:

— Սիրելի՛դ իմ, պատասխանեց երիտասարդուհին, կրնա՞ս հաւատալ թէ ես այդ գանձերը կ'ընդունէի քեզմէ՛, առանց փոխարինութեան: Արդէն սրտիդ գոհարներն առատապէս կը վայելեմ, բայց ստոյգ է որ ի մասին գորովոյ կտտարեյապէս վարձատրուած ես ինձմէ՛:

— Արաքսիա՛, ի՞նչ է իմ բրածս երբ գու աչդչափ գիւցազնութեամբ կը հանդուրժես անտանելի վիճակիդ: Երբէք գանդատ մի չեմ լսած քու բերնէդ, և հակառակ այն մտերմութեան որ կը տիրէ մեր մէջ, գու ծածկեցիր ինձմէ՛ մինչեւ ցարդ քու բոլոր տառապանքդ և զրկումներդ: Վատահոթեանդ արժանի չի համարեցի՞ր զիս արդեօք:

— Վարդանայ, մի՛ աչդպիսի ծանր մեղադրանօք հոգիս վիրաւորեր: Եթէ լուս կեցաց մինչեւ ցարդ մեր ներքին դառն վիճակին վրայօք՝ պատճառն այն է որ ընտանեկան գազոնիքն ինձ չի վերաբերիր, հետեւապէս իրաւունք չունիմ երեւան հանելու ինչ որ իմն չէ:

— Բայց, յարեց Տիկին Երանեան, գաղտնիքդ հաղորդելով մեզ մատնութիւն մ'ըրած չէիր լինէր: քանի որ լաւ կը ճանաչես մեր բարեկամական տրամադրութիւնքն ձեզ նկատմամբ:

— Տիկին, ոչ երբէք կատկած մ'ունեցած ենք այդ մասին, և ձեր արդի ընթացքը շատ իսկ յայտարարեց ձեր խօսքերուն ճշմարտութիւնը: Եթէ մայրս իւր վիճակը ծածկելու ջանադիր եղած է, գուցէ իւր բարեկամաց տազնապ չպատճառելու համար լինէր, ըսաւ, եղանակաւ մի որ իւր համոզման հակառակ խօսիր կը մատնէր: Բայց ներելի էր այդ ընթացքը, զի խեղճ աղջիկն իւր մօրը վարմունքն արդարացնելու կ'աշխատէր:

Տիկին Երանեան այդ փշոտ նիւթին վրայ ընդ փոյթ սահելով քաջալերեց զօրիորդն ապագայ բարելաութեան յոյսը փայտեցնելով աչացր:

— Տիկին, պատասխանեց Արաքսիա, լաւ կ'ըմբռնեմ թէ մայրենի սրտի մ'ամեն փափկութեամբ կ'աշխատիք զիս յուսադրելու: Բայց վհատեալ չեմ քանի որ առջեւ կը պարզի աշխատութեան ասպարէզը: Ուստի հարկ է որ գործունէութեամբ փրկեմ ծնողքս անպատճառ:

— Հիանալի աղջիկ, մրմնջեց Տիկինը յուզուելով, և վայրիկ մի լոկէ վերջը հարցուց գորովանօք:

— Բայց ի՞նչ կը խորհիս ընել. խօսէ՛ անկեղծապէս, որպէս զի գոնէ ջանամ քեզ օգտակար լինելու:

— Գժրազարար, Տիկին, որոշում մի տալու համար հարկ չկայ միաքս յոգնեցնել, զի ասպարէզն աշխատութեան խիստ սահմանափակ է կանանց մասին:

— Իրաւացի է ըսածդ, պատասխանեց Տիկինը:

— Տամարակալութեան մէջ բաւական յաջողակ եմ, յարեց օրիորդը, և եթէ ընկերային պայմանները նե-

րէին՝ հաշուակալութեան կը հետեւէի, քանի որ մասնաւոր ձեռքով ունեցած եմ այդ ճիւղին համար: Բայց իմ սեռս կը խափանէ ամեն երազ այնպիսի ասպարէզի մէջ մտնելու ուր յառաջիմութիւնը չէ արդարացի վարձատրութիւն խղճմտաւոր և կանոնաւոր աշխատութեան, այլ պարզապէս խնդիր մ'է սեռի:

— Ո՛վ չգիտեր քու յաջողակութիւնդ ոչ միայն հաշուակալութեան այլ գիտութեանց մէջ, յարեց վարդանոյշ: Կը յիշեմ որ դատատուդ որ իմն էր նաև, իբր նախանձեղի օրինակ իմն ցոյց կուտար զքեզ, ու կը հաստատէր թէ լաւ ազագայ մի կարող էիր ունենալ եթէ հակառակ սեռին վերաբերէիր: Մինչ ես... սեւ լորդ է խօսիլ այդ մասին. ըսաւ խնդալով:

— Դո՛ւ, սիրելիս, պատասխանեց Արաքսիա, գրական էակ չես. գու բանաստեղծ ես, համայն սէր ես, անձնուիրութիւն և վսեմ երազ: Հո՛ն թիւերը ու հաշիւը գործ չունին:

— Այսինքն բանաստեղծ եմ զգայմամբ ու խանդիս բայց ոչ տաղանդիս:

— Բանաստեղծ հոգի ունենալը գեղեցկին և ճըշմարտին հարազատ զաւակը լինելը կը հաստատէ, այսինքն կը յայտնէ ունենալն այնպիսի նուրբ և ազնիւ թելեր որք շատ առտուել ընդունակ են թրթռալու լաւին ու վսեմին ցնցմամբ՝ քան թէ հասարակ հոգիները:

— Ուրեմն եթէ կ'ուզես որ այնպէս լինի, ընդունէ և գու այն առտուելութիւնն որ ունիս իմ վրաս բանաստեղծ հոգեոյ մի դրական միտք մը միացնելու: Դու գեղեցկին իրականութեանը մէջ կ'ամփոփես առանց անոր երեւակայական ձեւեր տալու և անոր փայլն աւելցնելու ջանադիր լինելու սին երազներով:

— Բայց չգիտե՞ս, սիրելիս, թէ գաղափարական

երիտասարդ հոգւոյ սնունդն է, և թէ սակեզօծ երազնե-
րով կը սնանի ու կ'աճի :

— Միթէ դու երիտասարդ չե՞ս Արաքսիա :

— Գծբազդու թիւնը ձերացոց զիս արդէն . զի
զծբազդու թիւնը ծանր գպրոց մ'է ուր ժամանակ չկայ
երազելու , և ուր իրականութեան գասը կը արուի
միայն : Հո՛ն կեանքը կը ներկայանայ մեզ զուրկ իւր
բոլոր զարգերէն սոսկալի մերկութեամբ կմախքի կեր-
պարանաց ներքեւ : Այդ կմախքն երկբայութեան տեղի
չտար , զի մեր աչաց առջեւ կը պարզէ իւր ծալքերը ,
խոտոջները ու սեւութիւնները : Հո՛ն աչքը կը վարժի
այդ խիստ ու դժնդակ տեսարանին , հոգին կ'արիա-
նայ , և իբր քաջ զինուոր՝ կենաց ձակատամարտին
մէջ կը յառաջնայ :

Տիկին Երանեան բմբունելով այդ արի բայց կարե-
վէր աղջկան հոգւոյն գտնութիւնը , խօսակցութեան
տարբեր ուղղութիւն մի առաւ հարցնելով անոր թէ
աշխատութեան ո՞ր ճիւղն կ'ընտրէր վերջապէս անձին :

— Տիկին , յարեց պատանուհին , կ'ընտրեմ ա՛յն
միակն որ կը ներկայանայ ինձ արդ . այսինքն պատուա-
ւոր բնտանեաց մի քով գաստանդութիւն ընելը :

— Երանի՛ թէ փոքրիկ մի քոյր ունենայի , գոչեց
Վարդանոյշ , որպէս զի անոր գաստարակութեան հոգը
քեզ յանձնուէր :

— Առանց այդ պայմանին Արաքսիա մեղի հետ
կրնայ բնակիլ իբր գաւախ , յարեց Տիկին Երանեան ,
ու կերպով մի օգնել իւր ծնողաց խի :

— Դուք երկու թանկագին հոգիներ էք պատաս-
խանեց Արաքսիա , լիովին յուզեալ երախտագիտական
զգացումներէ : Բայց ներեցէք որ մերժեմ ձեր ագնի-
առաջարկն զի կը փափաքիմ արժանաւորապէս վար-
ձատրուիլ իմ ծառայութեանցս համար , և ոչ թէ մար-
դասէր սրտի ողորմութեան լուման ընդունիլ :

— Որչափ խիստ ես քեզ նկամբամբ , Արաքսի՛ա ,
բաւ Վարդանոյշ վշտացած իմն կերպարանօք :

— Խիստ չեմ , այլ արդար , բարեկամուհի՛ս : զի
ով որ կարող է գործել և ընդհակառակն ուրիշի ճրի
օգնութեան կը դիմէ՛ ա՛յն , կը յափշտակէ անկարող
աղքատաց իրաւունքը , ընկերային գողութիւն մի
կը գործէ :

Վարդանոյշ լսեց , զի համոզուեցաւ թէ անհնարին
էր անոր խորհուրդներն այլայլել :

Իսկ Տիկին Երանեան յարեց .

— Լսեցի թէ հարուստ ազգային բնտանիք մի՞
որուն հետ : Բնաւ յարարերութիւն չունիմ սակայն ,
ուսեալ վարժուհւոյ մի կը կարօտի , խոստանալով բա-
արժանւոյն վարձատրութիւն հատուցանել :

— Տիկին , խնդրեմ առանց ժամանակ կորսնցնե-
լու առաջարկել տուէք զիս , թախանձեց Արաքսիա :

— Բայց մօրդ հաւանութիւնն ստացա՞ծ ես , աղ-
ջիկս , հարցոց Տիկինը :

— Պարագայ կայ , Տիկին , որ ընդվզիւն առաքի-
նութիւն է , և հնազանդութիւնը վատութիւն : Որո-
չած եմ առաքինի լինել :

— Ուրեմն անհօղ եղիր , բաւ բարեսիրտ Տիկինը ,
և այս խօսակցութիւնն որ տեղի կ'ունենար հիւանդին
քունին միջոցին՝ ընդհատուեցաւ բժիշկին այցելու-
թեամբ :

Բժիշկը զՏիկին Վարսամեան լաւ քննելէ և ամեն
սովորական հարց ու փորձերը կատարելէ վերջը , յայտ-
նեց թէ հիւանդին վիճակը բաւական ծանր էր , առանց
սակայն վարանմունք ցոյց տալու անոր բժշկուելուն
վրայօք :

Արաքսիայի վախերը փարատուելով մօրը նկատ-
մամբ տիտիարար չունշ մ'առաւ , և փառք Երանեան

Տիկնոջ դրական օգնութեան, հիւանդն ասին նիւթա-
կան և բարոյական պիտիանք վայելեց :

Երկու չարաթ վերջը Տիկին Վարսամեան ապա-
քինութեան վիճակի մէջ մտնելով՝ Վարդանոյ յանձն
առաւ վերջապէս վերադառնալ իւր տունը, հետը տա-
նելով բարեկամուհւոյն անկեղծ երախտագիտական ար-
տայայտութիւնքն՝ զոր առաւել արտասուօքը կը յայտ-
նէր քան թէ խօսքերովը :

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Տիկին Վարսամեան անգիտանալով զմահ իւր բա-
րեկամուհւոյն՝ անոր վերադրած էր այն առատութիւնն
որ չորջր կը տեսնէր :

Արաքսիա կը պատրաստէր ատրիճանաբար զիւր
մայր՝ ընդունելու այն հարուածն որ իւր ամեն յոյսե-
րուն վերջ կը գնէր : Եւ երբ այդ ատուր լուրը գովեց
անոր ականջին :

— Ո՛հ, գոչեց Տիկինը յուսահատօրէն, երբ մեր
վերջին ապաստանը կը բքանէ զմեզ, ոչ այլ ինչ կը
մնայ բայց մեռնիլ :

— Այնպէս չէ՞, մայր, յետին նեցուկ մ'ունիս ցոր-
չափ ևս ողջ եմ և առողջ, բաւ կոյսն :

— Դո՛ւ, որդեակ :

— Ե՛ս, մայր :

— Դարձեալ աշխատելու առաջարկդ մէջտեղ պիտի
գննե՞ս արդեօք :

— Այսինքն պիտի գործադրեմ զայն վերջնական
կերպիւ այս անգամ :

— Ծնորձիւ հօրդ, անա որպիսի՛ր գիրք մ'երագե-
լու կը դատապարտու իս :

— Մայր, կը թախանձեմ քեզ, մի՛ յարձակիր հօրս
վրայ, ինքը բուական թշուառ է արդէն, որով աւե-
լորդ է իւր վիճակը առաւել ծանրացնել կշտամբա-
նօքդ : Յիշէ, սիրելի մայրս, որ բազում տարիներ գո՛հ
և հանգիստ ապրեցանք անոր շնորձիւ և եթէ զժբաղ-
բութեան մէջ անկանք անդարմանելի չէ այդ վիճակն .
ընտանեաց անդամոց մէջ համերաշխութիւն կայ, զի
կարողը միշտ անկարողին յաջորդելու է ապրուստի մի-
ջոց հոգալու համար :

— Կրնա՞ս հաւատալ թէ ևս ձակաիդ քրտամբը
քաղած հացն ուտեմ առանց խղճի խայթ զլալու,
աղջիկս :

— Եւ սակայն այդպէս պիտի լինի. արդէն ամեն
ինչ պատրաստ է, և աշխատութեանս օրն ընդ փոյթ
կը հասնի :

— Ի՞նչ կ'ըսես, հատատապէ՞ս կը խօսիս :

— Այո՛, մայր :

— Չեմ հասկնար թէ ինչ կ'ուզես ըսել :

— Բացատրեմ ուրեմն : Հարուստտան մի մէջ, գո-
հացուցիչ պայմաններով իբր վարժուհի պիտի երթամ
երկու փոքրիկ աղջկունք գաստիարակելու համար :

— Ո՛հ, ի՞նչ ըրիր, որո՞ւ հաղորդեցիր մեր գաղտ-
նիքը, որպիսի՛ր յիմարտ թիւն ըրիր, գոչեց սրամտեալ
մայրը :

— Մի՛ նեղանար խնդրեմ այլ անաս՛ խօսքերուս,
մայր :

— Ըսելիքդ գիտեմ :

— Երբ դու հիւանդանալով վիճակդ օր աւուր ծան-
րացաւ և սպառնացող կերպարանք մ'առաւ, գիմեցի
մեր սովորական օգնութեան աղբիւրին : Բայց բարե-

պաշտ Տիկինը մերձ ի մահ լինելով յոյսերս փշրուեցան. հետեւապէս պարատուորեցայ զիմել Երանեանն ընտանեաց որ փոխատուութեան եղանակաւ մեր պիտոյքն հողաց :

— Վա՛յ ինձ, անոնք մեր զաղանի՛քն խմացան. ուրեմն անոնք մեզ ողորմութի՞ւն տուին :

— Հանգիստ եղիր, մայր, ընդունա՞ս պիտի հատուցանեմ օր մի :

— Ինչ զժրագոյութիւն է այդ ինձ համար այսպէս խալտատակութեան առարկայ լինելը :

— Ամաչելու պատճառ մի չունինք, մայր, զի աղքատութիւնը անպատուութիւնն չէ :

— Ըստ քեզ գուցէ :

— Այո՛, մայր, ըստ իս աղքատութիւնը փշտ ճանապարհ մ'է, ուր արիարար մարտնչելու է ընդդէմ խոջնոցոտից որք մէն մի քայլի կը ներկայանան :

— Զքեզ լսողը պիտի կարծէ թէ չքաւորութիւնը կը պաշտես :

— Աչ, մայր, չեմ պաշտեր զայն քանի որ զրկանաց կը դատապարտէ զձեզ, այլ կը պատրաստուիմ զիմազրել անոր՝ զիճակ մ'ապահովելով մեզ :

— Վստահ եմ որ այդ մասին եւս Երանեանց զիմեցիր դարձեալ :

— Անշուշտ, մայր :

— Ո՛վ զիտէ որչափ արհամարհեցին զքեզ :

— Ընդհակառակին Տիկինը հիացաւ :

— Կը փափաքէի ուրեմն որ անոնք եւս մեր վիճակն ունենային օր մի բացարձակապէս յայտնելու համար քեզ որ քու քաջութիւնդ չպիտի ունենային ընկերական սանդուղներէն վար իջնելու համար :

— Մա՛յր, երբ անոնք այնչափ հիանալի իմն անձնութեամբ մեզ օգնելու փութացին, դու անէ՞ծք կը կարդաս իբր փոխարինութիւն :

— Այո՛. նպատակեցին՝ զմեզ խոնարհեցնելու մտօք :

— Ո՛հ, ինչ կ'ըսես, մա՛յր, խնդրեմ լսէ՛ :

— Գու պարզ աղջիկ մ'ես, և չգիտես տակաւին որչափ չարութիւն կայ մարդկանց սրտին մէջ :

— Մա՛յր, կը հայցեմ զքեզ, զազրէ՛ այցպէս խօսելէ զի հոգւոյս մէջ անոնց նկատմամբ իրաւացի երախտապիտութիւն մի կայ որ ընդդէմ խիստ խօսքերուդ կը բողոքէ :

— Կը տեսնեմ որ դու ինձ գէ՞մ բմբոստ կերպարանք մի կ'առնուս :

— Ե՞ս, մայր :

— Այո՛, դու : Զօր օրինակ առանց իմ հրամանիս կը պատրաստուիս տունէս հեռանալու : Ուկախօց յառաջ կուգայ այդ բաղձանքդ անկախ զիրք մ'առնելու արդեօք :

— Մայրի՛կ, նոյն իսկ յորդիական սիրոյս յառաջ կուգայ. զի զղացի թէ քաջութիւն ունենալու եմ ընդվզելու ընդդէմ քեզ՝ սիրելի ծնողքս փրկելու և զօյգն ինչ հանգիստ մատակարարելու համար անոնց :

Եւ զայս բսելով կոյսը մօրը զիրկն անկաւ և լայով գոչեց .

— Մա՛յր, մի՛ մեղազրեր զիս և հաւատա՛ որ զքեզ պատուելով կը սիրեմ :

Մայրն իւր արտասուքը աղջկան արտասուաց խառնեց, սեղմեց զայն հոգւոյն վրայ և սպա յարեց .

— Ո՛հ, զո՛ւտար իմ, ամենքն զմեզ պիտի արհամարհեն այսուհետեւ :

— Մա՛յր, կը կրկնեմ քեզ թէ խելացի և զգօն անձինք առաւել եւս պիտի յարգեն զմեզ, զի աշխատութիւնը մղիչն է ընկերութեան և յառաջադիմութեան :

Գ Լ ՈՒ Խ Է.

Հասաւ վերջապէս օրն յորում Արաքսիա պարտաւորեցաւ ընտանիքէն բաժնուելու : Իւր խեղճ հայրն այդ բաժանման դատութիւնը սաստկապէս կ'զգար, զի կնոջը խիստ վարմունքը աղջկանը գորովագութ խնամօքը կը մեղմանար զոչոյն ինչ : Ամեն ծանր խօսք, ամեն անիրաւ կշտամբանք զրգիւ մ'էր միշտ կուսին սրտին գանձերէն նոր սիրոյ ապացոյց մի երեւան հանելու : Ուստի զիւրին է երեւակայել թէ թշուառ մարդուն համար որքա՞ն տառապեցուցիչ էր ասանձին մնալու հարկն ամուսնոյ մի հետ, որուն համար ինքն անհանդուժելի բեռ մ'էր :

Չայդ լաւ կ'ըմբռնէր Արաքսիա, կը ցաւէր հօրը վրայ, արդահատանք կ'զգար, և կը ջանար նոյնն զգացնելու և իւր մօր, բայց ի գո՛ւր : Այժմ կը մեկնէր, և իւր հոգին կ'արիւնէր ոչ այնչափ զիւր մայրն թողլուն համար՝ որչափ իւր տառապեալ հայրն, որոն գժրազգ կացութիւնը յօգ մ'աւելի էր զիւր սիրտ առաւել ևւս գորովով կ'աչկանդեցիւ : Բայց չկար ուրիշ միջոց ազրուստի և հարկ էր մեկնիլ անպատճառ :

Բաւական չէր հէք հօր համար տեսնել զիւր որդին որ կը թողուր հայրենի յարկն՝ այլ գատապարտուած էր անտալ և իւր կնոջ որ անընդհատ զինքը կը յանդիմանէր իբր իրենց գժրազգութեան պատճառ :

— Այր մարդուն պարտքն է, կ'ըսէր կինը, դրամ վաստկիլ և ընտանիքը խնամել : Իսկ դու ոչ միայն զայդ անկարող ես գործելու այլ և կը պարտաւորես իմ միակ գաւակս տունէն դուրս ելնելու : Քեզ նման այրեր լաւագոյն է որ չի ծնանին, զի պարզապէս բեռ մ'են աշխարհիս վրայ :

Ողորմելի գո՛նը կը լսէր ընդհանրապէս, բայց օր

մի ոչ ևւս կարողանալով տոկալ այդ հանապազօրեայ յանդիմանութեանց, յիշեցուց կնոջ թէ անցեալ զիւրակեցիկ օրերն իրեն կը պարտէր, և թէ ինքն ձօխութեանց վարժ չէր իւր հայրենի յարկին ներքեւ մինչ աղջիկ էր տակաւին :

Յայնժամ գոտոյ կինը մարդուն վրայ յարձակեցաւ բողբոջաւ աչերով, փրփրալից բերնով, որտուցսղ ձայնիւ, ու պատասխանեց թէ իւր գեղեցկութեամբն իրատունք ունէր ամենէն շքեղ բազրբու ակնկալել, և թէ նա պատճառ եղած էր հետն ամուսնանալով որ ամեն պերճանքէ ու մեծութենէ զուրկ մնայ, և այժմեան տխուր կացութեան մէջ ինքն գաւակալը տառապի :

Երբ որ արդարութենէ չեղի ի՞նչ կշտամբանաց կարող չէ : Վա՛յ անոր որ տկարութեամբը կամ պարագայից բռնի գօրութեամբը սահմանուած է անիրաւ մեղադրանաց հպատակ լինելու :

Երկու ամուսնոց խաւարապատ աշխարհին մէջ լուսաւոր թել մ'էր Արաքսիա, որ կը ջանար յօգ միութեան լինելու նոցա մէջ : Գնաց կոյսն, բեկաւ թելը, չիջաւ յոյսն : Այդ կնոջ սիրտը կ'ամոքէր միայն մայրենի ցնցման ներքեւ : Արարածն այն որ կարծես ամեն սրգահատական զգացումէ զուրկ էր երբ ամուսնոյն կը վերաբերէր խնդրքը, ընդհակառակն գորով էր և անձնուիրութիւն իւր որդւոյն նկատմամբ :

Ուստի նոյն օրն յորում Արաքսիա մեկնեցաւ սաստիկ հարուած մի կրեց վարսամեանի կնոջ հոգին ու անձնասիրութիւնը : Տիկին երանեան ու աղջիկը ներկայ էին ողջերթի վայրկենին :

Տիկին վարսամեան մասամբ յաջողած էր ցորչափ աղջիկն իւր մօտն էր, տեսակ մ'անալրզով կերպարանք մի պահելու՝ չնորձիւ իւր գոտոզութեան : Բայց երբ կոյսն՝ զիւրագնաւուց մ'անխառով զիմօք, հօրն և մօրը


ձեռքերը անհուն գորովանօք համբուրելէ յետոյ, և ակնածու ձեռով զՏիկին Երանեան ողջունելէ ու զիւր բարեկամունհին սրտին վրայ սեղմելէ վերջը տունէն գուրս ելաւ, յայնժամ անմխիթար մայրը յորգտատ արտասուօք սկաւ լայ գաննապէս :

Նոյն վայրկենին ս'ըջտօի զժուարին էր Տիկին Երանեանի զիրքը, որ կ'զգուշանար զգայուն կամ ախտարար բառով իմն այդ կնոջ գոռոզութեանն բնդհարկանելու : Ի՞նչ բոսեր, երբ նա կը կրկնէր անգագար թէ գուկէն կը բաժնուէր ամուսնոյն մերձաորութենէն հեռացնելու համար զայն միայն :

Անմխ գլուխներ կան որք կը կարծեն խարել զուրիշներն երբ իրաց բուն վիճակին տեղեակ են անոնք : Գուցէ մարդս իւր անձը խարելուն մէջ վաշելչութիւն մի կ'զգայ :

Նոյն միջոցին հայրն՝ բառ իւր սովորականին, անխօս կը դարբէր իւր անկեան մէջ, և երախտագիտութեամբ կը հանդիպէր համակրալից նայուածոց Տիկին Երանեանի՝ որ առաւել աչերովն քան թէ բերնովը կը համարձակէր մխիթարել թշուառ մարդը ի ներկայութեան իւր կնոջ :

Իսկ Արաքսիա՝ մտնալով բոլոր իւր զիցազնական արիութիւնը, կը կարծէր թէ ճամբուն վրայ պիտի նուազէր : Սիրար իւր բաժինը կը պահանջէ միշտ, և եթէ վայրիկ մի կ'ընկճի խոնարհելով քաջութեան առջեւ, ընդհուպ յաղթահարելով՝ իւր վսեմ տկարութեամբը կը ներկայանայ դարձեալ :



Գ Լ Ո Ւ Թ Ը

Պ. Արգարեան հարուստ վաճառական մ'էր : Իւր մատաղ տիւրոց մէջ գաւառէն Պոլիս եկած էր, ու հայրենակցի մօտ ապրելով վաճառականութեան արուեստին հետամտած էր, վարժութեամբ զայն ուսումնասիրած, յառաջացած սոյն ասպարէզին մէջ, և տիրոջն օժանդակութենէն ու պաշտպանութենէն օգտուելով՝ յաջողած էր անկախ և յաջող զիրք մ'ապահովելու անձին :

Մարդուս ստաջին մտածութիւնը՝ երբ բարքերը խանգարեալ չեն, ամուսնութեան մէջ հանդիստ վիճակ մի վայելել է : Մարդս կարծես ընկերոջ մի կը կարօտի թէ՛ երանութեան և թէ՛ թշուառութեան մէջ : Երանութենէն երբ ուրիշ մի եւս բաժին նոնենայ թոյլ թէ կը կրկնապատկուի այն, կ'ընդլայնի, կը զարգանայ և կ'ուսճի : Իսկ թշուառութիւնը կը թեթեւնայ ուրիշի վրայ յենլով, և իւր ընկճող ծանրութիւնը մասամբ կը կտրսնցնէ :

Պ. Արգարեան համեստ և պատուակիր ընտանեաց միաժին գուտարն առած էր ի հարսնութիւն : Սա անձ մ'էր առանց նշանաւոր զեղեցկութեան, բայց բնութեամբ ազնիւ էր, պարկեշտ, և լըջամիտ : Նա կը վաշելէր անձայն և աննշուկ ամուսնոյն վիճակն՝ որ օր աւուր զարմանալի կերպիւ կը զարգարնար, և ընկերակցին երջանկութիւնը կ'ապահովէր իւր հանդարտարարոյ ընթացքովն ու անընդհատ ջանիւքը զինքը զսահմանելու : Ողորմած էր հոգւով, ձեռքը միշտ պատրաստ ընկերային վէրք մի բուժելու, արտօսը մի սրբբելու, կարեվէր սրտի մի օգնելու : Զայս ամենայն կը գործէր ոչ թէ իւր անունը ամենուրեք հնչեցնելու համար, այլ պարզապէս, վասն զի բարեգործութիւնը իւր հոգւոյն սնունդն էր :

Կան աշխարհիկ չնաշխարհիկ արարածներ որք իրենց անձր կը մտնան որպէս զի այլոց համար ապրին : Իրենց գործած բարեաց բնա կարեւորութիւն չեն բնծայեր զանոնք անբաւական համարելով , բայց կը յիշեն ամեն ծառայութիւն՝ նոյն իսկ աննշանը , գոր բնդունած են իրենք : Մատուցած բարեաց փոխարէն ապերախտութեան կը հանդիպին , և զայն իսկ կը ներեն ասարկելով թէ բարեգործութիւնն նպատակ ունենալու է լոկ մարդկութեան ծառայելու յօժարութիւնը , առանց վարձատրութեան բաղձանքը տաճելու :

Ուստի Տիկին Արգարեան սովիներն առատապէս կը քաղէր իւր ամուսինէն ի պէտս թշուառաց , ու կ'աղբէր զո՞նքն զմէջ իւր բարեգործութեանց ու բնտանիկան անգործուէտ կենաց , երբ ա՜նա արու գաւկի մի ծնունդը ամբողջացուց իւր երանութիւնը :

Մանկիկ ներառէր ծնողացն յոյսն էր և երջանկութիւնը : Գեղեցկապէ՛մ , առողջ , աշխոյժ , համայն կեանք էր և շնորհք : Ո՞րն է արդեօք մայրն այն՝ որ երբ այդպիսի արարած մի սրտին վրայ կը սեղմէ , սքանչելի բացասիկ երազներ չտեսներ անոր նկատմամբ : Մեծագործութիւն , փառք , հոշակ , այս ամենայն կ'ուրուագրուի շրայուցիչ կերպիս մայրենի աչաց առջև : Եւ մայրը կը ժպտի սպառազին , մինչ մանուկը կը ժպտի իւր մօր : Մայրն ու զաւակը մէկ հոգի կը կազմեն և կ'ամբողջանան երկրորդ անձով մի որ ամուսինն է միայն , ու հայրն երկրորդին :

Տարիները զիւրասահ կ'անցնէին և յանզգատտա՛ իրր բարեբառտ տարիներն . կ'աճէր ներսէս գեղեցկութեամբ , առողջութեամբ և իմաստութեամբ , ու կը յառաջանար խելացի և գորովազու թ մօր մ'առաջնորդութեամբ : Մայրը զաւակին սիրտը կը կրթէր հաստատուն սկզբանց հիմունքը դնելով , իսկ ընտիր գառատուաց կը թողար անոր միտքը մշակելու հոգը :

Երբ ներքէս 18 տարեկան եղաւ , կը ներկայանար իրր հրաշագեղ պատանեակ , ծանրաբարոյ , ազնուասիրտ , լրջամիտ , և ուսմանց մէջ յառաջացած : Կը սիրէր զիւր հայր , կը սպաշտէր զիւր մայր , կը հիանար յա ին ու բարոյն վրայ :

Մայրը կը նայէր անոր իրաւացի հպարտութեամբ իմն , մտածելով թէ այդ չնաշխարհիկ արարածն իւր սեփականութիւնն էր :

Մեծ գո՞ն նակութիւնը կարծես ճակատագրական օրինաց հակառակ է : Արգարեան կենաց հարիզոնը խիստ պայծաս էր երկարատեւ շարունակութիւն չմ'ունենալու համար , հեռուապէս մթազնեցաւ : Անարկու սեւամզ մ'անցաւ այդ բնտանեաց վրայէն , որոտաց , փայլատակեց , ու շանթաճարեց վերջապէս զՏիկին Արգարեան :

Ազնուասիրտ կիներն ու թ օրուան միջոցին մէջ հիւսնդապաւ ու մեռաւ բժշկական ամենայն ազդու միջոցաց զէ՛մ բմբոստ մնալով : Մեռնելու ժամանակ Տիկինն իւր գորովայից երախտագիտութիւնն ամուսնոյն նուիրեց , իսկ զհամայն հոգին՝ իւր սրբուցն : Այդ սիրոյ փարտը նուազեցաւ հանդարտօրէն ինչպէս փայլած էր երբեմն մեղմիկ և անշշուկ :

Մեռաւ Տիկին Արգարեան մինչ երեսուն երեք տարեկան էր , տակաւին իւր ամուսինն անմխիթար կ'երեւար , և մէն մի անգամ որ կնոջը բարեմասնութեանց յիշատակութիւնը կը լինէր ցաւը կը սաստկանար ու շարաշար կը յուստհատէր :

Իսկ ներսէս՝ որ նոյն միջոցին տասն և ու թ երորդ տարին լրացուցած էր , առանց հոգւոյ մարմին մի գարձաւ : Իւր մօրն աչքերէն ու հոգիէն կը քաղէր եռանդն աշխատութեան ու բարեգործութեան : Երբ նա մեռաւ ինքը ջլատեցաւ , վճատեցաւ , գոզցես գիակնացաւ :

Ջահաջախու ամ էր երևորական թեյն սրուն մէկ ծայրը
մօրը սրտին կապուած էր և միւսն իւր սրտին, և ուս-
կից սիրոյ և խորխուսանաց յորձանք մի կ'անցնէր
անդապար: Պարապ մի կը նկատէր տան մէջ, պարապ
մի սրտին մէջ՝ որ մէն մի օր կ'ընդլայնէր:

Քանիօ՞ն գտնն սիրամաշ հոգւոյ համար չտեսնել
ու չխայթայել զանձն այն որ համայն գութ էր իրեն
համար, որ սէր էր, ներշնչումն և անձնախրութիւն:
Ոչինչ կայ իւր տեսութեան համար, ոչինչ իւր լսողու-
թեան համար: Եւ սակայն նայուածքն է որ զմեզ կը
պղտորէ, ձայնն է որ «Յատաջ» կը գոչէ:

Յիշատակ մի կար միայն ներսէսի համար, և այդ
չիշատակն իւր վրայ կը ներգործէր իբր սրբանուէր
թանկագին պատկեր մի որ մութ գոյներով նկարուած
է, և որ ասուել տխուր քան թէ արտօնարար ազգե-
ցութիւն մ'ունի:

Աշխարհ անսպաս մի դարձած էր մեր երիտասար-
դին համար, օրն ի բուն գրեթէ ատանձին կ'անցնէր
իւր դրեանց մէջ նոտած, մեծ մարդկանց օրինակաւն
ջանարով յաղթել իւր վշտին: Բայց զի բի՞ն է արդևօք
յաղթանարել թշնամոյն մի՞ հանգոյն վշտի՞ որ մինչ
ընկճեալ կը թափ, վեր կը կանգնի յանկած ու գժոզին
վերստին գայարելով կը վիրաւորէ: Համակերպիլ բազմին
հարուճոց բժշկուիլ չի նշանակեր, այլ պարզապէս սգոյ
հեռ եղբայրանալ է, և լուսթեան մէջ շոյիլ՝ ինչ որ
գժոզին կը մաշեցնէ անընդհատ և անձայն: Այդ վիճա-
կին մէջ կը գտնուէր ներսէս:



Գ Լ Ո Ւ Ք Թ.

Պ. Արգարեան, հայր էր գորովալից, պատրաստ
ամեն ինչ կատարելու զաւակը գոհացնելու համար: Կը
ստատապէր երիտասարդին տխուր կերպարանքը նրկա-
տելով, կը փափաքեր մխիթարել զնա, բայց անկա-
րող էր հաստատել այն սքանչելի յարարելութիւնքն
որք ընդ մէջ երկու հոգինիբու տիրած էին երբմն՝ այս-
ինքն մօր ու զաւակին, և կամ լաւ եւս է բսել, ընդ
մէջ երկու հոգիներու ի մի ձուլած:

Սիրելու զգացումն նոյնչափ նրբութիւններ կը պա-
րունակէ սրչափ երաժշտական ներգաշնակութիւնը:
Գորովոյ մէն մի բարախում մաս մ'է սիրոյ, ինչպէս
մէն մի գեղեցիկ միղեցիք մաս մ'է ընդանուր ներգաշ-
նակութեան. և սակայն ամենքն իրարմէ կը սարբե-
րին, կը զանազանին, նոր ձեւերու, նոր գոյներու,
նոր նրբութեանց ներքեւ հանդիսանալով: Չայնեւն
երբ իրարու հետ համաձայնին ներգաշնակութիւն մի
կը կազմեն. նոյն է և զգացմանց մասին:

Պ. Արգարեան կը սիրէր բոլոր սրտովն զիւր սրդին,
ստատապէս փոխարինուած լինելով անկէ: Բայց քանի
որ զգալու, մտածելու և գտտելու աճազին տարբերու-
թիւն կար երկուքին միջեւ՝ անհնարին էր հաստատել
հոգիներու և մտաց կատարեալ համաձայնութիւն: Եր-
կու մեղեցիք էին որուն մին կարգաւորեալ էր և բառ
կանոնի յօրինեալ, իսկ միւսն աւելի թարմ էր, աւելի
խորունկ, աւելի փսեմ նրբութիւններ կը պարունակէր:
Մին էր սովորականը, միւսն՝ անսովորը: Ինչ որ միայն
համար բաւական էր, միւսին համար անբաւական էր:
Ինչ որ էր հօրն համար կանոնաւոր աշխատութիւնը,
որդոյն համար էր օգտակարը, լաւը և սէրը:

Պ. Արգարեան կը հայթայթէր որդւոյն ամեն խնւածք, ամեն արգահատանք և ցոյց սիրոյ: Չայդ ամենայն կ'նդունէր Ներսէս երախտադիտութեամբ, բայց կ'զգար միշտ պարապ մի շուրջը որ իրեն անձնար էր լեցնել. առանձին կ'զգար իւր անձն երկրիս վրայ, և չինքն ամփոփուելով, ուսման մէջ կ'ուզէր գտնել փոփոխութիւն իւր սրտին ու մտայր ճարակ:

Պ. Արգարեան գասնապէս զգաց նախ կնոջը կուտար, բայց վերջապէս մտածեց թէ մեռեալը ևս չէր կարող բերել վշտովն, հետեւապէս ջանաց մխիթարուիլ և ստուգապէս մխիթարուեցաւ: Ուստի հազիւ երկու տարիներ անցած էին իւր այրի կացութեան վրայ, և աճա մտազիր էր յաջորդ մի տալ իւր հանգուցեալ կողակիցին:

Բնական օրէնք գարծած է գողցիւ, որ այրի մարդիկ կրկին ամուսնութեան ձեռնարկեն: Եթէ բարեբաւտ էին առաջին ամուսնութեամբ, կր կրկինն գայն վերտախն երջանիկ լինելու արամազրութեամբ: Իսկ եթէ զժբազդ յաւազոյն ամուսնութեան յոյսով երկրորդ պտակազրութեան կը գիտնեն:

Պ. Արգարեան սրուն ամուսնական երանութեան վրայ տարակոյս չունէինք, երբ սոյն պատշաճութեան ժամանակը լրացաւ, և օրինաւորապէս ու ամենայն խզճմտութեամբ ողբաց զիւր հանգուցեալ բնկերուհին, երկրորդ անձ մ'որոշեց իրր տիրուհի իւր բազդին:

Յոյս ունէր թէ բազդը նոյնչափ նպատատ որ պիտի լինէր իրեն երկրորդ անգամ որչափ առաջինն: Հետեւապէս հաւանեցաւ առնուլ ի կնութիւն չքնաղ որր երիտարդուհի մի որ անչուք բնտանեաց կը վերաբերէր, առանց որ և է խուզարկութիւն մ'ընելու անոր բնուորութեան վրայօք:

Երբ իմացաւ Ներսէս հօրն ամուսնանալու քրտմ

որչումն կարծես թէ յիմարեցաւ: Չէր բաւեր իրեն գմայրն իւր կորսնցնել, և աճա օտարական մի կուզար անոր տեղը գրաւել: Սաստիկ սրամտութիւն զգաց հօրն բնդէմ, և իւր անձը հիւանդ դաւանելով առանձնացաւ խոցին մէջ յայտնելով հարկաւորութիւնը զոր կ'զգար բնա մարդ չընդունելու: Հայրը հպտտակեցաւ որդւոյն կամայր զի յաւ կ'ըմբռնէր այդ հակասակութեան պատճառը:

Երբ ամուսնութեան օրը մօտեցաւ, Ներսէս իրր թէ օգտախիտութեան մտօք առնէն հեռացաւ, բնա ակնարկութիւն չընելով հօրն ամուսնական խորհրդոյ:

Պ. Արգարեան իրօք կը ցուէր յոյժ որդւոյն յայտնած հակասակութեան վրայ առանց սակայն իւր զիտատարութիւնն աչքայլելու: Նա մանաւանդ կը մտածէր թէ ամեն ինչ ժամ յառաջ կատարելու էր որպէս զի նոր տիրուհին տան մէջ իւր տեղը գրաւելով հարկազրէ գերխոտարոյն հպտտակելու լինցած իրողութեան մը ստճիւ: Ուստի մեր յիանամեաց փեռան փութացուց ամուսնութեան խորհուրդը քան և հինգ տարեկան հարսին հետ, և ի պատիւ հանգուցեալ կողակցին և որդւոյն՝ անչուք կերպիւ կատարեց գայն հակասակ կամայն իւր հարսնցուին:

Գ Ա Ո Ւ Ս Ժ.

Նոր Տիկին Արգարեան շքեղապէս գեղեցիկ անձ մ'էր: Մորթին փափկութիւնն ու սպիտակութիւնը, գիմական գծերուն կանոնաւորութիւնն և հասակին վաշկլու թիւնը զինքը նշանաւոր կը հանդիսացնէին: Իւր սեւաթուր վայրենի աչերն առաւել կամք և յանդգնութիւն կը յայտնէին քան թէ քաղցրութիւն: Ուս-

մամբ գրեթէ ոչինչ էր, և զուրկ ամեն նորր ու ազգուական զգացումէ: Հնարամիտ էր, ճարտիկ և նկատասէր:

Նոյն վայրկեանէն որ ամուսնացաւ՝ արդար զիրք մ'ստացաւ իւր նեղարարոյ ամուսնոյն վրայ, և սա խոնարհելով այդ իշխող ձեւերուն առջեւ՝ հպատակի կերպարանք մ'առաւ իսկոյն:

Ոչնչ զկին աջնչափ յանգուզն կ'ընէ՝ որչափ ամուսնոյ մի բնութեան ակարութիւնը: Յայնժամ մէն մի օր նոր քանաձառութեան ծնունդ կուտայ, և անոր գործազրութիւնն ապահովելու համար կ'ինքն մերթ հրամայական ձեւերու կը գիւթ և մերթ փազաբշտնայ:

Այր մարդն որ վայրիկ մի քաջութիւն ունեցած էր կ'նոջը գիմազրելու՝ զամեն ինչ կը մտնայ հանդէպ նազելանայ զեզանոյն, կը թուրանայ կատարելագէս, և կ'ինն օգուտ քաղելով այդ ակարութեան վայրկեաններէն՝ իւր իշխանութիւնն ևս քան զեւս կը հաստատէ: Մարդս նոյն գիւրութեամբ կը վարժի բնութեան ինչպէս հպատակութեան, առաջին պարագային մէջ գոհունակութիւն կայ, իսկ երկրորդին մէջ կամուր համակերպութիւն:

Տիկին Արգարեան իւր ունեցած իշխանութենէն օգուտ քաղեց ստանալու համար զեզեցկազոյն զարգերը, ազամանդները և կարասիները: Բերայի բնակութեանն այնպիսի շքեզ կերպարանք մի տուաւ որ ճոխութեամբ կ'ընար մրցիլ բնարեկազոյն տանց հետ: Սպասաւորաց բազմութիւնն և մանաւանդ կատայ շքեզութիւնը զինքը նշանակելի կ'ընէին ամենուրեք:

Չարակազու վերջին ծայր՝ այդ կ'ինը կը մեղադրէր այլոց վրայ ինչ որ անձին առատօրէն կը ներքեր, ու արուեստաւորեալ պարկեշտութեան քողին ներքեւ ջանազիր կը լինէր ծածկել, բոլոր թեթեւութիւնները:

Գլխաւոր հաճոյքներէն մին էր զարդարուիլ, զարմացուցն թիւր ստուարացնել, ու սրտի գոհեր կատարել:

Իւր խօսակցութեան հաճոյական նիւթն էր նորաձեւութիւնն: Երբ արկնոջ մի հանդիպէր, զիսէն մինչեւ ստրն աչքի կ'անցնէր զայն, նոր քննադատութեան նիւթ հայթհայթելով անձին. զգեստաց խնդիրն էական պայման մ'էր իրեն համար, ու կ'նոջ մի արժանապատուութեան աստիճանը հպածներէն կը գատէր ինչպէս և ունեցած բնկերական վիճակէն:

Իսկ ներսէսի գալով՝ երբ հօրը թախանձանքէն շարժեալ հաճեցաւ վերատին հայրենի յարկը վերադասնայ, անզուսպ հակակրօթիւն մ'զգաց մօրս ին զէմ, և այդ աննպատակ զգացումն ևս քան զեւս սաստկացաւ, թէեւ երբէք քաղաքապարական պահանջմանց զէմ չգործեց: Ստույգ է որ զժգոհ լուծեամբ իմն կը գատապարտէր հօրը ակարութիւնը կ'նոջը նկատմամբ:

Երիտասարդին ծանր և վայելուչ վարմունքն ստաճի օրէն պատկառանք ազգեց Տիկին Արգարեանի, և տարիներ բոլորելով ներսէսին ազգեցութիւնն ևս քան զեւս սաստկացաւ անոր վրայ:

Արգարեան երկու էդ գուակներ ունեցաւ երկրորդ կ'նոջմէն, որոց երեցագոյնը տասն երկու տարեկան էր, և կրտսերը՝ ինն՝ նոյն ժամանակին որ Արաքսիա կոչուած էր անտնց հետ ծանօթանալու:



Գ Լ ՈՒ Խ Ժ Ա.

Արաքսիա՝ յաղթելով հեռզնեալ այն յուզման որ գրաւած էր զինքն ընտանիքէն բամուկէն յետոյ, յետոյ, մինչ կը քայլէր փողոցին մէջ ջանաց մտայր տարրեր ուղղութիւն մի տալ, ու պատրաստուիլ իւր նոր կացութեան :

ՉՏիկին Արգարեանն ընտա չէր ճանաչեր. նոյնպէս և անոր չաւրջը գտնուած անձինքը : Թէև արի էր նա ընտ թեամբ, հանդերձ այստ սիրտը թունդ ելած էր և սատարիլ բարախում մ'ղգաց երբ տան գրան մտակցաւ գայն բախելու համար : Կանգ տաւ վայրիկ մի հոն, ձեռքը սրտին տարաւ թէ անոր թրթռայն արդիւ լիւ մտօք, ճիգ մ'ըբաւ հանդարտ կերպարանք մ'առնելու, զանգակը քաշեց, և երբ գուռը բացուեցաւ տեսաւ հանդէպ իրեն լաւ հագուած սպասաւոր մի սրուն գտող ձեւերը շատ խոկ կը յայտարարէին թէ նա կ'արհամարհէր իւր զգեստուց անչքութիւնը :

- Տիկին Արգարեանի տանը ա՞յս է արգեօք հարցուց, օրիորդը :
- Այո՛, պատասխանեց սպասաւորը սեղ կերպի :
- Տիկինը կրնա՞յ ընդունիլ զիս արգեօք :
- Ո՛վ գիտէ :
- Իմացուցէ՛ք իրեն թէ Օրիորդ Արաքսիա իւր տրամադրութեան ներքեւ է :
- Սպասուած վարժուհին դո՞ւք էք :
- Այո՛ :
- Իմ ետեւէս եկէ՛ք :

Սպասաւորին առաջնորդութեամբ անցաւ օրիորդն մարմարինէն ընդարձակ բակէ մը որ լի էր ծաղիօք գարմանազան և երփներանգ . վեր ելաւ լայն շրեղ սանդուղէ մի նոյնպէս մարմարեայ, հիասքանչ սրահի մի մէջ

տեսաւ անային հայելիներով և ոսկեզօծ կարասիօք զարգարեայ, և որուն որմերէն վար կախուած էին երեւելի հեզինակաց նկարներն, ու ձեզունին մէջտեղ կը ցոյար ճաճանչալից փտաւոր ջահ մի :

Արաքսիա գոհունակութեամբ նայեցաւ բոլոր այդ ճոխութեանց, զի կը գնահատէր ինչ որ արգիւնք էր լաւ ճաշակի, և մանաւանդ ինչ որ երեւելի հանճարի մտայ արագրութիւն էր :

Փոքրիկ վայելուչ սենեակի մ'առջև հասան. սպասաւորն հրաւիրեց զինքը ներս մտնելու և սպասելու մինչև որ, կ'ըսէր, Տիկինը հրամանները տայ իրեն, և ապա մարգն անչայտ եղաւ :

Տիկին Արգարեան երջանիկ էր մէն մի անգամ որ կրնար իբր թագուհի ներկայեանալ խորագունից աշայ, չլացնել զանոնք իւր հարատւութեամբն, ու պատկասանք ազգի ձեւերուն գոռօգութեամբը :

Հետեւապէս երբ սպասաւորն ներկայեցաւ Տիկինոջ իմացնելու համար վարժուհույ գալուտար, նա սեղ կզանակաւ պատասխանեց .

- Թո՛ղ սպասէ :
- Գրեթէ կէս ժամ անցաւ և ապա Տիկինն ոսկեզօծ արևիլեան կերպանն առաւօտեան զգեստ մի հագած տարածուեցաւ սրակապանին (boudoir) մէջ գտնուած բազմոցներէն միոյն վրայ՝ որ նոյնպէս արևելեան ճաշակին համեմատ կարմիր ու դեղին մետաքսեայ կերպասով չինուած էր : Որմերն զարդարուած էին թանկային գորգերով որոնց վրայ սիւսուած էին կրթածեփոքրիկ արծաթապատ հայելիներ, նոյնպէս և դետինը ծանրագին գորգ մի տարածուած էր : Ատտ և անդ փոքր սեղաններ՝ արուսեակով զարդարուած՝ հնութեան վերաբերող այլ և այլ նիւթերով բեռնաւորուած էին . միոյն վրայ արծաթեայ խնկաման մի կար որ անուշա-

բոյր հոտեր կը ծառայէր շուրջ, հեշտութեան գարմանալի ազդեցութիւն մի ներգործելով :

Աննեկին մէկ անկիւնը չափաւոր մարմարիոնէ աւազան մի կը շողջողար հոն կը լուացուէր Տիկիներ, երեսը սրբելով բարակ կտաւներով սակեզօծ ջուրքերով բանուած :

Բայց այս արեւելեան սճով սենեկին գեղեցկազոյն զարդն՝ բնական մեծութեամբ Տիկնոջ կենդանադիրն էր որ անմիջապէս սենեկին դրան հանդէպ կախուած էր՝ Անդ Տիկիներ ներկայացուած էր տաճկական կապոյտ զգեստով մի, վիզն աղամանդեայ պսակ մի կրելով : Յոտն կեցած էր սրպէս զի հասակներն գեղեցկութիւնն ի հանդէս բերէ : Նկարին մութ յատակը ի լոյս կը բերեր ամբողջ գեղեցկութիւնը կնոջ դիմաց ու զարդաց :

Անդ բնառ հետք չկար որ և է գրեանց, կարծես թէ խորան մ'էր Աստղիան նախորդերեայ, այնչափ ամեն ինչ աչքերը շլացնելու և զգայարանքը գրգռելու կը նպաստէր :

Երբ Արաքսիա սրակապանին դրան առջև հաստ , բոյր ու շողջուրթիւնը գրաւուեցաւ այդ շքեղ կենդանադրին :

Տիկին Արգարեան գոհունակութեամբ նկատելով զայդ հիացում մինչդեռ երիտասարդուհին կը նայէր սքանչացմամբ պատկերին առանց ներկայացնող անձր տեսնելու, պատրաստուեցաւ թազուհոյ ձեւեր առնուլ այն անձին նկատմամբ զոր արդէն իբր իւր հպատակը կը նկատէր :

Բայց երբ օրիորդը նշմարեց յանկարծ զՏիկին, նկարին նմանութենէն անմիջապէս հասկցաւ թէ կենդանագիրն զնա կը ներկայացնէր : Յայնժամ երիտասարդուհին ազնուական ձեւովը մօտեցաւ Տիկնոջ ու բարեւեց զայն ամենայն արժանապատուութեամբ առանց որ և է խոնարհութեան նշան տալու :

Տիկին Արգարեան որ գոհունակութիւն զգացած էր նախ աղջկան յայնամ զմայրմանէն, ի տես իւր կենդանագիրն, յանչափս դժգոհ եղաւ հաստատելով անոր անտարրեր ձեւերն այնչափ ճոխութեան առջև, ինչպէս և անոր մեծանձն գիրքն հանդէպ իրեն :

Անչուշտ այդ անտարրերութեան եզանակը կը նեղացնէր զՏիկին, քանի որ անկար էր նախանձու զգացում մի զարթուցանել, և հետեւապէս իբր ստրուկ խոնարհեցնել զօրիորդն իւր առջև : Բայց այդ կնոջ գոտող հոյին փութաց յայտնել այն մեծ բնկերական անջրպետն որ կար իրեն և աղքատ աղջկան միջև, ուստի արձամարհատ եզանակաւ մ'ըսաւ .

— Դու ն յանձնարարուած ես ինձ արժանահաստ անձէ մի. ջանա՛ դիւ գո՛հ բնել, գաւակացս պէտք եղած խնամքը տալով : Աւելորդ է բսել թէ քեզ համար մեծ բաղձ մ'է այդպիսի հարուստ տան մի ծառայելով :

Եւ ապա գառնալով սպասարկու կնոջ մի՛ յարեց .


— Սյս աղջիկը առաջնորդէ տղայոց սենեակը : Ողորմելի Արաքսիան սաստիկ հարուած մ'զգաց ի լուր այդ գոտող խօսքերուն, և անմիջապէս վերադառնալով անձի հետ գործ տեսնալուն : Հաստ եղաւ որպիսի անձի հետ գործ տեսնալուն : Բայց ի՞նչ կրնար բնել, իւր ծնողքը նպաստի պէտք տանէին, որով պարտական էր համակերպիլ իւր նոր վիճակին, մանաւանդ երբ խիստ գոհացուցիչ նիւթական վարձատրութիւն մի խոստացուած էր իրեն :

Տարին զինքն ընդարձակ սենեակ մի ուր կարասիք պարզ էին, մաքուր և վայելուչ և ուր երեք անկողին կային՝ որոց երկու փոքրիկներն մակարերեց թէ ներկայ գտնուող երկու տղայոց կը վերարբերէին, իսկ երրորդ մեծը՝ իրեն յատկացեալ էր անչուշտ : Երկու աղջկանց համակրելի գէմքերը լաւ տպաւորութիւն մը բրին վրան, ջնջելով մասամբ իրենց մօրն ըրած աննայատ ազդեցութիւնը :

Իրենն աստճնորդող կինն երկու տղայքը ցոյց աս-
լով բառ .

— Օրիորդ , ահա աշակերտուհիներդ , նայե որ
աղէկ հոգ տանիս անոնց : Այս մեծ տուն մ'է , մեզի
պէս դուն ալ բազմ ունեցար հոս մտնելու :

Ի՞նչ զգաց խեղճ Արաքսիա երբ տեսաւ զանձն իւր
գատապարտուած աղախնոյ մ'աստիճանին հաւասարե-
լու երբ այնչափ եզական գատախարակութիւն մ'ատա-
ցած էր : Բայց ինքը որդիական սիրոյ զոճն էր , նետե-
ւաղէս ամեն ինչ յօժարութեամբ պիտի տանէր :



Գ Լ ՈՒ Թ ՃԲ.

Երկու տղայոց քաղցր և անմեղ կերպարանքը վար-
ժուհոյն վրայ ախորժելի տպաւորութիւն մ'ըրաւ :
Մին էր խարտեաշ ոսկեթել մազերով , ճերմակ մսը-
թով , ու կապոյտ երազուն աչերով : Կարծես երկինք
կը ցոլային այդ երկու վճիռ աղբիւրներուն մէջ : Այդ
մանկան ձայնն երաժշտութիւն մ'էր , շարժումը՝ նա-
զելանք , և նայումքը՝ փայփայանք : Իտէական այն
երեւոյթներէն մին էր որ ծնած էր կարծես սիրելու ,
սիրուելու , տառապելու և մեռնելու համար : Այդպիսի
բնութիւնք խիտտ ազնիւ են աշխարհիս վրայ ապրելու
վրայ , զի գտնուութեանց թեթեւ բնոյճարումը կը բաւէ
զանոնք տառապեցնելու , ճնշելու և հարստելու հա-
մար ի սպաս : Այդ գողարիկ էակին անունն էր Աղաւնի :

Իսկ երկրորդն՝ Արմինէն , հակառակն էր բոտ ամե-
նայնի իւր երիցագոյն քրոջ : Թուխ էր կերպարանքը ,
աչերն հրավառ , բնութեամբ աշխոյժ , անհանգարտ ,
չարաձձիկ , զուարթ , շատախոս իբր զթուշուս գարնա-
նային , բարի և սիրուն : Կարծես սա ծնած էր բնոյ-

հակառակն բազմին հարուածոց պիտադրելու և նոյն
խակ չազթելու անոնց :

Երկու ներճակ տեսակներ կը ներկայէին այդ երկու
փափուկ և համակրելի արարածներն որք ազախիննե-
րու ձեռաց էին մատնուած՝ զուրկ մայրենի ամեն հո-
գատարութենէ : Ճաշի ժամանակ միայն տղայք սեղա-
նակից կը լինէին իրենց մօր , և ի ներկայութեան անոր
բոլորովին երկիւզիւ համակուելով , մին իւր նայում-
քին քաղցրութիւնը կը կորսնցնէր , և միւսը իւր աչ-
խոյժը : Կարծես թէ երկու յանցաւորք էին որ լսին
կ'աշխատէին մայրենի գատապարտութեան վճռոյն խրս-
տութիւնը մեղմացնելու :

Հայրն՝ թէեւ լի էր գորովով տղայոց նկատմամբ՝
սակայն կնոջմէ վախնալով , չէր համարձակեր զանոնք
իւր սիրոյն բացարձակ առարկան բնել : Անմիջապէս
որ երկու քոյրերն իրենց իրենց ձաշն աւարտած էին ,
կը փութային իրենց խոցը քաշուիլ բնկերակցու-
թեամբ իննամակալ կնոջ մի , փոխանակ ծնողաց չուրջը
կենդանութիւն , շարժում և նուազ տարածելու :

Վա՛յ այն կնոջ որուն հոգին զուրկ է մայրենի
բանաստեղծութենէ , և որ անկարող է կարգալ որդե-
կացը սրտին մատենանին մէջ , հո՛ն՝ ուր մէն մի օր՝ նոր
տառ մի կը գծագրուի ժամանակին , պարապայից և
գատախարակութեան ազդեցութեամբ : Այդ տառ մերթ
պայծաս է , մերթ սու , մերթ յատակ , մերթ ծած-
կուած , բայց կաթողի մօր մի համար միշտ խանալի :

Սակայն ուրիշ անկախ ազդեցութիւն մը կը տա-
րածուէր այդ մանկանց վրայ , այն էր ազդեցութիւնն
ներսէսի որ կը ջանար իւր լրջութեամբն այդ երկու
մատաղ տունկերուն ուղղութիւն մի տալ : Շատ անգամ
տղայոց սենեակն երթալով անոնց կ'ընկերակցէր , ու
խօսքերովն կ'աշխատէր այդ թարմ մտաց մէջ զար-

թացանել նշոյլ մի բանականութեան , և անոնց սրբա-
տին մէջ արծարծել սիրոյ կայծն : Երկու քոյրերն կը
ներկայանային հանդէպ իրենց եզրօր ինչպէս էին իրօք ,
այսինքն իբր զոչ մի հրեշտակ :

Զրկել տղայն ազատ գիրքովն հանդիսանալու իրա-
ւունքէն , զրկել է զարուստ իւր ծաղիկներէն , առուակը
իւր մրմունջէն , երկինքը իւր լոյսէն : Եւ երբ երկու
մանկունք կը տեսնէին իրենց եզրայրը , մին կը վար-
ձատրէր զայն երկարատեւ անուշ նայածքովր , և
միւսն սրտալից ճիշովր :

Բայց Ներսէս նկատելով թէ ինքն առանձին ան-
կարող էր ստանձնել հոգը կրթելու իւր երկու նազելի
պաշտպանեալներն , առաջարկեց մօրուին արժանատի
վարժուհոյ մի յանձնել անոնց գաստիարակութեան
փախուկ պաշտօնը , ազատելով այդ գոգարիկ էակներն
անկիրթ ազախիններու թունաւոր ազդեցութենէն :

Տիկինն՝ որ սովոր էր անսայ Ներսէսի խրատուց ,
հաւանութիւնը տուաւ , սրով վարժուհի մը փնտռուե-
լով իբր այդ ներկայացատ մեր Օրիորդ Արաքսիան :

Աստի նոյն միջոցին որ երիտասարդուհին տեսաւ
իւր երկու աշակերտուհիներն , ինչպէս բաինք արդէն ,
մխիթարիչ ազդեցութիւն մ'ունենալով , մօտեցաւ
անոնց , զգուեց զանոնք , անուշ ձայնիւն ու ժպտուն
աչովը խօսեցաւ , այնպէս որ կարծես յանկարծական
լուս գաշնադրութիւն մի համակրանաց զոչացաւ
անոնց միջեւ :

Հազիւ հազ երկու օրեր անցած էին , և արդէն
սիրոյ երբորդութիւն մի կը ներկայէին մանուկներն
իրենց վարժուհոյն հետ : Երկու քոյրերը՝ զուրկ ի գո-
րովոյ մայրենի , գտան յանկարծ ինչ որ կը պակտը
իրենցմէ , տկար պատկերը մայրենի սիրոյ :

Գթոյ կարօտ մանկան համար կ'նոջ սէրը անհրա-

մեշտ է : Արանց անձնուիրտ թիւնը կը կորուսի ման-
կան սրտի նրբութեանց մէջ զորս կանաչի հոգին կ'ըմ-
բանէ ամբողջովին , և զգուշաւորութեամբ ուղեւորելով
այդ նրբութեանց մէջ , առանց ոչինչ աւերելու և քան-
դելու , կը հասնի մինչ ցհոգին մանկան , զայն անուցա-
նելու համար կազդուրիչ սիրով :

Տիկին Արգարեան և ոչ իսկ կ'ուզէր իմանալ թէ
սրունք էին յարարերու թիւնքն զաւակացն իրենց վար-
ժուհոյն հետ : Տղայոց գաստիարակ մի պէտք էր , զայն
չնորձեց անոնց , ուստի առաւելն հոգալու հարկ չէր
համարեր :

Մայրեր կան սրք կը կարծեն իրենց պարտակա-
նութիւնը կատարած լինել երբ սրբուոյն նիւթական
պէտքերը հոգացած են : Տիկին Արգարեանի ազջիկները
միշտ լաւ զարգարած էին , արժանաւոր շքով շրջա-
գալութեան կ'երթային , ահա գաստիարակ մ'ալ իրենց ,
ի՛նչ կրնար գործուիլ առաւել քան զայն՝ բոտ Տիկին
Արգարեանի : Բայց եթէ հարկ լինէր այն տիկնոջ սրբ-
տին խորթ թափանցել , գուցէ հաստատուէր թէ բոլոր
այդ նիւթական ինամքը ցուցամոլութեան հետեւանք
էին և ոչ թէ մայրենի սիրոյ :

Բայց Ներսէսի հետազօտող նայածքը շտա թա-
փանցեց օրիորդին լարոյական հանգամանաց , սրով
ապահովուեցաւ թէ իւր սիրած քնքոյչ էակներն ար-
ժանաւոր ձեռաց յանձնուած էին : Մեծ էր չնորձաց
ներկործութիւնն Արաքսիայի մեր երիտասարդին վրայ ,
նա մանաւանդ կը սաստկանար այն օր քան զօր անոր
բարոյական և մտաւորական ճրիցն առաւելութեամբ :

Թէև երիտասարդն ոչ այնչափ յաճախ կ'երթար
մանկանց սենեակն որպէս յանցելու մն , այլ և այլ անա-
խորժ ենթադրութեանց տեղի չտալու համար , սակայն
ամեն ասթէ օգուտ կը քաղէր վարժուհոյն հետ տես-

նուեցու, և անոր թէ՛ խնաստալից խօսակցութեամբն
և թէ՛ պարկեշտ ներկայութեամբը կենդանանալու :
Թուէր Ներսէսի թէ՛ զիւր մայր կը գտնէր վերասին ,
և թէ՛ օրիորդին մօտենալ փափաքելով իւր անցեալ
օրերուն յիշատակը կը նորոգէր :

Միթէ՛ ս.բ կրնա՞յ միշտ ուսումնասիրել ծագումն
իւր զգացմանց : Ինչ որ Ներսէսի համար սրբազան յի-
շատակի կենդանութիւնը կը թուէր, ոչ այլ ինչ էր
բայց պարզապէս նորածիլ սիրոյ սկզբնաօրութիւնը :

Գ Ղ Ո Ի Խ Ժ Գ.

Շարաթները բաւական զիւրաստան կ'անցնէին մեր
վարժուհւոյն համար : Եթէ՛ իւր ծնողացը հետաւորու-
թեան գտնութիւնը, կամ անոնց երկուքին յարաբե-
րութեանց մասին զգացած երկխոյր, ինչպէս և հօրն
համար ունեցած արգահատանքը չլինէր, կրնար բոտիլ
թէ՛ նա բաւական գոհացուցիչ կացութիւն մի ապահո-
ված էր անձին, նա մանաւանդ որ ընդունած թոշա-
չակրան կրնար չափաւոր հանդատութիւն մի վայելել
տալ ընտանեացը, և այդ էր իրեն համար գլխաւոր
կէան իւր բաղձանաց : Աշխատութիւնն այն զոր կ'ի-
րազէր՝ թոյլ կուտար վերջապէս իրեն իրակացնել գոր-
ծելու սկզբունքը, և այնչափ գոհացուցիչ կերպիւ վա-
յելել անոր արգիւնքը ի նպատակ իւր սիրելեաց : Թուէր
իրեն թէ ինքն նոր անձնաւորութիւն մ'էր, թէ՛ օգ-
տակար անհատ մ'էր ընկերութեան, թէ՛ վերջապէս
կարող էր ըսել անձին. «Նո եւս ի հաշիւ կրնամ մտնել
ևս ինձմով, զի կամեցայ, կարողացայ, աշխատեցայ :»

Բայց եթէ՛ այդպիսի գոհանակութիւն իմն կը
զգար օրիորդն, ոչ այնպէս էր անոր մօրն նկատ-

մամբ : Տիկինն անկարող էր համակերպելու այն հար-
կին որ կ'առիպէր զիւր դուստր օտար իշխանութեան
հպատակելու, նա մանաւանդ կ'անդիտանար գուռը և
արհամարհոտ ձեւերը Տիկին Արգարեանի իւր գտեր
նկատմամբ, զի Արաքսիա՝ ի մխիթարութիւն իւր վի-
ճակը նկարագրած էր միշտ իբր մին ի լաւագունից :

Բայց եթէ՛ օրիորդն գրեթէ սեղանի ժամանակ տես-
նելով զիւր տիրուհին կ'ենթարկուէր անոր արհամար-
հանաց, ունէր ի փոխարէն ամեն վայրկեանի գոյու-
րիկ սէրը իւր աշակերտուհեաց՝ օրօնց համար ստիպու-
ղական պէտք մի գարձած էր ինքն :

Իսկ Պ. Արգարեանի վարժունքը քաղցր էր վար-
ժուհւոյն նկատմամբ բայց խիստ զգուշաւոր, զի եթէ
սովորականէն աւելի քաղաքավարութիւն մ'ընէր՝
Տիկինոջ խոժոռ նայածքը կը հրամայէր չուտով վերջ
տալ այդ ընթացքին :

Իսկ Ներսէս պատկառ համակրութեամբ կը շարու-
նակէր իւր վարժունքը երիտասարդուհւոյն հետ, նոյն
համակրութեամբ փոխաբիրութեամբ անոր կողմանէ :

Թուէր Արաքսիայի թէ՛ Ներսէսի վայելուչ ձեւերն
ու խնաստալից խօսակցութիւններն էին պատճառ իւր
զգացած գոհունակութեան ի ներկայութեան անոր, ու
կ'անդիտանար թէ՛ սէրն իւր հիմունքը հաստատօրէն
ձգէր իւր անարատ սրտին մէջ : Երբեմն երիտասարդին
հետ խօսած ժամանակը յանկարծական ջերմութենէ
զէմքին ողորուիլը կ'զգար, ինչպէս և թեթեւ չփո-
թութիւն մի :

Ներսէս կը նշմարէր գայգ, և ինքն իւր կողմանէ
կը յուզուէր : Երբէք երկուքն առանձին չէին գտնուած
ազատօրէն խօսելու համար, և գուցէ յանգէտու փոփո-
խակի իրենց սրտերուն վիճակն իրարու յայտնելու :

երկու հրեշտակներն որք միշտ վարժուհւոյն անբաժա-
նելիներն էին, կարծես պատուարն էին որք երկու հո-
գիններու սիրոյ ընդհարումը կ'արգիլէին: Քայց պիտի
հասնէր վերջապէս օրն՝ ուր երկու երիտասարդներն
փոփոխակի իրենց պիւրքն պիտի զգային:

Գ Լ Ո Ւ Խ Թ Վ

Տիկին Արգարեան ընդունելութեան մասնաւոր
օրեր ս. երեկոյթներ անէր, ուր ինքը կը զահակայէր
իրը թաղուհի զինքը պաշտօղ անձանց ու խնկարկուաց
մէջ: Իւր գլխաւոր հաճոյքն էր երիտասարդաց սիրտը
վրդովել, անոնց մէջ նախանձու սերմեր փոսել, և
մերթ միոյն և մերթ միւսին շնորհել քաջայերիչ ժպտա-
ներն ու նայուածքներն: Ասոնց մէջէն սմանք կը խո-
նարէին անոր քմահաճութեանց առջեւ, և իրր ստրուկ
կը վարուէին, այնպէս որ Տիկինն իրը խաղալիք գոր-
ծածերով զանոնք, անխիղճ կերպիւ կը նկատէր անոնց
սրտին արխիլը: Գեղեցկութեան այդ երկրպագուաց
մէջ կային սակայն այնպիսի ճարպիկ անձինք որ
արուեստաւորեալ անտարրերութեամբ կը պատասխա-
նէին Տիկինոջ փոփոխամիտ ձկտմանց, և ամեն առթի
օգուտ կը քաղէին, անոր սրամտութիւնը շարժելու և
նախանձը բորբոքելու՝ ի վրէժխնդրութիւն այն կա-
նացի մեքենայութեանց որոնց ենթարկուած էին
իրենք:

Աչնան կզանակն էր, Արգարեան ընտանիքը վե-
րագարձած էր զիւզէն ուր անցուցած էր ամառուան
կզանակը: Տիկինը հացկերոյթ մ'առաջարկեց երիտա-
սարդաց խումբի մի, որոնց թուոյն աւելցուց քանի
մը տիկնայք, բանբասանաց առիթները խափանելու

մտօք: Այդ տիկնայք ոչ միայն իրեն հետ ի պայքար
մանելու անկարող էին գեղեցկութեան մասին, այլ
ընդհակառակն առաւել ևս զայն ի լոյս բերելու կը
նպատակէին: Մութ յատակն էին մանաւանդ ուսկից
Տիկին Արգարեանի գիմական առաւելութիւնքն զուրս
պիտի ցայտէին յաղթական կերպիւ:

Տան Տիկինոջ հաշուոյն մէջ չկար ոչ իւր ամուսինն
և ոչ իւր գաւակները մասնակից բնել այդ գաշտային
խնջոյքին: Բայց ներսէս այլօրինակ մտածեց, որով
անտարբեր մայրը պարտաւորեցաւ միտեղ առնուլ
երկու աղջիկներն իրենց վարժուհւոյն հետ ի միասին:
Իսկ Պ. Արգարեան ընդգիմացաւ տղան թախանձանաց,
զույց կ'նսջ լուս հրամանացն հպատակելու համար:

Թէեւ շլացուցիչ էր Արաքսիայի գեղեցկութիւնն,
այսու հանդերձ Տիկինը կ'արհամարհէր զայդ. զի կը
մտածէր թէ ինչ էր վարժուհի մի որպէս զի անձն
ի նկատի առնուի, մանաւանդ ի ներկայութեան իւր,
երբ այնչափ շքով և զարդով կը փայլէր ինքն: Հետե-
ւապէս և ոչ իսկ ուշադրութիւն բրաւ անոր՝ բառ իւր
սովորականին:

Զուարճութեան իրը վայր ընտրուեցաւ Ֆլօրիան՝
Սան-Սթեֆանօի զրօսափայլը, որ Մարմարայ ծովան
վրայ կը տարածուի: Այդ սիրուն գաշար հովանաւոր-
եալ է արևոր ծառերէ, և անոնց մրմունջը յարստե-
պատմութիւնն է գոզցես այն նշանաւոր պատմական
արկածից որոնց ականատես եզան իրենք: Մտոց
չքոյն ներքեւ ընդարձակ աւազաններ իրենց խաղաղ
և հոն ի խաղ կը մտնեն թա-
փառական անհամար տերեւներ՝ երիտասարդ և փա-
խրատական սերունդ արևոր ծառատանին: Հոյք
թոչոց կ'ապաստանին այդ տերեւազարդ շարժուն
չէնքերուն մէջ, ծառոց խորհրդաւոր բարբառին միա-

ցնելով իրենց քաղցրալուր վանկերն ու յորինելով սիրոյ ներգաշնակութիւնը և նուազ և թոխ թոչնոց յարաեւ կենդանութիւն կը կազմեն այդ ճառաստանին մէջ որ նախասահմանեալ է լինելու բոլոր անմեղ զրօսանաց :

Մինչ խոսներամ բաղմութիւն մի մարդկանց, կանանց և տղայոց կը խոնին դարբնաց վրայ իրենց խնջոյքը կատարելու, երգելու և պարելու համար, յանկարծ կը յտնի մօտակայ պայթիւնը հրացանի մի որ կ'ուղղուի բնոյզէմ անմեղ թոչնոց՝ երկիւղ ազդելով խաղաղատէր հանդիսականաց :

Արեգակն ամառն ի բուն պայծառ ճառագայթներովը վայելէ շատ, և բնութեան վրայ տարած յազթանակէն յոգնած, թանձր ամպերով կը վարագուրէր իւր փայլուն երեսը : Մտտերը՝ գարկահար ու կորագլուխ իրենց անցեալ երիտասարդութիւնը կ'ողբային, մինչ իրենց ոտիցն առջեւ գօս տերեւները՝ որք երբեմն լուսով և կեանքով թրթուացած էին, հովուն խաղալիք եղած կը հայածուէին իրենց բնիկ ոստէն հետ, ի սպառ անհետանալու համար զերթ օրհասական պանզուխար :

Երբ դաշտն Գլորիայի՝ աշնանային տխրութեամբ համակուած, կ'ողբայ իւր կորուսեալ թարմ դարբնաց և զարմանազան ծաղկանց վրայ, յայնժամ խոսներամ զինեալ բաղմութիւն մ'որսորդաց սոյն վայրէն անցնելով որոտացող կենդանութիւն մի կուտան իրենց շուներուն հաչիւններովն ու հրացաններուն պայթմամբը :

Գիրուկ լուրամարգը մինչ օգին մէջ իւր ճարտար և օձապտոյտ թոխը կը փորձէ յաղթանակի ճիչեր արձակելով շուրջ, ահա զարնուած անգութ որսորդին գնդակէն՝ իւր երգն կ'ընդմիջէ ու բարձրէն գլորելով դաշտին չորցած խոտերուն մէջ կ'իջնայ : Շուները

զուարթ աղաղակներով թոչնոցն մահը կ'աւեակն իրենց սեղ տիրոջն որ խրոխտալով գետնէն կը վերցնէ իւր աւարը, ու նոյնչափ կը փառասորուի որչափ մեծ յաղթութեան մի վրայ :

Ուրեմն կիրակի աշնանային գեղեցիկ բայց մեկամաղձային առաւօտ մի իբր քսան հրախրեալք մասնաւոր կատրերով մեկնեցան Բերայէն Պոլիս երթալու համար, ուսկից չողեկաւք մտնելով հասան ի Ֆլորիա :

Ամենքն առաւել կամ նուազ զուարթութեամբ դաշտին այլ և այլ մասանց մէջ շրջագայեցին, վայրիկ մի իրարմէ հեռացան զանազան ճամբաներէ իրարու միանալու համար դարձեալ խնդալով և խօսելով : Տիկին Արգարեան ազու կամ խիտ նայուածքով կամ խիտ նայուածքով կամ գրգռիչ բառով յոյս մի կ'ողբէ : Երէր կամ կը փարատէր : Տիկնոջ այդ բնթացքը նախանձորդներու մէջ եղած հակառակութիւնը կամ նախանձր վառ պոհելու զիտասորութեամբ պարզապէս :

Արաքսիա ծառի մի ներքեւ նստած էր երկու աշակերտու հետցն հետ առանց այդ բնոյհանուր շարժման մտանակելու, մտածելով թէ գուցէ տճածոյ լինէր տիրուհւոյն իւր հրախրելոց բնթացքին հետեւելովն :

Երիտասարդներէն ոմանք նկատելով հրաշագեղ գեղեցկութիւնը աղջկան ինչպէս և համեստ ու վայելուչ վարմունքը, մօտեցան աստիճանարար անտր ուսկան հետը խօսակցել : Վարժուհին՝ առանց զանոնք քաջախրելու և սակայն առանց անքաղաքավարութիւն մի գործելու, ազնիւ բայց համաստ կերպիւ պատասխանեց, և օգուտ քաղելով վաստուն Արմինէի խաղերուն յարուցած ազմուկէն, թողուց երիտասարդներն ու ոչ եւս անոնց մօտեցաւ, իբր թէ աշակերտաց վրայ մօտէն հսկելու զիտասորութեամբ :

Ներսէս ատանց օրիորդին քովն երթալու , կը դի-
տէր զայն ի հետուստ : Երբ երիտասարդներն շրջապա-
տեցին զվարժուհին՝ նախանձու խայթուածք մ'զգաց ,
ինչպէս և փոփում անոր հետանալը նշմարելով , ու
ինքնիրեն զարմացաւ այդ տարօրինակ զգացմանց
վրայ :

Իսկ երիտասարդներէն մին՝ ի վրէժխնդրութիւն
աիկնոջ բննաւոր ընթացից իւր նկատմամբ , յարմար
առիթ գտնեց արտասովոր հիացում մի յայտնելու
օրիորդին շնորհաց ինչպէս և անոր խօսակցութեան
եղանակին վրայօք , և այսպէս յաջողեցան սէզ կնոջ
նախանձը շարժելու :

Ի խոր խայթուելով այդ գովասանութիւնքն լսե-
լով այլազունեցաւ , ակտաներովը շրթունքը չարչա-
րեց և ապա արհամարհաւ եղանակաւ մ'ըսաւ Տիկինը .

— Կը զարմանամ որ կը խոնարհիք վարժուհւոյ մի
վրայ աչք զարձնելու :

— Կը կարծէ՞ք , պատասխանեց երիտասարդը , թէ
կին մի շնորհալից ու ախորժելի չէ վարժուհի լինե-
լուն պատճառաւ : Ընդհակառակն աղջիկն այն որ իւր
աշխատութեամբը կ'ազրի , նոր փայլ մի կ'աւելցնէ
անձին :

— Քուցէ , ըսաւ սրտմտեալ կինը , ձեզ նման ան-
ձանց համար վարձկանի վիճակը հրապոյր մ'ուսնենայ ,
իսկ իմ մասին կը խոստովանիմ որ մեծութեանց և
ճօխութեանց մէջ ապրելու վարժ անձինք պարզապէս
կարեկցութիւն կրնան զգալ , և պատաս մի հաց հայ-
թայթել անոնց՝ որպէս զի անօթութենէ չի մեռնին :

Երիտասարդը սաստիկ բարկանալով այդ ուղղակի
ակնարկութենէն իւր համետ ընկերական վիճակին ,
ըսաւ բորբոքելով .

— Տիկին , խոստովանեցէք սակայն որ ձեր շնոր-

հած հացի պատար ոչ թէ արգահատական փափուկ
զգացումէ յառաջ եկած է , այլ պարզապէս վարձատրու-
թիւն է այն թանկագին խնամոց համար որ օրիորդը
կը մատուցանէ ձեր զաւակաց :

— Սպասաւորուհիներէս առաւել ի՞նչ կը դործէ
նա արդեօք :

— Զարմանալի նմանութիւն : Ի՞նչպէս . կ'ուզէք ,
Տիկին , որ անուս գլուխ մի նոյնչափ օգտակար լինի
որչափ մշակուած միտք մի և սիրաւ մի որք տղայոց
թէ՛ մտաց և թէ՛ սրտին ուղղութիւն կուտան :

— Եթէ , յարեց Տիկին Արզարեան , ևս առաւել
բորբոքելով , եթէ գատախարակութիւնն այդչափ օգ-
տակար ինչ լինէ՛ր , պէտք չէր որ այդ աղջիկը հրամա-
նատարութեանս ենթարկուէր իրբն ազախին :

— Տիկին , ուսմունքը հարստութեան գուս չի
բանար միշտ , այլ զմարդ կ'աղնուացնէ , անոր սիրաւ
կը կըթէ , միտքը կը բարձրացնէ , և զգօն ու խելացի
անձանց համարման արժանի կ'ընէ :

Տիկինն այդ խօսքերուն մէջ իւր սաման չափաւո-
րութեան ուղղակի ակնարկութիւն մի նշմարելով կը
պատրաստուէր դառնապէս պատասխանելու՝ երբ դի-
տելով թէ վարժուհին քանի մի քայլ հետու նստած՝
երիտասարդի մը հետ կը խօսակցէր , բոլոր իւր սրտմտու-
թիւնը անմեղ աղջկան վրայ թափելով ըսաւ .

— Օրիս'րդ , գրեզ հոս բերած եմ որպէս զի զա-
ւակացս ծառայես և ոչ թէ երիտասարդաց հետ խօ-
սակցիս :

Աղջիկը շանթահար եղած այդպիսի անակնկալ ու
անիրաւ կշտամբանքէ որ զիւր արժանապատուու-
թիւնը կը քարկոծէր , ոտք ելաւ և մեծանձն եղանա-
կաւ մ'ըսաւ .

— Տիկին , կարծեմ թէ տղայոց նկատմամբ պար-

տազանց չեմ գտնուած , քանի որ անոնք իմ քովս են իսկ եթէ այս պարոնին քանի մը խօսքերուն կը սրատասխանէի՝ բնական հետեւանք է այն ակնածութեան զոր հարկ է ինձ զգալ նկատմամբ այն բնատնեաց որուն հետ կը բնակիմ :

— Մի՛ մոռնար սակայն , ըսաւ գոռոզ կինը , որ քու պաշտօնդ տանս մէջ սպասաւորել է և ոչ թէ հիւրերս մեծարել . այդ վերջին հոգը ինձ կը պատկանի միայն :

Ներսէս՝ ի յոր այդ արճամարճոտ բառերուն իւր մօրտին , զգաց որ արիւնը զլուխը կ'երնէր , նկատելով մանաւանդ յուզեալ վիճակը վարժուհւոյն՝ առաւել ևս բորբոքեցաւ և Տիկնոջ մօտենալով , ըսաւ դատնութեամբ .


— Տիկին , իրատունք չունիք այդպիսի անարգանօք վարուիլ օրիորդին հետ : Նա ձեր տունը եկած է իբր զաստիարակ և ոչ իբր աղախին . ապացոյցն այն է , որ ձեզ բնկերակից և սեղանակից է . հետեւապէս իրատունք ունի ձեր հիւրերուն հետ խօսակցիլ ցորչափ վայելչութեան կանոնները կը ներեն : Իսկ այս մասին կրնամ ազանովել զձեզ թէ օրիորդն ամենայն արժանապատուութեամբ վարուեցաւ մինչև ցարդ :

Տիկնոջ արիւնը սկսաւ եռալ երակացր մէջ , նկատելով թէ Ներսէս այդչափ եռանդեամբ կը պաշտպանէր զվարժուհին : Անկարող լինելով անոր վրայ արձակելու գոռոզութեան ու զժգոհութեան հարուածները , կոնակը դարձնելով հեռացաւ մրմռալով հետեւեալ խօսքերը .

— Չգիտէի թէ այս անամօթ վարժուհին այսչափ լաւ սորված էր երիտասարդները շահելու արուեստը :

Այդ նախատական բառերն ամենուն իմանալի եղան : Արաքսիայի գէմբը կարմիր ներկուեցաւ : Իսկ

Ներսէս արձակեց իւր մօրտին արճամարճանաց ակնարկ մի զոր չտեսաւ նա սակայն . և ապա օրիորդին զառնալով նայեցաւ անոր այնպիսի գորովով որ կարծես թէ փոխարինեց զկոյսն նոյն պահուն կրած բոլոր հալածանացն համար :



Գ Լ Ո Ւ Ն Խ Փ Ե .

Բարերազգարար սպասաւորին գալուստը նախաձաշր պատրաստ լինելն իմացնելու համար , տարբեր ուղղութիւն մի տուաւ չփոթ մտայ : Ամենքը ստամոքսին անհրաժեշտ աուրքը մատուցանելու պէտքն զգալով՝ զիմեցին գէպ ի բնդարձակ սեղանն որ դալարեաց վրայ կը տարածուէր , և որ արեղական ջերմութենէն հովանաւորուած էր թաւաւ ծառոց չուրէն :

Տիկին Աբգարեան այդ գիւղային կոչուսքին ճիս կերպարանք մի տուած էր , արծաթէ ամաններ ու այլ և այլ սեղանի թանկագին սպասներ քաղքէն հեռը փոխադրել տալով : Բազմաթիւ բնտիր խորտիկներ հետզհետէ իրարու կը յաջորդէին , ու սպասաւորաց կարգաւորեալ ծառայութիւնը կը յայտարարէր թէ Տիկինը ստեղծ հացկերոյթներ տալու սովորութիւնն ունէր :

Յայդ վայր գտնուող օտարականք որք նոյնպէս եկած էին զրօսանաց օր մ'անցնելու մտօք , զարմացմամբ կը նայէին այդչափ ճոխութեանց վրայ , և այդ զարմացումը պահունակութիւն կ'ազդէր Տիկնոջ փոստախրութեան , որով մասամբ կը ջնջուէին ի նա քիչ յառաջ զգացած ցստման հետքերը :

Կերակուրներն , գինին և աշխոյժ խոսակցութիւնք հետզհետէ բնդհանուր կենդանութիւն ազդեցին ամենուն , այնպէս որ խրաքանչիւր օք զուարթ բառի

զուարթագոյնը յաջորդել տալու կը ճգնէր : Տիկին Արգարեանն սքանչելի էր իւր սիրուն ձեւերով , նայուածքնեբով և խօսքերով . վազրուհին տեղի տուած էր նազելի կնոջ որ կը ջանար ուրիշ գեղանոց մ'ըբամ ազգեցութիւնը ջնջել ի սպաս :

Մանուանց Տիկնոջ մասնաւոր ուշադրութեան և քաղաքավարութեան առարկան էր երիտասարդն այն զոր գոռոզ խօսքերովը վիրաւորամ էր քիչ յատաջ : Բայց նա չատ ի խոր խոցուած էր այնչափ շուտ մտնայու համար արձամարձանաց այդ ցոյցերը : Եւ որչափ իւր անտարբերութեամբը կը պատժէր Տիկնոջ քաղցր ու ազգու ձեւերը , նոյնչափ այդ քմահաճ արարածը եւս առաւել կը սրէր զէնքերն՝ երիտասարդին սրտին զօրաւոր սլաք մ'արձակելու համար :

Երկուքին մ'ջև լսին մրցում մի կար : Երիտասարդը կը պաշտէր այդ կինն , որ մինչև նոյն վայրկենին շատ անիրաւութեանցն հանդուրժամ էր , զանգատամ էր , վշտացամ էր , վայրիկ մի հեռացամ՝ բայց միշտ վերադարձամ էր առ նա իբր հաւատարիմ սարուկ : Նոյն օրն այդ վիրաւորեալ հոգին մտադիր էր վերջնական կերպիւ հեռանալ այդ հարստահարիչ զօրութենէն , բայց հեռանալ՝ այդ գոռոզ և անխիղճ էակին սիրտը նախանձով շարչարելէն վերջը Արաքսիայի շնորհիւ :

Երիտասարդը թէև չէր համարձակեր սեղանի վրայ վարժուհւոյն խօսք մ'ուղղել , անախորժ պատահարի մի տեղի շտալու համար դարձեալ , սակայն խիստ ստեղծակնարկներն գէպ անոր ուղղեց սքանչացման եղանակաւ մի : Չայդ ամենայն լաւ նշմարեց Տիկինն :

Այդ վիրաւորեալ երիտասարդին անտարբեր ձեւերը այնպէս սիրելի ըրին զինքն յանկարծ բննաւոր գեղանոցն , որ ուղեց անպատճառ իւր լուծին ներքև :

պահել զայն : Եւ յաջողելու համար ոչինչ խնայեց . բոլոր իւր զէնքերը շարժեց , ամբողջ գրաւելու զօրութիւնն ի մի կէտ ամբոխեց , լեզուին նոր անուշութիւն , խօսքերուն նոր հրապոյր տուաւ , աչերուն կրքկին անդիմադրելի հուր , շարժմանցը տարբեր նազելանք . վերջապէս այնպէս դիւթեց , կաշկանդեց զխեղճ երիտասարդն որ սա անհնարին տրիփով այրիւն զգաց վերատին , իբր թէ առաջին անգամի համար սիրամ լինէր այդ կինն :

Երբ Տիկին Արգարեանի սիրտն այդ կողմանէ վերջապէս հանգստացաւ , սկսաւ ուրիշ երիտասարդաց եւս մաս մի շնորհել իւր ժպիտներէն , նայուածքներէն և հառաչանքներէն : Այդ արուեստաւորեալ արարամին համար բնաւ դժուարութիւն չկար՝ ըստ քմաց և կամ ըստ բերմանց պարսպայից , փափուկ թէ խիստ , տխուր թէ ժպտուն երեւալու : Ուստի օրուան մնացորդ մասն անցաւ ծառոց ներքեւ հանգչելով , աստ և անդ շրջելով , խօսելով , երգելով , մինչև որ հասաւ վերջապէս ժամն վերադարձի պատրաստութիւններն ընելու համար :

Արաքսիա ճնշող ծանրութիւն մի կ'զգար սրտին վրայ նոյն վայրկենէն որ հրապարակաւ տիրուհիէն անդոտնեցաւ : Իւր արժանապատուութիւնն ոտից կոխան եղամ էր , և սակայն ինքն ոչ այլ ինչ կարող էր ընել եթէ ոչ լռել , համբերել , և գուցէ հանդիտակաւնաց արգահատութեան առարկայ լինել իբր անձ ոգորմելի : Իւր արիւնը կ'իտար , գլուխը կ'այրէր , արժամելի : Իւր արիւնը կ'իտար , կ'ուզէր նոյն նապատուութիւնը բողոք կը բառնար . կ'ուզէր նոյն պահուն թողուլ զամեն ինչ , հեռանալ , վերադառնալ բնտանեացը զօրը : Բայց յանկարծ անտնց թշուառ վիճակն աչացն առջև ներկայանալով՝ կը տեսնէր անտնց զրկումներն , անտնց յուսահատեցուցիչ վիճակը , կը յիշէր մօրն հակառակութիւնն աշխատելու սկզբան գէմ ,

կը մտածէր թէ, նոր այժ պիտի տար այդ հակառակու-
թեան, կը խորհէր իւր ստանձնած փրկարար պաշտո-
նին վրայ, ու ձեռնթափ կը լինէր, կը մաշէր ընդ մէջ
իւր սրտմտութեան և սրդիական պարտականութեանց :

Օրիորդն գրեթէ ւռտելիքներէն բան չճաշակեց. և
եթէ քիչ մի բան կերած էր բռնապրօսիկ կերպիւ՝
անձին ձեւ մի տալու և այլոց աչերէն ծածկելու նպա-
տակաւ էր՝ զգացած ներքին պատերազմը :

Վարժուհին ընդ մէջ երկու տղայոց նստած էր :
Իրմէ քիչ հետո էր ներսէս սր սաստիկ կը տառապէր
օրիորդին տաղնապնները նշմարելով, զի սիրահարաց
յատուկ նուրբ տեսութեամբը իրեն սիրելի եղած ան-
ձին սրտին խորը կը թափանցէր. արդէն :

Թէև երիտասարդն ամենայն զգուշութեամբ կը
վարուէր Արաքսիայի հետ սեղանի ժամանակ, խորթ
մօրը կասկածները չգրգռելու համար, այսու հանդերձ
իւր գաղտագողի նայուածքներովը վշտացելոցն կա-
րեվէր հողին կ'աշխատէր մխիթարել, յայտնելով
իրեն թէ յինքն ունէր բարեկամ մի : Իսկ Արաքսիա
երախտագիտութեամբ կը նայէր անոր, յիշելով մանա-
ւանդ թէ քիչ յատաճ սրպիտի քաջութեամբ զինքն
պաշտպանած էր :

Տիկին Արգարեան եւս զայդ չէր մոռցած. ու թէև
կը լրտեսէր զներսէս, սակայն բտական ազատ վայր-
կեաններ չունենալով նշմարելու համար անոր զգու-
շաւոր նայուածքները, ու մասնաւոր կասկածանաց
բան չտեսնելով, մակարերեց թէ ներսէս զարմանալի
անձ մ'էր, և թէ գուցէ ինքնաբերաբար հնազանդած
էր իւր սովորական տրամադրութեան ազքատները
ջերմարար պաշտպանելու :



Գ Լ Ո Ւ Ք ԺԶ.

Յետ աւարտման նախաճաշի, մեկուսացաւ վար-
ժուհին աշակերտուհեացն հետ, և ոչ եւս կարողանալով
համբերել, ազատութիւն տուաւ արտասուացն հոսե-
լու : Երկու տղայք իրենց սիրեցեալ օրիորդին ցաւը
նկատելով գիրկը նետուեցան ու երկուքը յայով միա-
բերան ջանացին զինքը մխիթարել, իւրաքանչիւրն
զգալու եղանակին համեմատ :

Ի տես արգահատական ու համակրալից զգացման
Արաքսիա յուզուելով, զանոնք ուժգին սրտին վրայ
սեղմեց, ու արխանալով և աչերը սրբելով բտաւ .

— Մ'ն, սիրուն և սիրեցեալ էակներ, չեմ ուզեր
դր յա.ք. այսօր՝ պէտք է ուրախ լինիլ, զուարճանալ և
նոր այժ ատենի ձեր գասերը լաւ եւս շարունակելու
համար : Ես ոչինչ ունիմ, նայեցէ՛ք ես եւս ուրախ եմ :

Ուրք ելաւ, առաւ երկու մանկունքը ու սկսաւ շըր-
ջապալիլ, զէմքին շինծու զուարթութիւն մի տալով :

Ծառի մի ներքեւ ստանձնացած էր ներսէս իբր
թէ քնանալու համար, և այսպէս ամեն ընկերութենէ
հետո էր : Իւր սիրտն եւս կ'արխնէր Արաքսիայի
կրած նախատանաց համար, ու կը բաղձար մօտենալ
անոր բտելու համար :

— Օրիո՛րդ, ես քաւ պաշտպանդ եմ, բնաւ երկիւզ
մ'ունենար :

Բաց այդ վարժուհիք խոհեմութիւն չհամարելով,
հողին վրայ ընկողմանեալ մնաց, ու կը տեսնէր զվար-
ժուհին, ինքն անտես մնալով : Ուստի նշմարելով սրտա-
ժարժ տեսարանը զոր կը ներկայէին տղայք հանդերձ
օրիորդան, բնազգումբ օտք ելաւ յանկարծ ու սուրաց
դէպ այն կողմն ուր կը գտնուէին մեր երեք անձինքն :

Անմիջապէս որ եկու քոյրերն տեսան իրենց եղբայրն, անոր ընդ առաջ երթալով՝ անհամբեր Արմինէն ըսաւ .

— Գիտե՞ս, եղբայր, մեր սիրելի օրիորդը կ'արտասուէր քիչ յառաջ. մեր սիրտն այնպէս ցաւեցաւ որ մենք եւս սկսանք լալ իրեն հետ :

Իսկ Աղաւնի անխօս ու աչերը գետինը յառած՝ այդ զրոյց հաստատեց արտասուքի չիթով մի որ իւր աչերէն վար գլորեցաւ :

Արաքսիա նկատելով թէ իւր տկճութիւնը կը մատնուէր այդ երկու անմեղ մատնիչներէն, այլազունելով ըսաւ .

— Իրօք յանցաւոր եմ երկու հրեշտակացս ուրախութիւն խափանած լինելուս պատճառաւ : Բայց պիտի ջանամ քաւել լիովին իմ յանցանք :

Նկատելով թէ իրենց սիրելի վարժուհին առանձին չէր, և յորդորանօքն Ներսէսի՝ տղայքը քանի մը քայլ հեռացան, գաշտային ծաղկանց մուռնջ մի կազմելու դիտաւորութեամբ : Աղաւնին ծռած էր գալարեաց վրայ բայց հոգին այլուր էր . աչերն խոնաւ էին, դէմքին վրայ տխրութեան հետք մի կար : Արաքսիայի ցաւոց մանկական հոգի մի երկարածիգ արձագանդ կուտար :

Իսկ Արմինէ ցնցուեցաւ, զգածուեցաւ, լացաւ իրօք, բայց մէկ վայրկենի մէջ տխրութեան ամեն հետք ջրնջուած էր : Ինքը գարնան ծաղիկն էր որ աշնանային ծաղիկ կը քաղէր : Եռանդեամբ կը խօսէր իւր քրոջ, ցոյց կուտար թիթեռնիկը՝ ու իրեն նման ընդոտս պարով կ'երթար կուգար մէկ ծաղիկէն միւսը, իւր յեղեղուկ յօժարութիւնները մէկ բոցէն միւսին տանելով : Յոյց կուտար վազուկ ջուրերն ուր թռչունը՝ հանգոյն իրեն, կ'երթար զանոնք զրգուելու իւր թեւերովը : Յոյց կուտար ծառերը, երկինքը, մարդիկը, կենդանիները :

վերջապէս լեզուն, աչերը, մարմինը, ամեն ինչ կը շարժէր :

Աղաւնի կը լսէր քրոջը ձայնը, կը նայէր ծաղկանց բայց սեւ էր իւր հոգին, միտքն այլուր էր : Կը յիշէր անբնդհատ արտասուքը իւր պաշտելի վարժուհւոյն, և եթէ կարող լինէր՝ պիտի գայրանար մօրն ընդդէմ նոյն իսկ որ պատճառած էր զայդ վիշտ :

Տղայք մտաց զարմանալի նրբութիւն ունին . կ'ըմբռնեն տկնթարթով, կը հասկնան ինչ որ իրենց չէ բացատրուած : Թէեւ Աղաւնին կ'իմանար թէ իւր մայրն վիրաւորած էր զօրիորդն, բայց համայն սէր և քաղցրութիւն լինելով անկարող էր սրամտելու :

Երբ Ներսէս առանձին ֆուսկ երիտասարդուհւոյն հետ, կարծես լեզուն պապանձեցաւ : Եկած էր հօն, սողայքը հեռացուցած էր խօսելու նպատակաւ, և ահա բառ մ'անգամ արտասանելու անկարող էր :

Արաքսիա՝ ոչ նուազ չուարեալ քան գերիտասարդն, ինքն եւս լուս կը կենար : Բայց այդ նեղացուցիչ վիճակին վերջ տալու՝ և մանաւանդ երախտապարտ սրտի մի պարտքը լրացնելու համար ըսաւ .

— Պարո՛ն, թոյլ տուէք ինձ հաղորդել ձեզ բոլոր իմ չնորհակալիքս ձեր զիւցազնական պաշտպանութեան համար ինձ նկատմամբ, երբ դժբաղդարար տիրուհւոյս հարուածոց ենթարկուեցայ : Գիտեմ որ ազրուհւոյս հարուածոց ենթարկուեցայ : Գիտեմ որ ազրուհւոյս հարուածոց ենթարկուեցայ : Գիտեմ որ ազրուհւոյս հարուածոց ենթարկուեցայ : Գիտեմ որ ազրուհւոյս հարուածոց ենթարկուեցայ :

Այդ խօսքերն ուժգին ցնցեցին զՆերսէս, դառավերտին բոլոր իւր կորովը, և արժանաւոր կերպիւ ու ծանր եղանակաւ պատասխանեց .

— Օրի՛որդ, այս պարագային մէջ ըրածս ոչինչ բան մ'է ըստ ինքեան : Կը խնդրեմ ձեզմէ չի խնայել զիս մէն մի անգամ որ ինձ պէտք կ'ունենաք : Ինձ

համար աղքատ կամ հարուստ չկայ, մարդ կայ միայն, չարք կ'արճամարճեմ, աղնիւր կը յարգեմ պաշտելով: Գո՛ւր, օրիորդ, աղնիւն էք, որով պաշտամանցս իրաւունք ունիք:

Վարժուհին կարմրեցաւ, ու առաւել աչերովը քան թէ խօսքերովն յայտնեց իւր շնորհատարտ սրտին զգացումները:

Նոյն միջոցին երկու աղայք իրենց կը մտաննային: Արմինէ կ'ընթանար ձեռքերն լի ծաղիօք, և զանոնք երկու մասի բաժնելով՝ մին եղբորը տուաւ, իսկ միւսը՝ օրիորդին: Բայց Աղանի ծանրաքայլ կը յատաճանար, միայն փոքրիկ ծաղկի փունջ մի հնար բերելով, և զայն մատոյց իւր վարժուհւոյն, ախար աչօք նայելով անոր:

— Ինձ ոչի՞նչ կը բերես, բառ երիտասարդն, ժպտելով:

— Դո՛ւ թշուառ չես, պատասխանեց աղան, ու Արաքսիայի նայելով աչէն արտասուք մի գլորեցաւ գարձեալ փափուկ այտիցը վրայ:

Օրիորդն զինքը բազկացը մէջ առնելով բառ.

— Ո՞վ իմ հրեշտակս, զտարթացի՛ր, ես ապերջանիկ չեմ:

Ներսէս այնպէս ի գութ շարժեցաւ, այնպէս յագուեցաւ որ ինքզինքը մտնայով գոչեց.

— Ո՞վ իմ կրկին անգամ սիրելի Աղանիս, այո՛ իրաւունք ունիս պաշտելու այս օրիորդը:

— Հապա ե՛ս, բողոքեց միւս գողտրիկ էակը, միթէ՞ ես չեմ պաշտեր զինքը:

— Այո՛, դու եւս անչուչտ կը սիրես զնա, սիրուն քուրիկս, բառ երիտասարդն: Սիրեցէ՛ք զինքն և ես զձեզ կրկին սիրովս պիտի փոխարինեմ:

Ներսէս զլջաց արդէն այդչափ եռանդեամբ խօսած

լինելուն համար, ու հեռացաւ ի հապճեպ թէ՛ իւր յուզմունքը ծածկելու և թէ՛ իւր մօրուին ուշադրութիւնն իւր վրայ չգրաւելու մտօք, զի նոյն միջոցին Տիկին Արգարեան հիւրերովը կը չըջազայէր, և յատաճ քան անոր վերադարձին, հարկ կը համարէր երիտասարդն իւր նախնի վայրն զառնալա՝ իրր թէ հանգրտան պէտքն արդարացնելու գիտաւ որով թեամբ

Արաքսիա այնչափ յափշտակուած էր լսածէն ու տեսածէն որ անկարող էր խորհելու և զգացմանցը չփոթնութիւնն իմանալու: Բայց հեղձեալ ու շարքերելով՝ ներսէսի մէն մի բառերը կրկին ու կրկին անգամ յիշեց, երկրորդեց ինքնին, ամեն խօսքին ճիշդ նշանակու թիւնն ուստի մատիբեց, և ամեն մէկը սրտին խորը կարգաւ և անջնջելի կերպիւ դրոշմեց: Իւր կրած արճամարճանքը, ցուր, թափած արտասուքը, վերջապէս զամեն դասն յիշատակ կորոյս այդ վայրկենին անբացատրելի քաղցրութեան մէջ: Իւր սիրտը կը գոչէր իրեն թէ սիրուած էր այդ աղնիւ, զեղեցիկ և իսկացի երիտասարդէն: Տարակուսանայ տեղ կը մնա՞ր արդեօք երբ նա այնչափ աղնուութեամբ զինքը պաշտպանած էր, ու նոյն միջոցին զեռ այնչափ քաջարեամբ էր զողոյս զինքը սիրելու: Յայտնի կը լինէր թէ մանկանց միջոցաւ իւր զգացումներն ուզած էր յայտնել:

Մինչդեռ այդ հեշտալի աղաւորութեան ներքեւ էր, ահա սեւ կասկածը իւր երանութեան բոյսը միտպնեց: Ո՞ր գիտէ, մտածեց վարժուհին, թէ այդ երիտասարդին զեղեցիկ վարժուհին արգանատութեան զգացում չէ պարզապէս: Քիչ յատաճ ինքն համայն երանութիւն էր, և նոյն պահուն կարծես ջղերը քարայցան, սրտին բարբախումները զազրեցան, ու ինքն ալ արձանացաւ սրտին սատոյցներուն մէջ: Բայց մեծ ճիզ

մ'ընելով այդ մահացուցիչ վիճակէն դուրս ելաւ և գոչեց .

— Ո՛հ, կ'ուզեմ վայելել այս հեշտագին վայրկեանը, կ'ուզեմ հաւատալ որ սիրուած եմ, կ'ուզեմ ապրիլ աննման կեանքով բոպէ մի յաւիտենական ցաւեր կրելու համար յետոյ : Այո, կ'ուզեմ հաւատալ, հաւածելով ամեն տարակոյս :

Ապա յափշտակութեան մի քանի վայրկեաններէ վերջը մտնեցաւ տղայոց սրբ քանի մի քայլ իրմէ հետ կը գտնուէին, բուռն եռանդեամբ առաւ բազկացը մէջ զԱղաւնին՝ որուն համակրական արտայայտութեանց կը պարտէր գլխաւորապէս Ներսէսի գորովանաց ցոյցերը :

Գ Լ Ո Ւ Ք Թ Է .

Օրն կը յառաջանար և Տիկին Արգարեան բնաւ յօժարութիւն չէր յայտնէր վերագարծի նշան տալու, այնչափ ինքն գոհ կ'երեւար ծառոց, բնութեան և երկտասարդաց ընկերութենէն : Մերթ միտոյն թեւն առնելով պտոյտ մի կ'ընէր և մերթ միւսինը : Ոչ կը ձանձրանար և ոչ ալ կ'ուզէր վերջ տալ իւր գտարծութեանց . եթէ կարելի լինէր արեգակն իսկ պիտի կասեցնէր :

Բայց վերջապէս հասաւ ժամն վերագարծին, զի Ներսէս բռնաբարեց կերպով իւր ք Տիկնոջ կամքն, յիշեցնելով անոր թէ խոհեմութիւնը ձեռքէ թողլու չէ աշնան եղանակի մէջ, և թէ հարկ է ձամբայ ելնել յառաջ քան արեւուն մայրը մտնելը : Տիրուհին ակամայ հնազանդեցաւ, որով քիչ մի հաքը ամենքը հանգատուէն նստած էին ընդարձակ նաւակին մէջ զոր

չորս առոյց նաւավարք յառաջ էր վարէին . ի ձայն երգոց արանց և տիկնանց :

Այդ ընդհանուր ուրախութեան ցոյցերուն մէջ Արաքսիա և Ներսէս լուս կը կենային միայն : Կոյսն խռովայոց՝ կը ջանար ցորչափ պարկեշտութիւնը կը ներէր իրեն, կարգալ ըստ կարեւոյն, երկտասարդին ներէր իրեն, կարգալ ըստ կարեւոյն : Եւ մէն մի անգամ աչաց մէջ իւր կեանքը կամ մահը : Եւ մէն մի անգամ որ երկիւղած աչերն կ'ուզէր գէպ անոր որ իր իրեն հանդէպ նստած էր, կը հանդիպէր նայուածոցն որք անբացատրելի պերճախօսութիւն մ'ունէին, ու կը հասանբացատրելի պերճախօսութիւն մ'ունէին : Արաքսիա այնպիսի տատէին սիրուած լինելն անկէ : Արաքսիա այնպիսի անբացատրելի վայելք մի կ'զգար որ թուէր իրեն թէ իւր գլխոյն վրայ տարածուած կապոյտ անձիրը, ինչպէս և իւր գոգին մէջ զինքն որորոզ հեղուկ անսահմանութիւնն անբաւական էին իւր հոգւոյն խանդը բովանդակելու :

Արեգակն իբր հսկայ բոցավառ, ջրոց մէջ կ'իջնար հանդէսու համար և ծովն թուէր իբր ոսկեփայլ մեծատարած անկողին, յարգարուած ի պէտս ցերեկուան իշխանին որ հետզհետէ ամիսփութելով իւր փայլուն մեծութեան մէջ, ննջեց յետոյ ջրոցն ի գոգ, ինքզինքը ծածկելով :

Լուսինն երևցաւ երկիւղալից, մերթ թեթեւ և մերթ թանձր ամպերէ քողարկուած, իբր թէ ապամերթ թանձր ամպերէ քողարկուած, իբր թէ ապահանջ հովուելու համար թէ զինքը նսեմացնող իշխանն ոչ եւս յերկինս կը տիրապետէր, և թէ ազատ էր ինքն եւս գերթ ատեղաց թագուհի, արշաւել երկնից զիչերամած անջրպետաց մէջ :

Կը սուբայր նաւը միշտ արագընթաց իբր նետ մի ալիաց մակերևութին վրայէն : Բայց ծովն որ հարթայատակ էր, սկսաւ հետզհետէ ելուէջներ ունենալ, ու ատեղագարդ երկնից երեսը պղտորեցաւ :

Նաւաւարաց աշերն գէպ ի վեր կ'ուզուէին ան-
 դադար, իրենց նայուածոց մէջ անհանդատութիւն մի
 կար զոր ի զուր կը ջանային ծածկել. իրենց թիա-
 վարութիւն այնպիսի արագութիւն մ'ստացաւ որ
 յայտնի էր թէ կ'ուզէին քաղաք հասնիլ յառաջ քան
 փոթորկին պայթումն:

Ամպերն ատօրճանարար իրարու մօտենալով սև
 պատնէջ մի յօրինեցին ընդդէմ աստեղաց, ու այդ պաշ-
 նէշներն հեաղհեաէ թանձրանալով սպանացող մտթ
 զօրութիւն մի կազմեցին: Հողմն որ մինչ նոյն պա-
 հուն բաւական սանձուած էր, իւր ուղղութիւնը փո-
 խելով յանկարծ հիւսիսային կողմանէ սրարչաւ եկաւ,
 և իբր թէ իւր հանդուցները ջախջախելով՝ գաղտնի
 նման սկսաւ սուլել, վազել, ջուրերը տակն ու վրայ
 բնել, ու խնդալ ահակու կերպիւ ի տես իւր չարա-
 գործութեանց:

Երկինք կ'երկնէր որտալով, ու գալարելով աղիք-
 ներն ահագին ճայթմամբ ճնունդ կուտար շանթին՝ որ
 իբր հրային հրէջ նորածին, ծովուն կատաղի կոհակաց
 մէջ կը վիժէր խորատոյզ անհետանալով: Այնկոծու-
 թիւն մ'էր բոլոր իւր սաստկութեամբը:

Նաւակն՝ իբր փրփրադէզ խաղալիք մոնչոյ կոհա-
 կաց, կարծես մերթ ծովուն խորը կ'իջնէր, և մերթ
 ջրոց ահարկու բարձրութեան վրայ ելնելով՝ վերասին
 ծովուն անդունդը թուէր թաղուիլ:

Նաւաւարաց ճիչերը, յուսահատական բացազան-
 չութիւնները, մթութիւնը, անապուէն վիճակ մի,
 մահուան տեսարանը, վերջապէս ամեն ինչ սարսափ
 կ'աղղէր նաւուն մէջ գանուող անձանց: Ոմանք յու-
 սահատօրէն ճիչեր կ'արձակէին. ոմանք կուլային,
 ոմանք կ'աղօթէին, և ամենքն իրենց վերջին վայր-
 կեանը հասած կը համարէին: Երկու աղայք մանաւանդ

իրենց սիրելի օրիորդին կը պլլուէին լալով և իրմէ
 օգնութիւն խնդրելով: Աղջիկն չունէր բաւ մխիթա-
 րութեան զի ինքն նոյն բանի կը կարօտէր:

Բայց ահագին կոհակ մի այնպէս գահավիժեց զնա-
 լակ ծովուն մէջ որ ամենքը միաբերան աղիտորմ ճիչ
 մ'արձակեցին իբր մնաս բարեաւ կենաց: Սակայն նաւը
 վերասին ջրոց գազաթն ելաւ իբր թէ հրաշխւք:

Յայնժամ Արաքսիա բռնելով աղերաաղին Ներսէսի
 ձեռքերը, լայեօք խնդրեց իրմէ, որ եթէ այդ փոթոր-
 կէն կարողանար ազատել շնորհիւ լողալու կարողու-
 թեանն, Երթայ իւր ծնողաց և յայտնէ անոնց թէ
 Արաքսիա իրենց նաւիկն իւր վերջին մտածութիւն-
 ները:

Նոյն պահուն կրկին անդամ նաւակն թուեցաւ
 ծովուն արեաց մէջ իջնալ. գարձեալ նաւն վեր բարձ-
 րացաւ:

Ներսէս որ օրիորդին ձեռքը բռնած էր այդ վտանգի
 վայրկաններու մէջ, զայն սեղմելով սրտին վրայ,
 բաւաւ:

— Կամ միատեղ փրկուէինք և կամ միատեղ
 մեռնինք:

Ահա որ էր սիրոյ այդ գաշնադրութիւնը մահուան
 վտանգին մէջ:


Հուսկ յետոյ վերջացաւ մահու և կենաց գարձու-
 րելի խաղը գրեթէ կէս ժամ տեւելէ վերջը: Հողմն
 յոյնած էր ծովուն ալիքները խառնակելէն և գալա-
 րելէն, ու բաւականացած՝ աղղած սուկմանէն ու սրը-
 տայուցութենէն, հանդարտեցաւ վերջապէս: Ծովն որ
 վայրագօրէն կը մոնչէր ու փրփուր կը ժայթքէր, նոյն
 վայրկենին հեղահամբոյր կը մրմնջէր, նաւուն կողերը
 փայփայելով, իբր թէ ի նշան զղջման իւր գործած
 անօրէնութեանց համար: Իսկ Երկինք յետ որտամանցն

և պայթմանց կը հանդէս լուծեամբ : Մինչ լուսինն որ գէմքը ծածկեր էր կարծես չուզելով իւր վճիար նշոյլիւքն աւերման ու կործանման տեսարանաց դործակից լինել, փայլեցաւ ամենայն գեղեցկութեամբ, ամպերն իրմէ արտաքսելով :

Երբ ամեն ինչ հանդարտեցար և սրտերը հազեցան, ամենքը միատեղ փառաբանութեան ձայներ արձակեցին : Ոչինչ այնքան հողիները կը միացնէ որչափ մեծ վտանգը. և երբէք կեանքն այնչափ հեշտագին չերևար որչափ մահը խիստ մօտէն տեսնելէն վերջը :

Յորժամ Տիկին Արզարեան հանդերձ բնտանեօքն հասաւ իւր տունն, արդէն գիշերը յառաջացած էր և Պ. Արզարեան անտանելի մտատանջութեան ենթարկուած : Փոթորիկը, խաւարը, բոյր սիրելիացը վտանգի մատնուած լինելուն գաղափարը զինքը մահուան դուռը հասցուցին : Բայց երբ տեսաւ իւր կիներն հանդերձ գաւակօքն, սիրտն անհնարին տագնապէ ազատեցաւ :

Հանդարտելէն անմիջապէս վերջը՝ մարդս բնական բերմամբ կը փափաքի կշտամբանօքն առ հեղինակն իւր շարժարանաց կրած տառապանացը վրէժն առնուլ : Բայց այդ մխիթարութիւնն ներելի չէր Պ. Արզարեանի, թէև մտադիր եղած էր մանաւանդ զկիներն յանդիմանել : Անմիջապէս որ տեսաւ զնա՝ կորոյս իւր քաջութիւնն և շատացաւ իւր գոհունակութիւնն յայտնելու իրենց յաջող վերադաձին համար :



Գ Լ Ո Ւ Խ Ծ Ե Ը.

Նոյն գիշերն Ներսէսի համար անհնարին եղած էր ննջիլը, զի Արաքսիայի պատկերն աչացը ներկայ էր անընդհատ : Վերահասու եղաւ վերջապէս իւր սրտին բուն վիճակին, և զգաց թէ բուռն սիրով կը սիրէր զկոյսն շնորհալի : Բայց ինչ որ կը տագնապեցնէր զինքն՝ իւր անորոշ վիճակն էր որուն կ'ուզէր ընդ փոյթ վերջ գնել : Օրիորդին սիրտն ազա՞ւ էր արդեօք, և եթէ ազատ փոխադարձ զգացմամբ պիտի փոխարինէ՞ր իւր սիրտը : Այս այլ և այլ մտածութիւնքն գիշերուան մեծ մասը տառապեցուցին զինքը : Եւ երբ վերջապէս միտքն ու սիրտը յողնած թմբեցաւ ու քնոյ մէջ քիչ մի հանդարտեցաւ մէկ կամ երկու ժամ, յանկարծ արտի բարախմամբ արթնցաւ և նկատելով թէ կարծ սրտի բարախմամբ արթնցաւ և նկատելով թէ արեւն արդէն իւր շրջանն սկսած էր, անկողնէն ելաւ, հագուեցաւ փութով ու անմիջապէս պարտէզ իջաւ ուր վստահ էր գտնել զվարժուհին :

Տիկին Արզարեան մասնաւոր խնամօք զարդարել տուած էր իւր Բերայի տան պարտէզը : Թէև բնդարձակութեամբն զարմանալի չէր այն, սակայն ծառատաններովը, կանաչ թանձր հովանիներովն ու մասնաւոր ճաշակաւն, սքանչելի էր ու ամեն հիացման արժանի :


Ամեն տառաօտ վարժուհին պարտէզ կը տանէր տղայքը մտքուր օդ ձծել տալու և սակաւ ինչ մարմնամարզութիւն ընել տալու համար :

Նոյն գիշերն Արաքսիա եւս երկար ժամանակ անքուն քնացած էր, մտացն ու սրտին մէջ յերիւրելով օրուան և գիշերուան պարագայներովը, և բիւրիցս երկրորդելով Ներսէսի խօսքերը : Կը մտածէր թէ տաքակուսանաց պատճառ չկար այլ եւս, քանի որ վտանգի

ժամանակ նոյն իսկ երիտասարդն իրեն խոստացած էր ապրիլ և մեռնիլ իրեն հետ : Թող թէ ներսէս աղնու ա սիրտ անձ մ'էր, այլ անհնար էր կեղծել վտանդի ատեն երբ մահն այնչափ մերձ էր : Այդ ապահովութիւնը կը բաւէր զԱրաքսիան աղջկանց երջանկագոյնն բնելու համար : Ի՞նչ երջանկութիւն, կենակից լինել այդ պիտի անզոյց երիտասարդի մի օրուն սրտին ու մտաց գանձերն գնահատելու համար վեց ամսուան միջոց ունեցած էր, անոր հետ նոյն տան մէջ բնակելով : Կը խորհէր թէ հոգի մի որ այնչափ հաւատարիմ մնացած էր մօր մի յիշատակին, որպիսի՞ հատատամտութեամբ պիտի սիրէր կենացն ընկերը :

Ասկէ ի դատ վարժուհին ցնծութեամբ կը մտածէր թէ իւր ծնողացը կենաց բարեխառութիւնը պիտի հաստատէր, թէ հայրն ոչ եւս իւր մօր մեղապարանաց առարկայ պիտի լինէր երբ ինքն գեղեցիկ վիճակի մի հասնէր, և այս վերջին պարագայն մանաւանդ զինքն անհուն զոհունակութեամբ կը համակէր :

Արաքսիա կը բաղձար արթուն մնալ իւր երանութեան ամեն մէկ մասը հանդարտօրէն վայելելու մտօք գիշերային առանձնութեան և լուսիկան մէջ : Բայց վիշտն ինչպէս երջանկութիւնը զմարդ թմրեցնելով կը յոգնեցնէ, որով վերջապէս քնոյ մէջ իջնալով կը հանգչի և կը վերականդնի :



Ք Լ Ո Ւ Խ Ժ Թ.

Առաւօտեան զարթումն Արաքսիայի բոլորովին տարբեր էր ներսէսինէն, զի կոյսն արթնցաւ գեղեցիկ յոյսին ժպտելով : Ո՛րչափ հեշտագին է սիրոյ առաջին ժաքուր չողր որ կը լուսաւորէ կոյս սիրաը, ուր ամեն ինչ վճիտ է, հաւատք է և վստահութիւն, ուր պատրանքն իւր սեւ գրոջմը չէ թողած, և ուր զգացման անարատ յատակը սիրոյ ակօսը կ'ընդունի առաջին անգամի համար :

Երբէք արեգակն այնչափ զուարթագեղ չէր փայլած աչացն կուսին : Երբէք կեանքն այնչափ տենչալի չէր թուած և երբէք այնչափ եռանդ չէր զգացած ծնողացը համար աշխատելու և զանոնք զոհ ու երջանիկ տեսնելու : Արաքսիա կ'զգար թէ գործելու և սիրելու բոլոր հանգամանքն առաւել եւս զօրացած էին, բայց ոչ այնպէս էին սակայն և իւր խորհելու կարողութիւնքն, զի մտացը մէջ անհնարին շփոթութիւն մի կը տիրէր, ու խորհուրդք խառն ի խառն իրարու կը յաջորդէին : Երբ սիրաը կը տիրապետէ՝ միտքը երկրորդական գեր մի խաղալու կը դատապարտուի :

Նոյն իսկ աղայոց նկատմամբ կրկին աշխուժիւ համակուած էր վարժուհին, մանաւանդ Աղաւնիի մասին որ առաջն օրէն ի վեր առաւել եւս սիրելի էր իրեն քան զիւր քոյր :

Ուստի անմիջապէս որ արթնցաւ նա՝ քիչ մի ժամանակ աչքէ անցոց վերտին նախընթաց օրուան սիրային պարագայները, և երբ ոսկեզօծ երազներու ընդ երկար զիւր լինելն հաստատեց՝ ճիգ մ'ըրաւ ու ելաւ տեղէն :

Կարծես բնագրմամբ առաջին գործն եղաւ Աղաւնիի անկողնոյն մերձենալ, և նորա այտից կարմրու-

Թիւնը նշմարելով ինչպէս և շնչառութեան սակաւ ինչ
դժուարութիւնն՝ և երիտասարդունիւն յուզեալ՝ ձեռքը
մանկան ձակտին տարաւ և զզաց թէ սակաւ ինչ ջեր-
մութիւն կար հոն :

Նոյն միջոցին զողորմիկ արարածն աչերը բանա-
լով տեսաւ որ վարժունին իւր քովն էր ու կը նայէր
իրեն անհանգիստ զորովով մի : Փոքրիկը ժպտեցաւ
անոր յայտնելով թէ ունեցածն ոչ այլ ինչ էր բայց
զլիտ ծանրութիւն և թեթեւ ցաւ մի :

Արաքսիա սակաւ ինչ սիրովեցաւ տղուն այդ յայտա-
րարութենէն և խնդրեց որ օրն ի բուն անկողնոյ մէջ
մնայ իբր խոհեմութեան միջոց : Սիրով նազանդեցաւ
սիրուն էակն , և անա վարժունին որ քիչ մի ետքը
նստաւ հիւանդին մնարին մօտ հակողութեան պաշտօնը
վարելու համար , հետեւապէս նոյն առաւօտ Արմինէէ
ազախնոյ մի խնամաց յանձնուեցաւ պարտէզ իջնա-
լու համար :

Աւտի երբ Ներսէս սրտայտղութեամբ կը դիմէր
յայդ վայր , վերջնական կերպիւ իւր բազըր վճռելու
համար , մեծ եղաւ զարմանքն երբ փոխանակ երիտա-
սարդունւոյն ազախին մի նշմարեց : Իսկ Արմինէ ընդ
առաջ երթալով եղբօրն , փութաց իմացնել քրոջն ան-
հանգստութիւնն իւր սովորական անհամբերութեամբ :

Ներսէս սուրաց զէպ ի սենեակն հիւանդին , բացաւ
զուրը սակաւիկ՝ առանց բնաւ ձայն հանելու , և տեսաւ
զօրիորդն որ գորովանօք կը հսկէր աշակերտունւոյն
քունին վրայ : Ներս մտաւ ամենայն զգուշութեամբ ,
և սենեկին մէջտեղ կեցած , սքանչացմամբ կը նայէր
այն անձնուէր էակին որ մօր պաշտօնը կը վարէր այն-
քան անկեղծութեամբ :

Բայց թեթեւ ձայն մի լսելով վարժունին գլուխը
զարձուց և տեսաւ զերիտասարդն որ հիացմամբ իրեն
կը նայէր՝ թեւերը կուրծքին վրայ խաչածեւ :

Այլայլեցաւ , այլազունեցաւ կոյնն , մինչ սիրտը
պայթելու աստիճան սատոիկ կը արտփէր :

Ներսէս անոր շփոթութիւնն նշմարելով բաւա .

— Ներեցէ՛ք , օրիտ՛րդ . յանկարծական զալտեանս
և այս դիրքիս : Չձեզ քրոջս անկողնոյն քով տեսած
ժամանակս՝ յիշեցի մանկութեանս այն պարագայներն
ուր մայրս քունիս վրայ կը հսկէր այնչափ խանդա-
զատանօք , և սքանչացած կեցայ անչարժ , զի ի ձեզ
զմայրս թուեցաւ ինձ պաշտել :

— Պարո՛ն , պատասխանեց Արաքսի , իւր հան-
դարտ կերպարանքն առնելով , խիտա հաճելի է ինձ
յիշեցնել ձեզ պարագայ մի որ ձեր որդիական սրտին
համար կարեւորութիւն ունի . զի գիտեմ արդէն թէ
ս՛րջափ սրբանուէր է մայրենի յիշատակը ձեզ համար :

— Եւ արդեօք թոյլ կուտա՞ք ինձ որ նուիրական
մեռեալի մի յիշատակը ձեզ նման ազնիւ անձի մի գա-
զափարին հետ խառնելով , և երկուքն ի մի՝ ձուլելով
պաշտամանս հանապազօրեայ ատարկան ընեմ :

Արաքսիա յուզման սատակութենէն լուռ կը կենար :

— Ո՛հ , զոչեց Ներսէս ցաւելով , ձեր սիրտը տէ՛ր
մ՛տնի արդեօք :

Վարժունին նկատելով անոր վրդովմունքն , և
ինքն նայնչափ վրդովելով պատասխանեց .

— Պարո՛ն , սիրտս ազատ է բոլորովին :

— Ներելի՞ է ինձ յուսալ արդեօք թէ ես պիտի
լինիմ անոր բացարձակ տէրը :

Ազջկան սիրան այնչափ ուժգին կը բարախէր որ
բերնէն բառ էր ելնէր :

— Պատասխանեցէ՛ք շուտ , աղերսեց Ներսէս , զի
այսչափ անձկութիւն բաւ է ինձ արդէն . խօսեցէ՛ք
ազատօրէն առանց խնայելու ինձ :

Արաքսիա կամ վարժունին

Վարժուհին աչերը վեր առնելով ու քաղցրութեամբ նայելով անոր բառ .

— Պարոն, խիստ մեծ է պատիւն որ կ'ուզէք ընել ինձ : Խնդրեմ նկատեցէ՛ք ս՞րջափ անհամեմատ կերպիւ կը տարբերին մեր ընկերային վիճակները :

— Սէրն, օրիս՛րդ, կը քանդէ ամեն ընկերային խտրոց, թո՛ղ թէ ձեր գատիարակութեամբ արժանի էք ամենէն փայլուն վիճակաց : Նա մանաւանդ այն ընկերային խտրոցք պարզապէս նախապաշարմունք են և ոչ այլ ինչ :

— Բաջտ թիւն ունի՞ք ստնակոխ ընելու ընկերային նախապաշարմունքն որ մտքերու վրայ այնչափ կը բռնանան, գո՛ւք, հարուստ երիտասարդ, անչուք վարժուհուց մի բաղդակից լինելով :

— Օրիս՛րդ, նախապաշարման խօսք կ'ընէք երբ ձեր վարժունքն ամեն համարման և հիացման արժանի է : Դո՛ւք փոխանակ չքառոր ծնողաց բնւ լինելու՝ ընդհակառակն անոնց դասն վիճակը կ'ամռքէք ձեր աշխատութեամբ ու ծնողաց գուրգուրանաց հրաժեշտ տալով անսիրտ օտարականաց, քամահանաց կ'ենթարկէք ձեր փափուկ անձը : Դո՛ւք կենաց սեթևեթից ու ճոխութեանց չէք ակնակառուցց, զի փոխան զարգուց մէջ երանութիւն փնտելու՝ ձեր պարզութեամբք կը փայլիք և գո՛հ կը լինիք ձեր ծնողաց հանդատութիւնն սպառնալիքով : Արհամարհանաց խօսք կ'ընէք գուք երբ ձեր անձնուրաց վարժունքով պաշտուելու արժանի էք :

Արաքսիա այնպիսի երախտադիտական ու պերճախօս աչօք նայեցաւ անոր առանց բնաւ խօսելու, որ երիտասարդը քաջալերուելով այդ լուր բարբառէն՝ մօտեցաւ անոր, ու ձեռքը ձեռացը մէջ առնելով բառ .

— Ո՛հ, Արաքսիա՛, բերնովդ հաստաակ ինչ որ աչերդ կը յայտնեն ինձ արդէն : Ըսէ՛ թէ համայն սիրտդ ինձ կը նուիրես յաւետ :

— Ո՛րջափ հեշտին է սրտիս համար այդպիսի խօստում մ'ընելը :

— Ո՛վ հրեշտակային արարած, ս՛ի կենացս լոյսը, ապրինք ու բեմն միատեղ, գոչեց ներսէս խանդավառ : Եւ կուրծքէն մանրանկար կենդանազիր մի հանելով ու զայն ցոյց տալով աղջկան, բառ .

— Կ'երգնում առաջի մօրս որ սք՝ բացի քեզմէ, ինձ ընկերակից պիտի լինի, Արաքսիա :

Եւ սեղմելով սրտին վրայ ձերմակ և փափուկ ձեռքն աղջկան զոր բռնած էր տակաւին, շրթանցը տարաւ զայն, բսելով .

— Այս վայրկեանէս սկսեալ՝ ես կենացդ անբաժանելին եմ :

Ո՛վ Աստուած իմ, մրմնջեց աղջիկն աչերը գոցելով. մարդկային սիրտը բաւական գորաւոր չէ այսչափ երանութեան տոկարու համար : Ներսէս, ընկճիրս կը զգամ երջանկութեան բնութիւն ներքեւ :

Նայն միջոցին Աղաւնին փոքրիկ շարժում մ'ըրաւ : Երկու սիրահարներն իրարու ձեռք թողուցին, ու վարժուհին ընթացաւ մերձ ազուն անկողնայն : Բայց առանց արթննալու իւր քունը շարունակեց գոլարիկ պատանուհին :

— Տե՛ս, բառ ներսէս, անմեղութեան հրեշտակը մեր սիրոյն վկայն է :

— Կը սաշտեմ այս սիրուն արարածը, ներսէս, զի անոր պատճառաւ հնչեցիր ինձ երէկ առաջին խօսքերն որք զ՛նոյիս այնչափ հրճուեցուցին :

Մեր երկու երիտասարդներն իրենց սիրային խօսակցութիւնն բաւական ժամանակ շարունակելէն

վերջը՝ Ներսէս մասնաւորապէս խնդրեց որ իրենց խոստումն բոլորովին զազանի մնայ, և մասնաւորապէս Տիկին Արգարեանի կասկածները չյարուցանելու համար ամեն ճիշտ թափուի. վասն զի համոզուած էր որ այդ չար կինն ամեն միջոց ի գործ պիտի գնէր, իւր ամուսնութիւնն արգիլելու համար:

Ներսէս մէկ տարի պայմանաւորաբար տուաւ Արաքսիայի, որպէս զի կարողանայ ամեն ինչ կարգի գնել և բոտ արժանւոյն իրենց բնակութեան համար վայելուչ տուն մի եւս պատրաստել:

Երիտասարդը թէեւ հօրը հետ գործադրութիւն կ'ընէր, սակայն իւր հաշուոյն համար եւս զատ առևտրական զբաղմունքներ ունէր, որով անկախ վիճակ մի հաստատած էր անձին:

Բայց ինչ որ զվարժուէին անբացատրելի երախտազիտութեամբ համակեց՝ Ներսէսի խոստումն էր զՊ. և զՏիկին Վարսամեան իրենց տան մէջ բնակել տալու իրենց հետ միասին: Չգիտէր կոյսն ինչ բառերով չնորհակալ լինի այդ ազնիւ հոգւոյն որ իւր ներքին իզձերն այնչափ լաւ կը գուշակէր: Ինքն արգարեւ կը պաշտէր զՆերսէս, սակայն եթէ հարկ լինէր զոնկ իւր սէր ի պէտս ծնողացն՝ զայդ ապահովապէս կը կատարէր ազջիկն առանց վայրկեան մ'իսկ զեղեւելու:

Արաքսիա հաճութիւն խնդրեց իրենց փոխադարձ խոստումն իւր ծնողացը միայն յայտնելու և անոնց օրհնութիւնն ստանալու, զի վստահ էր անոնց հաճելի ինչ գործած լինիլ: Այդ առ հասանեցաւ երիտասարդն:

Նոյն իսկ Պ. Արգարեան պիտի անդիտանար իրենց սիրային զաշնադրութիւնը: Թէեւ հարց լաւագոյնն էր նա, հանգերձ այսու Ներսէս կը ճանաչէր անոր տկար կողմը կնոջը նկատմամբ, որով կը վախնար թէ յակամայս այդ գաղտնիքը կը մատնէր իւր ամուսնոյն:

Նոյն միջոցին սենեկէն ներս վիժեց որոտալից Արմինէն, և չարուցած ազմուկէն արթնցաւ քնքայն Աղանին, տեսնելով առ սնարաւն զիւր եղբայր և զիւր վարժուէին: Ժպտեցաւ երկուքին անոյշ ժպտով տեսաստեց լաւագոյն վիճակ մ'ունենալը:

Քիչ մի ժամանակ երիտասարդը քրոջը մօտ կեցաւ, խօսեցաւ անոր, խնդաց, կատակներ ըրաւ, և մեկնելու տեսն յորդորեց զինքն հանդարտ կենալու օրն իբրև, և խոստացաւ երեկոցեան վերադարձին ընծայներ բերել իրեն եթէ օրիորդին ամեն կամաց հնազանդէր առանց զինքը նեղելու:

— Միթէ՞ հարկ է այդ վարձատրութեան, ինձ նուիրական եղած անձին հնազանդելու համար, պատասխանեց սիրուն արարածը:

Արաքսիա ձեռքը գնելով մանկան ձակտին վրայ, անոր ջերմութեան աստիճանը հաստատելու մտօք, և երիտասարդն եւս այդ օրինակին հետեւելով, իրենց ձեռքերը միացան սրբութեան այդ յատակին վրայ՝ իրրեւ ուխտ յախտենական միութեան: Իսկ Արմինէ երգերովն ու զտարթութեամբը կարծես երկու սիրուհարաց սրտին տօնը կը խմբէր:

Գ Լ Ո Ի Թ Բ.

Միտակ որուն վայրիկ մի հանդիպեցանք Պ. Վարսամեանի հարստութեան կործանման առթիւ, Արաքսիայի հետ երկու եղբոր թոռունք էին մօր կողմանէ, և ինչպէս գիտենք արդէն Փարիզ գնացած էր փաստաբանութիւն ուսանելու զխառնորթութեամբ: Բայց փոխանակ այդ ճիւղին նկրտելու, հեշտագոյն գտաւ գրոսանայ հո-

ասնքի մէջ անկանիլ, ու այդ մեծ մայրաքաղաքին հրապտրանաց զո՞ լինիլ: Յատրոններու կողմանոց- ներէ կ'անցնէր հմայիչ սրահապանները ու այդ գեղ- խութեանց մէջ կը մտնէր սակին և կը կորսնցնէր ժա- մանակը, ուսման նուիրելով այն ժամերն միայն գորտ կը յաջողէր գողնալ վայելից վայրկեաններէն:

Այդպիսի շուայ կենաց համար երկար ժամանակ չէր կրնար տեսլ անշուշտ չափաւոր հարստութիւն մի, ուստի մեր հեշտասէր երիտասարդը վաղ ընդ փոյթ մտնեց գրեթէ բոլոր գոյքը, որով փաստարանութեան շրջանն ընդմիջելով վերադարձաւ ի Պոլիս, հետն բերե- լով փճացած ժառանգութեան մի մնացորդները, ան- կատար ուսմունք մի ու շատ յաւակնութիւններ:

Նոյն պահուն Միսակ հազիս քսան ևւ վեց տարե- կան էր. թուխ էր, ազդու և համակրական գէմք մը ունէր, աչերը հրապառ, զծապրութիւնը կանսնասոր, հասակը բարձր և վայելուչ:

Սրատիւն ու մտքովն օտարացած էր հայութենէն. ազգային զգացումը բոս մ'էր իրեն համար, հայ անունը նախատինք մի և հայ բարբառը բարբարոս- կան լեզու մի. վերջապէս կ'արհամարհէր ինչ որ հայ էր: Արանչացումը կը խօսէր ընդհակառակն ամեն նիւթերու վրայ որ օտարազգեաց կը վերաբերէր. կը գովէր անոնց մեծագործութիւնքն, ինչպէս և անոնց թերութիւնքն ու մոլութիւնքն: Չայնն էր ներդաշ- նակ, և խօսելու եզանակը փայլուն, պերճ և ազդու:

Ամեն նիւթի վրայ կը ձուռէր, մասնապարտութեան վրայ յախտան գատաստան կ'ընէր ինչպէս գեղարուես- տից և գիտութեանց: Պոլսոյ իրաւագէտք, բժիշկք, պաշտօնակալք, մասնագէտք, ամենքն ալ ոչինչ էին իրեն համար: Ինքն Փարիզ գնացած էր և այդ կը բաւէր գամենքն արհամարհելու համար: Նոյն իսկ արե-

ւելեան գեղեցկութիւնը խտտիւ կը քննադատէր, ինչ- պէս կանանց ձևերը, խօսելու, զարգարուելու և վար- ուելու եզանակը:

Տեսակ մի թեթեւ և շողջողուն խելք մ'ունէր նա, այսինքն մասնաւոր ճարտարութիւն մ'ամեն բասի երկգիմի նշանակութիւն տալու, գամեն ինչ հեզներու, խելք բանեցնելու մտք, ծանր թէ աննշան իրերը կամ առարկայները անխտրաբար իրեն նիւթ բնորե- լով ու այլոց ծաղրը գրգռելով:

Կարգ մ'անմիտ անձանց համար Սիսակ հանձար մ'էր խելքի և ուսման մասին, զի տիեզերական կը նկատուէին իւր հմտութիւնք, քանի որ ամեն նիւթի վրայ կը խօսէր գիտութեամբ թէ անգիտութեամբ:

Չտիկնայս չլացնելու համար ևւս մասնաւոր տա- զանդ մ'ունէր: Այնպիսի վատան կերպիւ կը խօսէր Փարիզու ազնուական գատուն վերաբերող գեղե- ցիկ սեռին վրայ, որ թուէր թէ բոլոր օրերն անոնց հետ անցուցած էր, երբ փոքրաց մէջ հանդիպած էր անոնց միտն:

Իսկ տիկնայք նկատելով իրենց նկատամար գոր- ծածած ծանր քայց քաղաքավարական ձևերը, ինչ- պէս և մեծարարբառ խօսքերը, իրեն հմտութիւնը ճա- չակի և հազուատի մասին, վատվաւուն ու հեզնող խօ- սակցութիւնը, տիկնայք ուրեմն գոցցեա մագնիսական ազդեցութեամբ երիտասարդէն կը գրատուէին:

Երբ Սիսակ ընկերութեան մի մէջ կը գտնուէր՝ կանացի իզձերն առ նա կը ձկուէին: Գեղանիք գաղ- տաղսղի ջանիւք կը ձգնէին անոր ուշը գրաւել և կերպով իւրիք կը հպարտանային անոր նոյն իսկ չա- փաւոր ուշադրութեան առարկայ լինելով:

Ինչ որ նոր է և փայլուն՝ մտաց վրայ անդիմադրելի հրապոյր մ'ունի: Բայց այդ շողջողուն երևութիւն ներ-

քեւ ծածկուած սեւ կէտերն հետզհետէ երեւան երնելով՝ այդ շրջացիչ առարկային ազդեցութիւնը կը ակարանայ ժամանակին օրնութեամբ, ինչպէս և խելացի անձանց լուրջ գատողութեամբն և անոնց գատապարտութեամբը:

Սիսակ յետ իւր վերադարձին Փարիզէն՝ արգարեւ կատարեալ յաջողութիւն մ'ունեցաւ ընկերութեանց մէջ, թէև զգօն մասը չուտով վերահասու եղաւ անոր ունեցած արժանեաց:

Արաքսիա կը ճանաչէր զՍիսակ սոցալ տիւոցն ի վեր, ու իրենց միջև եղբայրական ընտանութիւն մի գոյացած էր ի վաղուց անտի: Երբ վերադարձաւ երիտասարդն Եւրոպայէն՝ աղջիկն շուտ իսկ հասկցաւ ազգականին կարողութիւնքն՝ փառք իւր մտաց կորովին ու ստացած հաստատուն ուսման: Շատ անգամ մանաւանդ իմաստայից կատակներ կ'ընէր որոնց ներքեւ կծու գասեր կային իւր ազգականին նկատմամբ: Բայց եթէ Սիսակ կը նեղանար երբեմն աղջկան կատակներէն՝ այդ գատապարտող լեզուն չէր կարող սակայն իրեց փոխադարձ մտերմական յարաբերութիւնքն այլայլելու:

Հանդերձ բոլոր թերութիւններովն՝ Սիսակ սիրելի էր Արաքսիայի, նա մանաւանդ որ սա կը զուարճանար անոր ծաղրող և գրգռիչ խօսակցութեան ունկնդնելով: Իսկ երիտասարդն պատկառանք կ'զգար օրիորդին համար ու նոյնչափ համակրանք, թող թէ անոր ազդեցութիւնը կը կրէր շատ պարագայից մէջ: Երբեմն Սիսակ կ'ըսէր Արաքսիայի.

— Եթէ ամուսնանայի քեզ նման անձ մի կ'ընտրէի: Իսկ կոյան խնդարով կը պատասխանէր:

— Շնորհակալ եմ բրած պատուոյդ համար, բայց վստահ եղիր որ ինձ նման մտածող անձը հետոյ ամուսնանալու յանձն չէր առներ երբէք:

Այդ խոսքերը լսելով Սիսակ կը բողբէր, թէև Արաքսիա բսածին վրայ հաստատ կը կենար դարձեալ:

Շատ անգամ երիտասարդը կը պատմէր ազգականին իւր տարած յողթութիւնները կանացի աշխարհին մէջ, և աղջիկը կ'ախտտար այն գեղանիներուն վրայ որք թեթեւարար իրենց սիրտը կը ձօնէին իրեն:

Սակայն երբ Արաքսիա նշմարեց թէ իւր սիրելի վարդանոյշն եւս կը կախարդուէր իւր ազգականէն՝ սարսափեցաւ ու ամէն ջանք ըրաւ անմեղ կուսին սիրան ապառազինելու մտօք անոր գէմ: Բայց Սիսակի հրապոյրներն յաչս վարդանոյշի վեր էին քան զամեն իմաստութիւն և զգուշութիւն:

Օրիորդը բազմիցս առիթ ունեցած էր հանդիպիլ երիտասարդին այլ և այլ տեղեր, հետք պարել ու խօսակցիլ: Ի բաց առեալ անոր գիմական շնորհներն և փայլուն խօսակցութեան ազդեցութիւնն ու պարելու մատնաւոր յաջողութիւնը, կոյան գրաւուած էր մանաւանդ երիտասարդին ծանր և անտարեր ձևերէն:

Կանայք կը սիրեն ընդհանրապէս ո՛վ որ անսխալ կը ձևացնէ զանձն իրենց նկատմամբ, և որչափ անտարբերութիւնը մեծ լինի՝ նոյնչափ կ'աճի և իրենց եռանդն այդ անձէն սիրելու համար:

Ի զուր Արաքսիա կը յորդորէր զիւր մտերմութիւն իւր տալու այն վտանգաւոր անձէն: Ի զուր կը խնդրէր Սիսակէն որ խնայէ բարեկամութեան, իւր անձնատէր թեթեւութեանց այլուր յազուրոյ տալով: Տորչափ ինքը ներկայ էր՝ այդ սիրային յարաբերութեանց յատաջ երթալուն արգելք կանդնեցաւ: Բայց վարդանոյշի սիրոյ զգայմանց արդելք չի մնաց երբ Արաքսիա իւր տունէն հեռացաւ:

Նոյն ժամանակ որ մեր վարժուհին Արգարեան ընտանեաց քով գնաց, Սիսակ առժամանակեայ կեր-

պիւ բացակայ էր Պոլսէն, որով ինքն յուսաց թէ չորս ամսուան բացակայութիւն մի գուցէ կարող լինի ջրնջելու նորածին սիրոյ հեռքերը, բայց այնպէս չէր: Այն ինչ վերագարձաւ Սիսակ ի Պոլիս՝ Վարդանոցը բեկանելով սանձահար զգացմանը լուծը, յախուսն ընթացաւ սիրոյ ասպարէզին մէջ:

Գ Լ Ա Ի Թ Ի Ա.

Արաքսիա փութաց հազորակ ճնողացն լուրն իւր ասպարայ յոչսերուն: Երբ Պ. ու Տիկին Վարսամեան իմացան խնամութեան մի ասպահութիւնը փայլուն ընտանեաց մի հետ՝ ինչպէս էր Արդարեան ընտանիքը, կարծես պիտի յիմարէին իրենց չափազանց գոհունակութենէն:

Անկար հայրը քիչ քիչ մնաց որ ուրախութեանը գոհ երթար: Նա կը մտածէր թէ գուտարն այն որ իւր անկարողութեան պատճառաւ արսորուած էր հայրենի յարկէն, պիտի վերագառնար առ ինքն լի մեծութեամբ և պատուով:

Իսկ Տիկին Վարսամեանի գառնութիւնն ընդգէմ ամուսնոյն ոչ միայն ամուրիցաւ, այլ խեղճ մարդը սեռակ մ'արգանատութեան իսկ առարկայ եղաւ:

— Կը տեսնե՞ս, մա՛յր, կ'ըսէր Արաքսիա, թէ աշտութիւնը փոխանակ զիս նուաստացնելու, պիտի բարձրացնէ ընդհակառակն:

— Աղջիկ'ա, կը պատասխանէ աշխատութեան թրշնամի կիներ, Աստուած վարձատրեց քու անձուէր հոյից:

— Ի՞նչ գործեցի արդեօք, այդպիսի մեծ վարձատրութեան արժանի լինելու համար:

— Ի՞նչ կ'ըսես Արաքսիա՞:

— Անչուչտ, մա՛յր:

— Բայց տեսնենք թէ քու բարեկամներդ պիտի ուրախանան, երբ գրեց իրը նուաստ գաստարակ յանձնարարելէն վերջը, որ պիտի ներկայանաս անոնց աչաց ընկերական զիրքով մի որ իրենցը պիտի գերազանցէ անհամեմատ կերպիս:

— Մա՛յր, մա՛յր, մի՛ աղպէս անիրաւարար խորհիր անոնց նկատմամբ, զի անոնք մեր բարեկամներն են:

Տիկինը չէր համոզուեր թէ և վարժուելու պաշտօնը մեծ բազմի գուռ բացած էր իրենց, ու կը յամուէր պնդելու թէ Երանեանք զիրենք խոնարհեցնելու մտադիր եղած են միշտ, թէ և ոչ մէկ փաստ մը ունէր առ այդ:

Տիկին Վարսամեան կ'ատէր Երանեանները, զի թուէր իրեն թէ անոնց հանդիստ կացութիւնը կ'անցունէր իւր ազքատ վիճակը: Ուստի զիւրին է երեսակել թէ ս'ըպիտի խրոխտմամբ կը ցնծար նոյն պահուն զանոնք իւր փեսայովը խոնարհեցնելու ակնկալութեամբ:

Իսկ խեղճ հայրը չարունակ զերկինս կը փառաբանէր, բսելով.

— Փա՛ռք քեզ Աստուած, պարմեցար դու իմ գաւկիս, այստ հետեւ կընամ հանդիստ սրտով մեսնիլ:

Երբ Արաքսիա հետեւեալ այցելութիւնն ըրաւ հօրնան, ներկայացուց զիւր խոնարհ ճնողացն՝ որք լիութին գրաւուեցան անոր վայելուչ ու համակիր ձեւերէն և ցոյց տուած ընտանութենէն:


Ներսէս կրկին և կրկին անգամ կատարեալ լուսութիւն խնդրեց իրենց ամուսնական խորհրդոյն նկատմամբ, և զայդ խոտուացան Պ. ու Տիկին Վարսամեան,

Թէեւ սա վերջինն անճամբեր էր այդ բարձր խնամու-
թեան յուրը սարածել ամենուրեք, նա մանաւանդ
Երանեանց հասցնել զայն: Բայց պարտաւոր էր զգոյշ
լինել, քանի որ իւր թոյլերանութիւնը կրնար չար
հետեանք ունենալ, թէեւ սոցոյ է որ լոելու գատա-
պարտութիւնը զինքը չարաչար կը նեղէր:

Արդէն հպարտանալով կը մտածէր թէ իւր ընկե-
րական յարաբերութիւնքն բոլորովին պիտի փոխուէին,
և թէ զինքն արճամարճոյ անձինքն իւր առջեւ պիտի
խոնարհէին: Ինքը կանխաւ իւր վրէժխնդրութիւնը
կը պատրաստէր, խոստանալով անձին խոնարհեցնել
ձեւերովն զանոնք որք իւր նկատմամբ անտարբեր
կամ սէյ զիրք մ'առած կը համարէր:

Սիրան ուրախութեամբ կը արօրէր, մանաւանդ
մտածելով թէ Երանեանք՝ հանգերձ իրենց հարստու-
թեամբ, չէին յաջողած տակաւին այդպիսի շքեղ խնա-
մութիւն մի ձեռք ձգել:

Սակայն խիղճ կ'ընէր Արաքսիա պարտաւորուած
լինելուն իւր վարդանուջ մտերմէն գողտնի պահելն
իրենց ամուսնութեան սրտու մը: Գիտէր թէ նա ո՛ր
աստիճան պիտի ուրախանար զայց յուր ստնելով.
բայց ի՞նչ կարող էր ընել երբ Ներսէս բացորոշ կերպիւ-
խնդրած էր իրմէ որ ոչ ումեք իրենց պարանիքը
հաղորդէ:



Գ Լ Ո Ւ Թ Ի Յ.

Արաքսիա երջանիկ էր որչափ հնարաւոր էր լինել
մահկանացուի մի: Անհունապէս կը սիրէր ու սիրուած
էր. ընտանիքն երջանիկ էր. երկու աղաւթն իւր
աւուր թոչուններն էին որք իրենց սրտագին և ուրախ
գայլայլիկներով Ներսէսին անունը բիւրիցս կը հնչե-
ցնէին իւր ականջին՝ օրուան շրջանին մէջ: Առաւօ-
տուն և երեկոյեան զիւր սիրելին կը տեսնէր՝ ու փո-
խազարձաբար իրենց սրտին կարօտն ու սէրը կը հա-
շորդէին իրարու:

Տիկին Արգարեանի գոռոզ ձեւերը միայն զվար-
ժուէին կը նեղացնէին, բայց այնչափ լուսաւոր եր-
ջանկութեան յատակի վրայ քանի մի մութ կէտեր
չուտով կ'անհետանան:

Մեր երկու սիրահարներն ունէին այն վատահու-
թիւնն որով կ'ապրին սիրահարներն, այսինքն կար-
ծելով թէ իրենց սիրային յարաբերութիւնքն ոչ մէկէ
մի նշմարուած են: Եւ երբ իրարու մերձենալու առիթ
մի կը կորսնցնեն՝ թուի իրենց գերագոյն կարգի զգու-
շաւորութիւն մ'ըրած լինել:

Եօթն ամիսներ անցած էին արդէն նոյն օրէն
ի վեր յորում Ներսէս հաւատարմութիւն ուխտած էր
Արաքսիայի: Չմեռն անցած էր, և ահա զարուն կը
ներկայանար իւր գալարներով, ծաղկներով, թոչնոց
կրգով ու քաղցրաչունչ սիւզով:

Երբ վարժուէին առաւօտուն պարտէզ կ'իջնէր
երկու աշակերտուէիներովը, ի տես ընտութեան զեզեց-
կութեանց իւր հոգին կը զրգուէր, սէրը կը զայրա-
նար, ու կը փափաքէր զգացման սաստկութիւնը մեղ-
մացնել իւր սիրահարին ներկայութեամբը: Շուրջը կը
նայէր տեսնելու համար եթէ կուզար իւր Ներսէս.

բայց այդ խուզարկութիւնն երկար չէր տևեր, զի երբտասարկը կը հետամտէր խեղճն աղջկան՝ երբ սորա պարտէզ իջնալը կը նշմարէր :

Մինչ երկու քայրերը կը վազուրատէին և կամ կը շրջէին՝ մեր երկու սիրահարները թառառ ծառերէ վարագուրեալ ու իրարու մօտ նստելով, կ'ըսէին ինչ որ երկու մաքուր ու զգայուն հոգիներ կը խօսին ի սիրոյ և ի բնութենէ ներշնչուելով :

Կը կարծէին մեր երկու երիտասարդներն ազատ լինել բոլորովին Տիկին Արգարեանի նայածքներէ, զի նա կէս օրուան մօտ կ'եղնէր անկողնէ : Եւ արդարասէր լինելու համար՝ խօստովանելու է թէ չունէր նա այն նողկալի սովորութիւնը շատ մի կանանց՝ որք ազատ չինքը լրտեսի կը վերածեն, իմանալու համար այլոց գաղտնիքը : Գուցէ իւր գոտգութիւնն միակ պատճառն լինէր ազախնայց հետ մտերմական ձեւեր չասնելու : Բայց փոյթ չէ գիտնալ թէ ի՞նչ էր անոր շարժումիւնը : Սա ստոյգ է որ զերծ էր ամենայն հետաքրքրութենէ իւր տան մէջ անցած գացածն իմանալու :

Առաւօտ մի Տիկին Արգարեան անձնական անհանդուտութեան պատճառաւ պարտաւորեցաւ միջոց մի անկողնէն ելնելու : Պատահմամբ աչերն ուղղուեցան զէպ ի պարտէզ, և հոն տեսաւ զՆերսէս որուն ընդ առաջ կուգար վարժուչին, զգուշտ որ միջոցներ ձեռք առնելով սակայն : Այդ բաւեց իւր կասկածները զարթուցանելու համար, փոխանակ երթալ տեղն հանդէսի, ինչպէս մտադիր էր ընելու, նոտաւ պատահանին առջև, ու ի շնորհս փեղկերուն՝ վկայ եղաւ անոնց տեսակցութեան որչափ որ ծառոց խիտ տերեւները կը ներէին : Ի վերջոյ Ներսէսին հետնալը տեսաւ, և քիչ մի վերջը հաստատեց վարժուչուոյն իրեն յատկացեալ խուցը քաշուիլը հանգերձ աշակերտօքն :

Տիկին Արգարեանի կատաղութիւնը չափ չունէր : Սխալած չէր ուրեմն Ֆլօրիայի գրօսանաց օրը. իրօք Ներսէս զվարժուչին կը սիրէր, և երկուքը յաջողած էին զինքը խարելու : Ուստի խորհեցաւ թէ անպատճառ վրէժն պէտք էր տանուլ անոնցմէ :

Չէր ներեր Արաքսիայի աչերն բարձրացնել մինչև այն անուան որ ինքը կը կրէր : Այդ բոկոտն արարածը, իւր վարձկանը, Տիկին Արգարեան կոչուի. ոչ երբէք, զայդ յանձն չէր առնուր :

Իւր առաջին մտածութիւնն աղջկիլ տունէն վանելն եղաւ : Բայց յետոյ միտքն փոխեց, մտածելով թէ նախ Ներսէս իրեն թշնամի պիտի դասնար, և երկրորդ որ նախանձու զգացումը երեւան պիտի ելնէր : Ինքը որ նախանձու զգացումը երեւան պիտի ելնէր : Ինքը շատ հպարտ էր յայտնելու համար թէ որ և անձ նախանձու առարկայ կրնայ լինել մանաւանդ վարժուչի մի : Իսկ երրորդ պատճառ մ'ալ ունէր, ու այն գօրաւորագոյնն էր : Հաշուեց որ եթէ Արաքսիան տունէն հեռացնէր՝ երիտասարդին ունեցած յարաբերութեանց աղջկան հետ, անտեղեակ պիտի մնար, ու անոնց սիրային ընթացքը հաստատալու անկարող : Ուստի խորհեցաւ թէ յարմարագոյն միջոցն էր վարժուչին տանն մէջ պահել, կատարելապէս անդիտանալ ձեւացնել ամեն ինչ, հսկել երկուքին վրայ, ու ամեն միջոց դործուծել զերիտասարդն աղջկէն բաժնելու :

Բայց հասցնելու չդորձելու համար և ուղելով կատարելապէս ապահովութիւն երկու երիտասարդաց մտերմութեան աստիճանին վրայօք, քանի մ'օր առաւօտուն կ'աճուի ելաւ քունը զսնկելով, և մէն մի օր առաւել ևւս հաստատուեցաւ թէ երկու երիտասարդները զիրար կը սիրէին բուռն կերպիւ :

— Այս բոկոտն, կոչեց գարձեալ Տիկինը սրտմտութեամբ, իմ կրած անուս կրէ, երբէք, երբէք, ևս եմ

ապահովողը դայց : Մինչ քանի մ'օր միտքը կը տանջէր չար հնարք մի ստեղծելու Արաքսիայի երջանկութեան չէնքը տապալելու համար , ահա բազըը ճամբուն վրայ գրաւ Սիսակ երիտասարդը : Այդ նոր ծանօթը զոր բնկերութեան մի մէջ ճանաչեց , առանց վրէժխնդիր ձկտումներն այրայելու , Տիկնոջ քմահաճ սրտին բուն սնունդ մատակարարեց :

Գ Լ ՈՒ Խ Խ Գ,

Պ. Երանեանի գտեր զգացումներն օր առօր սաստկանալով , բոլոր երազներն , յայտնն ու բազմանքները Սիսակի բազդակից լինելու գաղափարին մէջ բովանդակեց : Սիրակէզ կը տանջուէր , և զգացման սաստկութիւնն յինքն կը ջանար ամփոփել մինչև որ փոխադարձաբար սիրուելուն ապահովութիւնն ունենալով թոյլ տար երիտասարդին կատարելապէս իմանալու իւր սրտին գաղանիքը :

Սիսակ քաջայերուելով վարդանոյշի քաղցր և համակրելի ձեւերէն՝ մտերմութեան աստիճանը հետզհետէ բարձրացուց . և օր մի՝ երեկոյթի մ'ատթիւ , երբ իւրաքանչիւր ոք զբաղեալ էր մասնատորապէս զուարճանալու , փայլելու և յաջողելու , մեր երիտասարդն ևս օգուտ քաղեց այդ ատթէն , բացարձակապէս յայտնելու համար վարդանոյշին թէ ինքն եղած է իւր սիրուն առարկայն : Սիրահարեալ օրիորդն նախ թոթովեց , կարմրեցաւ , շփոթեցաւ , բայց հուսկ յետոյ թէ՛ լուսթեամբն և թէ՛ քանի մի բտերովը մասնեց այն բուն զգացումն որով համակուած էր :

Եթէ կը փոփաքէր Սիսակ Պ. Երանեանի գտեր

հետ ամուսնանալ՝ գրգեալ էր առ այդ պարզապէս շահախնդիր ակնկալութենէ : զի վարդանոյշ միակ զաւակ էր հաւատ ծնողաց : Հետեւապէս անոր հետ ամուսնանալով զիւրակեցիկ վիճակի կը հասնէր , թող թէ օր մ'ալ ժառանգ կը կանգնէր Պ. Երանեանի : Ահա գեղեցիկ ու զիւրամատչելի ապագայ մի սր կը ներկայանար իրեն այնպիսի զիւրութեամբ : Ինքն կը մտածէր սքանչելի առեւտուր մ'ընել , միթէ՞ ամուսնութիւնն առեւտուրի խնդիր չէ՞ զարձած այսօր : Ահա ինքն պիտի կատարէր ուրեմն մէկ հարուածով ինչ սր այլք ճակատ քրտամբ ձեռք ձգելու հազիւ կը յաջողին՝ այսինքն զիւրեցիկ հարատուութիւն մի :

Բայց դժուարութիւն մի կար որուն յաղքելու էր , այն էր անձին կարեւոր կերպարանք մի տալ բնկերային զիրք մի ստանալով , որպէս զի Երանեանց մերժման չենթարկուի :

Ստոյգ է որ Փարիզէն վերադարձի միջոցին Սիսակ ազմուկ յարուցած էր իբր անձ բազմահմուտ . սակայն փորձը չուտով յայտնեց թէ այք էին իւր կատարելութիւնները : Սկսաւ նախ որոտալից յօդուածներ շարաթիւնները : Սկսաւ նախ որոտալից յօդուածներ շարաթիւնները : Սկսաւ նախ որոտալից յօդուածներ շարաթիւնները : Բայց զրկ լրացրաց համար բնոգէմ իրաւալիտաց : Բայց տկար և անխմատ քննադատութեամբ իւր կարողութեան չափն յայտնեց , ու տեղի առաւ այլոց արդարացի և արժանատի գատաքննութեան իրեն նրկատմամբ :

Թէև ինքզինքն ուզեց ծանօթացնել իբր մեծ փաստարան , անչուչա յաճախորդաց բազմութիւնը չէր սր զինք անհանգիստ կ'ընէր . զի մերթ ընդ մերթ միայն փոքրիկ գտերու համար իրեն կը դիմէին : Դաստերուն զոմանս կորոյս , ու գոմանս յաջողեցաւ շահելու , որով իւր յազթանակն ի ձայն թմբուկի հոչակեց՝ պարզամտաց վրայ տպաւորութիւն ընելով սակայն :

Արաքսիա կամ վարժուեցին

Ասանձին սենեկին մէջ կ'ապրէր Սիսակ, ընտանիք չունենալուն պատճառաւ, ու իր ժառանգութեան փըշրանքներն հազիւ կը բաւէին անձնական պիտոյիցը: Միշտ լաւ ճաշակաւ զարդարուած էր, և ջանագիր էր փայլիլ ատատաձեռնութեամբ այն պարագայից մէջ որոնցմէ անկարող էր խոյս առլու:

Պ. Երանեան գրական մարդ էր, խարուսիկ յոյսերէ չէր շլանար, զայց լաւ գիտէր Վարդանոյշ. ուստի յորդորեց զիւր սիրահար համբերելու մինչեւ որ յաջողութեամբ փտահոյժիւն ազգէր իւր հօր:

Այդ հարկը լաւ կ'ըմբռնէր մեր երիտասարդը, որով ազջկան տուած խորհրդոյն կատարելագէտ հաւանիւն յայտնելով մտադիր եղաւ սակայն կուսին զգացման աստիճանն այնպիսի աստուկութեան հասցնել պարտաւորելու չափ անոր ծնողքը զինքը փեսայ ընտրելու անանց ի նկատի առնելու իւր գրամական սահմանին անձկութիւնը:

Եթէ հմտութեան մասին հրաշալիք մի չէր Սիսակ, կանացի սրտերն որսալու կէտին հանձար մ'էր սակայն: Ուստի նոյն օրէն յորում Վարդանոյշ հաւատարմութիւն խտտացաւ երիտասարդին՝ իւր սիրահարական զգացումն ծայրայեղ տրիփի կերպարանքն առաւ: Ոչ ուրուք իրենց գաղտնիքն հաղորդելու գաշինքը բրած էին մեր երկու երիտասարդները, միայն թէ՛ Արաքսիայի նկատմամբ բացառութիւն մի կար:

Սորհրդապահ վարժուհին երգմամբ խոստացաւ պահել զիւր մտերմին գաղտնիքն, որ և է ստիպողական ասթի մէջ անգամ լոտութիւն պահելու պայմանաւ:

Արաքսիայի խիստ անհաճոյ էին յօգերն որք գոյաջամ էին երկու երիտասարդաց միջև. բայց ի՞նչ կարող էր գործել, նա մանաւանդ երբ քիչ ժամանակ վերջը ինքը ևս լաւ ճանչցաւ սիրահարութեան անբունարարելի իշխանութիւնը:

Հազիւ հազ քանի մը շարաթներ անցած էին մեր վարժուհւոյն բերանացի նշանաւորութենէն ի վեր, երբ օր մի՝ ի մեծ իւր զարմանս, հետուէն նշմարեց Սիսակի գալուտան Արգարեան ընտանեաց տան մէջ: Անբացատրելի դժգոհութիւն մ'ունեցաւ առանց կարենալ բացորոշ կերպիւ անոր պատճառը մեկնելու: Գուցէ կը կասկածէր Տիկինոջ ազգեցութենէն կամ իւր ազգականին թեթեւամտութենէն. կամ թերեւս նախազգմամբ փտանց մի կ'ընդնշմարէր ի վնաս իւր սիրելի բարեկամուհւոյն:

Գ Լ Ո Ւ Ծ Ի Պ.

Սիսակի չնորհալի կերպարանքը, քաղաքավար ծանրութիւնն, իւր սովորական ճարտար և արուեստաւորեալ անտարբերութիւնը գեղեցիկ սեռին չնորհաց արժանանալու, ինչպէս և անոր փայլուն խօսակցութիւնը զարմանալի սպաւորութիւն մ'ըրին Տիկին Արգարեանի վրայ: Սա միտքը զբաւ որսալ գերիտասարդն, ու նոյն իսկ անոր հանդիպած առաջին զիչերն երեկոյթի մէջ հրաւրեց զնա այցելել իւր տունը:

Սիսակի թեթեւ փառասիրութիւնը կը գոճանար, նկատելով թէ մեծափարթամ անձ մի հանդոյն Տիկին Արգարեանի, կը փախաքէր իւր ընկերութիւնը վայելիլ: Ուստի առաջին և երկրորդ պաշտօնական այցելիլու թիւններէն վերջը Տիկինն առաւել մտերմական ձեւ մ'առնելով խնդրեց երիտասարդէն որ յաճախ այցելէ իւր տունը: Մեր երիտասարդը խօսքով հաւանեցաւ այլ ոչ գործով, զի չափաւոր կերպիւ շարունակեց իւր յարաբերութիւնները: Տիկին Արգարեան չուտով հասարակութիւններէն հակառակորդի հետ էր իւր սրբտին կցաւ թէ ճարտար հակառակորդի հետ էր իւր սրբտին

կախը, որով սկսաւ ինքն եւս՝ իբր կարող ուզմա-
 գէաւ, բոլոր կանացի միջոցներն ի գործ գնել լսելեացն :
 Այդ գաղանի կուռոյն մէջ երկուքն ալ կը յառաջանա-
 յին հեղհեղեղ, իրենց ճարտարութիւնը կորսնցնելով
 սիրոյ լուծին ներքեւ . երկուքն ալ ընկճեցան վերջա-
 պէս ծայրայեղ կերպիւ՝ ինքզինքնին կատարելագէս
 մոռնալով :

Տիկին Արգարեան մեկուսի թողլով բոլոր միւս
 սիրահարները, իբրեւ անձ արբեալ արփանաց մոլեգ-
 նութենէն, ոչինչ կը տեսնէր շուրջը, ու ոչինչ կ'ու-
 գէր իմանալ, մէկ անշարժ գաղափարով համակուած
 էր լիովին :

Պ. Արգարեան կատարելագէս անտեղեակ էր կնոջը
 ամօթալից ընթացից : Առաւօտուն խիստ կանուխ
 գործին կ'երթար, ու շ ժամանակ տուն կը վերադա-
 նար, առանց համարձակելու ամուսնոյն հարցնել իւր
 ժամանակին գործածութիւնը : Եթէ Տիկին Արգարեան
 հաճէր ժպտուն գիմօք ներկայանալ իրեն՝ նա երջան-
 կագոյնն էր արանց : Եւ զայդ սիրուն կերպարանք
 կ'առնուր խորամանկ կինը, մէն մի անգամ որ պէտք
 ունէր ամուսնէն ծածկելու կենացն անվայել ընթացքը :

Թէեւ տկար էր բնութեամբ Պ. Արգարեան, սա-
 կայն իւր պատուոյն խիստ նախանձախնդիր էր, ու
 զայդ լաւ գիտէր իւր կինն, որով սա ամենայն զգու-
 շութեամբ կը գործէր ամուսնոյն նկատմամբ :

Խեղճ մարդը կը նկատէր զիւր կողակից իբր կա-
 նանց պատուաւորագոյնն, անոր կը ներէր զարգուց եւ
 գուարճութեանց սէրը, երիտասարդութեանը վերա-
 դրելով զայդ ձաշակ :

Հատակաւոր ամուսիններն չափազանց բարեսրտու-
 թեամբ կը ջանան մոռցնել տալ իրենց տարիքոտ լինելը,
 որով իրենց կանանց քմահաճ ձկտու մներն կը քաջա-

լերեն, ե ի վերջոյ անոնց հպատակները կը գտնան :
 Նոյնը հանդիպած էր Պ. Արգարեանի : Բայց սա հոգով
 չափ կը սիրէր զիւր կին, ու չափազանց հպատակու-
 թեամբն իսկ գոհ կ'ապրէր :

Սակայն ոչ այնչափ զիւրին էր խարել բոյսրովին
 նաեւ գնեթէս, թէեւ Տիկինն ամեն զգուշութիւն
 կ'ընէր, անոր կասկածները չյարուցանելու : Երիտա-
 սարգը գործողութեան գնացած ժամանակ բնաւ տեղե-
 կութիւն չունէր տան յաճախորդաց ու տիկնոջ վար-
 մունքի մասին : Սակայն լաւ իմացած էր անոր սնա-
 պարձ ու թեթեւօլիկ լինելը : Բայց քանի որ ապա-
 ցոյց մի չունէր հօրը պատուոյն արատաւորած լինելուն
 վրայ՝ անպատշաճ կը գտնէր մահացնել ծնողքը, անոր
 կասկածներն արթնցնելով կնոջ մի վրայ զոր կը
 պաշտէր :

Արաքսիա թէեւ Տիկին Արգարեանի հետ նոյն
 յարկին ներքեւ կը բնակէր, ոչ երբէք հետաքրքրու-
 թիւն ունեցած էր գիտնալու թէ ո՞չք էին տիկնոջ
 մտնաւոր բարեկամներն ու բարեկամ հիները, ստոյգ
 է որ այս վերջիններն ստուար թիւ մը չէին ներկա-
 յացներ : Պչրանոյշ (գօգէթ) կինը կ'զգուշանայ բնո-
 ճանրապէս կանացի պարիսպ մ'ունենալէ շուրջը, մեն
 մի կին՝ յաչս իւր, թշնամի մ'է որ իւր վարմունքը
 կը քննադատէ ու խորհուրդները կը խափանէ չատ ան-
 զամ տանելու յաղթանակացն ընդդէմ արգելք կանգ-
 նելով :

Արաքսիա որ միշտ անփոյթ եղած էր Տիկնոջ
 կեանքն ուսումնասիրելու՝ սկսաւ ոչ այնչափ անտար-
 բերութեամբ նկատել Սիսակի խիստ յաճախ այցե-
 լութիւնները :

Տիկինը գիտէր թէ իւր սիրահարն ազգական էր
 վարժուսոյն, ե ի պատիւ անոր ոչ միայն չքամահեց

զօրիորդն ի ներկայութեան անոր, այլ տեսակ մի քաղաքավարութիւն մ'ալ ունեցաւ, նկատելով մանաւանդ պատկառելի վարմունքն երիտասարդին աղջկան նկատմամբ:

Արաքսիա կը մահանար, հաստատելով Սիսակի այցելութեանց բազմանայն օր աւուր, մինչեւ գրեթէ հանրապագօրեայ դառնալու աստիճան:

Ներսէս ոչինչ գիտէր այդ յարաբերութեանց մասին, և ոչինչ՝ երիտասարդին ունեցած կապերուն վրայօք վարդանայչի հետ:

Մէն մի անգամ որ վարժուհին կը հանդիպէր իւր ազգականին՝ կ'ուզէր նմա ակնարկ մի լի գառն ու պերճախօս յանդիմանութեամբ: Երիտասարդը կ'զգուշանար ենթարկուելէ այդ լուս կշտամբանաց, զի թէեւ անսանձ սիրոյ յորձանաց մէջ էր ալեծուփ, հանպերձ այսու ներքին տկար ձայն մի կը բողոքէր մերթ ընդ մերթ վարդանայչի նկատմամբ ըրած անհաւատարմութեանը գէժ, և զնա կերպով մի լքման դատապարտած լինելուն համար: Իսկ Արաքսիա կը ներկայանար իւր աչաց իրր անձնաւորութիւնն իսկ դատապարտութեան:

Վարժուհին հոգումիւ կը փոփառէր առանձին տեսութիւն մ'ուսնեալ Սիսակի հետ, բայց ի՞նչ կզանալաւ կրնար յաջողիլ առանց Տիկինոջ կասկածներն զարթուցանելու, նա մանաւանդ երբ յանցաւոր երիտասարդը խոյս պիտի տար անշուշտ այդ տեսութեան ասթէն:



Գ Լ Ո Ւ Թ Ի Ե.

Անակնկալ պարագայի մի բերմամբ Տիկինը պարտաւորեցաւ օր մի դուրս ելնել տունէն, և յիւր վերագարձին իմացաւ թէ իւր սիրահարն եկած էր, և թէ նոյն միջոցին պարտէզն էր՝ օրիորդին հետ միասեղ:

Տիկինը դժգոհութիւն զգաց այդ տեսակցութեան մասին, թէեւ ոչինչ ուզեց յայտնել իւր տարփածութիւն: Մտեցաւ անձայն դէպ յայն վայր ուր երկուքը միասեղ նստած էին ծառի մի ներքեւ՝ հետու երկու տղաքներէ: Երանդոտ ու յուզեալ կերպիւ կը խօսէր աղջիկը, մինչ երիտասարդն ակնկոր լուս կը կենար:

Արաքսիա իւր սրտին համայն պերճախօսութեամբը սիրոյ գատը կը պաշտպանէր, ազգականին խոջին կը խօսէր, անյոյս զգացման մ'անհաստատութիւնն երկխօսէր, անյոյս զգացման զինքն հաւատարիմ էան կը հանէր, ու կը մեղազրէր զինքն հաւատարիմ և սուրբ զգացման գէժ ըրած անհեթեթ ոճրոյն համար:

Երիտասարդն ի խօր խոցուած էր, մտայոյզ էր, և երբեք չուրէր երկու տարբեր զգացմանց մէջ: Մին էր սէրն իւր սաստկութեամբն և ալեկոծութեամբ. իսկ միւսն էր պարզ համակրութիւն մի փայլուն և ապահով ապագայով մի:

Վարժուհին կը յուսար վերջնական պատասխան մ'առնելով հեռացնել գուցէ զերիտասարդն այն վէճն որուն եզերաց վրայ արբեալ կը տարուբերէր: Մտադիր էր վերջապէս կամ զինքը վերադարձնել վարդանայչի, և կամ հեռացնել բոլորովին իւր բարեկամուհիէն:

Տիկին Արգարեան ծառէ մի ծածկուած, անոնց շարժումները կը տեսնէր, աղջկան այլայլութիւնը կը նշմարէր ինչպէս և իւր տարփածութիւն ճնշեալ դիրքն, ատանց անոնց ամբողջ խօսակցութիւնը ճշդիւ իմա-

նայու : Այսչափը գուշակեց լսած խօսքերէն միայն՝
թէ իւր վարժուհին ուրիշ աղջկան մի գատը վարելով
ջանադիր էր զերխտասարգն հեռացնել իրմէ :

Իբր վազրուհի որուն ձեռքէն կ'ուզեն յախշտակել
իւր աւարը , այդ կիներ մոնչեց , ներքնապէս երգում
ընելով կրկին վրէժ . առնուլ այն աղջկէն , որ դառնու-
թեան ու զժգոճութեան պատճառներ հայթայթած էր
իրեն : Չուզելով առաւել երկար ժամանակ ենթարկել
զիւր սիրահար ազգականին ազդեցութեան , ու սրբո-
մտութիւնը ծածկելով իբր թէ ոչինչ լսած լինէր , մօտե-
ցաւ անոնց ու ժպտուն զիմօք բարեւեց զՍիսակ :

Վարժուհւոյն սիրան արխնեցաւ , նկատելով իւր
ջանից և յորդարանաց ապարդիւն մնալը : Հեռացաւ
վշտարեկ , ու ազայոց խաղացած տեղին մօտենալով
նշմարեց զՆերսէս ի մեծ գարմանս իւր :

Սիրագողական պատճառաւ մի Արաքսիայի խօս-
նայրը տուն վերադարձած լինելով՝ ուղած էր օդտիլ
այդ առթէն , զիւր սիրելին բարեւելու համար : Ուստի
պարտէզ երթալով օրիորդն հոն գտնելու մտադրու-
թեամբ՝ հանդիպած էր տղայոց ու անոնցմէ իմացած
իրենց վարժուհւոյն Սիսակին հետ գտնուիլը :

Ներսէս՝ կարծես օձէն խայթուած , փոխանակ յա-
ռաջ կամ ետ երթալու , արձանացաւ կեցաւ , ու ի վեր-
ջոյ ծառի մի ներքեւ նստելով՝ նախանձալից անձկու-
թեամբ Արաքսիայի գարտեան սպասեց :

Սիրահարաց համար ոչ ազգականութիւն կայ
և ոչ այ բարեկամութիւն : Ամեն ոք թշնամի մ'է որ
իրենց պաշտած անձին սիրտը գոզնալու կը յա-
ռաջադրէ :

Ի դուր Ներսէս կը մտածէր թէ Արաքսիայի նման
աւարը և վսեմ հոգի մի անկարող էր զիւր ախտ զըր-
ժելու : Ի դուր կ'արդարացնէր հարկն զՍիսակ ընդու-

նելու , քանի որ իւր մերձակայ ազգակիցն էր : Միւս
կողմանէ կը մտածէր , թէ տղայքն ինչո՞ւ այնչափ
հեռու էին անոնցմէ : Անշուշտ իրենց խօսակցութեան
վկայներ չունենալու մտօք էր . ինչո՞ւ ուրեմն առանձ-
նանալու այդ պէտքն : Այս տարրեր մտածութեանց
մէջ կը տարութերէր մեր երխտասարգն , երբ նշմարեց
Արաքսիայի գալուստն :

Եթէ քիչ յառաջ նեղացաւ աղջիկը , Տիկին Արգա-
րեան վրայ հասնելու համար , նոյն միջոցին չանթա-
հար եզաւ ներսէս , զժգոճ կերպարանքը գիտելով : Բայց
մաքուր խղճի քաջութեամբ վարժուհին մօտենալով իւր
խօսնայրին հարցուց :

— Ինչո՞ւ չաւետեցիր ինձ այս առաւօտ թէ սովո-
րականէն յառաջ պիտի վերադառնայիր այսօր :

— Եթէ զայդ գիտնայիր , պատասխանեց Ներսէս
սակաւ ինչ գառնութեամբ , գուցէ ուրիշները հիւրըն-
կայելու չէիր փութար :

— Ներսէս , ըսաւ աղջիկը յուզուելով , եթէ ճանա-
չէիր խօսակցութեանս նպատակը՝ գուցէ զիս պաշտէիր :

Այդ խօսքերն արտասանելու պարզ ու անկեղծ
եղանակն ապահովութիւն ազդելով երխտասարգին , ու
անոր սրտին բեռը թեթեւցնելով , ըսաւ սիրայորդ
սկիտարկով :

— Եւ մի գուցէ զքեզ յանչափս չե՞մ պաշտեր ար-
զէն . առաւելի՞ն կը փափաքիս արդեօք : Ինչո՞ւ չես
զանդատիր ուրեմն արեւուն լոյսին անբաւականութե-
նէն , և անձիրին սահմանափակ լինելէն : Մէն մի բա-
բախում սրտիս՝ զտէրն իմ ունի իբր շարժասփթ , ամէն
մտածութիւնս առ քեզ ուղղեալ է , ամեն բազմանացս
առարկան դու ես , Արաքսի՛ս , և տակաւին չես բա-
ւականանար :

— Այդ մասին անհոյ եմ, Ներսէ՛ս: Սէ՛ր, սէ՛ր, սէ՛ր. այդ բառին մէջ ամփոփուած է բոլոր էութիւնս:

— Եւ դու կը կարծես թէ ես տարբե՞ր կերպիւ կը զգամ արդեօք. և կ'ուզես որ առաւել եւս պաշտեմ զքեզ: Լաւ ուրեմն պատմէ՛ ինձ խօսակցութեանդ նիւթն, և եթէ ստուգապէս այնչափ չիացման արժանի ես, ինչպէս որ քիչ յառաջ հաստատեցիր, ամեն ձիւ կը թափեմ, բաւ կատակով, զքեզ քիչ մ'ալ աւելի պաշտելու:

— Լուր ինձ, Ներսէ՛ս, քեզ նկատմամբ անձնական գաղտնիք մ'ուսնենալս ո՞՞ր կը համարիմ. բայց ինչ որ այրոց կը վերարերի, թոյլ տուր ինձ որ գիտնամ յարդելի զայն խորհրդապահութեամբս:

Ներսէսի զէմքը կատկածանաց ամպովք մթազնեցաւ գարձեալ. բնաւ բառ չարտասանեց, այլ լուսթեամբն իւր զմզմութեան սաստկութիւնն յայտնեց:

Վարժուհին իւր նշանածին ձեռքը բանեց ու արտասուածոր աչօք բսաւ:

— Չիս մեոցուր՝ բայց մի՛ կատկածիր ինձմէ, մի՛ նուաստացնէր զիս, անվայել ընթացք մի վերադրելով ինձ: Կ'երզնում քեզ առաջի երկնից թէ կը սիրեմ զքեզ ճայրայեղ սիրով և հաւատարմութեամբ, կը հաստատեմ թէ անկարող եմ որ և է պարագայի մէջ քեզ ուխտածս զրժել: Բայց յարդէ՛, Ներսէ՛ս, կը հայցեմ քեզմէ, գաղտնիք մի որ իմս չէ, և զոր ուխտած եմ և ոչ մէկու մի հաղորդել:

— Ինչո՞ւ ուրեմն ինձ նկատմամբ բացառութիւն չըրիր:

— Կրնայի՞ զուշակել յայնմամ թէ դու հոգեոյս իշխանը պիտի լինէիր օր մի, այդպիսի բացառութիւն մ'ընելու համար:

Ներսէսի սիրտն ապահովուելով Արաքսիայի անմեղութեան մասին, անխոյժ եղաւ այնուհետեւ այրոց գաղտնի խորհուրդներն իմանալու: Յարդրեց զիւր սիրելին ոչ եւս նեղուելու ինքզինքն արգարացելու համար ու խնդարով յարեց:

— Երբ այսուհետեւ լսելու խոստումն բնեւ, մի՛ մոռնար յիշել թէ դու և ես մէկ հոյի կը կազմենք:

— Հարկ չկայ այդ յանձնարարութեան, պատասխանեց միւսն, զի սիրտս մէն մի վայրկեան կը յիշեցնէ ինձ գալոյ արդէն:

Ի վերջոյ երկու նշանածները խաղաղութեամբ բաժնուեցան, Տիկին Արգարեանի ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրել վախնալով:

Գ Լ Ո Ւ Ս Ի Ջ

Օրերն օրերու կը յաջորդէին ու չարաթններն չաբաթներուն, Արաքսիայի կենաց հորիզոնին վրայ մաքուր սիրոյ շողն արձակելով: Իսկ տան տիկինն իւր վրիժառու հոգեոյն սեւութիւնը ծածկելով հանդարտ կերպարանքի ներքեւ, ամենայն անձկութեամբ կը սպասէր այն յարմար առթին ուսկից կ'ուզէր օգտիլ, վարժուհեոյն բազմին վճռողական հարուածը տալու համար:

Մայիսի զեղեցիկ ստաւօտ մի մինչ վարժուհին պարտեղին մէջ կը շրջապայէր հանգերձ աշակերտնեւրոյն, տեսաւ որ Ներսէս զէպ իրեն կը յառաջանար: Երկու երիտասարդաց կերպարանքն ու սիրտն այնչափ զոհ ու զուարթ էին որ կարծես անոնք եւս սիրոյ մայիսը կը տօնէին հանդէպ բնութեան որ իւր շքեղութիւնները կը հանդիսադրէր:

Նոյն վայրկեանին վարդենիի մի մերձ կեցած էին որուն վրայ երկու կարմիր կոկոններ մէկ ճիւղի վրայ զեղանազ կը ծածանէին. Արաքսիա անոնց նայելով րաս .

— Տե՛ս, Ներսէ՛ս, ա՜հա մեր սէրն անձնաորեալ իրարու կցորդ այս երկու կոկոններուն մէջ :

— Արդարեւ, պատասխանեց Արաքսիայի խօսնայրը, մին գուն առ պահէ ի յիշատակ այս հեշտագին վայրկեաններուն, իսկ միսն ես կ'առնու՞մ՝ յատաճազրելով զայն պահել մինչև ցփերջ կենացս իբր առհաւատչեաց իմ սիրոյս :

Մինչ Ներսէս կը փորձէր երկու կոկոնները քազել, մեծկակ փուշ մի մատին մէջ մտնելով արիսն հոսեց անկէ :

Արաքսիայի զէմքը տիրութեամբ վարագորեցաւ : Մեծ դժուարութեամբ կ'աշխատէր փուշն հանել . մասամբ յաջողեցաւ միայն, որով զգացած վարմունքը սաստկացաւ :

Ներսէս նկատելով աղջկան յուզմունքը՝ ժպտելով րաս :

— Զգիտե՛ս արդեօք որ առանց փշոյ վարդ չկայ :

Այդ կատակն հազիւ կարողացաւ փարատել այն անհանգստութիւնն որ յառաջ կուզար այն գաղափարէն թէ փուշին մէկ մասը մատին մէջ մնացած էր :

Ի գո՛ւր Ներսէս կը ջանար ապահովել զինքը թէ ոչ եւս կ'զգար զայդ : Վարժուհւոյն զէմքը արտում մնաց . կարծես թէ տառապանաց աշխարհ մի բնոյ հուպ պիտի բացուէր իրեն համար : Այդ արամաղրութեամբ բաժնուեցաւ իւր նշանածէն՝ տղայոց հետ դասարան մտնելու համար : Հազիւ հազ ժամէ մ'ի վեր աշակերտութիւններով կ'զբաղէր նա, երբ ա՜հա նամակ մի կը բերեն իրեն ազգեալ : Կը բանայ զայն, կը կարդայ, և

կը հաստատէ հոգւոյ մի յուսահատական ճիշն որ առինքն կը գիմէր, անյապաղ օգնու թիւն խնդրելով : Հոգւոյ այդ հոտաչքն վարդանոյչէն կ'արձակուէին :

Արաքսիա՝ անհնարին ցաւով համակուած, փութաց իւր տիրուհիէն հրաման չուզելու օրն ի բուն գուցէ տունէն բացակայ լինելու համար, առանց բնաւ այդ բացակայութեան պատճառ մի վերագրելու :

Տիկին Արդարեան թոյլտուութիւն բրաւ այդ մասին, մտածելով թէ Սիսակի հետ չպիտի կարողանար տեսնուիլ եթէ նոյն իսկ այդ լինէր իւր նպատակը, զի երիտասարդն իրեն պիտի նուիրէր օրուան մեծագոյն մասն : Իսկ եթէ նա խոստմնազանց զանուէր՝ յայնժամ առիթ մ'էր երիտասարդէն բացատրութիւն խնդրելով իրեն զէմ եղած մեքենայութեանց տեղեկանալու :

Բայց օրիորդին մեկնելէն քիչ մի ետքը Սիսակ ներկայանալով արկնոջ սիրտն հանգստացաւ, որով բնաւ հարկ չեղաւ աղջկան բացակայութեան ակնարկութիւն ընելու, և ոչ իսկ խօսք մ'արտասանելու անոր վրայօք :

Իսկ Արաքսիա սիրտ ի թունդ և շնչասպառ բնութացաւ զէպ ի բնակարան իւր բարեկամուհւոյն : Հոն առաջին անձն որուն հանդիպեցաւ Տիկին Երանեանն եղաւ . ողորմելի մօր վշտագին կերպարանքը շատ իսկ կը յայտարարէր իւր ներքին մտայուզութիւնը :

Տիկինն առաջնորդեց օրիորդին, ու գտները սենեակը տանելով զնա՝ ցոյց տուաւ արտասուալից աչօք զվարդանոյչ որ անկողնոյ վրայ տարածուած էր այլապէս պեղծ զիմօք :



Պ Լ Ո Ւ Ծ Ի Է .

Արաքսիան անկեղծ ու խորունկ վշտակցութեամբ մօտեցաւ հիւանդին , ու ձեռքն անհուն արգահատութեամբ սեղմելով՝ իւր չարչարանաց տեսակն հարցուց :

Տառապեալ աղջիկը շինծու պարագայից վերագրեց իւր նեղութիւնն , անհամբերութեամբ սպասելով այն վայրկենին ուր մայրը սենեկէն դուրս ելնելով զինքն առանձին թողուր իւր մտերմին հետ :

Քանի մի վայրկեաններէ վերջ՝ որք անվերջանալի թուեցան հիւանդին , վշտաբեկ մայրը սենեկէն դուրս ելաւ , և յայնժամ վարդանոց աշերէն բոց արձակելով ու զարճուրելի եղանակաւ մ'ըտաւ .

— Լո՛ւր ինձ , Արաքսիա՛ս , մահու կամ կենաց խնդիր կայ ինձ համար : Եթէ կ'ուզես որ ապրիմ , ինձ օգնէ՛ ինձ առանց յապաղման , եթէ կը կամիս որ ինձ մատուցած նպատոյ ապարդիւն չի մնայ . զի կ'զգամ որ սչ եւս կարող եմ սովալ այն ցաւոց որք հետեւանք են իմ տաժանելի անձկութեանցս :

— Վարդանո՛ցդ իմ սիրեցեալ , գոչեց երիտասարդուհին յուզուելով , գիտես որ պատրաստ եմ քեզ ծառայելու ամեն ժամանակ , բաւական է որ խնդրածդ կարողութենէս վեր չլինի : Աօսէ՛ չուտ ուրեմն :

— Լո՛ւր ինձ , լո՛ւր ինձ , սիրելի՛ս , բաւ տառապեալն հեղձամբձուկ ձայնիւ . Սիսակ զիս մոոցաւ մէկ կողմ թողուց , և ես առանց անոր չեմ կարող ապրիլ :

Արաքսիա լաւ կը ճանաչէր այդ լրման պատճառը . բայց ի՛նչպէս կարող էր իմացնել խեղճ արարածին թէ իւր սիրոյն առարկան այլուր նուիրած էր իւր սիրուն : Հետեւապէս ոչինչ խօսեցաւ այդ նիւթին վրայօք ու

հարցուց միայն եթէ պատճառ տուած էր երիտասարդին իրեն դէմ նեղանալու :

— Ե՛ս , պատասխանեց հէքն , գիտութեամբ յանցանք չի գործեցի անոր դէմ . եթէ սակայն յակամայս զինքը վիրաւորեցի , պատրաստ եմ յանցանքս բաւելու :

— Ես հետը կը խօսիմ , անփոյթ եղիւր , սիրելի՛ս :

— Կը հայցեմ , մի՛ գտապարտեր զիս եթէ հակառակ կամացոյ յարուեցայ Սիսակի և արդ միջամտութիւնդ կը խնդրեմ :

— Ի՞նչպէս կ'ուզես որ մեղադրեմ զքեզ երբ սէքն անդիմադրելի զօրութիւն մ'է որուն դէմ մրցելով հանդերձ ՚կը յաղթուինք , մեր տկարութիւնն երեւան հանելով :

— Ուրեմն կը ներե՞ս ինձ , Արաքսի՛սս , եթէ ես ըմբոտտ լինելով քու խորհրդոցդ՝ այսօր քեզ պաղատիմ վերադարձնելու համար ինձ այն սիրուն զօր կ'ուզէիր հեռացնել ինձմէ :

— Ոչ միայն կ'արդարացնեմ զքեզ , այլ յօժարամիտ քեզ ծառայելու : Տորչափ կարելի է չարիքը մեզմէ հեռացնելու , պարտինք աշխատիլ յաջողելու : Բայց երբ անոր հպատակած ենք արդէն՝ զժուարին է հալածել զայն մէկէն ի մէկ . ամօքելով բուժելու ենք զսէր :

— Այսինքն կ'ուզես ըսել , Արաքսի՛սս , թէ տրամադիր ես բուժելու զիս սրտիս հիւանդութենէն :

— Եթէ կարող լինէի՛ անչուշտ առ այդ կ'աշխատէի : Թէեւ կը ճանաչեմ Սիսակի քանի մի բարեմասնութիւնները , բայց անկեղծօրէն խօսելու համար , նոյնչափ ալ ծանօթ են ինձ և իւր թերութիւնները :

— Բայց ո՞վ արդեօք թերութիւն չունի , բարեկամուհիս :

— Անշուշտ ոչ ոք կատարեալ է. բայց սա կէտն
ի նկատի առնելու է որ բարեմասնութիւնք թէ թե-
րութիւնք առաւել ծանրակշիռ են անձի մի վրայ :

— Մի՛ գատապարտեր զիս, Արաքսի՛սս, բայց այն-
չափ պաշտելի է ինձ Սիսակ որ նոյն իսկ իւր թերու-
թիւնքն չնորձայի կը թուին ինձ : Եթէ ոք փորձէր
այդ պակասութիւնները ձիրքերու վերածել՝ կ'ընդդի-
մանայի, վախնալով թէ իրմէ մաս մի կը պակտէր,
որով ոչ այնչափ սիրուն կը ներկայանար նա իմ աչաց :

— Համարելով որ թեթեամտութենէ շարժեալ
զքեզ լքանէր ուրիշ մի սիրելու համար, ա՞յդ եւս
հաճելի պիտի թուէր քեզ արդեօք, վարդանո՛յշ :

— Ո՛հ, այդ սոսկալի պարագայն բացառու-
թիւն մ'է :

— Եթէ թուարկէի շատ մի մտութիւններ որք զքեզ
կրնան դժբաղդ ընել՝ պիտի յամառե՞իր արդեօք զինքը
դարձեալ համակրելի գանելու :

— Սիրտը չի տրամաբաներ, այլ կը սիրէ կուր-
րեն, և կարծես որչափ զինքը չարչարեն՝ նոյն համե-
մատութեամբ կը պաշտէ զչարչարողն :

— Եթէ չեմ սխալիր, կ'ուզես յայտնել որ երբէք
այնչափ չէիր սիրած զՍիսակ որչափ արդ երբ նա զքեզ
կը տանջէ :

— Ստոյգ է այդ, Արաքսիա՛, զի կ'զգամ որ եթէ
Սիսակ չի վերագարձնես ինձ անյապաղ, կեանքս չու-
տով կը կնքեմ :

Չայս ըսելով աղջիկն, սկսաւ արտասուել գառն
յուսահատութեամբ, ու բազկատարած՝ օգնութիւն
խնդրել իւր բարեկամուհիէն :

Մարդս լաւ կ'ըմբռնէ ինչ որ ինքը կը ճանաչէ :
Անշուշտ ոչ ոք այդչափ արդահատանք կրնար զգայ սիրոյ
մասին որչափ Արաքսիան, որուն սիրտը նոյն անսահ-
ման կերպիւ ի սիրոյ գրաւուած էր :

Հետեւապէս զվարդանոյշ բազկացր մէջ առնելով,
ու իւր արաստուքը անոր արտասուաց խառնելով,
այնպիսի կարեկցութիւն մ'զգաց այդ ծայրայեղ ցառոց
պատկերին առջեւ, որ ազնիւ հոգեոյ բուռն խանդիւ
խոտոացաւ վշտացելոյն՝ տեսնել ընդ փոյթ զՍիսակ և
հետք խօսիլ :

Բայց անհամբերն վարդանոյշ ուզեց գիտնալ թէ
ե՞րբ արդեօք պիտի ունենար իւր պաշտելոյն պա-
տասխանը :

— Կը խոտոանամ ամեն ջանք ընել, զնա ընդ փոյթ
տեսնելու, պատասխանեց վարժուհին :

Վշտահար կոյսն իւր մտերմին երկու ձեռքերն կը
համբուրէր եծանդագին, իբր ձեռքերն փրկչի մի որ
իւր կորուսեալ գանձը իրեն պիտի վերագարձնէր : Եւ
աչերն աղերսագին յառելով Արաքսիայի երեսին վրայ.

— Ո՛հ, գոչեց անձկութեամբ, խոտոացի՛ր ինձ
զինքն այսօր իսկ տեսնելու, զի չեմ կարող այլ եւս
սպասել :

— Եթէ կարելի է, անտարակոյս : Բայց խոտա-
ցի՛ր և դու հանդարտ լինել, զի այդ արտասուքը այ-
լայլութիւնդ վիճակիդ սաստկութիւնը կրնայ աւելցնել :

— Ես կը խոտոանամ քեզ ինչ որ ուզես, բաւ է
որ այսօր, գոնէ վաղը անպատճառ ինձ պատասխան մի
բերելու յօժարիս :

— Պիտի ջանամ, սիրելի՛ս, գամեն ինչ գործել,
զքեզ գո՛հ ընելու համար :

— Ո՛, կարծես թէ պիտի մեռնիմ սրտայուզու-
թիւնէս :

— Տե՛ս, ինչպէ՛ս այտերդ հրաբորբօք են. եթէ
չհանդարտիս, հոգիս կը վերաւորես :

— Ամեն կամացդ կը հպատակիմ, Արաքսի՛ս,
միայն թէ վերագարձնես ինձ զՍիսակ :

- Սակաւ ինչ համբերէ :
- Ուրեմն այսօր իսկ զինքն պիտի տեսնես :
- Պիտի աշխատիմ առ այդ :
- Անոր պատասխանը կրնամ ընդունիլ այսօր :
- Այդ անհնար է, Վարդանո՛յշ :
- Իսկ վա՞զն առաւօտ :
- Գուցէ :
- Կը հայցեմ քեզմէ, ապահովէ՛ զիս, խոտոացի՛ր մանաւանդ կանուխ գալու, զի հիւճելս կ'իզգամ :
- Ամեն ճիգ պիտի թափեմ վազը առաւօտ գալու :
- Աւա՛ղ, գուցէ Վարդանո՛յշ, քանի՛ մաշեցուցիչ ժամեր, քանի՛ մահաբեր վայրկեաններ պիտի անցնին մինչև այն անհալի բոպէն որ զքեզ հոս պիտի բերէ վերստին պիտի ապրի՞մ արդեօք մինչև վազն առաւօտ :
- Տե՛ս, բաւ Արաքսիա, ո՞րչափ յոյսերուդ կատարման մերձենաս, նոյնչափ անհամբերութիւնդ կը սաստկանայ :
- Սիրող սրտի վիճակն է, պատասխանեց կոյսն սիրակէզ :
- Սակայն բսէ ինձ, Վարդանո՛յշ, ծնողքդ վերահասու չեղան արդեօք քու հիւանդութեանդ բուն պատճառին :
- Ամենևին, սիրելիս :
- Չարմանալի՛ բան :
- Տե՛ս ինչ կայ մէջտեղ : Հարուստ երիտասարդ մի, զոր կը ճանաչեմ, կ'ուզէր զիս ի հարսնութիւն : Ես բնականապէս մերժեցի զինքը, մայրս ջանաց զիս համոզելու, յամառեցաւ մանաւանդ յաջողելու համար : Ես մերժմանս մէջ հասաւ մնացի, ու այդ ամուսնութեան տոխպմանց վերագրելով հոգւոյս թախիժն ու ցաւը, ոչ եւս փոյթ ըրի ծածկել սրտիս յուսահատութիւնը : Վիճակս օր աւուր սաստկացաւ, որով

ծնողքս իրենք զիրենք իմ տառապանացս պատճառն համարելով՝ դադարեցան գոնէ առ այժմ այդ երիտասարդին խօսքն ընելէ :

— Ո՛վ Վարդանոյշդ իմ, ո՞րչափ խիղճ կ'ընեմ ծնողացդ տեսութեանց հակառակ զործելու, և այսպէս չար կերպիւ փոխարինելու այն վստահութիւնն զոր կը յայտնեն ինձ անոնք :

— Կը գղջա՞ս արդեօք ըրած խոստմանդ վրայ : Թո՛ղ ուրեմն զիս նսե՛ն բազդիս. թո՛ղ որ մեռնիմ :

— Չայս ըսելով հէք աղջիկը դէմքը ծածկեց վերմակովն ու լացաւ կողկողազին :

Արաքսիան անոր մօտենալով հեռացուց վերմակն, ու յուսահատ կուսին դէմքը փայտալայելով խոտոացաւ անհնարինը զործել հետեւեալ առաւօտ առ ինքն վերադառնալու համար :

Տառապեալ էակը յպտեցաւ այնպիսի քաղցրութեամբ մի որ վարժուհւոյն հոգին կատարելապէս ճմրեց :

Որպիսի՛ երկնային սէր անաժան մարդու մի համար, կը մտածէր վարժուհին, ախոսալով :

Երկու բարեկամուհիք զիրար սղջագուրելով, մեկնեցաւ Արաքսիան : Առաջինը սիրոյ յոյսերով և երկրորդն էր համակեալ : Իսկ երկրորդը կը հեռանար, մտացը մէջ որոճալով Սիսակի հետ տեսութիւն մ'ունենալու եղանակին վրայ : Հակառակ իւր տեսութեանց, ձկամանց և զգացմանց պիտի գործէր, ստոյգ է այդ. բայց կրնա՞ր արդեօք ձեռնտու չլինել իւր ողորմելի բարեկամուհւոյն, և աջակցութիւնը մերժելովն, անոր մահը պատճառել գուցէ : Մաածութեանցը մէջ խորասոյզ՝ Արաքսիա հասաւ վերջապէս Աբգարեանց տան առջև, երբ նոյն միջոցին փողոցի դուռը բացուելով հոնկէ դուրս ելաւ Սիսակ :

Փ Լ Ո Ւ Խ Ի Ը.

Վարժուհին տեսնելով զերիտասարդն, ցնծաց այդ յամար առթին համար զոր բազմը կը հայթայթէր իրեն:

Մարդս կ'ուրախանայ ուրեմն, երբ կը գործէ հակառակ իւր կամաց, որչափ որ պիտի ուրախանար եթէ իւր անձին հաճելի եղած նպատակի համար աշխատէր իսկ. ա՛յնչափ պարագայներն և զգացումները կը ներգործեն իւր վրայ անդիմադրելի կերպիւ:

Ուստի Արաքսիա թէեւ կը փափաքէր ի սրտէ ջախջախել ամենայն յարարերութիւն Վարդանոյշի և Սիւսակի միջև, հանդերձ այսու կ'աշխատէր նոյն միջոցին անոնց յարարերութեանց յոգերն ամբապնդել:

Տեսնելով ուրեմն զՍիւսակ, կանց առաւ անոր առջև ու բառ.

— Եւ ալ կ'ուզէի քեզ հանդիպիլ, հարցնելու հարցնելու համար թէ ե՞րբ արդեօք կրնամ հետզ խօսակցութիւն մ'ունենալ:

— Տրամադրութեանց ներքև եմ, պատասխանեց երիտասարդը, մարմինն և գլուխը ծոկելով, շինծու պաշտօնական վայելչութեամբ մի:

— Այդ հրապուրիչ ձեւերդ այլոց պահէ, բառ Սիւսակին, այնպիսի եղանակաւ մի՛ որ կասկած չէր թողուր իւր զժգոհ տրամադրութեանց վրայօք:

— Ինչո՞ւ այդպէս խոթոռագէժ ես այսօր, Արաքսիա:

— Վասն զի գլխաւոր պատճառներ ունիմ այդպէս լինելու:

— Թոյլ կուտամ ինձ հարցնելու թէ ուսկի՛ց յառաջ կուգան նեղութիւններդ:

— Նոյն իսկ քեզմէ, պարո՛ն:

— Ինձմէ՞, հարցուց Սիւսակ, անկեղծ զարմացմամբ:

— Այո՛, քեզմէ:

— Ի՞նչ կրնամ գործել, քեզ նկատմամբ ակամայ յանցանքս քաւելու համար:

— Առանց յապաղման, և որչափ կարելի է շուտ հայթայթել ինձ առանձին տեսութիւն մի:

— Նոյն իսկ այս վայրկենիս ուրեմն:

— Բայց ո՞ւր: Կը փափաքիմ որ մեր տեսութիւնը վկայ չունենայ և մանաւանդ զաղանի մնայ:

— Խիստ իրաւացի է խնդրածդ:

— Կը խոստանաս ուրեմն, բնաւ մէկու մը չհարողել մեր ժամադրութիւնը:

— Պատուոյս վրայ կ'երգնում:

— Ուրեմն վաղ առաւօտ խիստ կանուխ կը տեսնուինք:

— Անհնարին է ինձ կէս օրէն առաջ հրաւերդ ընդունիլ, և դարձեալ ապահովապէս չեմ կրնար խոստանալ զայդ:

— Բայց ստիպողական հարկ մի կայ, Սիւսակ:

— Երիտասարդը շփոթած, քիչ մի մտածելէն վերջը՝ փութաց ըսել.

— Եթէ կը հաճիս նոյն իսկ այս գիշեր տեսնուինք:

— Ի՞նչպէս, ա՛յս գիշեր, հարցուց աղջիկը վարանելով:

— Եղանակը շատ պարզ է: Երբ ամենքը տան մէջ կը քնանան, ես կէս գիշերէն երկու ժամ վերջը պատահաներուց ներքևէն անցնելով կ'երգեմ եղանակ մի որ ծանօթ է քեզ: Դու կը պատասխանես ինձ, լոյս մի որ ծանօթ է քեզ: Դու կը պատասխանես ինձ, լոյս մի բերելով պատահանից առջև: Ես կանց կ'առնում մի բերելով պատահանից առջև, դու վար կ'իջնես՝ դուռը կը բափողոցի դրան առջև, դու վար կ'իջնես՝ դուռը կը բանաս, ներս կը մտնեմ ու սենեկի մի մէջ առանձնանալով ազատօրէն կը խօսինք: Եւ այսպէս հետզ սիրահարի վերը խաղացած կը լինիմ հակառակ քու կամացդ:

— Կատակի ժամանակ չէ արդ : Չգիտեմ եթէ առաջարկած եղանակդ վտանգի չենթարկեր զմեզ :

— Ի՞նչ վտանգ :

— Ի՞նչ գիտնամ :

— Բաւ է որ լրտեսուելու երկիրդ չլինի , ըսաւ երիտասարդն , եղանակաւ մի որ կը յայտնէր թէ նոյնչափ և ինքն պատճառներ ունէր իւր կողմանէ անտես մնալու :

— Սովորական օրերն , ըսաւ աղջիկը , տունը կէս գիշերէն յառաջ քնոյ մէջ թաղուած է : Կը յիշեմ որ մէկ քանի անգամ տղայոց անձանգստութեան պատճառաւ մինչեւ բակն իջայ , վերտօին վեր ելայ , մի քանի անգամ գնացի եկայ , առանց մէկու մի ուշադրութիւնը գրաւելու :

— Ուրեմն ի՞նչ կը վարանիր , ընդունէ՛ առաջարկս :

— Լաւ , քանի որ ուրիշ միջոց չկայ :

— Մի՛ մոռնար , ժամը երկուքին :

— Հանգիստ եղիր իմ մասին : Դու միայն ջանադիր եղիր ժամագրութեանց հաւատարիմ մնալու :

— Կրնաս ազանով լինել եւս այդ մասին : Եւ եթէ յանկարծ Բերա հուր բոց գտնայ , նոյն հրակէզ պիտի ներկայանամ քեզ :

— Ամեն պարագայի մէկ կատակն ախորժելի չէ , վտանհ եղիր : Եւ եթէ ներսես ինձ՝ խորհուրդ կուտամ քեզ որ առաւել խնայողութեամբ խելք բանեցնելու ջանագիր ու քիչ մ'առաւել սիրտդ կըթելու տրամադիր լինիր :

— Պատրաստու իմ ուրեմն այս գիշեր բարոյականութեան վրայ դատախօսութիւն մի լսելու , ըսաւ Սիսակ , քիթը բերանը ծամոտկելով :

Վարժուհին ընդհատելով իւր ազգականին խօսքերն , ըսաւ .

— Ուրեմն այս գիշեր , ի տեսութիւն :

Եւ փողոցին դռնէն ընդ փոյթ ներս մտնելով տղայոց քով գնաց : Երկու հրեշտակներն զինքն ընդունեցին անհնարին ցնծութեամբ , ու անոնց գգուանքներն սփոփեցին մասամբ մասամբ իւր հոգւոյն տագնապը :

Տղայք արշալոյսն են մարդկութեան : Բնութիւնն ուրախ լինի թէ տխուր՝ այն կը փայլի անկասկած նոյնչափ կենաց որչափ աւերակաց վրայ : Կեանքն ինչպէս աւերակը լուսոյ ազդեցութեան կ'ենթարկուին , առաջինն առաւել կը գեղեցկանայ կենսական հանգամանօքն , իսկ միւսն առաւել խորհրդաւոր վսեմութեամբ կը տարածուի իւր մահուան մէջ :

Գ Լ Ո Ւ Թ Ի Փ .

Սպասե՛լ : Ի՞նչ անձկութիւն սպասելուն մէջ : Կարծես թէ մարդս մեծ զլրդմամբ կը ցնցէ բոլոր զանգակներն իւր սրտին և բանականութեան , և թէ յայնժամ արիւնը իւր շրջանը փութացնելով կ'սպասնայ խորատոյզ բնել յախուռն ընթացքին մէջ ամեն գործիք զգալու և մտածելու , այնչա՛փ սիրտն ուժգին կը տրոփէ , այնչա՛փ գլուխը շփոթ մտածութեանց անընդհատ յաջորդութեամբը կը կարծէ ցնորիլ :

Սպասե՛լ : Ժամանակը կարծես խաբիսխ նետած տարածութեան մէջ կը հանգչի , մինչ անձամբեր հոգին ակնդէտ կը հիւժի , և կ'սպասէ որ ժամերն իրենց կասեցուցած ընթացքը շարունակեն , յառաջ քայլեն , ընթանան , մինչեւ որ հնչէ տենչալի վայրկեանն որ մեր երազոց իրականութիւնն հաստատէ :

Սպասող անձն հանդէպ իրեն կը տեսնէ բարդու ին ամեն խոչնդոտից , վտանգաց և ակնկալութեանց ,

որք իբր թու մը կը կանգնին ընդդէմ իւր տենչանաց : Ալեաճանջ հոգին կ'ընդհարկանի այդ թու մըին դէմ, յետոյ կ'ընկրկի վիրաւորեալ, վերստին յառաջ կը դիմէ յուսանա՞մ զարձեալ նահանջելու համար արիւնյուայ, մինչև որ այդ կենաց ու մահուան խնդրոյն մէջ՝ ողեսպառ կենաց հոգին իւր անկարողութեան մէջ թաղուած :

Վարդանոյշ յիմարելով կ'սպասէր, թուէր իրեն թէ կեանքն յինքն կ'սպասէր, ա՛յնչափ արագօրէն կ'ընթանար իւր շրջանին մէջ : Յորչափ Արաքսիա իւր քովն էր, կը կարծէր թէ նա հաշտութեան ուղին է որ առ ինքն պիտի վերագոծնար ձիթեակաց ձիւղն ի ձեռին : Թուէր իրեն թէ նա աւետարեր հրեշտակն էր որ պիտի գոչէր «Ահա առիկ քեզ կը վերադարձնեմ սիրահարդ :»

Բայց երբ Արաքսիա հեռացաւ՝ կասկածն և վհատութիւնն իրենց մահաբեր իրականութեամբն եկան կանգնեցան հանդէպ Վարդանոյշի :

Աղջկան արիւնն հուր ու բոց կը թաւայէր պայթում սպառնալով, և յուսանա՞տութեան մէջ կը մխիթարուէր այն դառն մտածութեամբ թէ մահը գոնէ կը մնար իրեն իրբեւ վճռողական դարման, և թէ Սիրակ լքանէր զինքն :

Կուգէր, կը ճգնէր, ինքզինքն յանցա՞տ որ հանցիտացնելով իւր աչաց առջև՝ զՍիրակ արդարացնել անբացատրելի անտարբերութեանն համար իւր նկատմամբ : Զանձն իւր կը քննէր, կը գորովէր, կը դատապարտէր, իւր սիրելին անբասիր ընելու համար :

Անուրանալի է որ սիրահար մի կը մոռնայ զիւր անձ՝ պաշտած էակին համար, քանի որ ոյժն ու կեանքն անիկ կը քաղէ :

Վարդանոյշ սիրոյ ալեկոծութեան մէջ կը տարու-

րերէր ու կը կարծէր թէ իւր բարեկամուհւոյն բերնով կենաց վերջին հնչիւնը պիտի արձակուէր իրեն համար : Նոյն իսկ երբ կենաատու բոյնն անոր սրտին ու մտաց քառսին մէջ վայրկեան մի լոյս կը տարածէր, այդ սփոփարար շողն անգամ կարճևս զինքը պիտի շանթահարէր, այնչա՛փ իւր ներքին վիճակը յուսանա՞տական էր :

Երբ Տիկին Երանեան կը մերձենար աղջկանը, սա կրկին անհանդատութիւն կ'զգար, զի անհանգուրժելի էր իրեն ամեն ձիգ որ կը փորձէր զիւր վարանմունք ծածկելու մայրենի թափանցող աչերէն :

Սիրահարն իւր ասոցնապոց մէջ կ'որոնէ այն անձը միայն որուն իւր բուն կացութիւնը կրնայ յայտնել : Մօր մի ներկայութիւնն իսկ անտանելի է երբ հոգւոյ հրատապ վիճակը քողարկելու հարկաւորութիւն կը լինի :

Տիկին Երանեան կը մաշէր աղջկանն անդարմանելի վիճակը նկատելով, և զայդ քիչ ժամանակ առաջ ըրած ամուսնական առաջարկին վերագրելով՝ ամեն ջանք կ'ընէր համոզելու համար զիւր գուտար թէ երբէք իւր կամքը չպիտի բռնարարէր :

Վարդանոյշ թէեւ կը պաշտէր զիւր ծնողք, հանդերձ այսու տաժանելի էր իրեն՝ ներկայութիւնն մայրենի : Հետեւագէտ աչերը կը գոցէր իբր թէ ի դուռն լինէր, և այդ եղանակաւ կը յաջողէր հեռացնել զվրչլիւնէր, և անոր տիկինն, ու առաձննութեան մէջ ազատ կը տահար տիկինն, ու առաձննութեան մէջ ընկզմելու լիովին : Բայց երբ մնար տառապանաց մէջ ընկզմելու լիովին : Բայց երբ գիշերն վրայ եկաւ, հէք աղջկան վիճակն առտեղ եւս ծանրացաւ :

Արեգական լոյսը դառնալից և յուսանա՞տ բուպէներու մէջ անգամ իւր բարերար ներգործութիւնը կ'ընէ մեր սրտին ներքին մութ խաւերուն վրայ իսկ, իւր շողը մինչև հոն թափան-

այել տարով կարծես: Բայց երբ խաւարը կը տիրէ՝ սարսափահար աչքը սեւ գաղտնի թշնամիներ կը կարծէ տեսնել շուրջն, ու սիրտը՝ մթութեան մէջ թաւալագլոր՝ թուի ընդհարկանել աննշմարելի խոչընդոտից, և երկիւզով համակուելով՝ նոր և յիմարեցուցիչ արագութիւն կ'ստանան վշտերը:

Ուաւարն աներեւոյթ հրէշն է որ մեր կոկորդէն ուժգին բռնելով զմեզ խեղդամահ ընելու կ'սպառնայ: Ողորմելի վարդանոցն մթութեան հետ դէմ առ դէմ մնալով՝ ծայրայեղ սաստկութեամբ կասկածանաց ու վարանմանց մատնուեցաւ գիշերն ի բուն: Եւ երբ առաւօտուն արեգակը վայեցաւ պայծառ, կարծես թէ տառապանաց անդունդէն վեր բարձրանալով՝ աչերն ի լոյս ցաւոց բացաւ վերտօին:

Գ Ղ Ո Ի Ծ Ա.

Յետ ժամագրութեան Արաքսիա ներքին անհանգստութիւն մի կ'զգար որուն ի զուր կը ջանար յաղթել: Ստոյգ է թէ կը խորհէր որ սրտի պարտաւորութիւն մ'էր կատարածը, թէ ներելի չէր անապաւէն թողուլ սիրելի բարեկամուհի մի, թէ նուիրական պարտք մ'էր օգնել իրեն. և թէ ներսէս իսկ յօդնութիւն տառապելոյն պիտի մղէր զինքն անշուշտ եթէ ազատ լինէր խորհուրդ հարցնել անոր: Բայց այդ խորհրդածութիւններն ոչ միայն զվարժուհին չէին սփոփեր, այլ ընդհակառակն իւր անձկութիւնն անբացատրելի կերպիւ կը սաստկանար՝ որչափ ժամագրութեան վայրկեանը կը մերձենար: Այդ թաքուն գիշերային հիւրընկալութիւնը խիստ անախորժ տպաւորութիւն մի կ'ընէր իւր վրան, թէեւ ապահով լինէր

թէ ոչ ոք տեղեակ պիտի լինէր այդ տեսութեան: Ինքը վստահ էր որ Սիսակ ոչ միայն չահ չունէր մատնելու այդ գաղտնիքն, այլ նա մանտանդ այնպիսի յարգալից համակրութիւն մի յայնժամ էր իրեն ամեն ժամանակ որ իրաւունք կուտար իրեն վստահ լինել անոր բարեկամութեան մասին:

Խոր լուսութեան ու գիշերային թանձր մթութեան մէջ Արաքսիա սարսուռ կ'զգար, երբ յանկարծ լսեց փողոցէն առաջին խաղերը իրեն հաճելի եղանակի մի, զոր Սիսակ բազմիցս երգած էր իրեն:

Խոր լուսութեան գիշերային թանձր մթութեան մէջ Արաքսիա սարսուռ կ'զգար, երբ յանկարծ լսեց փողոցէն առաջին խաղերը իրեն հաճելի եղանակի մի, զոր Սիսակ բազմիցս երգած էր իրեն:

Տղայքն արդէն անմեղութեան քնով կը ննջէին, ամեն շարժում թէ՛ տան և թէ՛ փողոցին մէջ ժամերէ ի վեր դադրած էր: Իսկ վարժուհին նստարանի մի վրայ տարածուած, ճրագի մի լուսով, ի զուր ջանք բրած էր կարգալու իւր շփոթած մտացր սակաւ ինչ սփոփում տալու համար: Գրքին առաջին էջին վրայ կեցած էր երկար ժամանակէ ի վեր, առանց յաջողելու լրացնել զայդ: Աչերը շարունակ ժամացոյցին կը զարձնէր, ու թէ՛ կը վախաբէր որ վերջապէս հասնի ժամագրութեան րոպէն, և թէ՛ կ'ուզէր խոյս տալ անկէ: Բայց երբ ժամացոյցը վճռողական և խորախորհուրդ ճայնի երբ հնչեցուց իւր երկու վանկերը, քստմնեցաւ կոյսն իբր թէ իւր զատապարտութեան հնչխնր լինէր այդ: Նոյն վայրկենին լուսեցաւ նսեւ Սիսակի երգն որ նոյնչափ աղետարեր թուեցաւ իրեն:

Սարսափելով տեղէն ցատկեց աղջիկն, մօտեցուց ճրագը պատուհանին՝ որոշեալ նշանն ընելու համար, ու յետոյ ամենայն զգուշութեամբ սենեկէն դուր ելաւ:

Մէն մի քայլին կը թուէր իրեն թէ Ներսէս իւր ասջե-
պիտի կ'անդնէր. կարծեց իսկ անոր գրան ձանկը
յսել և բոլորովին զարհուրած խոյս տալ, իւր սենեակը
վերադառնալ, ու ազկազանին հետ տեսնուելու գլխա-
ւորութենէն ետ կենալ: Բայց երբ վայրիկ մի ետքն
հաստատուեցաւ թէ ոչ չարժում և ոչ ձայն կար իւր
չուրջն, ողեւորեցաւ, յուզեալ երեւակայութիւնն հան-
գարակով, ու յիշելով խոստումն առ իւր տագնապեալ
բարեկամուհին՝ արիարար վար իջաւ, բացաւ փողոցին
գուռն, ու զՍիսակ ներս առնելէն վերջը, ամենայն
զգուշութեամբ փակեց զայն վերտին: Յամբարքայ մեր
երկու երիտասարդները վեր ելան, և մէկ փոքրիկ
սենեակ մի մտնելով հոն քովէ քով նստան, գուռը կի-
սարաց թողլով:

Արաքսիայի սիրտը թէեւ կը տրտիէր ուժգին՝
սակայն հանդարտեցաւ, աստիճանաբար նկատելով թէ
իւր բարեկամուհւոյն դատը պիտի վարէր նոյն միջո-
ցին: Ուստի քաջութեամբ զինեցաւ, մարտ մղելու հա-
մար ընդգէմ յողորմ զգացմանց իւր ազգակցին:

Երբ երիտասարդն ինքզինքն ապահով համարեց
սենեկին մէջ, յազթական եզանակաւ մի գոչեց՝ ժամա-
ցոյցը ցոյց տալով.

— Դիտէ, Արաքսի, թէ ո՞ր աստիճանի խօսքիս
գերին եմ. նայէ՛ ժամը ճիշդ երկուքն է:

— Տայր երկինք որ ամեն պարագայի մէջ նոյն
ճշգրտութիւնը պահէիր, պատասխանեց վարժուհին:

— Կասկածելովս հանդերձ որ կշտամբանացող պիտի
ենթարկուիմ, կը տեսնես որ խոյս չտուի քեզմէ:

— Ուրեմն կ'զգաս մեղապարտ լինելը:

— Մեղապարտ:

— Այո՛, մեղապարտ, մանաւանդ թէ ոճրագործ:

— Ո՛հ, բաւ Սիսակ խնդալով, բառերն հետ-
զհետէ զօրաւորագոյն բացատրութեամբ կը յաջորդեն
իրարու: Նախ մեղապարտ էի, և քիչ մի վերջը ոճրա-
գործ դարձայ:

— Ժամանակը սուղ է, բսելիքս շուտ խօսիմ, և
դու գործելիքդ փութով վճռէ:

— Մեղք որ դատաւոր չես, Արաքսի՛ա, գործերը
կայծակի արագութեամբ պիտի կատարուէին:

— Խնդրեմ, Սիսակ, վերջ տուր կատակներուդ:
Ոչ այս գիշերային ժամն, ոչ իմ տրամադրութիւնքս,
և ոչ խօսակցութեանս նիւթը կ'արդարացնեն ծաղրե-
լու յօժարութիւնդ:

— Ե՞ս, զքեզ ծաղրեմ, օրի՛որդ, երբ յանչափս կը
սիրեմ ու կը յարգեմ զքեզ:

— Լա՛ւ, լա՛ւ, բայց խօսքի սկսինք:

— Սոսանց և ոչ իսկ յառաջարանի. վատահ եմ որ
խնդիրը վարդանոյշի կը վերարեբի. օ՛հ ուրեմն, ի՞նչ
է հրամանդ:

— Հրամանս այն է որ որոշապէս յայտնես թէ
որո՞նք են տրամադրութիւնքդ այդ խեղճ ազնկան
մատին, որ զժբաղդաբար քու թեթեւութեանց մար-
տիրանն եզած է:

— Թեթեւութիւնն, մարտիրոսութիւնն, ի՞նչ բա-
ռեր են աղոնք:

— Խնդրեմ, Սիսակ, զզատ կերպիւ մտածէ ու
պատասխանէ:

— Պատրաստ եմ ամեն հարցմանցդ պատասխա-
նելու:

— Լաւ, բայց յուսամ որ անկեղծութեամբ կը պա-
տասխանես:

— Ամենայն անկեղծութեամբ, այսինքն որչափ որ
կարելի է ինձ:

— Կը գուշակեմ որ այս վայրկենիս եւս խարդախ պիտի լինիս :

— Շնորհակալ եմ, սիրուն ազգակիցս, ինձ չուայլամ քաղաքավարութեանցդ համար. և ինչան երախտագիրութեանս կը յառաջագրեմ անկեղծ լինել :

— Պատասխանէ՛ ուրեմն, քանի՞ օրէ ի վեր վարդանուշի այցելութեան չես գնացած :

— Կարծեմ տասն և հինգ օրէ ի վեր :

— Տասն և հինգ օր : Եւ եւ ինչո՞ւ այդչափ ժամանակ զինքը լքեալ թողուցիր :

— Ես զինքը չթողուցի, ինքն ուզեց զիս հալածել :

— Ո՞վ, վարդանո՞ջ ուզեց հալածել զքեզ :

— Այո՛ :

— Խոստովանէ՛, Սիսա՛կ, թէ այս վայրկենիս ճըշմարտախօս չես :

— Ի՞նչպէս կրնաս զայդ գիտնալ :

— Անշուշտ գիտեմ, քանի որ ողորմելի աղջիկը զքեզ չարաչար կը սիրէ :

— Եթէ սիրէր զիս ստուգիւ առաջարկս կ'ընդունէր :

— Ո՞ր առաջարկդ :

— Պարզապէս զինքն առեւանգել :

— Սքանչելի խորհուրդ արդարեւ :

— Ինչո՞ւ խորհուրդս կը դատապարտես : Եթէ վարդանոջ զիս իրօք սիրէր, այդ առաջարկս խիտ գործադրելի պիտի թուէր իրեն :

— Գերագոյն մտածութիւն մ'ունեցեր ես իրօք : Կ'երեւայ թէ քեզ համար պատուոյ խնդիրը բառ մ'է պարզապէս :

— Ինչպէս և քեզ համար սէրը բառքքի բառերէն մին է և ոչ այլ ինչ :

— Կը բաղձայիր ուրեմն որ վարդանոջ անջնջելի արատով մի գրոջմէր թէ՛ ընտանիքն և թէ՛ բոլոր իւր կեանքը :

— Դու եւս նախապաշարմանց գերին ես, կը տեսնեմ :

— Եմ այդ մասին, և կ'ուզեմ լինել միշտ :

— Ուրեմն քանի որ զիրար չենք հասկնար, աւելորդ է մեր խօսակցութիւնն յառաջ մղել, ըսաւ Սիսակ ճարպիկութեամբ :

Բայց Արաքսիա առանց այդ խօսքերուն ուշադրութիւն ընել ձեւացնելու՝ երիտասարդին ըսաւ .

— Խոստովանէ՛ անկեղծարար, ինչո՞ւ այդչափ ջանադիր ես փութացնել ամուսնութիւնդ օրիորդ Երանեանի հետ :

— Վասն զի կը սիրեմ զինքն, և կը փափաքիմ որ որչափ հնարաւոր է կենացս բոլոր բոպէներն անոր հետ անցնել :

— Սիսա՛կ, մէկ կողմ թող այդ արուեստասիրեալ խօսքերն, և յիշէ թէ հոգւոյդ խորը կը կարգամ ես :

— Ինչո՞ւ ուրեմն կը նեղուիս հարց ու փորձի ենթարկելով զիս :

— Վասն զի կը փափաքիմ քու վեջին որոշումդ ճանաչել :

— Քանի որ դու չես հաւատար իմ սիրոյս էութեան, ի՞նչպէս կարելի է ինձ որ և է վճիռ տալ :

— Մեծ պատճառներ ունիմ սիրոյդ հաւատալու, ըսաւ աղջիկը, մասնաւոր կերպիւ նայելով անոր :

Երիտասարդն անմիջապէս հասկցաւ թէ Տիկին Արգարեանի կ'ակնարկէր, և անտարբեր ձեւ մ'առնելով ըսաւ .

— Ես երիտասարդ մ'եմ, և բնական է որ յուսով միայն չեմ կարող ապրիլ :

— Բայց յոյսերն իրականութեան վերածելու հա-

մար կը բաւէ որ նուազ հեշտասէր լինիս ու անաւել աշխատասէր: Իսկ դու կը փափաքիս արբանայ հանգիստ վիճակի մի առանց աշխատութեան. և այս է պատճառն որ կ'ուզես ամուսնութիւնդ փութացնել օրիորդ Վարդանոյշի հետ և ոչ այլ ինչ:

— Ուրեմն ես չեմ սիրեր զՎարդանոյշ, գոչեց Սիսակ, իբր թէ սրամտելով:

— Եթէ սիրէիր զինքը, չէիր գատապարտեր այդ խեղճ ազջիկն անկողնոյ մէջ տառապելու և կտակածով ու կարօտով մաշելու:

— Ստոյգ է բաժնդ արդեօք:

— Կրնաս դու անձամբ երթալ և բաժնս հաստատել:

— Դու ազատ ես գատելու զիս ինչպէս որ կը կամիս. բայց սա ստոյգ է որ ճշմարիտ զգացում մ'ունիմ Վարդանոյշի նկատմամբ. կը սիրեմ զինքն և կ'ուզեմ ստանալ զինքն ժամ յառաջ որ և է կերպիւ, հաւանութեամբ ծնողացն կամ թէ առանց անոնց հաւանութեան: Եթէ այդ պայմանը կ'ընդունի օրիորդը, պատրաստ եմ նուիրել նմա բոլոր հոգիս:

— Յուսամ թէ առանց այլոց բաժին հանելու սակայն, զի այդ մասին խիտտ առատաձեռն ես արդարեւ:

— Ես տակաւին ամուսնացած չեմ: Հետեւապէս արդարացի չէ կարծեմ հաւատարմութիւն ուխտել առ այն որ տակաւին կրնաս չէ:

— Եւ սակայն դու չես ներեր որ ամենափոքրիկ համակրութիւն մ'ունենայ Վարդանոյշ ուրիշի համար, կարծեմ:

— Անշուշտ:

— Կը տեսնե՞ս ուրեմն որչափ անիրաւ լինելոյ: Եթէ հարցնեմ քեզ թէ ի՞նչ բանի վրայ կը հիմնես քու առանձնազնորութիւններդ, ի՞նչ պիտի պատասխանես ինձ:

— Պիտի պատասխանեմ քեզ թէ կը վայելեմ պարզապէս սեռիս իրաւունքը:

— Եւ դու կը կարծես այդ անիրաւ խօսքերով արդարութեան գառը վարել արդեօք: Հարցո՞ւր խղճիդ և բտտ այնմ խօսէ: Եթէ դու սիրէիր զՎարդանոյշ, նոյնչափ սրբանուէր պիտի լինէր քեզ նա որչափ օրինաւոր կ'ինդ:

— Սիրոյ խնդիրը տարբեր եղանակաւ կ'ըմբռնեն երկու սեռերը: Կանայք կ'ուզեն որ արք իրենց համար զոհուին և իրենք ոչինչ գործեն փոխադարձաբար:

— Արդարեւ խիտտ խմատալից են խօսքերդ, բաւ Արաքսիա, ծաղրող եղանակաւ: Դու կը զուարճանաս, կեանքը կը վազելես, մինչդեռ քեզի համար Վարդանոյշ կը տառապի, կը հիւժի սենեկին մէջ առանձին: Եւ այդ չի բաւեր, ու կ'սկսիս ամենայն յանդգնութեամբ գանգատիլ անկէ:

— Անշուշտ, քանի որ նա կը զոհէ զիս բնտանեկան կամ բնկերական սնտոտի պատշաճութեանց:

— Գանք բուն խնդրոյն, բաւ վարժու հին գժգոճ եղանակաւ:

— Ինչպէս կ'ուզես:

— Վարդանոյշ երբէք չամուսնանար առանց ծնողացն հաւանութեան, զայդ լաւ գիտցիր:

— Եթէ այդպէս է, բնաւ կատարելիք բան չի մնար ինձ Վարդանոյշի նկատմամբ. ուրեմն այս վայրկեանէն օտար մ'եմ իրեն համար:

— Սակայն չէր այդ խոտտոմդ: Դու յառաջադրած էիր անձիդ պարկեշտ վիճակ մ'ապահովել, և մինչև խորհրդոյդ գործադրութիւնը, Վարդանոյշ յանձնատու եղած էր սպասել համբերութեամբ:

— Լաւ, բայց եթէ այդ վիճակը ցկեանս ապահո՞ւ

վելու չյաջողիմ, հարկ է ինձ ուրեմն սպասել մինչևս վերջը վտանգի ենթարկելով իմ ապագաս :

— Իսկ ի՛նչ ընէ վարդանոյշ որ ընտիր բախտեր կը մերժէ, քեզ հաւատարիմ մնալու համար :

— Եթէ կ'ուզէ, զինքն արձակեմ իր խոտմանէն :

— Խոտմանէն կ'արձակես, այո՛, բայց սրտին յօդերէն ի՛նչպէս պիտի արձակես զինքն :

— Այդ իրեն գիտնալիքն է :

— Մեկուսի թո՛ղ աւելորդ վէճերը և լուր ինձ դու ու հնազանդէ :

— Խօսէ՛ տեսնենք :

— Գու ընելիքդ այդ աղջկան այցելութեան երթալ է, զի կրնաս հէզ արարածին մահ պատճառել խիստ միջոցներովդ :

— Պէտք է որ մտածեմ :

— Սաստիկ պիտի վիրաւորես զիս, եթէ չխոտաւնաս բարեկամուհւոյս այցելութեան երթալու, զի նա ամենայն սրտայուզութեամբ քեզ կ'սպասէ, իւր լքման պատճառն խմանալու համար :

— Ինքն է պատճառն իմ հեռանալուս և մինչևս որ չխոտանայ անմիջապէս ծնողացն հառանութիւնն ստանալու, չեմ վերադառնար առ ինքն :

— Կր տեսնեմ որ շահերդ լաւ գիտես պաշտպանել, Սիսա՛կ :

— Մէն մի մարդու պարտ է իւր վիճակն ապահովել : Հաւանական է որ Երանեանք յաջողին իրենց դուստրն հեռացնել ինձմէ, և ես հեռոջհեռէ սաստկագոյն սիրով համակուելով, դատապարտուիմ որ մի թշուաս լինելու :

— Սիսա՛կ, դու պարզապէս կ'ուզես սիրոյ վաշ՝ վառուն լինել, և երիտասարդուհին նեղի զնելով ծայրայեղ ու վերջնական միջոցներու գիմելու հարկադրել զինքն : Ըրածդ անօրէնութիւն է ու անարգ պատրուակ

մի, ապօրինաւոր սէրդ ծածկելու համար : Եթէ այդ խիստ վարմունքովդ ողորմելի օրիորդն Երանեան սպաննես, վստահ եղիր որ ես դատախազ պիտի կանդնիմ՝ զքեզ իբր մարդասպան հանցիտացնելով ի լուր աշխարհի :

Արաքսիա այնչափ սրտմտած էր որ աչերէն հուր կը ցայտէր և բերնէն՝ փրփուր :

Սիսակ նկատելով որ պահանջողութեան չափն անցուցած էր՝ իւր ազգականին երեսին ժպտելով ըսաւ .

— Ես չեմ հաճիր որ իմ պատճառաւ այդպէս բարկանաս. հանդարտէ՛, ու կը խոտանամ երթալ Երանեանց : Միայն թէ ամիս մի պայմանաժամ կը թողում վարդանոյշի, որպէս զի յաջողի համոզելու զիւր ծնողք մեր ամուսնութեան մասին : Յետ լրման տուած պայմանաժամին, եթէ վերջնական խոտումն չընդունիմ, ես ապահովապէս կը հեռանամ օրիորդէն, զի յօժարամիտ չեմ խաղալիք լինել երիտասարդուհեաց ձեռքը : Դու ուրիշները կը հոգաս, Արաքսիա՛, միայն ինձ նկատմամբ անտարբեր ես, կը գիտեմ :

— Դու ուրիշի պէտք չունիս, աւելորդ է զքեզ հոգալ :

— Անշուշտ, եթէ օր մի սրտիս գո՛ճը լինիմ՝ փոյթ չէ քեզ այդ :

— Այդ կողմանէ երկիւղ չեմ կրեր, վստահ եղիր, Սիսա՛կ : Միայն թէ լսէ ինձ եթէ այցելութիւնդ կրբնամ իմացնել օրիորդ Երանեանին :

— Եթէ կ'ուզես, առաւօտուն իսկ կ'երթամ կամ կէս օրէն վերջը :

— Այդ անհնար է, վասն զի ինքն անկողնոյ կը ծառայէ : Նախապատրաստելու է զնա, որով ես առաւօտուն կ'երթամ և վաղուան համար այցելութիւնդ կ'իմացնեմ :

— Ուրեմն համաձայն ենք. ես վազն անոց ստճառ կ'երթամ, բայց դու քու կողմանէ՛ց պայմաններս մի՛ մոռնար :


— Էա՛ս, լա՛ս :

Եւ այս վերջին որոշման վրայ՝ Արաքսիա սօք ել- նելով ըստ .

— Փամանակ է որ մեկնիս արդ :

— Եւ վերստին ճրագն առնելով առաջնորդեց նա երիտասարդին՝ մինչեւ փողոցի զրան առջեւ, և ամեն արարողութիւն գուռ բանայու և գոցելու լրացնելէն վերջը, իւր սենեակը վերադարձաւ սրտի անբացատ- րելի թեթեւութիւն մ'զգալով, զի կը մտածէր թէ առանց վտանգի յաջողած էր կատարելու իւր հաշտա- րար պաշտօնը :

Արաքսիա գոհունակութիւն կ'զգար, աչացն առջեւ պատկերացնելով այն ուրախութիւնը զոր պիտի զգար իւր բարեկամուհին՝ իմանալով բանակցութեան յաջող ելքը : Բայց միւս միւս կողմանէ ի սրտէ կը ցաւէր ճանաչելով Սիսակի յողորմ ընտանոթիւնը ինչպէս, և անոր չահախնդիր գիտատորութիւնները : Սակայն ինչ կրնար գ'րծել սիրայորդ և բռնաոր սրտի մի գէմ որ ամեն զգօն խորհրդոց ականջ կը գոցէր : Ողե- սպառս եղած տընութենէ, ու եւս առաւել այլ և այլ յուզումներէ այդ գիշերուան, անկողին մտնելով քնա- ցաւ անմիջապէս :



Գ Լ Ո Ւ Խ Ե Լ Ա .

Վարժուհին չէր գիտեր սակայն թէ իւր գիշերա- յին տեսութիւնը վկայներ ունեցած էր : Երբ նա կ'եր- թար ընդունիլ զՍիսակ, տօնց քայլերն որչափ ալ թե- թեւ լինէին, աննշմարելի չանցան Տիկին Արգարեանէ :

Մինչդեռ երիտասարդուհին ասն տիկնոջ սենեկին առջեւէն անցնելով կրկին զգուշութիւն կ'ընէր քայ- լիցը ձայնը եւս առաւել հեղձամղձուկ ընելու, հան- զերձ այսու միջոց մի ճանչիւնը տախտակին որուն վրայ կը կոխէր, ուշադրութիւնը գրաւեց Տիկին Ար- գարեանի որ արթուն էր նոյն պահուն, ու անհան- գատութեամբ կ'աւսումնասիրէր վարժուհւոյն նախորդ օրուան բացակայութեան պատճառը : Կը մտածէր թէ որուան բացակայութեան պատճառը : Կը մտածէր թէ զույցէ դա՛ մի պատրաստէր նա, զիւր հոմանին իրմէ հեռացնելու համար դարձեալ, ինչպէս որ սպառցոյցն ունեցած էր մինչդեռ աղջիկը պարակզին մէջ առ այդ կ'աշխատէր Սիսակի հետ տեսնուած ժամանակը :

Տիկին Արգարեան հետաքրքիր լինելով ստուգե- լու թէ ուսկից կուգար լսած ձայնը, տեղէն ցտակեց անմիջապէս, գուռը բացաւ անձայն, ու տեսաւ վար- ժուհին որ ճրագ ի ձեռին վար կ'իջնէր : Սանդուղները բոլորածեւ լինելով, Տիկինը կեցած տեղէն մինչեւ բակը կը տեսնէր : Հետեւապէս ականատես օրիորդին գրեթէ մէն մի քայլին, անոր վերադառնալուն Սիսակի հետ, ու մասնաւոր խոսքի մէջ առանձնանալուն :

Երբ Տիկին Արգարեան ճանչցաւ զիւր սիրահար, հոգին մոնչեց վայրենօրէն, և այնպիսի սրտմտութիւն մ'զգաց ընդգէմ աղջկան որ եթէ հնար լինէր յօշ յօշ կ'ընէր զայն նոյն միջոցին : Անմիջական վրէժ երգուաւ, և խոստումն իրօք կատարեց :

Երբ տեսաւ թէ ո՞ր սենեկին մէջ մտան անոնք,

մթու թեան մէջ առ խարխափա քայլելով մօտեցաւ փոքրիկ սենեկին ուր երկու երիտասարդք կը խօսէին, ու դուռն կիսաբաց լինելով լսեց անոնց բոլոր խօսակցութիւնն, ու անգամ մի եւս համոզուեցաւ թէ Արաքսիա կը ձգնէր վերջնական կերպիւ հեռացնել իրմէ զիւր հոմանին:

Ուզածն իմանալէն ե.քր, և նկատելով թէ անոնց խօսակցութիւնը վերջանալու էր, հոգւոյն բուռն վրէժէն առաջնորդեալ՝ զնաց զարկաւ սենեկի դրան ներսէսի որ հետու չէր ժամողիւր երիտասարդաց գտնուած տեղէն:

Ներսէս իմանալով որ իւր գրան կը զարնեն՝ արթնցաւ երկիւզալից, ու հարցուց թէ ո՞վ էր զարնողը:

Տիկին Արգարեան պատասխանեց ցած ձայնիւ.

— Ես եմ, փութա՛ գալ շուտ, առանց ժամանակ կորսնցնելու, և մանաւանդ առանց չչուկ հանելու:

Ներսէս տեղէն ցատկեց անմիջապէս և հարցուց եթէ անմիջական վտանգ մի իւր օգնութիւնը կը պահանջէր:

— Գործելու պէտք չկայ, տեսնելու խնդիր է, բայտ չարաթոյն կինը, շուտ եկու կ'ըսեմ, մանաւանդ զգուշացիր լոյս վառելէ:

Ներսէս արագաբար ուսերուն վրայ նետելով վերարկուն որ մերձ էր անկողնոյն, բացաւ դուռը, սըրսայոյց հարցնելով.

— Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ:

— Սպասէ՛ հոս առանց հեռանալու, և անձամբ կը գատես եղածն:

Յայտնի է որ վրէժխնդիր կինը կը փափաքէր որ ներսէս տեսնէ երկու երիտասարդներն առանց սակայն անոնց խօսակցութիւնը լսելու, զի յայնժամ Արաքսիա անբասիր կը հանդիսանար, մինչդեռ կ'ուզէր զայն արատաւ որել:

Բայց ներսէս անկարող լինելով սպասելու մթութեան մէջ, մանաւանդ այդ անորոշ գիրքին մէջ, ուզեց լոյս վառել ու յառաջ երթալ. բայց Տիկինը ձեռքէն բռնելով կասեցուց, ըսելով.

— Ո՞ւր կը փափաքիս երթալ:

— Իմացուր ինձ ի՞նչ կայ որ կը բռնադատես զիս հոս անգործ մնալու: Եթէ գողեր կան, չեմ հանդուրժեր որ հոս մնամ, առանց անոնց զէմ քայլելու:

— Իրօք գողեր եկած են, ոչ թէ մեր ինչքը այլ մեր պատիւը գողնալու:

Մինչ այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար մեր երկու անձանց միջեւ, ահա դուռ մի կը բացուի, ու Արաքսիա դուրս կ'ելնէ հոնկէ ճրագը բռնած, և Սիսակ կը հետեւէր անոր: Երկու լրտեսներուն կեցած հակառակ կողմանէն յառաջացան երկուքը միատեղ, ու անյայտ եզան բոլորովին:

Ներսէսի բոլոր արիւնը քամուեցաւ կարծես նոյն վայրկենին. առաւելն տեսնելու կամ հարցնելու հարկ չհամարեց. իւր սիրտը կատարելապէս ջախջախուած էր, զի սեւ մառնութեան խողովիք կը կարծէր զանձն իւր:

Կը ցնծար Տիկին Արգարեանի հոգին որ օձերու բոյն մ'էր: Խառարին մէջ չէր տեսներ զներսէս, բայց անոր արձակած հոտաչանքէն շուտ ըմբռնեց թէ որպիսի սլաքով ծակած էր երիտասարդին հոգին:



Գ Լ ՈՒ Թ ԼՔ.

Տիկին Արգարեան չէր ներած Ներսէսի իրեն գէմ ըրած բողբոջն ի պաշտպանութիւն վարժուհւոյն՝ Ֆյօրիա եղած օրերնին. բայց լուծ էր, միշտ առանց երբէք նամարձակելու էր սրտմութիւն յայտնել, զի երիտասարդն պատկառանք ու տեսակ մի երկխոյզ ազգած էր իրեն ամեն ժամանակ: Ահա ուրեմն մէկ հարուածով թէ՛ թաքուն զժողովութիւն մի կը գոհացնէր Ներսէսի մասին, և թէ՛ վրէժը կը լուծէր աղջկան մի նկատմամբ որ զիւր սիրահար կ'ուզէր յափշտակել իրմէ, և զիւր կրած անունը ստանալ:

Վրիժառու թիւնը պազանային հեշտութիւն մ'ունի չար հոգւոյ մի համար. և զայդ հեշտութիւն լիաթօք կը վայելէր Ներսէսի մօրուն: Այդ վրիժառու թեան զգացումը շանթի արագութեամբ ներդարծելով իւր վրայ՝ առանց ժամանակ կորսնցնելու ըսաւ կիսամեծ երիտասարդին.

— Ներսէ՛ս, ահա՛ աղջիկն զոր պաշտպանեցիր օր մի ի Ֆյօրիա: Դատէ՛ թէ որպիսի՞ լըբութեամբ կը յանդգնի ժամագրութիւն ունենալ մեր տան մէջ խակ: Կարելի է որ առաջինը չլինի այդ. բայց սա ստոյգ է որ երկրորդ ժամագրութիւն մի պատրաստուած է վազն առաւօտեան համար, թո՛ղ թէ այսօր օրն ի բուն բացակայ էր այդ անամօթ վարժուհին:

Չըսաւ սակայն թէ զրեթէ ամբողջ օրն Սիասկ իրեն մօտ էր:

— Ես լսեցի, յարեց Տիկինը, իրեն ամբողջ խօսացութիւնը որ ոչ եւս երկրայութեան տեղի կուտայ իրենց մեղսակից յարաբերութեանց մասին: Հետեւապէս անհնար է ինձ այլ եւս որդուցս քով պահել այդ

պիսի անբարոյական անձ մի: Սակայն ես ոչինչ զխնայ կը ձեռացնեմ ի պատիւ տանս, ու ու եւ է պատճառ առարկելով այդ աղջիկը քովէս, կը վանեմ:

Տիկին Արգարեան իբր թէ ոչինչ զխնէր Ներսէսի յարաբերութեանց վրայօք վարժուհւոյն հետ, և թէ կը գործէր պարզապէս նախանձախնդրութեամբ տանը պատուոյն:

Երիտասարդն այնպէս ապշած, կործանած, մեռած էր գոզցես, որ ոչինչ պատասխանեց, որ իւր սենեակը մտնելով և դուռը դոցելով, անկաւ գետինն, ու հոն մնաց իբր մարդ յորմէ խլած էին զգալու և մտածելու կարողութիւնքն:

Ապագայն որ այնչափ վարպագոյն ներկուած էր իրեն համար՝ յանկարծ սեւ վարպոյրով ծածկուեցաւ: Քառոր կը տիրէր սրտին մէջ, քառոր մտացր մէջ: Բայց հետզհետէ խառնաչփոթութիւնը տեղի տուաւ լուրջ մտածութեանց. տեսաւ աչացն պատկերացած սեւ մատնութիւն մի յանձին Արաքսիայի. զգաց զայդ մատնութիւնը բոլոր գոտնութեամբն հոգւոյ մի որ ամիսներէ ի վեր վարժ էր ծայրայեղ երջանկութիւն վայելելու, և սը երանութեան բարձունքէն կը գահավայելէր. և սը երանութեան վնին մէջ: Ոտք ելաւ, գտաւ վիժէր զժբարդութեան վնին մէջ: Ոտք ելաւ, գտաւ սեղանն որուն վրայ ճրագ մի կար, վառեց գայն, իբր թէ լոյսի ազդեցութեամբ կարողանար չար երազի մի ներդարծութենէն ազատիլ: Բայց բոլոր ոչ միայն ոչինչ ցրուեց, այլ մատնութեան երեւոյթն աստիճանաբար հակայացաւ:

Սկսաւ անցելոյն նայիլ, ու հոն փնտտել և գտնել զառապարտութեան կէտեր ընդդէմ աղջկան: Յիշեց օրն այն ուր Արաքսիա կը խօսակցէր Սիասկի հետ պարտէզին մէջ. յիշեց անոր չփոթութիւնն երբ զինքն տեսաւ, ինչպէս անոր յամատութիւնը զազանի պահե-

լու իրենց խօսակցութեան նիւթը: Մտածեց թէ նախ-
ընթաց իրիկունն իսկ վարժուհին անհանգստութեան
մի մատնեալ էր զոր ի զուր կը ջանար քողարկելու,
և կը հետեւցնէր թէ այդ անհանգստութեան պատճառն
ոչ այլ ինչ էր եթէ ոչ անձկութիւնը զիւր սիրահարն
ընդունելու նոյն գիշեր:

Երիտասարդն ընելիքն անմիջապէս վճռեց, այն
էր խաղաղ արտաքսել հոգիէն և կեանքէն զԱրաք-
սիան: Ո՛րչափ ծանր էր հարուածն որով իւր սիրտը
պիտի մեղցնէր, նոյնչափ ալ ուղեց որ արագ լինի ևս
գործադրութեան միջոցը: Բոլոր գիշերն յուսահատու-
թեան բուռն տառապանօքն անցուց: Ի վերջոյ սիրոյ
հեշտագին յիշատակներուն վերջին մնաս բարեաւը տա-
լով, մօտեցաւ փոքրիկ տուփի մի, հոնկէ դուրս հանեց
չորարեկ վարդ մի, և զայն թուղթի մի մէջ բոյսրեց,
որուն վրայ գծած էր հետեւեալ տողերը:

«Նոյն օրն, Արաքսիա՛, որ այս վարդն գեղով ու
թարմութեամբ կը փայլէր, պահեցի զայն ի յիշատակ
մեր սիրոյն: Նոյն օրն և գրեց իբր այդ վարդն թարմ,
և գեղեցիկ առաքինութեամբ օժտուած կը կարծէի:
Իսկ այսօր գիտեմ որ իբր այս վարդն թարչամեալ ևս
տգեղութեամբ ու սեւ մատնութեամբ ընդդէմ խոս-
տացեալ սիրոյդ: Այսուհետեւ ազատ ևս, մնաս բարեաւ:»

Պահարանի մէջ դրաւ այդ թուղթը, Արաքսիայի
հասցէն գրեց, ու դրաւ զայն գրասեղանին վրայ: Ամեն
ինչ լմնցած էր յաւէտ ուրեմն:

Բայց ծանր էր սիրոյ մարտիրոսին բնակիլ յայդ
վայր որ վկայ եղած էր իւր երջանկութեան: Ուստի
միտքը դրաւ յաջորդ առաւօտուն իսկ մեկնիլ տունէն,
Անգլիա երթալու համար իւր գործողութիւններն
պատճառ բռնելով:

Թեթեւ պատրաստութիւններ ըրաւ համբողջելու

համար, ու առաւօտուն ամեն ինչ պատրաստ էր ու-
ղեւորութեանն համար:

Իջաւ պարտէզ, ուր իւր երկու քոյրերն կը խաղա-
լին ընդ հովանաւորութեամբ աղախնոյ, և օրիորդին
բացակայութիւնը նկատելով հաստատուեցաւ Տիկին
Արգարեանի տուած տեղեկութեանց ճշգրտութեան փրա-
ջօք՝ այսինքն թէ վարժուհին երկրորդ ժամադրութիւն
մի պիտի ունենար նոյն առաւօտուն Միաակի հետ:

Մօտեցաւ տղայոց, համբուրեց զանոնք կրկին և
կրկին անգամ անսովոր գորովանօք, ու իմացուց անոնց՝
իւր ուղեւորելու գիտաւորութիւնը: Տղայք զայդ իմա-
նալով յանչափս յուզուեցան և սկսան լալ զատնապէս:
Բայց երիտասարդն զանոնք մխիթարելու զիտաւորու-
թեամբ խոստացաւ վերադառնալ շուտով: Մինչ ներ-
սէս կը պատրաստուէր հրաժեշտի ողջոյնը տալու,
Ազաւնին ըսաւ.

— Եղբա՛յր, մեր օրիորդը հոս չէ, զու չե՞ս սպա-
սեր անոր վերադարձին, զինքն բարեկեղութեամբ:

— Ոչ, քո՛յրս, ժամանակ չունիմ. միայն թէ իւր
ձեռքը հասցնես այս նամակս, ըսաւ ներսէս, որուն
պարունակութիւնը ծանօթ է մեզ:

Արմինէն յափշտակելով եղբօրը ձեռքէն թուղթը,
խնդրեց անկէ որ ինքը կատարէ այդ պաշտօնը, խոս-
տանալով գործել ամենայն ճշգրտութեամբ ու սպահնօ-
վութեամբ:

Մինչդեռ երիտասարդն կը վարանէր իւր հաճու-
թիւնը տալու, բարեսիրտ Ազաւնին երաշխաւոր կանգ-
նեցաւ քրոջն համար, իբր թէ բնագոյմամբ զգար թէ
ինքն սահմանեալ էր իւր սիրելի վարժուհւոյն միայն
բարիք ու գոհունակութիւն ազգելու, և ոչ թէ արխ-
րութիւն ու աղէտք:

Ուստի փոքրիկն Արմինէն նամակը ձեռքը պահե-
լով, ըսաւ.

— Եղբայր, վստահ եղիր կ'ըսեմ որ զայս մեր օրիորդին անվստահ կը յանձնեմ :

— Էա ուրեմն, պատասխանեց երիտասարդն :

Մինչ գողարիկ էակը կտրեւորութեան ձեւ մի կտտար անձին՝ նկատելով իրեն արուած վստահութեան նշանը, ներսէս վերստին համբարդելով աղայքը անբացատրելի յուզմամբ, հազիւ կարողացաւ հնչել այս քանի մը բառերը. «Ձիս մի մոռնաք, այլ ամեն օր յիշեցէ՛ք :»

Ընդ փոյթ կը հեռանար ներսէս այն սուսէն որ երբեմն երջանկութեան բոյն եղած էր իրեն համար, և որ նոյն վայրկենին վայր աղէտից գարձած էր. կարծես թէ անհամբերութեան տենդն զինքն գրաւած էր, և թէ կ'ուզէր ահագին անջրպետ մի դնել ընդ մէջ իրեն և Արաքսիայի :

Գնաց Պոլիս ի գրասենեակն Պ. Արգարեանի՝ որ ըստ իւր սովորականին խիտ կանուխ գիւմած էր հոն : Այց աշխատասէր հայրն առաջիններէն մին էր գործի երթալու, և յետինը իւր գրասենեակը թողլու : Պ. Արգարեանի համար կենաց գլխաւոր պայմաններէն մին էր գրադիլ, յառաջդիմել, հարստանալ : Որչափ իւր հարստութիւնը կը զարգանար, նոյնչափ ալ իւր արժանատրութեան վրայ կը հաստատուէր, ու օրինաս որ գոհունակութիւն կ'զգար, անգուլ ջանիցն յաջողութիւնը նկատելով : Աշխատութիւնն իւր մեծագոյն գրօսանքն էր, անով կը բաւականանար, ու այլոց կը թողուր կենաց այլ և այլ վայելքը :

Պ. Արգարեանի որդին պատճառելով նախընթաց օրուան հեռագրալուրի մի գալուտոր, իմացուց հօրը թէ իւր ներկայութիւնն անհրաժեշտ էր ի Մանչէսթըր և խոյս տալու համար գործի վերաբերեալ մանրամասնութեանց վրայօք հաշիւ տալու հարկէն, ու կատար-

ծելի երեւալու վտանգէն, փութաց հեռանալ ծնողքէն, առարկելով ուղեւորութեանն համար կատարելիք քանի մի հարկաւոր արարողութիւնները :

Պ. Արգարեան զարմացաւ իւր որդւոյն յանկարծական ճամբորդութեան վրայ. բայց կատարեալ վրասահութիւն ունենալով անոր թէ լրջամիտ խորհրոց և թէ՛ խոհեմութեան վրայ, մակարեկց թէ այդ անյայտագ չուն անհրաժեշտ էր անչուշտ : Ու թէև սաստիկ ցաւեցաւ երիտասարդին հեռանալուն համար, մխիթարուեցաւ սակայն մտածելով թէ գործերն ամեն բանէ յառաջ էին :

Գ Լ Ո ի Թ Լ Գ.

Մինչդեռ ներսէս ամեն սիրոյ յօդ ջախջախելով Արաքսիայի սիրաբ պիտի յօշոտէր, ողորմելի աղջիկն անդիտանալով իրեն հասած աղէտքը, կանուխ գնացած էր վարդանուջին հօգին կենդանացնելու, Սիւսակի մօտակայ այցելութեան լուրն հաղորդելով անոր :

Թէև վարժուէին ոչ նպատաստոր և ոչ ալ խիտ աննպատ կերպիւ ներկայեց երիտասարդին հեռանալու պատճառն, օրիորդ երանեան յաջողեցաւ զՍիւսակ կատարելապէս արդարացնելու սիրահարաց յատուկ ճարտարութեամբն, ու մինչև անգամ ամուսնութիւնը փութացնելու պահանջողութեան մէջ գորովանաց փութացնելու տեսաւ : Ստոյգ է որ ոչինչ գիտէր երիտասարդին սակզ այցելութեանց մասին առ Տիկին Արգարեան ու անոնց ունեցած յարաբերութեանց վրայօք բնաւ կատկած չունէր :

Վարդանուջ իւր ծայրայեղ վճատութենէն և տկարութենէն մէկէն ի մէկ առ կհանա վերադարձաւ :

Մտացաւ թէ հիւանդ եղած էր, այնչա՛փ մեծ էր յինքն աշխոյժը: Անկողնէն ելաւ, ու անհամբեր սկսաւ սպասել յաջորդ օրուան որ յատկացեալ էր իւր սիրելւոյն գարտեան:

Իսկ Արաքսիա ուրախ էր ոչ թէ յակամայս կատարած գործին վրայօք, այլ վասն զի կը նկատէր իւր բարեկամուհւոյն չափազանց երջանկութիւնն: Ուստի հրամեշտի ողջոյնը փայլէն՝ ու մտերմին խառն երախտագիտական խօսքերն ընդունելէն վերջը, մաքուր խղճի գոհունակութեամբ փութաց վերադառնալ տուն, յուսալիք լինելով հասնելու հոն յառաջ քան զգարթունն Ներսէսի, որով իւր բացակայութիւնն արդարացնելու չէր հարկադրուեր, նա մանաւանդ նոր կասկածներ յարուցանելու առթէ մ'ալ կ'ազատէր, զի լաւ կը ճանաչէր երիտասարդին կատկածոտ բնասորութիւնը և մեծ զգուշութեամբ կը վարուէր միշտ անոր նկատմամբ:

Կատկածոտութիւնն ու նախանձը յատուկ ախտերն են բոլոր սիրահարաց: Ամենէն դրական մարդը բանաստեղծ կը գտնայ երբ սիրահարեալ է, այնչափ զարմանալի իմն յաջողակութեամբ կատկածանաց ծնունդ կուտայ, և գուրգուրալով ու նախանձախնդրութեամբ զանոնք կը սնուցանէ, այլ և այլ գոյներով կը զարդարէ, և սնչէն անագին շէնք մի կը կատուցանէ:

Երբ վարժուհին աշակերտուհեացը սենեակը մտաւ, երկուքը միատեղ գէպ անոր ընթացան, և անհամբերն Արմինէ գոչեց.

— Օրի՛որդ, գիտէ՛ք մեր եղբայրը մեկնեցաւ:

Արաքսիան այլայլեցաւ չարարար. ինչպէս, մտածեց, արդէ՛ն Ներսէս արթնցած և աունէն գո՛ւրս ելած է:

Բայց Արմինէն առանց անոր ժամանակ թողլու որ

և է հարցում մ'ընելու, ու ազայոց մասնաւոր նախանձախնդրութեամբ շուտով կատարելու իրենց յանձնուած պաշտօնը, փութաց գրպանէն հանել եղբորը նամակն, և իւր վարժուհւոյն յանձնելով զայն՝ իմացուց միանգամայն Ներսէսի Մանչէսթըր երթալը:

Երիտասարդուհին առաւ թուղթը ամբողջ մարմնովը դողալով, բացաւ, կարդաց, ու անկաւ գետինը նուազեալ:

Երկու տղայք սարսափահար եղած այդ տեսարանէն՝ սկսան բարձր ձիչեր արձակել, օգնութիւն խընդրելով:

Վազեցին աղախնայք, Տիկին Արգարեանն իսկ մանկանց յարուցած աղմուկէն արթննալով սենեկէն դուրս ցատկեց, և փութաց այդ արտասովոր այլայլութեան պատճառն իմանալու:

Ի տես ողորմելի վիճակին վարժուհւոյն՝ վազրակերպ սիրան այդ չար կնոջ տրտիկց բերկրութեամբ, զի շուտ հասկցաւ թէ կարեւոր գէպք մի տեղի ունեցած էր Ներսէսի և անոր միջև: Այդ կարծիքը շուտով հաստատութիւն գտաւ, երբ գետնէն քաղելով երիտասարդին նամակը որ նուազեալ աղջկան ձեռքէն գլորած էր, կարդաց անոր պարունակութիւնն, և իւր տղոցմէն իմացաւ իրենց եղբորը մօտալուտ ուղեւորութիւնն:

Այդ կնոջ ուրախութիւնն չափ չունէր. նախ կ'ազատէր ամուսնոյն որդիէն, զի կը նկատէր զայդ երիտասարդ իբր տհաճոյ և վտանգաւոր վկայ մի իւր մեղադրելի կենաց, որ լուրթեամբը կը գատապարտէր խտրու իւր հանապազօրեայ վարմունքը: Յետոյ երկու սիրահարաց ամուսնութիւնը կ'արդիլէր որ մահու չափ ատելի էր իրեն: Հասած էր ուրեմն վերջապէս ժամն ուր պիտի վանէր զաղջիկն այն՝ որ իւր սիրային խորհրոց գէ՛մ դաւալցած էր:

Երբ վարժուհին ինքզինքը գտաւ, իւր մօտ տեսաւ երկու քոյրերն որ անմեղ հոգւոյ ամենայն անկեղծութեամբ իրենց մանկական խնամքը կը հայթայթէին իրեն, ինչպէս և սղախին մի որ զգոհ կերպարանօք կ'աշխատէր զինքն սթափելու, ժամ յառաջ հեռանալու տրամադրութեամբ:

Աղախնայք կ'ատեն վարժուհիներն, և անոնց չեն ներեր բացարձակ առաւելութիւնն որ ունին իրենց վրայ բարձրագոյն զիրք մի գրաւելով տանց մէջ: Կը խորհին թէ վարժուհիք ինչպէս իրենք թոշակաւոր անձինք են, ու չեն ուզեր ըմբօնել մշակեալ մտաց հայթայթած առաւելութիւնները:

Արաքսիա թէեւ քաղաքավարութեամբ կը վարուէր սպասաւորաց հետ, ասոնք իրեն զէմ հակառակութեան ուղով յի էին, և ամեն առթի մէջ այդ հակառակութիւնը կը յայտնէին:

Աւտի անմիջապէս որ օրիորդն սթափեցաւ աղախինը փութաց սենեկէն մեկնիլ մրմոտով. «ս'վ գիտէ ինչ ունի»: Բայց հէզ աղջկան առաջին մտածութիւնն եղաւ փնտոել այն նամակն որ զինքը շանթաւած էր:

Տիկին Արգարեան առանց ումեք ուշադրութիւնը գրաւելու կարգացած էր զայն և վերատին նոյն տեղը թողած, իբր թէ ոչինչ տեսած լինէր:

Աւտի տղայք թուղթը գետնէն վերցնելով մատուցին վարժուհոյն: Գողգոջուն ձեռամբ առաւ զայն թշուառ արարածը և պահեց երկիւղածութեամբ: Իմանալով տան տիկնոջ ներկայութիւն սենեկին մէջ մինչդեռ ինքն նուազեալ էր, մեծ անձկութեամբ տեղեկացաւ եթէ կարգացած էր նա իւր նամակը: Տղայք ոչինչ տեսած էինը, որով հաստատեցին թէ իրենց մայրն ոչինչ տեսած էր:

Արաքսիան այնչա՛փ տկարութիւն կ'զգար որ անկարող էր տեղէն շարժելու: Թշուառ աղջկան կենսական գործիքը փշրուած էր կարծես: Երկու քոյրեր՝ երկու մաքուր սիրոյ ազրիւրները, իրենց գթօքն և խնամքովը կը ջանային վերակենդանացնել զվարժուհին: Աղաւնի կը հարցնէր թէ մի գուցէ եղբօրը նամակն այցափ յուզմունք պատճառած էր իրեն, և կը զարմանար որ նա երբ այնչափ բարի էր, կրնա՞ր այդչափ վիշտ պատճառել իրենց սիրեցեալ օրիորդին:

Բայց վարժուհին կը ջանար հաւատացնել անոր թէ չէր ներսէս պատճառ իւր անհանդատութեան, և թէ առաւօտուն մեծ սրտայուզութիւն մ'ունեցած էր մինչդեռ բացակայ էր, որուն հետեւանքն էր իւր նուազումն: Տղայք կը հաւատային այդ զրոյցին, անիծելով իրենց օրհնեալ բերնով նոյն իսկ եղբայրն այն զոր կը պաշտէին:

Բայց Արաքսիա կ'արգիլէր այդ անէժքը, վախնալով կարծես թէ անմեղութեան անէժքը չար ներգործութիւն մ'ունենար իրեն այնչափ պաշտելի եղած անձին վրայ:

Ննջելու և լուռութեան պէտքն առարկելով՝ վարժուհին խնդրեց աշակերտուհիներէն որ անցնին իւր գտնուած խուցին կից սենեակն որուն հաղորդակցութեան գուռ մի կար: Կը փափաքէր առանձին մնալ առանց տղաքներէ բոլորովին հեռանալու: Կրնա՞ր ննջել երբ սրտին մէջ ահագին ալեկոծութիւն կար: Կ'ուզէր միայն յինքն ամփոփուիլ մտածելու, խորհելու և ներսէսին իրմէ հրաժարելուն պատճառն ուսումնասիրելու համար: Գոցեց աչերն իբր թէ ի քուն լինէր, և խոր լուռութեան մէջ աչացն առջև բերաւ ամեն զէպք, ամեն պարագայ որ նախընթաց գիշերէն ի վեր տեղի ունեցած էր:

Գրեթէ վստահ էր թէ ոչ ոք իւր ժամագրութիւնն իմացած էր : Բայց համարելով իսկ , կը մտածէր կոյսն , թէ Ներսէս լրտեսած լինէր զիրենք՝ յայնժամ անցած գնացածը պիտի գիտնար , իրենց խօսակցութեան տեղեակ պիտի լինէր , որով իւր անմեղ վարմունքը բոլորովին կ'արդարանար :

Բայց ընդհակառակն եթէ լրտես մի իրենց զիչեւրային տեսութիւնը մտանած էր երիտասարդին , անհնարին էր որ նա կուրօրէն հաւատք ընծայէր այդ զրոյցին , առանցի բմէ տեղեկութիւն խնդրելու և գործն ստուգելու , ուսկից կը հետեւցնէր թէ զիչեւրային զէպքը ընտ. շարժառիթ չէ եղած Ներսէսի վարմունքին :


Կը մնար նոյն առաւօտուն տունէն կանուխ և անսովոր ժամանակի գուրս ելնելու խնդիրը : Գուցէ կասկածելի թուէր երիտասարդին այնպիսի յանկարծական կերպիւ տունէն հեռանալու պարագայն առանց ոչ ումեք բան մի յայտնելու : Բայց պարզ կասկած մի կը բաւէր արդեօք այդպիսի խիստ միտջցի զիմեյ զինքը մատնիչ անուանելով , և ջախջախել անդթարար սիրոյ ամրապինդ յոգերը՝ դրժելով հաւատարմութեան նուիրական ուխտը :

Ստոյգ է թէ Արաքսիա զգուշացած էր իւր առաւօտեան բացակայութեան վրայ խօսելու Ներսէսի , քանի որ պատճառն անկարող էր հաղորդել անոր . նա մանաւանդ կը յուսար որ ժամանակին տուն վերադառնալով՝ դուրս ելած լինելն աննշմարելի կ'անցնէր :

Սխառ անախորժ էր Արաքսիայի գաղտնիք մ'ունենալը յայտնել շարունակ Ներսէսի , առանց կարօնականու եղածն խոստովանելու : Արդէն պարտէզին պատահարը չէր մոռցած կոյսը , և կ'զգուշանար , ինչպէս ըսինք , ամեն աթէ որ նորանոր կասկածներ կրնար յարուցանել : Եթէ այդ բացակութեան պարա-

զայէն գրգեայ ներշնչուած էր Ներսէս , զնա դատապարտելի կը նկատէր Արաքսիա : Հանդերձ այսու սիրահարաց սովորական ներողամտութեամբ՝ նախանձը շարժառիթ համարեց իւր խօսնայրին անիրաւ ընթացքին , առանց վայրկեան մ'իսկ համարձակելու փոփոխամտութեան վերադրելու զայդ :

Ուստի յուսաց նա որ երբ նախանձու առաջին բուն ազգեցութիւնն անցնէր , նոյն իսկ Ներսէս՝ պիտի համոզուէր կասկածանացն անհիմն լինելուն պիտի համոզուէր կասկածանացն անհիմն լինելուն պիտի , և զզջալով առ ինքն պիտի վերադառնար : Այդ յոյսը՝ իբր նաւարեկեալին զիրարեկ տախտակն ընդ մէջ ալեկոծութեան , կ'արգիլէր զԱրաքսիան յուսահատութեան անշուշտին մէջ կորսուելու անդարձ : Վերջապէս զզջացեալ սիրահարի մ'ակնկալութիւնը սակաւ ջառագիւցեալ կոյսն , և թոյլ տուաւ իրեն ինչ ոգեւորեց տատապեալ կոյսն , և թոյլ տուաւ իրեն յոտս կանդնիլ իբր թէ քունէն զարթնելով , ի մեծ գոհունակութիւն երկու մանկանց որք շարժելու անգամ չէին համարձակած , վախնալով որ օրիորդին անդորրը կը վրդովէր :



Գ Լ Ո Ւ Թ Լ Դ .

Տիկին Արգարեան ճակարկելով որ եթէ իւր սիրահարին յայտնէր զիտաւորութիւնը արտաքսելու զվարժունին՝ նա ամեն միջոց պիտի գործածէր արգիւրելու համար զայդ , փութաց արձակել զԱրաքսիան յառաջ քան զգալուստն Սիսակի : Ազախնոյ մի միջոցաւ իմաց տուաւ օրիորդին որ երթայ ծնողացը տունը զանգչի քանի որ անհանգիստ էր : Բայց օրիորդն յայտնելով թէ վայրկենական նուաղում մ'ունեցած էր ախար պարագայի մի ներգործութեամբ , և թէ բոլոր-

բովին ատոյջ համարելով զանձն իւր, աւելորդ էր հանդատեան զիմելու տղայքն ատանձին մնալու ենթարկելով: Տիրուհին պնդեց ըսածին վրայ, ու վարժուհին պարտաւորեցաւ անոր հրամանին հնազանդելու, ոչ սակայն ատանց փոքրիկ կասկած մ'զգալու տիկնոջ յամառութեան ինչպէս և անոր ներքին զիտաւորութեանց վրայօք:

Կրկին և կրկին անգամներ համբուրելէն վերջը երկու քոյրերն և ընդ փոյթ վերադառնալու խոստմամբ, Արաքսիա կառք մի բերել տուաւ ու մեկնեցաւ՝ ծնողացը տունը վերադառնալու համար:

Այն ինչ տեսաւ Տիկին վարսամեան իւր զստեր նուաղեալ վիճակն, այլայլեցաւ ու ժպտիւ: Բայց Արաքսիա իւր քաղցր ժպտովը մխիթարեց զնա, հաստատելով թէ զգացածը ծանր բան չէր, ու պարզապէս հետեւանք էր անախորժ գէպքի մի, կ'ըսէր, որ տան մէջ տեղի ունեցած էր և իրեն յուղմունք պատճառած:

Հաւատացին ծնողքն այդ գրոյցին: Եւ մինչ գրեթէ ժամէ մ'ի վեր մօրը գորգուրանաց առարկայ էր Արաքսի, ահա Տիկին Արգարեանի սպասաւորը նամակ մի կը բերէ, և թողով զայն կը մեկնի անմիջապէս:

Այլադունեցաւ կոյսն, գուշակեց զժբաղդութիւնն որ իրեն կ'սպառնար, ու անհամբերութեամբ բանալով թուղթը, կարդաց հետեւեալ տողերը.

« Տիկին Արգարեան կ'իմացնէ Արաքսիա վարժուհւոյն թէ իւր անվայել վարմունքին պատճառ ոչ եւս կրնայ պահել զնա տանը մէջ, և թէ սոյն վայրկենէն ազատ է նա ուրիշ տեղ փնտռելու: »

Յանցաւոր կիներ կ'ապտակէր զանմեղ աղջիկն, երբ սա ամենայն իրաւամբ կրնար հարուածել զնա պարսաւելի վարուցն համար: Ինչպէս ամեն թեթեւ կին որ յանդուզն յանձնապատանու թեամբ ուրիշները մե-

զազրելով զանձն իւր անբասիր բնել կը փորձէ, և պատուոյ ջերմ նախանձախնդիր ներկայանալ կ'աշխատի, նոյնպէս կը հանդիսանար և Տիկին Արգարեան: Որչափ մարդիկ խտապահանջ լինին այլոց նկատմամբ, նոյնչափ ներողամիտ են իրենց համար, որչափ խորամանկ լրջմտութեամբ հասարակաց գործոց գատաւոր կանգնին՝ նոյնչափ կը կարծեն թէ այլք բխամիտ են ու անկարող զինք հասկնալու և դատելու համար:

Թէեւ Արաքսիա իւր տիրուհւոյն հետ չէր անցըներ ժամանակը, սակայն տեսածներէն կը մակարբէրէր թէ բարոյականութեան տիպար մի լինելու չէ անշուշտ նա: Բայց քանի որ ինքն տիկնոջ հետ գրեթէ վերաբերութիւն չուներ, ու տղայոց նուիրած էր իւր սէրն և ներսէսի մօտ կ'ապրէր, փոյթ չէր ըներ տան տիկնոջ վարմունքը մանրամասնաբար ուսումնասիրելու, և ոչ ալ խղճմտութիւն կ'ընէր անոր տան մէջ ապրելու, քանի որ ընդ հովանաւորութեամբ իւր խօսնայրին կը գտնուէր:

Ոչ միայն վարժուհին երբեք սկնարկութիւն չէր բրած ներսէսի իւր մօրուին թեթեւօլիկութեանց վերաբերմամբ, այլ ծնողացն իսկ աննպաստ խոստովանութիւն մ'ըրած չէր բնաւ: Չար լեզուի պաշտօնն անշուշտ Արաքսիայի նման բարի հօգի մ'ունեցող անձի մի գերը չէր կրնար լինել:

Երբ աղջիկն նամակն կարդաց՝ արձանացաւ: Չինքը կ'արձակէին ուրեմն անարգանօք իբր նուաստ և խայտառակ արարած մի, երբ ինքն նպատակ ունեցած է իւր արժանապատուութիւնը ի վեր քան զամենայն նկատելու: Բայց նոյն միջոցին մտքէն անցաւ թէ իւր զիշերային հիւրընկալութիւնը վկայ մ'ունեցած էր գուցէ, և թէ այդ կրնար լինել ներսէսի զժգոհութեան պատճառը ինչպէս և Տիկին Արգարեան նախա-

տալից ակնարկութեան: Գանկը կարծես ջախջախուեցաւ այդ մտածութեամբ, ու քիչ մնաց որ երկրորդ նուազում մ'ունենար:

Տիկին Վարսամեան նկատելով դստերն անհանգստութիւնը, սուրաց առ նա, ու պէտք եղած հոգն հայթայթեց անոր, մինչ անդամալոյժ հայրն անկարողութեամբ կը գալարէր: Երբ կոյսն սակաւ ինչ ողբերկով կարողացաւ խօսիլ, այլայլեալ մայրն ուղեւորելով կարողացաւ խօսիլ, այլայլեալ մայրն ուղեւորելով կարողացաւ խօսիլ, այլայլեալ մայրն ուղեւորելով կարողացաւ խօսիլ: Դժբանքով ճանաչելի, քանի որ ինքն իւր տգիտութեան պատճառաւ անկարող էր ընթեռնուլ զայն:

Ի՞նչ կրնար յայտնել սրտաբեկ Արաքսիան. ի՞նչ պէս կարելի էր իրեն կատարեալ խոստովանութիւն մ'ընել առանց գրծելու իւր խոստումն առ Վարդանայ, նա մանաւանդ երբ մայրն անիրաւ հակառակութիւն մը ունէր ընդդէմ այն ընտանեաց: Հետեւապէս յայտնեց պարզապէս թէ իւր տիրուհին զինքն կ'արձակէր, օգուտ քաղելով ներսէսի ուղեւորութենէն. զի կը յարէր կոյսն, ենթադրելի է թէ տիկինը վերահասու եղած էր իրենց սիրային յարաբերութեանց, և ջանադիր էր իրենց ամուսնութիւնն արդիւիւ:

Արդէն ներսէսի յանկարծական ուղեւորութիւնն իմացուցած էր Արաքսիա իւր ծնողացն, առանց անոր դժգոհութեան վրայօք բան մի խօսելու, մանաւանդ որ կ'զգուշանար անոնց կասկածը զարթուցանելու, յուսադիր լինելով երիտասարդին սիրտը վերատին շահիլ, ամեն թիւրիմացութեան հետք ջնջելով, և այսու եղանակաւ աւելորդ սրտայուզութիւն խնայել ընտանեացը:

Վարժուհւոյ ծնողքն ոչ միայն չցաւեցան Տիկին Արգարեանի կարգադրութեան վրայօք այլ չափազանց սուբախան իրենց գոտորը քովերնին պահելու յոյսով: Ապահով էին որ իրենց փեսայացուն հրաման

պիտի չտար Արաքսիայի՝ ուրիշ ընտանեաց քով իբր վարժուհի երթալու, որով իրենց գաւազը պիտի պարտաւորէր ընդունելու այն նիւթական նպաստը զոր միշտ յամառած էր մերժել ընտանեացը համար:

Բայց այդ գոհունակութեան ցոյցերուն չուտով վերջ գրաւ Արաքսիա՝ յայտնելով թէ ինքն ոչ երբէք նպաստ կ'ընդունէր մարդէ մի որ իւր ամուսինը չէր տակաւին:

— Մեծ ենք, կ'ըսէր աղջիկն, ցորչափ մեր աշխատութեամբ կ'ապրինք. զի այնու եղանակաւ անկախ զիրք մի կ'ստանայ մարդն ընկերութեան մէջ ու բարձրացն կը քայլէ: Ընդունող ձեռքը կորագլուխ քայլելու դատապարտուած է, և ես, մայր, կ'զգամ որ նոյն օրն եր արժանապատուութեանս վրայ կոխեմ, նոյն օրէն կ'ս ինքս լինելէ կը զնորիմ: Եթէ անձս չյարգեմ՝ նախապատիւ կը գասեմ մեռնիլ: Երբ մարդս իւր ընթացքէն գոհ է, ամեն դժուարութեանց կը դիմադրէ, ամեն աղէտից կը հանդուրժէ:

Արաքսիայի խօսելու եղանակը շատ իսկ կը յայտարարէր թէ իրեն գէժ հակառակին աւելորդ էր այս մասին: Հառաչեց Պ. Վարսամեան, իսկ լուռ կեցաւ տիկինը, զգուշանալով իւր ատելութիւնն յայտնելու վարժապետութեան պաշտօնին գէժ որուն շնորհիւ շքեղ փեսայացու մի կ'ակնկալէր:

Տառապեալ բայց արի աղջկան առաջին մտածութիւնն եղաւ ներսէսի անմիջապէս նամակ գրել, իւր վարժուհւքն արգարացնելու համար և զայդ խորհուրդ գործադրեց իսկոյն: Ուստի առանց բնաւ յայտնութիւն մ'ընելու Սիսակի ու Վարդանայի վերաբերող յարաբերութեանց վրայօք, երգում ըրաւ առաջի երկնից որ իւր վարժուհւքը՝ թէեւ դատապարտելի կրնար թուիլ զանազան պարագայներու մէջ, պատուաւոր էր սակայն

և զնահատելի բոս ամենայնի, և թէ զայդ գուցէ քիչ ժամանակէն ինքն անձամբ կարողանար հաստատել: Բնաւ զիչերային ժամագրութեան ակնարկութիւն չէր նա, մտածելով թէ այդ պարագային գուցէ տեղեակ չլինէր երիտասարդն: Գրեց բուռն սիրոյ արտայայտութեամբ. ու մեծ հուզոյ արժանավայել մեծանձնութեամբ խնդրեց որ չբեկանէ երկու անկեղծ սրտերու սուրբ և նուիրական յօդերն, և մանաւանդ անյայտազ պատասխանէ՝ մտատանջութեան տաղնապանքէ զինքն ազատելու համար:

Յետ աւարտելու նամակն, ինքն անձամբ թըղթատուներ տարաւ, Մանչէսթըր զրկուելու համար: Առաւօտուն կառքով եկած էր հայրենի բնակարանն, իսկ նոյն պահուն այնպէս ողբւորած էր որ ամենայն քաջութեամբ մինչև թղթատուն քայլեց:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ե.

Յետ քանի մի ժամերու Արաքսիայի մեկնելէն վերջը Արգարեանց տունէն՝ ահա Սիսակ որ կը ներկայանայ Տիկին Արգարեանի իբր բոլորովին անտեղեակ թէ՛ ներսէսի և թէ՛ իւր ազգականին վերաբերեալ անցից:

Տան տիկինը զժղոճ կերպարանք մ'առած էր, զրդուելու համար զերիտասարդը պատճառն հարցնելու: Եւ իրօք սա գիտողութիւն ըրաւ. տիկնոջ իւր զժղոճ կերպարանքին վրայ:

— Կը ցաւ իմ խոստովանելու, պատասխանեց խորամանկ կինը, թէ ազգականց անպատուութիւն մըրոցուց տանս մէջ, իբր թէ ոչինչ գիտնար անցած պացածին վրայ:

— Ո՞ր ազգականս, Տիկինն:

— Չգիտեմ եթէ ձեր տոճմային ճիւղագրութիւնը մեծ է, բայց սա ւտոյց է որ շատ գոճ լինելու իրաւունք չունիք Արաքսիայէն:

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատճառը:

— Առանց երկար խօսք ընելու, սա չափս յայտնեմ ձեզ թէ այս գիչեր այդ անամօթ աղջիկը մարդ մի հիւրընկալեր է զազտագողի: Սպասուորաց մին տեսեր է մարդն մինչ կը մեկնի եզեր, առանց սակայն ո՞վ լինելը գիտնալ յաջողելու: Մտածեցէք ի՞նչ անպատուութիւն տանս համար:

— Սովորական բաներ են աղոնք, ըսաւ երիտասարդն, յատուկ նշանակութիւն մի տալով բասերուն:

Բայց տիկինը իբր թէ վերահասու չլինէր այդ ակնարկութեան որ ուզակի իրեն կը վերաբերէր, ու իւր զտոնութիւնը ծածկելով յարեց՝

— Բնականապէս այդպիսի գայթակղական զէպքէ մի վերջը ոչ այլ ինչ կը մնար ինձ բնել եթէ ոչ վանել այդ վարժուհին իմ տունէս:

— Վանե՛լ:

— Անչու չտ:

— Արաքսիան ո՞չ եւս հոս է:

— Ոչ եւս:

— Եւ դուք քաջութիւնն ունեցաք անմեղ մի իբր յանցաւոր գատապարտելու և արտաքսելու, գոչեց Սիսակ բարկութեամբ, նա մանաւանդ երբ ինքն էր պատճառն այդ ցաւալի եղելութեանց:

— Ո՞վ կ'ապահովէ զձեզ թէ անմեղ մըն էր այդ աղջիկը:

— Ե՛ս:

— Անմեղութիւնը խաւարին չնորհիւ չգործեր:

— Շատ անգամ, Տիկինն, խաւարն անմեղութեան

վրայ կը տարածուի, մինչ լոյսն յանցանքը կը լուսաւորէ :

— Պարո՛ն, պատասխանեց կի՛նն ի մեծ զայրոյթ, եթէ ինձ կ'ակնարկէք, ևս ազատ եմ իմ բնակարանիս մէջ գործել ինչպէս որ յարմար թուի ինձ. սակայն պատճառ մի չէ որ վարձկաններ նոյն ազատութիւնն ուզեն վայելել հոս :

— Եթէ կը մտածէք թէ օտարական մի ձեր տան պատիւը պահելու պարտքն ունի, ձեր վրայ առաւել ևս կը ծանրանայ ձեր ամուսնոյն պատիւը պահպանելու նուիրական պարտականութիւնն :

— Ինչպէ՞ս կը համարձակիք, դո՛ւք, պարո՛ն, բարոյական կարգալու, երբ զիս մոյրեցնելու ամեն ջանք ըրիք, ըսաւ կի՛նն, ինքզինքէն դուրս ելնելով :

— Խղճիս վրայ ոչինչ կայ, զի զձեզ մոյրեցնելու համար բնաւ ճիգ չըրի :

— Ի՞նչպէս կը համարձակիք այսպէս խօսելու :

— Ճշմարտութիւնը միշտ համարձակապէս կը բարբառի, և եթէ ներէք, Տիկի՛ն, ձեզ առաւելն ալ պիտի խոստովանիմ :

— Ոչինչ կ'ուզեմ լսել ձեր բերնէն :

— Եւ սակայն պէտք է որ խօսիմ իմացնելու համար ձեզ թէ օրիորդ Արաքսիայի և ձեր մէջ ահագին անջրպետ մի կայ. կ'ակնարկեմ այն անջրպետին որ կայ ընդ մէջ անմեղութեան ու յանցաւորութեան :

— Կ'ուզէ՞ք ուրեմն պնդել թէ այդ աղջիկն իւր սիրահարը չընդունեց գիշերուան մէջ. ի՞նչ փաստ ունիք զայդ ուրանալու համար, ըսաւ կի՛նը խօսքերուն տարբեր գարձուածք մի տալով :

— Սիրահա՞ր մը ընդունած չլինելուն, այո՛, վկայ մ'ունիմ :

— Ո՞վ է այդ վկայն :

— Ե՛ս, Տիկի՛ն, ըսաւ Սիտակ, երբ հասկցաւ թէ ինքզինքը ծածկելն անհնարին էր :

— Դո՞ւք, հարցուց տան տիկինը, չինձու գարմայմամբ :

— Ես, այո՛, ևս :

— Եւ կը յանդգնի՞ք խոստովանելու զայդ :

— Արդարեւ չեմ ըսեր որ լաւ գործ մ'ըրբի ձեր տան մէջ սարգելովս մթութեան չնորճիւ, բայց պէտք էր որ տեսնուէի օրիորդ Արաքսիայի հետ, և այդ միջոցը կը մնար ինձ միայն :

— Խոստովանեցէ՛ք ուրեմն թէ այդ աղջկան սիրահարն էք :

— Ե՛ս, սիրահա՞րը, երբեք :

— Ուրեմն ի՞նչ գործ ունէիք հոս գիշեր ժամանակ, միթէ լոյսի լուսով անոր հետ չէի՞ք կրնար տեսնուիլ :

— Նախ ժամանակը սուղ էր, ստիպողական հարկ մի կար. երկրորդ ի՞նչպէս կրնայի ազգականիս հետ բանակցիլ առանց ձեր կասկածանաց տեղի տալու :

— Ուրեմն, պատճառնե՞ր ունէիք իմ կասկածներէս վախնալու :

— Տիկի՛ն, յայտնած եմ ձեզ արդէն թէ Արաքսիայի հայրն իբր ազգականս, ինձ բարերարութիւն ըրած է իւր յաջող ժամանակին. թո՛ղ թէ երախտագիտութեան բնական զգացումը կը կրեմ սրտիս մէջ, այլ գիտնալու էք նաեւ թէ զԱրաքսիան միշտ իբր քոյրս նկատած ու սիրած եմ, զինքն յարգելով և արգահատելով :

— Մի՞թէ պատճառ մ'է այդ որ ձեր անվայել ընթացից հանդուրժեմ :

— Կ'երգնում ձեզ պատուոյս վրայ, Տիկի՛ն, որ Արաքսիա տեսնուեցաւ հետս գործոյ մի համար որ բնաւ վերաբերութիւն չունի իրեն հետ :

- Որո՞ւ ուրեմն կը վերաբերի :
- Չայց չգիտեմ :
- Անչուչտ եթէ իրեն համար չէ, ուրիշ աղջկան մի համար կը գործէ :
- Գուցէ :
- Օրիորդ ազգականդ գիշեր ժամանակ այնչափ ետանդեամբ միջամտելու համար, ո՞վ գիտէ ինչ ազնուական շահեր ունի :
- Տիկի՛ն, եթէ կ'ուզէք որ հոս կենամ, գաղբեցէք պախարակելէ ազգականս, զի կը կրկնեմ ձեզ պատուոյս վրայ, որ օրիորդ Արաքսիա պատուակիր անձ մ'է և ամեն մեծարանաց արժանի :
- Ուրեմն յայտնեցէք ինձ թէ որն է աղջիկն որուն համար այնչափ երկնային անձնութեամբ կը գործէ ձեր պաշտելի ազգականն, ըստ կիներ հեղնութեամբ :
- Այդ անունն անկարող եմ յայտնելու, պատասխանեց Սիսակ, նախ պատուակիր անձի գիրքն առնելու համար և երկրորդ կասկածելով թէ այդ կինն իւր ամուսնական ատուտորը կրնար աւրել, զի բնաւ մտքէն չէր անցնիր թէ իւր գաղտնիքը անոր համար գաղտնիք մի չէր :
- Կը տեսնէ՞ք ուրեմն որ անկարող էք այդ անունը ինձ յայտնելու :
- Տիկի՛ն, մի թէ ձեր վտահոթեան արժանի կրնամ լինել եթէ թոյլերբանութեան օրինակ մի տամ ըստ երիտասարդն, չար ակնարկութեամբ :
- Տիկին Արգարեան չրթունքները չարչարեց ակուսներով և ապա յարեց .
- Բայց գոնէ խոստովանեցէք թէ այդ անանուն աղջիկն ինչ կը պահանջէ ձեզմէ :
- Հետո ամուսնանալ, պատասխանեց սնուպարծ երիտասարդն հպարտութեամբ :

- Հետեւազէս կը սիրէ գձեզ :
- Կը զարմանա՞ք :
- Ամենեւի՛ն :
- Ուրե՛մն :
- Բայց գուք մտադի՞ր էք հետն ամուսնանալու :
- Չգիտեմ :
- Չարմանալի՛ պատասխան :
- Ի՞նչ կայ զարմանալու :
- Գուցէ սակարկութեան խնդիր կայ, և առ այդ անչուչտ կ'աշխատի ձեր առաքինի ազգականը :
- Չգիտեմ, սակայն եթէ առ այդ իսկ աշխատէր օրիորդ Արաքսիա, ոչ միայն պախարակելի գործ մի չէր կատարեր, այլ ընդհակառակն կը նպատակէր երկտասարդուհւոյ մի երջանկութիւնն ապահովելու :
- Այդչա՞փ ստիպողական հարկ մի կար մինչև գիշերային ժամագրութեան կարօտելու :
- Այո՛, Տիկի՛ն, խիտտ ստիպողական :
- Կը սիրէ՞ք գուք այդ աղջիկը :
- Եթէ սիրէի, ուրիշի չէի կապուեր :
- Տիկին Արգարեան այդ պատասխանէն գոհ եղաւ, սիրտ առաւ, ու վերստին իւր հրապուրիչ ձեւերուն դիմելով ըսաւ .
- Խոստացէ՛ք ուրեմն վարժուհւոյն յորդորանաց չանսալու, կամ լաւ եւս զինքն չտեսնելու, ու նոյնչափ խոստացէ՛ք ամուսնական խորհուրդէն հրաժեշտ տալու :
- Տիկին, անհնար է, զօրիորդ Արաքսիա չտեսնել. չբաւեր որ թշուտ աղջիկը կը գրկեմ իւր ապրուստի միջոցէն, այլ կ'ուզէք որ իրմէ ու իմիններէս հրաժեարիմ. ոչ :
- Կը մերժէ՞ք ուրեմն թախանձանքս :
- Այսինքն ինչ որ ազգականիս կը վերաբերի :

— Բայց չամուսնանալ կը խոստանաք :

— Նոյնչափ այո՛, որչափ ո՛չ :

— Միթէ՛ զիս կը ծաղրէ՞ք :

— Երբեք :

— Ուրե՛մն :

Եթէ խոստանաք հետս ամուսնանալու, ըսաւ չա-
րածճի երիտասարդը, յայնժամ կը խոստանամ և ես
ուրիշ բնկերակից չընտրել անձիս :

— Կ'ուզէք որ կրկնամուսնութի՞ւն մ'ընեմ :

— Դուք ուրիշի կի՛ն էք, ու չէ՞ք ուզեր որ ուրիշ
մի իմ կինս լինի :

— Երբ զձեզ սիրեցի, ամուսնացած էի արդէն :

— Ո՞վ կ'ապահովէ զիս որ ընդհուպ յաջորդ մի չի՛
պիտի ունենամ :

— Կը նախատէ՞ք զիս :

— Բնաւ ամենեւին : Անձս այնքան անդիմադրելի
չեմ համարիր մինչև և հաւատալու համար թէ առաջին
և վերջին տեղը գրաւած եմ ձեր սրտին մէջ :

— Իսկ եթէ հաւատայի՞ք :

— Ես ինքս լինելէ կը գողարէի, ուրացած կը
լինէի բոլոր փորձառութիւնս կնոջ փոփոխամտու-
թեան մասին :

— Միթէ՛ արք առաւել հաստատամիտ են :

— Ուրեմն եթէ երկու սեռերն հաւատարապէս փո-
փոխամիտ են, երկուքն ալ իրարմէ կասկածելու իրա-
ւունք ունին :

— Սակայն եթէ խոստանամ բոլոր կեանքս ձեզ
նուիրելու՝ կը հրաժարի՞ք յայնժամ ամուսնանալու զի-
տաւորութենէն :

— Գուցէ ես ձեր քմահաճութեանց առարկայն եմ
արդ. բայց ո՞վ կ'ապահովէ զիս անոր տեւողութեան
վրայ :

— Ես :

— Դուք ուսկի՞ց կը քաղէք ձեր հաւատքը, Տի-
կի՛ն :

— Սրտէս :

— Ինչ որ սիրաւ կ'անուանէք դուք, անոր օրի-
նաց գերին էք, առանց անոր օրէնք կարենալ կար-
գալու : Նոյն գիւրութեամբ որ ինձ խոստում կ'ընէք՝
նոյն գիւրութեամբ ուրիշի եւս ըրած էք անշուշտ,
առանց զանոնք գրժելու խիղճ ընելու, ըսաւ երիտա-
սարգն երկգիմի եղանակաւ :

Տիկին Արգարեան շուտ հասկցաւ թէ երիտասարդն
իւր նախորդ սիրային յարաբերութեանց վաղանցկու-
թեանն ակնարկութիւն կ'ընէր, որով խնդիրը փոխե-
լով յանկարծ, հարցուց .

— Ուրեմն խնդրածս չէ՞ք խոստանար :

— Ոչ :

— Եւ կ'ուզէք որ զձեզ սիրեմ :

— Կրնա՞ք դադրիլ արդեօք զիս սիրելէ :

— Ի՞նչ կայ անհնարին, պատասխանեց կինը վեր-
ջին աստիճանի դառնութեամբ :

— Ուրեմն ձեր սիրտը չէ այնքան գրաւուած որ-
չափ կը յայտարարէիք. հետեւապէս մնացէք բարեաւ,
Տիկին, ըսաւ, ոտք եյնելով ու մեկնելու պատրաս-
տուելով :

Տիկին Արգարեան այդ սպանալեաց առջև իւր
սրտին տկարութիւնն հաստատելով՝ սիրահարին ձեռքը
բռնեց փութով, ու քովը նստեցնելով զնա, ըսաւ .

— Ես ոչինչ կը խնդրեմ ձեզմէ, կը գոհանամ միայն
զձեզ սիրելով :


— Լաւ ուրեմն, պատասխանեց երիտասարդն յաղ-
թական ձեւով :

Սիսակ նպատակին կը հասնէր վերջապէս : Առանց

ոչինչ խոտանալու, իւր յարարերութիւնք անփոփոխ կը մնային տիկնոջ հետ ցորչափ հարկաւոր դատէր: Իւր արիփը կորուսած էր սաստկութիւնն, հետեւապէս ամենայն դիւրութեամբ կրնար ջախջախել իւր յօգերը սիրուհւոյն հետ ի պահանջել հարկին՝ այսինքն եթէ ամուսնութեան խնդիրը կարգադրուէր: Իսկ եթէ այդ կողմէն յոյսերն ի դերեւ ելանէին՝ Տիկնոջ հետ իւր յարարերութիւնները շարունակելու արգելք չկար:

Երիտասարդն, իբր ճարտար ռազմագէտ, լաւ ըմբռնած էր թէ կանանց հետ բռնաւոր ու արհամարհոտ ձեւերով շատ առաւել յաջողելու յոյս կայ, քան թէ հպատակութեամբ ու արտասովոր սրտայուզութեամբ:

Ուստի Սիսակի խիստ եղանակը Տիկին Աբգարեանի նկատմամբ փոխանակ զայն իրմէ հեռացնելու եւս առաւել ամրապնդեց անոր սրտին շղթաները:



Գ Լ Ո Ւ Խ Լ Զ.

Ներսէս թողուց ուրեմն Վոսփորի ափունքն ի տար երկիր ուղեւորելու համար, ու այդ հեռաւորութեամբ ուղեց արտաքսել ամեն յիշատակ սիրոյ, օտարանալ իւր անցելոյն հետ, ինքն լինելէ զազրիլ և ապա վերածնիլ:

Բայց խորհուրդ ընելը շատ առաւել զիւրին է քան թէ անոր գործադրութիւնը կատարել, և զայդ շատ իսկ հաստատեց Ներսէս. զի հակառակ իւր անդու ձգանցն՝ Արաքսիայի պատկերը սրտէն ջնջելու, այդ պատկերն ամրապինդ կը կենսը գրաւած տեղին մէջ: Ի զուր Ներսէս տեսած նորանոր տեսարաններէն, ծո-

վուն անհունութենէն, ճամբորդութեան բազմազրազ դէպքերէն օգտուելով՝ կ'աշխատէր անպատճառ մտացն ու զգացմանցը տարբեր ուղղութիւն մի տալ. ի զուր կը մտածէր թէ խաբուած էր և մատնուած. կարծես թէ ներքին ձայն մի կը բողոքէր իրեն դէմ, անպարտ աղջկան դատը վարելով:

Վերջապէս Ներսէս հասաւ Մանչեսթըր: Դժբաղգութեանն առաջին օրէն իսկ կ'որոճար վաճառականութեան ձեռնարկին մասնաւոր ուղղութիւն մի տալ, ընդլայնել ըստ կարելոյն գործողութեանցն ասպարէզը, յոգնեցնել միտքը, մաշեցնել զգացումները, միով բանիւ թաղել լիովին իւր անցեալն: Առանձին էր սենեկին մէջ, առանձին էր յիշատակացն հետ, և որչափ ջանք կ'ընէր մտքէն հեռացնել իւր անցեալ երջանիկ օրերուն դազափարը, նոյնչափ յանգէտս հոն կը վերադառնար, և անիծելով իւր գառնութեանց հեղինակը՝ կը պաշտէր զայն սակայն:

Այն ինչ տեղաւորուած էր վարձած սենեկին մէջ քանի մի ժամերէ ի վեր և աճա կը հասնի իրեն նամակ մի որ իրեն հետ ճամբորդած էր նոյն շոգենաւով: Կը նայի գրին, կը ճանաչէ զայն, կը հասկնայ Արաքսիայէն լինելը, կը զարմանայ, գողորջուն ձեռամբ կը բանայ պահարանը, կ'ընթեռնու նամակը, սիրտը կը տրոփէ, կը տկարանայ, պատրաստ է հոչակել զիւր սէր, երբ յանկարծ աչացն առջեւ կը պատկերանայ Արաքսիա որ կ'առաջնորդէր Սիսակի՝ զիշերուան մթնութեան մէջ:

«Մատնութիւն, սե՛ւ մատնութիւն» կը գոչէ, թուղթը կտոր կտոր ընելով: Կը տեսնէ նաև թէ աղջիկը թող թէ չէր ուզած լուսարանել իւր զիշերային ժամադրութեան խնդիրն, այլ ամենափոքր ակնարկութիւն մ'անդամ չէր բրած այդ մասին: Կասկածներն

Արաքսիա կամ Վարժուհին

եւս առաւել կը զօրանան, գառնութիւնը կը հսկայանայ:

Երիտասարդին հաշտարար վայրկենական տրամադրութիւնքը ախուր անդրադարձութիւն մ'ունեցան, զի գառնութիւնը սեւ առելութեան գոյներ առաւ, և վիրաւորեալ սիրահարն իւր արհամարհանքն ուղեց յայտնել, աղջկան նամակն անպատասխանի թողլով:



Գ Լ Ո Ւ Խ Ա Կ.

Մինչ Արաքսիայի երանութեան շէնքը կը կործանէր, բնդհակառակն Վարդանոյշ սիրոյ ազդեցութեամբ կը վերածնէր:

Սիսակ, ըստ իւր խոստման, գնացած էր յայցելութիւն օրիորդին որոշեալ օրն, ու ջանացած էր սրտադրաւ ձեւերովը ջնջել հետքերն այն գառն վայրկեաններուն զորս պատճառած էր իւր անտարբերութեամբը:

Վարդանոյշ պատկառելի սիրով սիրած էր միշտ զիւր մայր, առանց զայն հաղորդ բնելու երբեք իւր սրտին դազանեաց: Բայց ստիպողական հարկի մ'առջև, այսինքն իւր պաշտելոյն պայմանաժամին առջև մինչև մէկ ամիս ամուսնութեան խնդիրը լուծելու, ոչ այլ ինչ կը մնար եթէ ոչ քաջութեամբ զինուիլ ու բանալ լիովին սիրտն առ իւր մայր:

Սէրը հրաշք կը գործէ. անով տկարը քաջ կը դառնայ, և երկչոտը՝ յանդուգն, և զայդ շուտ իսկ հաստատեց մեր սիրահարեալ կոյսը:

Կան շատ մայրեր որք կը կարծեն արթնցնել ու զայրացնել իրենց որդւոց զգացումները սրտի բնական պահանջմանց վրայ խօսելով, և մանաւանդ այդ մտեր-

մութեամբ կը վախնան իրենց մայրական ազդեցութիւնը վտանգի մատնել: Յամառ որոշմամբ խոյս կուտան սիրոյ վերաբերող ամեն խնդիրներէ՝ հարկադրելով իրենց զաւկները զազտագոյի գործելու և մայրենի աչքէն ծածկելու նուիրական զգացում մի երբ իրենց սիրտը կ'սկսի խօսիլ: Այսու եղանակաւ մայրն որ որդւոյն խորհրդակիցը պէտք էր լինել, նմա առաջնորդ կանգնիլ, ու զղել նորա զգացումներն ու քայլերը կենաց մէջ, բնդհակառակն կատարելապէս օտար կը մնայ իւր որդւոյն մտածութեանց ու զգացմանց:

Օր մի Տիկին Երանեան գարմացմամբ գիտեց թէ իւր դուստրն որ միշտ ազատ ու բնական ձեւով առ ինքն կ'երթար, բնդհակառակն կը մօտենար կարմրելով և չփոթելով առանց գիտնալու թէ ինչպիսի՞ սկզբնաւորութիւն տայ իւր խօսքերուն: Որչափ Վարդանոյշի մայրն իւր գարմացումը կը յայտնէր այդ անորոշ զիրքի մասին, նոյնչափ կոյսը բառերը կը ծածրմըր: Բայց ի վերջոյ սէրն յաղթելով երկչոտութեան, օրիորդն սկսաւ տակաւ առ տակաւ իւր խոստովանութիւնն ընել, յայտնել իւր սրտին վիճակն, հիւանդութեանը պատճառը, Սիսակի դրած պայմանները, և վերջապէս իմացնել որ եթէ մերժեն իրենց հաւանութիւնն իւր ամուսնութեան մասին Սիսակի հետ, ինքն պիտի համակերպէր այդ խիստ վճռոյն, բայց երբեք ուրիշի հետ չի պիտի ամուսնանար, և թէ իւր երիտասարդութիւնն արտասուաց պիտի նուիրէր. կը հաստատէր թէ այդ էր իւր անխախտ որոշումը:

Տիկին Երանեան գայթակղեալ զիրք մ'առաւ, նկատելով թէ իւր աղջիկն այնպիսի համարձակութեամբ սիրոյ անմատչելի խնդրոյն վրայ կը խօսէր: Բայց նկատելով որդւոյն յուզեալ վիճակն որ ամենայն անձկութեամբ կարծես մահու թէ կենաց վճռոյն կ'սպասէր,

ի գութ չարժեցաւ, և յաղթելով իւր առաջին բունն զգացման՝ մեղմ կերպիւ յայտնեց դատերն իւր զժգոհութիւնը հատաստած գաղտագողի յօղերուն նկատմամբ, գատապարտեց այդ ընտրութիւնն, առարկելով թէ այդ տեսակ երիտասարդներն ոչ միայն անկարող էին կին մի պահելու և զայն երջանիկ բնելու, այլ թէ իրենք իսկ այցոց խնամոց պէտք ունէին, կարենալ ապրելու համար:

Մինչև նոյն պահուն կոչսն ամենայն համբերութեամբ մտիկ ըբաւ: Բայց երբ Տիկինը ակնարկելով երիտասարդուհեաց սիրային ցնորաց և անոնցմէ հետեւած թշուառութեանց՝ սոսկալի պատկեր մի ներկայեց աչացն Վարդանոյշի, յորդորելով զնա հրաժեշտ տալու իւր սիրային խորհրդոց գործադրութենէն, յայնժամ աղջիկն այնպիսի յուսահատ պերճախօսութեամբ և զարմանալի կորովով իմն ու վճռողական կերպիւ յայտարարեց թէ զինքն Սիսակէ հեռացնել փորձելն կը ծառայէ միայն իւր կեանքը փշրելու՝ որ սարսափած մայրն ոչ ևս հակառակեցաւ այլ խոստացաւ ամուսնոյն ծանօթացնել իրաց վիճակը:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ը.

Օրերը, շարաթները կ'անցնէին ու Արաքսիա ի գութ կ'ստղատէր ակնկալած պատասխանին. նամակն ապահովագրած էր, որով անպատճառ ձեռքն անցած էր այն: Վշտահար կոյսը կը հետեւցնէր թէ ինքը մտցուած էր Ներսէսէն, քանի որ և ոչ տող մի կ'ուզէր իրեն. ապշած էր, տարակուսած էր, և չգիտէր ի՞նչ միջոց գործածել, երիտասարդին զժգոհութեան պատճառն իմանալու համար:

Վերստին գրել անոր. ոչ, զայդ կը մերժէր իւր արժանապատուութիւնը. զի ինքն անմեղ լինելովէ հանդերձ՝ խոնարհած էր մինչև յանցաւորի դիրք անելու, և աշխատած էր իւր անձն արդարացնել նախկին նամակաւն, և ամեն ապահովութիւն տալ իւր անմեղութեան նկատմամբ. իսկ ի փոխարէն և ոչ մէկ տող կ'ընդունէր:

Մտածեց, խորհուրդ խորհուրդի վրայ բարդեց, և ի վերջոյ տապալեց մտքին կանգնած չէնքը, զի անկարող էր հաշտեցնել ի միասին թէ՛ սրտին և թէ՛ արժանապատուութեան պահանջմունքը: Ուրեմն մտադիր եղաւ համբերութեամբ սպասելու որ ժամանակը զիւր անմեղութիւն երեւան հանէ, և թէ սակայն Ներսէս՝ զինքն անարժան համարելով իւր սիրոյն, ուրիշի չձօնէր զիւր սիրտ:

Սիրել, սիրուիլ և հալածուիլ առանց հարձանաց պատճառն գիտնալու, մարդուս վիճակուած զբից ծայրագոյններէն մին է: Անորոշութիւն, կասկած և երկիւղ, ասոնք են յարակից պայմանքն սոյն անտանելի դիրքին, և այդ տանջանքներէն կը կրճուէր մարտիրոս կոյսը:

Արաքսիա չունէր խորհրդակից մի զինքն առաջնորդելու իւր շփոթ տրամադրութեանց մէջ, և ոչ մէկը կար սրտին բնօր թեթեւցնելու համար: Կը լռէր, կը տագնապէր, առանց ծնողացն ոչինչ յայտնելու իւր գտն կացութեան վրայօք:

Բայց սրտի մարտիրոսութիւնը չէր բաւեր թշուառ աղջկան, հարկ էր նաև հայթհայթել ծնողացը՝ միջոց ապրուստի: Աշխատութեան գաղափարը, բնտանեացը օգտակար լինելու յոյսը կարծես փրկու թեան խորիսիս մ'էր այն յուսահատութեան ովկիանին մէջ ուր ինքը կը ծփայր իրր խաղալիք բազդի:

Վարդանոյշ ակամայ պատճառն եղած էր ազէտիցն Արաքսիայի, և սակայն «ա սքանչելի մեծանձնութեամբ ոչ միայն երբեք կասկած չէր տուած իւր բարեկամուհւոյն այդ մասին, այլ կ'ուզէր տակաւին անոր պաշտպան կանգնիլ, Սիսակի գործած անհաւատարմութեանց զէմ բողոքելով անդու:

Պ. Ա. Ա. Ե. Ե. Ա. Գ.

Սիսակ եկած էր զԱրաքսիան տեսնելու յետ իւր խոստացեալ այցելութեան: Յաւակցութիւն յայտնեց իւր ազգականին անակնկալ արձակմանն համար, առանց որ և է ուղղակի կամ անուղղակի բաժին մ'ունենալուն ակնարկութիւն ընելու տիկնոջ այդ որոշման մէջ: Ընդհակառակն զանձն իւր անտեղեակ ձեւացուց Տիկինն Արգարեանի գրած նամակին ինչպէս և իւր արտաքսման պարագայից, իբր թէ համոզուած լինէր թէ տիկինն ոչ ևս պէտք ունէր հայ վարժուհւոյ, և թէ եւրոպացի կնոջ մի մտապիր էր յանձնել որչոցըր գատտիարակութեան պաշտօնը:

Սիսակ անձնասէր էր կատարելապէս, թէև չար սիրտ չունենար: Եթէ կարենար որ և է ծառայութիւն մատուցանել խօսքով կամ աննշան աշխատութեամբ՝ զայդ կը կատարէր: Բայց եթէ հարկ լինէր գործել սակաւ ինչ յոգնութեամբ՝ չէր որ և կամ կատարեալ անասարբեր զիբք մի կ'առնուր:

Ինքն պաշտպանած էր զԱրաքսիա՝ ընդզէմ Տիկինն Արգարեանի, և զայդ բաւական հատուցում կը համարէր յանդէտս հատուցած չարեաց համար ազգականին:

Սիսակ զիւր անձ մինչև մէկ աստիճան պատճառ ճանաչելով վարժուհւոյն արձակման խնդրոյն մէջ,

կերպով մի պարտուց ներքեւ կը մնար անոր նկատմամբ, և կը հարկադրուէր չափով մի փոխարինութիւն մ'ընել անոր ապրուստի միջոց մի վնասելու աշխատելով: Այդպիսի նեղութիւններ ստանձնելու համար ծնած չէր մեր երիտասարդը:

Իսկ ներսէսի սիրային յարարելութեանց վրայօք ոչինչ գիտէր Սիսակ, զի բնականապէս Տիկինն Արգարեանի շահուցն ընդզէմ էր այդ խոստովանութիւնը: Նկատելով Արաքսիայի ցաւած կերպարանքը, զայդ տխրութիւն աղջկան նա վերագրեց առանց պաշտօնի գտնուելու պարագային, և այդ նիւթիւն վրայ չուտով սահելով անցաւ, և ուրախ եղաւ երբ առանձին մնալով անձնուէր կոյսն հարցուց իրեն եթէ խօսքին հաւատարիմ եղա՞ծ էր և գնացա՞ծ յայցելութիւն Վարդանոյշի:

Արաքսիա անոնց ուրախառիթ տեսութեան մանրամասնութիւններն իմանալով, գոհունակութեան զգացում մ'ունեցաւ իւր դժբաղդութեան մէջ. զի ազնիւ հոգիներն ոչ այնչափ ինքզինքնուն համար կ'ազբին որչափ այլոց:

Բայց աղջիկը պահանջեց Սիսակէն որ իւր տեսութիւնները զադրեցնէ Տիկինն Արգարեանի հետ մինչև որ Երանեանց վերջնական որոշումն իմանար:

— Ես, կ'ըսէր նա, խիղճ կ'ընեմ քոզարկել Վարդանոյշէն քու մտերմական յարարելութիւնները այնպիսի ժամանակի մէջ ուր անոր ապագայն պիտի վրձնուի: Հետեւապէս իմ լուսութիւնը արգարացնելու համար պէտք է որ վերջ տաս այցելութեանցդ առ Տիկինն Արգարեան, և մանաւանդ կը պահանջեմ, յարեց, որ երգումն ընես բնաւ այդ տիկնոջ հետ չտեսնուելու եթէ երբեք բազմակից լինիս Երանեանց գտներ:

Սիսակ խոստացաւ կատարել այդ օրինաւոր պա-

հանջումն եթէ երբեք իւր ամուսնութիւնը կատարուէր: Իսկ մինչև ի լրումն Վարդանոցչի արուած մէկ ամսուան պայմանածամին, իւր բացակայութիւնն արգարացնելու համար յաչս Տիկին Արգարեանի՝ օգուտ քաղեց առթէ մի որ չաճարեր լինելու կը խոստանար, ու մեկնեցաւ փութով Պոլսէն, ամսէ մի վերջը վերադառնալու գիտաւորութեամբ: Եւ ստիպողական հարկ մ'առարկելով՝ հրածեղտի նամակ մ'ուղղեց առ Տիկին Արգարեան, որուն մէջ իւր հաւատարմութիւնն առ նա կը յայտնէր, իւր վաղ վերադարձը, և իւր ցաւն առանց զինքը տեսնելու՝ մեկնելու պարտա սրեալ լինելուն:

Այս ձեւով եթէ Սիսակ յաջողէր ամուսնանալու օտարոց երանեանի հետ, բաժանման սկզբնաւորութիւնն ըրած կը լինէր. իսկ եթէ չյաջողէր՝ խիստ բնական կերպիւ կը շարունակէր իւր այցելութիւններն տիկնոջ՝ առանց անոր որ և է կասկած մ'ազգելու իւր ունեցած խորհրդոց վրայօք:

Գ Լ Ո Ւ Թ Ծ.

Երբ Տիկին Արգարեան իւր սիրահարին հրածեղտի նամակն ընդունեցաւ, մոնչեց վայրենաբար, և չուտ վերահաստ լինելով թէ ուսկից կուգար իրեն այդ հարուածն, անձին խոստացաւ Արաքսիայի ջանքերն ապարդիւն թողլու Սիսակի և Վարդանոցչի ամուսնութիւնն արգիլելով անպատճառ:

Չար մտքերն և անխիղճ սրտերը շատ նախանձախնդրութիւն չեն յայտնէր իրենց վրիժառու խորհրդոց կատարման մասին, բաւական է որ յաջողին իրենց

նպատակին հասնելու, ամեն միջոց լաւ է և պատուաւոր:

Տիկին Արգարեան ոչ զոք սիրած էր այն յարատեւ եռանդեամբ որով համակուած էր Սիսակին համար: Կը պաշտէր զերիտասարդն, և զայն չկորսնցնելու համար պատրաստ էր ամեն ինչ ի գործ գնել: Երեք շաբաթներ անցած էին և Սիսակէն տակաւին լուր չէր ընդունած, և ոչ իսկ գիտէր անոր ո՛ւր գտնուիլը: Հասկցաւ թէ երիտասարդն իրմէ կը հեռանար: Մտածեց ուրեմն թէ առանց յապաղման պարտական էր գործել եթէ կ'ուզէր անձին պահել զիւր սիրահար:

Տարիներէ ի վեր Տիկին Արգարեան տրամազրոյթեանը ներքեւ ունէր կին մի՝ որ թէև տանը մէջ չէր բնակեր այլ զրեթէ միշտ հոն կը գտնուէր, ու տիկնոջ թէ՛ ատենին և թէ՛ արտաքին յանձնարարութիւնները կը կատարէր:

Այդ կինը ժամանակաւ Վարդանոցչի գայեակն եղած էր նախ, և յետոյ զայն տարիներով խնամած էր, որով միշտ գորովանօք կը խօսէր իւր մեծցուցած սիրելի մանկան վրայ որ գեղեցիկ երիտասարդուհի մը եղած էր: Փափաքանօք և անհուն երջանկութեամբ կ'երթար միշտ այցելութեան երանեան ընտանեաց՝ ուր թուէր իրեն տեսնել յանձին Վարդանոցչի մանուկն գոր խնամած էր երբեմն: Այդ իսկուհի անուանեալ կինն անկեղծաբար կը բողձար իւր խնամած էակին բաղաւոր լինելը, և ազօթիցը մէջ չէր մոտնար երբեք զինքն յիշել:

Տիկին Արգարեանի խիստ ծանօթ էր ի լրոյ երանեան ընտանիքը, քանի որ Իսկուհին խօսակցութեան մշտատեւ նիւթն էր այն, ուստի այդ Տիկինը զիսկուհին որսչեց իբր գործիք իւր մեքենայութեանց:

Օր մի Տիկին Արգարեան խորհրդաւոր ձեւ մ'առ-

նելով իմացուց այդ կնոջ թէ իւր վարդանոջը մեծ վտանգի ենթարկուած էր չարաչար սիրելով երիտասարդ մի որ կը խաբէր զինքն, և որ ուրիշ աղջիկ մի սիրելովն հանդերձ մտադիր էր վարդանոջի հետ ամուսնանալ, մի միայն հարուստ լինելուն պատճառաւ:

Իսկուհին զայդ զրոյց լսելուն պէս սարսափեցաւ, և իւր առաջին մտածութիւնն եղաւ փրկել իւր զինացուցած արարածն այդպիսի մեծ փորձանքէ:

Բայց վայրկեան մի ետքը անդրապատնալով հարցուց.

— Տիկի՛ն, վստահ է՞ք արդեօք ձեր ըսածին վրայօք:

— Վստահ, ի՞նչ կ'ըսես, Իսկուհի:

— Ո՞վ տուաւ այդ լուրը ձեզի, հաւատարմութեան արժանի է՞ տուողը:

— Երբ ես եմ հաստատողը, քեզ ոչինչ կը մնայ խօսելու:

— Տիկի՛ն, պէտք է ամեն բան զիտնամ, ես ալ ընելիքս ունիմ:

— Ի՞նչ է ընելիքդ:

— Խօսիլ վարդանոջիս, եղածն իմացնել, բայց պէտք ունիմ... ըսաւ կինն ու կանգ առաւ, վախնալով որ տիկինը կընայ նեղանալ:

— Ստոյգ տեղեկութեանց հարկ ունիս, կ'իմանամ, ըսաւ Տիրուհին, իբր թէ զկին նեղանալի վիճակէ մ'ազատելու քաղձանօք, մինչդեռ ինքն անհամբեր էր յատաճ վարել իւր խոստովանութիւնը:

— Այո՛, Տիկի՛ն, միտքս ազէկ հասկցաք:

— Ուստի կ'իմացնեմ քեզ թէ ես անձամբ տեղեկացայ ամեն բանի:

— Դո՞ւք, Տիկի՛ն,

— Այո՛ ես:

— Ծնոր՞ք կ'ընէ՞ք պատմելու, Տիկի՛ն:

— Ես անձամբ քաղեցի ամեն տեղեկութիւն, և սականջովս լսեցի զամեն ինչ, դեռ կը տարակուսի՞ս դու:

— Երբ դուք գործին մէջ էք, ամեն բանի կը հաւատամ:

— Մտիկ ըրէ ուրեմն, քեզ ամեն ինչ պատմեմ:

— Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, Տիկի՛ն, ըսաւ Իսկուհին անձկութեամբ:

Ես բնաւ չա՛ն չունիմ միջամտելու ինձ անձանոթ եղած աղջկան մի գործոց մէջ: Բայց նախ մարդկութեան նո իրական պարտք մի կը համարիմ որ և է չարիք կամ զժրազոյցութիւն խափանելն. երկրորդ զքեզ կը սիրեմ և չեմ ուզեր որ սիրտդ ցաւի զաւկի նման մեծցուցած արարածդ թշուառ տեսնելով, յարեց խորամանկ կ'ինը:

— Աստուած վարձատրէ ձեր բարի սիրտը, Տիկի՛ն:

— Ես իմ վարձատրութիւնս կատարելիք բարի գործիս մէջ կը փնտոտեմ միայն:

— Բայց բռէ՛ք, Տիկի՛ն, ի՞նչ է անունն այն երիտասարդին որ կ'ուզէ խաբել վարդանոջո՞:

— Պատմեմ քեզ զամեն ինչ ուրեմն, Իսկուհի:

— Կ'աղաչեմ, Տիկի՛ն:

— Բազմիցս հանդիպեցար հոս երիտասարդի մի, Պ.

Սիւսակ անուանեալ:

— Այո՛, Տիկի՛ն, գիտեմ որ անոր շատ պատիւ կ'ընէք:

— Իրօք այդ երիտասարդը կը մեծարէի, վասն զի ամեն պատուոյ արժանի կը համարէի, և զինքը կ'ընդունէի վասն զի աղջիկ տալու գիտաւորութիւն չունէի:

— Մեր երկու օրիորդները տղայ են. անոնց կարգուելու ատենը չէ:

— Եթէ տղայ ալ չլինէին անոնք՝ չէի տար գարձ-

եալ : Վասն զի Պ. Սիսակ լաւ ամուսին լինելու համար ամեն պէտք եղած յատկութիւններէն զուրկ է : Իրաւ է որ ընկերութեան մէջ շատ վաղեւոյզ կերպիւ կը վարուի , ու ինքն ուսեալ և խելացի անձ մ'է , և այդ էր պատճառն որ մասնաւոր պատուով կ'ընդունէի զինքը :

- Տէր Ասատաւ , հասկցածս է :
- Ի՞նչ հասկցար , Իսկո՛ւհի :
- Պ. Սիսակն է Վարդանոյշիս հաւնածը :

— Ստուգապէս այն է :
— Վա՛յ ինձ , քանի որ կ'ըսէք , Տիկի՛ն , թէ աղէկ ամուսին չի կրնար ըլլալ :

— Իրօք աղէտք մ'է աղջկան մի համար սիրահարուիլ երիտասարդի մի որ ոչ այլ ինչ գիտէ բայց իւր հաճոյքը : Պ. Սիսակ՝ ամուսնութեան երկրորդ օրն պազանդապէս իւր նորապսակ հարսը պիտի թողու , նորանոր ապօրինի գուարճութիւններ փնտոելու համար , թող թէ արդէն սիրահարութիւն մ'ալ ունի անբարոյ յական աղջկան մի հետ :

- Տիկի՛նս , ո՞վ է այդ չխտնած աղջիկը :
- Երբեք չես կրնար գուշակել անոր ս'վ լինելը :
- Մտքէս բան մի չանցնիր , ո՞վ է ըսէք , կ'աղաչեմ :
- Նոյն իսկ վարժուհին որուն յանձնած էի երկու որդոյս գատտիարակութիւնը :

- Օրիորդ Արաքսիան :
- Ինքն իսկ :
- Խելքս տեղէն թոտա : Արաքսիան իմ Վարդանոյշիս բնկերուհին է :

— Այդ պատճառաւ մ'աւելի է վերահասու լինելու համար այդ էակին չարութեան աստիճանին : Չի բաւեր որ անպատուութիւնը տանս մէջ կը մտցնէ , այլ և հրէշային մասնութիւն մ'ալ կ'ընէ բարեկամուհւոյ մի նկատմամբ :

— Որո՞ւն մտքէն կ'անցնէր որ այդ պարկեշտ աղջիկն այսչափ անամօթ է եղեր :

— Չգիտե՞ս արդեօք որ այդչափ համեստ երեւցողներն ամենէն մեծ կեղծաւորներն են :

— Իրաւ այնպէս է : Բայց գուք , Տիկի՛ն , ի՞նչ պէս եղածը չեղածը իմացաք :

- Մանրամասնաբար պատմեմ քեզ զամեն ինչ :
- Ա՛հ , Տիկի՛նս , պատմեցէ՛ք , պատմեցէ՛ք :
- Գիշեր մի , ոչ ժամանակ , մինչ ամենքը կը քնանային , ևս արթուն էի : Ոտքի ձայներ լսեցի յանկարծ . կատկածելով թէ գողեր մտած էին մեր տունը՝ քաջութեամբ զինեալ տեղէս ելայ , և ամենայն զգուշութեամբ՝ դուռս բանալով տեսայ զԱրաքսիան որ ճրագ մի բռնած , սանդուխներէն վար կ'իջնար , ու քիչ մի ետքը վեր կ'ելնէր՝ Պ. Սիսակին առաջնորդ կանգնելով :

— Վա՛յ անամօթ աղջիկ :

— Տեսայ մտած սենեակին , և ևս գնացի ստուգելու թէ ի՞նչ կ'ընէին : Լսածներէս ու տեսածներէս զգուած՝ ետ քաշուեցայ բուն սրտմտութեամբ : Թէև մտադիր եղայ նախ ներկայութեամբս շանթահարել զանոնք , բայց սպա խորհեցայ թէ ինձ նման տիկնոջ մի համար անձահ էր այդպիսի անվայել պատահարաց մի համար անձահ էր այդպիսի անվայել պատահարաց մէջ խտնուիլ . ու գայթակղութիւն չյարուցանելու համար լսեցի և սենեակս վերադարձայ առանց աղմկի :

- Վայլածն ալ այդ էր , Տիկի՛ն . աճոռնինե՛րը :
- Բայց անհնար էր ինձ աչերս դոցել ցորչափ կը զգայի որ այդ անպատիւ աղջիկը սիրահարին հետն էր : Եթէ Պ. Սիսակ յանցանք կը գործէր տանս մէջ անպատուութիւն մտցնելով՝ միայն սա տեսակէտով կ'արպատուութիւն մտցնելով՝ միայն սա տեսակէտով կ'արգարանար որ ինքն երիտասարդ մ'է , և այր մարդը բաւական է որ զուարճանալու յոյս մ'ունենայ , որպէս զի ամեն միջոց յարմար գատէ :

— Տիկի՛նս , Պ. Սիսակ թո՛ղ ուրիշ տեղ փնտոէր զուարճութիւնները . կը վայել՞ ր որ ասանկ բան մ'ընէր ձեր տանը մէջ :

— Եւ կը տեսնես , Իսկո՛ւնի , որ զնա պատճելու համար իմացուցի իրեն թէ ոչ եւս կրնամ նիւրբնկալիլ զինքն :

— Ըսել է իմացուցիւր Պ. Սիսակին որ եղածը գացածը գիտէք :

— Կրնայի՞ լսել արդեօք երբ խնդիրը տանս պատուոյն կը վերաբերէր , ըսաւ Տիկին Արգարեան եղանակաւ մի որ կարծես թէ ինքն տիպար մ'էր առաքինութեան :

— Բայց , Տիկի՛ն , չբսիք որ ի՞նչպէս լմնցաւ ատոնց տեսութիւնն :

— Ինչպէս պատմեցի քեզ արդէն , սենեակս վերադարձայ . բայց կասկածելով որ տունն հրոյ ճարակ կրնայ լինել և մենք մէջը կ'այրինք՝ անոնց գործելիք մէկ անխոհեմութենէն , գնացի վերստին այն սենեկին առջեւ ուր կը գտնուէին երկուքն , և անոնց ձայնը լսելով կանգ առի դրան առջեւ և լսեցի ամբողջ խօսակցութիւնը զգուանօք , զի վախցայ որ դաւադրութիւն մ'ալ չի պատրաստեն ընդդէմ մեզ , քանի որ այսպիսի անձինք ամեն բանի կարող են :

— Անանկ է , Տիկի՛ն , ամեն բան կ'ընեն ասանկ անօրէնները :

Բայց ի՞նչ կ'ըսէին իրարու , Տիկի՛նս :

— Կ'ուխտէին զիրար միշտ սիրել հաւատարմութեամբ , սակայն քանի որ երկուքն եւս աղքատ էին , անխղճմտաբար կը դաւակցէին ընդդէմ վարդանոյշիդ :

— Աստուած պատէ երկուքն ալ :

— Արաքսիա պիտի միջամտէր համոզելու համար զվարդանոյշ , փութացնելու զիւր ամուսնութիւն Պ. Սի-

սակին հետ , նա մանաւանդ միայն ամիս մի միջոց պիտի տար անոր , որպէս զի համոզէ զիւր ծնողք : Յետ աւարտման այդ պայմանաժամին՝ յանուն Սիսակի պիտի սպառնար Արաքսիա թէ երիտասարդը պիտի լուծէր ամեն հաւատարմութեան խոստում :

— Խե՛ղճ վարդանոյշս , գիտէի որ այդ օձ Արաքսիա անոր բարիք կ'ուզէր :

— Ըսելիք չկայ , ըստ ամենայնի հազուագիւտ բարեկամուհի մ'է , ըսաւ տան տիկինն հեզնութեամբ : Երեւակայէ՛ , Իսկո՛ւնի , Պ. Սիսակ Երանեանց աղջիկն պիտի առնու ի կնութիւն՝ անոր դրամովը զԱրաքսիան խնամելու համար :

— Աստուծմէ՛ դանան :

— Արաքսիա իւր կողմանէ կը խոստանար երբեք ուրիշի հետ չամուսնանալու :

— Մա՛հը վերցնէ այդ անձոտնի աղջիկը :

— Տես թէ ինչո՞ւ այդպէս փութով ձանրեցի զվարժուհին :

— Տիկի՛նս , քիչ մի նիւանդ ըլլալուս համար երկու շաբաթ է տունէս դուրս չելայ . իմացայ որ ձեր վարժուհին ձանրու գրած էք , բայց պատճառը չգիտէի :

— Իրօք բաւական օրերէ ի վեր զքեզ չեմ տեսած :

— Բայց , ապրի՛ս , Տիկի՛նս , զիս չի մոռցար ամեմենեւին :

— Հաւատարմութիւնդ ձանաչելով կը ջանամ միշտ վարձատրել զքեզ :

— Աստուած օրեր տայ ձեզի :

— Բայց լո՛ւր ինձ , Իսկո՛ւնի : Ուրեմն անմիջապէս որ առաւօտն յաջորդեց այդ ամօթալից գիշերուան՝ Արաքսիա մեկնեցաւ վարդանոյշին երթալու և յանուն Պ. Սիսակի անոր այցելութիւնը խոստանալու համար :

Լսածներէս հետեւցուցի թէ աղջիկը նեղը գնելու մտօք է որ երիտասարդը զազրեցուցած է այցելութիւնները տան Երանեան. և իրօք առ այդ յաջողած է: Ուստի Արաքսիա իբր միջնորդ պիտի ներկայանար՝ զՊ. Սիսակ Վարդանոյշի վերադարձնելու համար:

— Այս ի՞նչ ատանայական խաղեր են:

— Բայց չգիտեմ թէ ի՞նչ դարձաւ երբ Արաքսիա Երանեանց գնաց յաջորդ օրը. սա չափը գիտեմ որ երբ վարժուէին տունս եկաւ, նուազելով անկաւ:

— Աստուած պատիժը կուտար այդ անիծուած աղջկան:

— Ես երբ առաւօտուն սենեկէս դուրս ելայ, վարժուէին նուազումէն սթափած էր, որով զինքն անմիջապէս տունէս վանեցի:

— Տիկի՛նս, այս ի՞նչ բաներ են. խելքս գլխէս գնաց: Թողուցէք որ երթամ շուտ Երանեանց տունն ու ամեն բան իմացնեմ անոնց:

— Ես ընդհակառակն կը կարծեմ որ ծնողաց ոչինչ ըսելու ես, զի անոնք անտեղեակ են իրենց աղջկան սիրոյն, և գոցել չարաչար վարուին անոր հետ և իւր անտանելի վիճակն առաւել ևս ծանրացնեն:

— Իրաւ ատանկ է, Տիկի՛ն:


— Գիտցածներդ միայն Վարդանոյշին հաղորդէ: Աղջիկը վերահասու լինելով սիրահարին ու բարեկամուհւոյն խաբէութեան, հրաժեշտ կուտայ Պ. Սիսակին հետ ամուսնանալու խորհրդէն, և առանց տարածայնութեան չարիքը կը խափանի:

Հաւանեցաւ Իսկուհին, նա մանաւանդ խիստ խոհեմ գտաւ գործելու այդ եղանակը:

Տիկին Արգարեան չէր ուզեր սակայն բացարձակ դեր խաղալով իւր անունը թշնամեացը բերանը մատնել. ուստի պահանջեց վարձկան կնոջմէն որ Երան-

եանց դստեր միայն յայտնէ իւր անունն, այնու պայմանաւ որ երիտասարդուհին իւր կողմանէ նոյն խորհրդապահութիւնը խոստանայ: Մանաւանդ հասկցուց կնոջ որ եթէ աղջիկը թոյլբերանութիւն մ'ընէր իւր մասին, ինքն՝ Իսկուհին, պիտի տուժէր զայդ, տանը մէջ ոչ եւս մուտք գտնելով:

Այդ սոսկալի սպառնալիք մ'էր աղքատ կնոջ համար, զի մեծաւ մասամբ Տիկին Արգարեանի շնորհիւ կ'ապրէր նա. բայց Վարդանոյշի արգահատական և ազնիւ զգացմանց վրայ կատարելապէս վստահ լինելով՝ ապահովեց զՏիկին՝ երիտասարդուհւոյն խորհրդապահութեան մասին, և ազա փութաց երթալ առ Վարդանոյշ, զայն բացարձակ աղէտքէ մի ազատելու գիտաւորութեամբ, ինչպէս որ անկեղծօրէն կը հաւատար նա:



Գ Լ Ո Ի Խ Ե Ա.

Երեք չարաթներ անցած էին ու տակաւին Արաքսիա լուր չէր առած ներսէսէն. յայտնի էր որ նա պատասխանելու գիտաւորութիւն չունէր: Երիտասարդուհին կը հալէր, կը մաշէր ինքնիրեն. և իւր դժընգակ վիճակն առաւել ևս կը ծանրանար մօտակայ չքաւորութեան տեսարանով, քանի որ փոքրիկ գուլամարն այն որ իւր խնայողութեան արդիւնքն էր, սպառելու մօտ էր: Ի՞նչպէս կրնար յանձն առնուլ ականատես լինելու վերստին իւր ծնողաց զրկման ենթարկուելուն. մանաւանդ որ խեղճ հայրը հանգիստ գտած էր նոյն օրէն որ Տիկին Վարսամեան գնեքսէս փեսայ ունենալու յոյսն ունենալով՝ զնա խայթելէ զազրած էր: Ծերունին բազում հաճոյքներ վայելած

էր եւս իւր փեսայացուին զրկած ուտեստի այլ և այլ նուէրներով՝ որոնց նկատմամբ Արաքսիա հակառակութիւն չէր բրած, թէեւ ուժգին ընդդիմացած էր ու է գրամական օգնութիւն ընդունելու ծնողացը տան մատակարարութեան համար, իւր խօսնայրին կողմանէ։

Իսկ նոյն պահուն ոչ միայն զրկուած էին վարսամեանք այդ նուէրներէն որք ծերոց համար կենաց գլխաւոր հաճոյքներէն մին են, այլ գուցէ հարկաւորն իսկ չունենային ընդհուպ։

Արտահար կոչսը կը պարտաւորէր՝ գոնէ որչափ ժամանակ որ կարելի էր, ծածկել ծնողքէն իրենց երազած գեղեցիկ ապագային ոչնչանալը։ Բայց և թէ այդ մասին առժամանակեայ դարման մի կը դառնէր, ոչ այնպէս էր նիւթական պիտոյից նկատմամբ։

Երբեք այնքան սիրելի և սփոփիչ չէր երեւցած Արաքսիայի աշխատութեան գաղափարն, անով մասամբ կը վերականգնէր և ոյժ կ'զգենայր կենաց դժուարին դաշտին մէջ մարտնչելու՝ իրբեւ ձախորդութեան քաջ զինուոր։ Կը մտածէր թէ ո՞ր եղանակաւ հնարաւոր էր նոր աշխատութեան գուռ մի բանալ անձին, կը մտածէր, և նոյն պահուն ոչինչ կը ներկայանար աչացն առջև իրբեւ խարխիս փրկութեան։

Ո՛րչափ յոյս, ո՛րչափ սէր փչրուած էին մէկ վայրկենի մէջ։ Ներսէս յանկարծ լքած էր զինքն, և ակընթարթի մէջ կորզած էին իրմէ երկու հրեշտակները զորս այնքան սիրած էր։ Ինքն ըստ ամենայնի անմեղ էր, և անշուշտ իբր յանցաւոր կը հանդիսանար թէ՛ ներսէսի և թէ՛ փոքրիկ քոյրերուն առջև։

Ո՛հ, կը ձայնէր կոյսն դառնագին, հա՞րկ էր ուրեմն երբեակ յօդեր սիրոյ կազմել, զանոնք մէկ օրւան մէջ կորսնցնելու համար։

Ազաւնին մանաւանդ մասնաւոր հրապոյցր մ'ուներ

իրեն համար, զի սիրոյ այլ և այլ յիշատակներ կը զարթուցանէր իւր յիշողութեան մէջ։ Մի թէ անոր մաքուր ճակտին վրայ իւր ձեռքը չէ՞ր միացուցած ներսէսինին հետ։ Մի թէ երկտասարգը չէ՞ր պատուիրած անոր սիրելի զիւր վարժուհին բոլոր հոգովը։ Չտեսնե՞լ իսկ տղայքն որոնց այնքան համակրած էր։ Սիրոյ քայքայումն հոգւոյ զօրութեան քայքայումն նաև չի՞ նշանակեր արգեօք երբեմն։

Թո՛ւած երջանիկ օրերն իւր առջև կը ներկայանային, ու կոյսին հօգին կեղեքելով կը կենդանացնէին։ Անցեալին առաւել հեշտալի կը սահէր իւր առջևէն, իսկ ներկայն սպառնալից և սեւագէժ կ'արձանանար հանդէպ իրեն։

Երբեք մարդս չէ վայելած իւր բարերաստիկ ներկայն զգալու ամբողջ կարողութեամբը, զի կարծես երջանկութեամբ արբէլո՞ սիրան ու միտքը գննելու, քննելու և ուսումնասիրելու հանգամանքը կը կորքննելու և սուգն յաջորդէ ուրախութեան, սընցնէ։ Բայց երբ սուգն յաջորդէ ուրախութեան, յայնժամ խուզարկու միտքը կ'սկսի զննել բոլոր մանրամասնութեամբը մէն մի երանաւէտ զգացում որ սրտին խլրտում և բարախում պատճառած էր, և զիւտեր ընել այնպիսի դէպքերու վրայ որք անզգալի անցած էին երջանկութեան արագընթաց շրջանին մէջ։


Շուարած, վշտահար բայց ոչ վհատեալ, Արաքսիան երերածուփ էր կենաց այեկոծութեան մէջ, երբ սիան երերածուփ էր կենաց այեկոծութեան մէջ, երբ անձ մի որ մասնաւոր կերպիւ կը գնահատէր զօրիորդն, անձ մի որ յանցաւոր թէ պատուաւոր հայագզի տիկուգայ իմացնել անոր թէ պատուաւոր հայագզի տիկին մը՝ իւր խանդարեալ առողջութեան պատճառաւ թիւն ունէր, և թէ խիստ գոհացուցիչ պայմաններ խոստանալով, վայելուչ ընկերուհի մի կը փնտոէր իւր ուղեւորութեան համար։

Արաքսիա մաւնաւոր շնորհք մի բաղդին տեսաւ այդ անակնկալ պարագային մէջ, ու անմիջապէս հաճեցաւ ուղեկցելու սոյն տիկնոջ՝ զոր ի համբաւոյ կը ճանաչէր խիստ նպատաւոր կերպիւ :

Տիկին Վարսամեան ոչ միայն նոյն յօժարութիւնը չէր յայտնէր, այլ ընդհակառակն կը ջանար խափանել ուղեւորելու խորհուրդն, առարկելով իւր աղջկան թէ գուցէ տհաճոյ ինչ գործէր ներսէսի նկատմամբ :

Բայց Արաքսիայի կամքն ամեն արգելից կը յաղթէր, և մանաւանդ քանի որ յաջողած էր Արգարեանի որդւոյն նման նշանած մի ձեռք ձգել կրկին յարգ ստացած էր իւր մօր առջեւ, որով Տիկին Վարսամեանի ընդդիմութեան ոգին շուտով կը նահանջէր աղջկանը տրամագրութեանց առջեւ :

Այդ առաջարկն լինելէ ութ օր վերջն՝ Արաքսիա մեկնեցաւ հայրենի տունէն Տիկին՝ Հարթմանեանի հետ ճամբորդութիւնն սկսելու համար Եւրոպայի այլ և այլ կողմերը :



Պ Լ Ո Ւ Խ Թ Խ Ք.

Տիկին Երանեան մօր մի ճարտար պերճախօսութեամբ յայտնած էր ամուսնոյն իրենց զտեր սիրահարութիւնը Սիսակի համար, և հարկն զնա պսակելու անոր հետ :

Պ. Երանեան ընդդիմացած էր ուժգին, նեղացած, զայրացած, առաջարկի մ'առջեւ որ բոլոր իւր տեսութիւններն ի հիմանց կը քանդէր. զի ինքն մտադիր էր տալ զիւր դուստր ի հարսնութիւն այն հարուստ երիտասարդին որ արդէն ներկայացած էր իբր փեսայացու : Զոհել աղջիկն անձի մի որ ոչ գրամ ունէր և

ոչ իսկ որոշ պաշտօն մի, զայդ յիմարութեան մեծագոյնը կը համարէր :

Եթէ խղճալի մայրը մէկ կողմանէ կը հաստատէր ամուսնոյն դիտողութեանց իրաւացի լինելն, միւս կողմանէ կը նշմարէր սոսկալի վտանգն իրենց միակ որդին կորսնցնելու՝ նորա սիրոյն դէմ արդելը յարուցանելով :

Պ. Երանեան, յետ երկար ընդդիմութեան, ուրեմն համոզուեցաւ վերջապէս, և հաւանութիւն տալով աղջկան ամուսնութեան, որոշեց օդնել Սիսակի, յառաջացնել զայն, և ըստ կարելոյն անոր ապագան հաստատել :

Ծնողաց հաճութիւնն ստանալով կարծես Վարդանոյշ պիտի յիմարէր, եթէ երբեք երջանկութիւնը կարենար յիմարացնել : Ի՞նչ գեղեցիկ երազներ կ'ընէր. ամեն ինչ վարդագոյն և լոյս էր իրեն համար : Արաքսիայի հետ կը խօսէր ապագային վրայ այն անձանձիր և անձնատէր առատախօսութեամբ որ յատուկ է երջան և անձնատէր առատախօսութեամբ որ յատուկ է երջան նիկ անձանց, առանց ի նկատ առնելու թէ աղջկան ճակատը տխրութեամբ կը վարագորուէր մէն մի անգամ որ իւր մօտալուտ ամուսնութեան վրայ կը խօսէր :

Ոչ թէ Արաքսիա կարող էր որ և է նուաաս զգացում մ'ունենալ ի տես երանութեան իւր բարեկամուհւոյն, այլ կը յիշէր թէ ինքն եւս նոյն երազներն ըրած էր քիչ ժամանակ յառաջ, և թէ անհետացած էին անոնք իրականանալէ յառաջ :

Վարդանոյշ նշմարած էր արգարեւ Արաքսիայի տխրութիւնն որ անյայտ չէր կրնար անցնիլ իւր չափազանցութեան պատճառաւ իսկ : Եւ երբ նա պատճառն ուզած էր հասկնալ՝ աղջիկը վերագրած էր զիւր ցաւ անգործութեանն, և զայդ հաւատացած էր Վար-

գանոյշ, թէև տարօրինակ թուէր իրեն այդպիսի ծայրայեղ վիշտ մի: Բայց այնչափ մեծ էր վստահութիւնն իւր մտերմին վրայ որ բնաւ մտքէն չէր անցած ուրիշ պատճառ մ'ալ փնտոել:

Ուստի երբ մեկնեցաւ Արաքսիա՝ կոյսն երջանելի թէ՛ ուրախացաւ և թէ՛ ցաւեցաւ: Գո՛հ եղաւ, վասն զի իւր բարեկամուհին մտատանջութենէ կ'ազատէր, նիւթական վիճակն ապահովելով. արտմեցաւ՝ որովհետեւ կր բաժնուէր այն միակ էակէն որուն առջեւ սանձարձակ ազատութեամբ իւր սիրտը կրնար բանալ: Բայց մխիթարուելու համար ժպտուն յոյսն ունէր իբր ընկեր, և մօտակայ ակնկալութիւնն իմացնելու իւր Սիսակին թէ ոչ եւս արգելք կար իրենց միացման, թէ ապագայն իրենցն էր, թէ երանութեան աշխարհ մի կը պարզուէր իրենց առջեւ:

Շարաթ մի եւս, կը մտածէր գոհ կոյսն, և ահա իւր սիրելին կը վերադառնար անշուշտ, զի յայնժամ կը լրանար անոր դրած պայմանաժամը: Բայց այդ շաբաթն ս'ըջափ երկարատեւ պիտի թուէր իրեն, մանաւանդ երբ ոչ եւս ունէր զիւր բարեկամուհին, ակնկալութեան ժամերու անձկալից երկարութիւնն համառօտելու համար:

Ըսինք արդէն որ Վարդանոյշ մօրն հետ ընտանութեամբ չէր խօսեր սրտի խնդիրներու վրայ. ու բաց ի այս պարագայէն կոյսն թէև ծնողացը հաւանութիւնն ստացած էր իւր սիրային վէպին յաջողութեանն համար, այսու հանդերձ անհանդիստ կացութեան մէջ կը գտնուէր զի լաւ գիտէր թէ այդ հաւանութիւնը բըռնազրօսիկ էր:

Մինչ Վարդանոյշ սենեկին մէջ առանձին էր՝ ու մտացը մէջ կը յեղյեղէր հաճելի տեսարաններ և պատրաստութիւններ, ահա Իսկուհին որ ներս կը մտնէ:

Կոյսն ցնծութեամբ կ'ողջագուրէ զնա, զի անոր գորովագութ սիրտը մաս մի գիտէր յատկացնել անոնց որք իւր վրայ անկեղծօրէն կը գուրգուրային:

Ազնիւ հոգիներու հաճոյքն սիրել է, և պատրանքն անոնց համար մահու չափ դժնդակ է:

Ք Ա Ո Ւ Ն Խ Խ Պ Ք.

Պատշաճողական քանի մի խօսքերէ յետոյ Վարդանոյշ յատկապէս խորհրդաւոր ձեւով մ'իմացուց իւր գայեակին թէ իրեն ուրախառիթ լուր մ'ունէր տալու:

Իսկուհի շուտ վերահասու եղաւ այդ լուրին տեսակին վրայ. և նկատելով այն մեծ զուարթութիւնն որ աղջկան գէմքին վրայ ծաւալած էր՝ ցաւեցաւ ստուգապէս զայն ջնջելու հարկին առջեւ: Կը հասկնար կինն որ սոսկալի հարուած մի պիտի տար իւր պաշտած աղջկան, ու իւր սիրտը կը ճմլէր: Բայց ներելի՛ էր իրեն զեղեւիլ արդեօք ծանր պարագայի մ'առջեւ ուր Վարդանոյշի բողբոջ վտանգի մատնուած էր. և առժամանակեայ ցաւ մի չպատճառելու համար, կրնա՞ր գաղջիկը թշուառութեան մատնել ցիւանս: Յիշեց թէ եկած էր զիւր սիրեցեալ էակ վտանգէ փրկելու համար, և պիտի խօսէր ապահովապէս:

Այս խորհրդածութիւնք չանթի արագութեամբ տեղի ունեցան կնոջ մտացը մէջ, որով Վարդանոյշի գառնալով ըսաւ.

— Խօսէ՛ տեսնեմ, գաղտնիքդ ըսէ՛, աղջի՛կս:

— Զքեզ առանց տանջելու երանութեանս մասնակից ընեմ ուրեմն. զի գիտեմ, սիրելի՛ Իսկուհիս, որ իբր մայր վրաս կը գուրգուրաս:

— Այդ բանը աղէկ գիտես :

— Գուցէ մեղադրես զիս ընդ երկար պահած լինելու համար գաղտնիքս քեզմէ . բայց չուզեցի զքեզ մասնակից ընել անորոշ վիճակի մի գառնութեամբ լի :

— Գիտես , ազու՛ր աղջիկս , որ ես աղէկ ու գէշ օրերդ կը սիրեմ , ու քեզի հետ ի՛նչ ըլլամ թող ըլլամ :

— Միշտ բարի ես , Իսկուհի՛ս : Քու զգայուն սիրտդ լաւ ճանչցած լինելու համար աւելորդ յուզումներէն ուզեցի խնայել զքեզ :

— Ա՛հ , աղջիկս , ինծի գէշ չընելու համար ինքզինքիդ գէշ ըրիր վախնամ :

— Ընդհակառակն , ամեն ինչ ի կատար հասուցի , յուսամ :

— Բացէն խօսէ նայիմ , աղջիկս :

— Ինչպէս մօրմէս նոյնպէս քեզմէ ծածկած էի , Իսկուհի՛ս , սիրոյ զգացում մի որ կը տածեմ գրեթէ մէկուկէս տարիէ ի վեր աղնիւ և պատուական երիտասարդի մի համար՝ որուն միակ յանցանքն՝ յաչս աշխարհի գուցէ , հարուստ չլինելն էր :

— Աստուած տար որ մի՛նակ այդ ըլլար յանցանքը :

— Կը տարակուսի՞ս :

— Աղջիկներու համար ամեն երիտասարդ չի գըտնուած է :

— Բայց դու ի՞նչպէս կրնաս դատաւարտել անձ մի որ չես ճանչնար , նա մանաւանդ երբ ոչ իսկ գիտես անոր ո՛վ լինելը : Միայն իմ Արաքսիաս տեղեակ էր գաղտնեացս , և երեք շաբաթէ ի վեր ծնողքս տեղեկութիւն ունեցան այդ մասին : Մի՞ գուցէ տեսար մայրս , և եղածն իմացար անկէ :

— Ո՛չ , աղջիկս , չիտակ քու քովդ եկայ :

— Ուրեմն բնաւ իրաւունք չունիս խոժոռագէմ

հանդիսանալու երբ պաշտելի ընտրելոյս վրայ կը խօսիմ :

— Ա՛հ , աղջիկս , չգիտես որ Սիսակդ ի՛նչ կ'աժենէ , այնչափ ալ Արաքսիադ կ'աժէ :

— Ի՞նչպէս գիտես դու թէ Սիսակն է սրտիս տէրը , և ինչո՞ւ աննպաստ կերպիւ կը խօսիս անոր և Արաքսիայիս վրայ :

— Ես ալ գիտցածս գիտեմ :

— Ի՞նչ է գիտցածդ տեսնենք : Հաւատա՛ , Իսկուհի՛ , որ եթէ դու չլինէիր՝ երբեք չպիտի ներէի որ չարախօսիս իմ երկու ընտրելագոյն սիրելեացս վրայ :

— Իրաւունք ունենա՞մ ալ՝ պիտի գէշ գան խօսքերս քեզի :

— Բայց անհնար է որ իրաւացի լինին : Համարելով որ Սիսակի մասին սխալած լինիմ . բայց բարեկամուհւոյս նկատմամբ յուզայութիւն կը համարիմ ամենափոքրիկ կասկած մ'անգամ ունենալը :

— Եկու նայէ որ այդ երկու երեսով աղջիկը քեզ կը խաբէ , խեղճ գաւակս :

— Ի՞նչ փաստ ունիս Արաքսիան մեղադրելու համար :

— Ի՞նչպէս ըսեմ քեզի :

— Շուտ խօսէ , կը պահանջեմ զայդ քեզմէ :

— Խօսք տուր , գաւակս , որ սիրտդ թունդ չի պիտի ելնէ :

— Կը խոստանամ :

— Երգում ըրէ որ տիկնոջս տալու անունը ամենեւին բերնէդ չի պիտի հանես :

— Կ'երգնում առաջի երկնից : Սակայն եթէ հարկը պահանջէ ի՞նչ ընեմ յայնժամ :

— Բերանդ գոց պահես : Մտածէ՛ որ եթէ իս մատնե՛ս , տղաներու հացը բերնեքնուն կը կտրես :

- Լաւ ուրեմն : կը խոստանամ լուելու :
- Երբում ըրէ :
- Կ'երգնում :
- Անանկ է նէ մտիկ ըրէ հիմա : Քու սիրամ Արաքսիաց սիրուհին է քու Սիսակիդ :
- Ո՛հ, ի՛նչ սոսկալի ամբաստանութիւն է այդ :
- Եկու տես որ եղածն ալ այս է :
- Ի՛նչ կ'ըսես, Իսկուհի՛, Արաքսիան ջանաց ամեն ինչ կարգադրել երբ Սիսակ թուէր ինձմէ հեռանալ, և կ'ուզես որ նա ինձ գէմ գառակցի :
- Այո՛, գործդ կարգի գնելով իրեն գործը կը շտկէր, կ'իմանաս :
- Ոչինչ կը հասկնամ, բացարձակապէս խօսէ :
- Արաքսիա գիշերով Սիսակը ներս առաւ Արգարեաններուն տանը մէջ :
- Այո՛, տեղեակ եմ : Այդ ժամադրութեան շարժառիթն էր իմ վրդովեալ սրտիս ապահովութիւն տալու անշահախնդիր բաղձանքը :
- Դուն այդպէս գիտցիր, խեղճ աղջիկ : Այդ երկուքը չամչնալով գիշերուան մէջ քե՛ք կ'ընէին : Այդ խայտառակ Արաքսիան քու հաւնած աղջիկդ է, տե՛ս :
- Կը հայնոյես : Իսկուհի՛, լռէ՛ :
- Չեմ կրնար լռել, պէտք է որ ամեն բան գիտնաս :
- Խեղճ բարեկամուհիս ամուսնութիւնս հաստատելու կ'աշխատի, և դու զայն իբր նենգաւոր կ'ուզես ներկայել :
- Եւ է :
- Ո՛վ կը վկայէ :
- Տիկին Արգարեանը, աւելի՛ն կ'ուզես :
- Տիկին Արգարեանը :

— Հիմա հաւատացի՞ր : Թէ կ'ուզես եկու քեզ այդ Տիկինին տանիմ, ու ամեն բան անոր բերնէն իմանաս :

— Այդ չի բաւեր ինձ տակաւին, մանրամասնաբար պատմէ գիտցածդ, զի կ'ըմբռնես անշուշտ որ Տիկին Արգարեանի տունը ես չեմ կրնար երթալ :

Յայնժամ Իսկուհին պատմեց բոլոր մանրամասնութեամբ զոր ինչ իմացած էր Տիկին Արգարեանէն : Թէ Սիսակ կ'ուզէր իւր հետն ամուսնանալ, միմիայն հարստութենէն օգտելու և Արաքսիայի հետ յարաբերութիւնները շարունակելու համար. թէ Տիկին Արգարեան ունկնդիր եղած էր բոլոր իրենց խօսակցութեան, և ականատես իրենց անվայել վարմունքին. որով նոյն իսկ հետեւեալ օրն՝ որ կը յաջորդէր այդ ամօթալից գիշերուան, Տիկինը վանած էր զիւր վարժուհին և պատուիրած էր Սիսակի ոչ եւս իւր տան մէջ ոտք կոխելու :

Վարդանոյչ բառ չունէր արտասանելու այդպիսի վճռողական տեղեկութիւններէ վերջը : Մանաւանդ որ յիշեց այն տարտամ և բռնազբօսիկ պատճառարանութիւնքն որոնցմով կը պատասխանէր Արաքսիա մէն մի անգամ որ հարցուցած էր անոր՝ իւր յանկարծական մեկնելուն պատճառն Արգարեանց տունէն :

Երանեանց վշտահար աղջիկը կը կարծէր ճշդիւ ըմբռնել Արաքսիայի տխրութեան պատճառը, նա մանաւանդ երբ ապագայ երջանկութեանը վրայ կը խօսէր : Կը մտածէր կոյսն թէ տարակուսելու իրաւունք ոչ եւս ունէր երբ Տիկին Արգարեանի նման վկայ մի կար մէջտեղ :

Վարդանոյչ ամեն կարեկցութեան արժանի էր զի որչափ մօտ կարծեց ինքզինքն երջանկութեան, նոյնքան այդ հեռացաւ իրմէ : Մէկ հարուածով երկու

սէր կը ջախջախուէին, հաւատքը, յոյսը կը փշրուէին -
և կը մնար դէմ յանդիման հրէշային մատնութեան մի-
հանդէպ:

Ի պահանջել հարկին վարդանոյշ կրնար ըմբռնել
անհաւատարմութեան օրինակ մի Սիսակի կողմանէ,
զի այդ անկարելի ինչ չէր երիտասարդի մի համար:
Բայց խարուիլ բարեկամուհիէ մի զոր իբր քոյր նկա-
տած էր միշտ, զայդ չէր ըմբռներ նա:

Վարդանոյշ ոչ լացաւ և ոչ ալ յուսահատութեան
ցոյցեր տուաւ ի ներկայութեան այդ կնոջ. միայն թէ
յայտնեց մտադիր լինելն խզելու ամեն յոգ սիրոյ և
բարեկամութեան եթէ իւր կասկածները ցրուելու չի
յաջողէր: Սակայն որոշեց ոչինչ յայտնել ծնողացն թէ՛
Սիսակի և թէ՛ Արաքսիայի նկատմամբ, քանի որ եր-
կուքն ալ բացակայ էին, և մանաւանդ երբ Սիսակ
զինքն չէր խնդրած ի կնութիւն տակաւին: Նոյն լռու-
թիւնը պահանջեց Իսկուհիէն եւս այդ ցաւալի գէպքին
վրայօք:

Երբ կոյսն առանձին մնաց, սկսաւ լալ զսոսնապին
իւր կարծած կրկին մատնութեան վրայ: Յուսահա-
տութիւնը չափ չունէր նախ, բայց ապա սկսաւ մտա-
ծել թէ գուցէ Իսկուհին սխալ հասկնալով կերպարա-
նափոխ ընէր Տիկին Արգարեանի խօսքերը. զի կաս-
կածիլ սոյն Տիկինէն՝ մտքէն անդամ չէր անցներ,
քանի որ զայն ամեն յարգանաց արժանի կը համարէր,
երբ մանաւանդ Արաքսիա երբեք չէր չարախօսած
անոր վրայ:

Սակայն կասկածոտ անձանց յատուկ բերմամբ,
ուզեց այցելել ծնողաց Արաքսիայի, մտածելով թէ
գուցէ անոնց խօսքերէն յաջողէր աղօտ լոյս մ'ստանա-
լու պատահած մութ խնդրոյն վրայ: Եւ իրօք անմի-
ջապէս գնաց յայցելութիւն Վարսամեան ընտանեաց:

Տենդը զինքը գրաւած էր, քայլեց արագօրէն,
հասաւ տան դրան առջեւ, ուժգին ցնցեց զանգակը,
չուան մի քաշուեցաւ ներքնապէս, դուռը բացուեցաւ,
նեքս մտաւ աղջիկը փութով, դուռը գոցեց, վեր ելաւ,
և տեսաւ որ Պ. Վարսամեան առանձին էր, զի կինը
դուրս ելած էր:

Վարդանոյշ ուրախացաւ այդ գէպքէն, յուսալով
օգտիլ ձեռք մարդուն պարզմտութենէն: Բայց ի զուր
հարց ու փորձ ըրաւ, ի զուր մանրամասնութեանց մէջ
մտաւ, ոչինչ իմացաւ, ոչինչ հասկեցաւ, եթէ ոչ Արաք-
սիայի իւր անկեղծ բարեկամուհին լինելը:

Վարդանոյշ կարծես սիրտ առաւ ձերուհւոյն ան-
կեղծ խօսակցութենէն, և ոտք ելնելով հրաժեշտի ող-
ջոյնը տուաւ նմա և մինչ կ'անցնէր Արաքսիայի սե-
նեկին առջեւէն՝ գուցէ նախանձու գաղտնի զրդմամբ,
նեքս մտաւ առանց ի'նչ որոնելը գիտնալու. գնաց
մերձ խոնարհ գրասեղանին, նշմարեց, անդ այլ և այլ
գրեանք, ու անոնց մէջտեղէն գիտեց թէ նամակի մի
ծայրը դուրս կ'ելնէր: Սիրտ ի թունդ մօտեցուց զող-
ջոյնն ձեռքերն անոր, բացաւ, կարդաց, և քիչ մնաց
որ նուազէր:

Այդ թուղթն Տիկին Արգարեանի առ Արաքսիա
գրած նամակն էր: Կասկածանաց տեղի այլ եւս չէր
մնար ուրեմն, մտածեց հէզ աղջիկն, իւր զժբազդու-
թիւնը լիութիւն հաստատուած էր: Առաւ զայդ նամակ,
գրպանը դրաւ, և դարձաւ ի տուն, մահը հողուոյն մէջ
կրելով:

Ք Ն Ո Ւ Ն Ե Ն Ե Պ Է .

Երբ Իսկուհի հաղորդեց Տիկին Արգարեանի իւր յաջողութիւնը Վարդանոյշի քով՝ գրուածան կինը ցընծաց ի սրտէ : Եթէ ուրիշներն իրեն վնասելու զրաղեալ էին՝ գոնէ ինքն անոնց ջանքն ապարդիւն կ'ընէր : Իրապէս կործանելով զանոնք : Ուրիշներն իրմէ կը հեռացնէին իւր սիրահարն , և ինքն ուրիշներու սիրահարները կը հալածէր փոխադարձաբար : Ինքը լքեալ էր , է՞ր ուրեմն ուրիշներն եւս չէքուէին , կը մտածէր :

Չար հոգիները կը մխիթարուին այլոց թշուառութեամբ ու աղէտքներ բարդելով կը հրճուին : Ուստի Տիկին Արգարեան վայրենի գոհունակութիւն մի կը զգար , ցորչափ սիրոյ աւերներ կը զիզէր շուրջը :

Բայց ինչ որ զինքն անհունապէս կը բերկրեցնէր , մանաւանդ ապահովութիւնն էր Սիսակի շահախնդիր խորհուրդները կործանած լինելը : Երիտասարդը գոհած էր զինքն իւր շահուց , բնական էր ուրեմն որ ինքն եւս գոհէր զնա իւր վրէժխնդրութեան :

Վրիժառութեան գործադրութիւն այնպիսի սոսկալի և գազանային վայելք մի յինքն կը պարունակէ , որ այդ վայելքն դժուարաւ կրնայ գերադանցուիլ որ և է ուրիշ բերկրալից զգացում : Ուստի Տիկին Արգարեան կը յազնար վրիժառութեան պատճառած հաճութեամբն , և զինքը մաշեցնող տառապանաց մէջ դառն մխիթարութիւն մի կը վայելէր :

Այդ դժոխային սիրտանքէ իսկ զուրկ էր վարդանոյշ , զի ասանց վրէժխնդիր խորհուրդներ կազմելու , բնկզմեցաւ , յուսահատութեան անյատակ վիճին մէջ :

Որ և է խորհուրդ որոճալը մտաց և սրտի զբաղում մ'է դարձեալ : Բայց կատարեալ և լուռ համա-

կերպութիւնը բաղդին անողոքելի հարուածոց առջեւ՝ կը նշանակէ յանձն առնուլ ճաշակելու մինչ ցմբուր և ամենայն խղճմտութեամբ ցաւոց բաժակին մէջ մի դառնալից կաթիլը : Թուէր Վարդանոյշի թէ բնաւ փոյթ չէր իրեն նոյն վայրկենէն եթէ Արաքսիա կ'ամուսնանար կամ թէ չէր ամուսնանար Սեսակի հետ , քանի որ կը կարծէր թէ երկուքն ալ իրեն համար ոչ եւս էին :

Թէեւ կոյսն հաստատ որոշում տուաւ՝ մի անգամ ընդ միշտ հալածել երիտասարդին յիշատակն իւր սըրտէն , սակայն վաղ ընդ փոյթ զգաց թէ այդ որոշման գործադրութիւնը չէր ինչ այնքան դիւրին : Ի զուր կը ճգնէր ջնջել զայդ պատկեր ի սպառ իւր հոգիէն , բայց նա կենդանի և չքնաղ կը հանդիսանար իւր առջեւ որպէս միշտ :

Սրտի բռնութեան հաւասարող ուրիշ բռնութիւն մի կայ արդեօք : Անձն այն որ հոգւոյ արտասովոր արիութեամբն ի վեր քան զայդ զօրութիւն կը բարձրանայ՝ մարդկութեան մեծագոյն զիւցաղուններէն մին է . անշուշտ :

Սակայն չորրորդ շաբաթն՝ այսինքն Սիսակի յատկացուցած պայմանաժամը լրացաւ , և նա տակաւին չէր վերագարձած ի Պոլիս : Չգիտէր կոյսն թէ ուրախանար կամ ցաւէր անոր չեքեւալուն վրայօք : Եթէ երիտասարդը վերադառնար՝ անշուշտ Երանեան գուստրը մերժողական պատասխանաւն ամեն յարաբերութեանց վերջ պիտի տար իրեն և սիրահարին միջեւ , ու այդ մահու չափ ծանր կը թուէր իրեն , թէեւ ամբապինդ էր որոշմանը մէջ երբեք չներելու երիտասարդին :

Սիրաբ զարմանալի հակասութիւններ ունի որոնց անկարելի է թափանցել :

Բայց եթէ յանդէսս կ'ուրախանար Վարդանոյշ

երիտասարդին վերադարձին յապագման վրայ՝ միւս կողմանէ գծումբեր կասկած մի կուգար զինքը չարչարել. կը խորհէր թէ գուցէ Սիասկ յաջողած էր Արաքսիայի ուղեկից լինելու: Այդ մտածութիւնը զինքը մահու չափ կը չարչարէր երբ ողորմելի կոյսը կը կարծէր անտարբեր լինել երիտասարդի մասին:

Ո՞վ արդեօք կարողացած է մինչ իւր սրտին յանձնել իջնել և թափանցել անոր իրական վիճակին:

Գ Լ ՈՒ Ն Խ Ե Ծ.

Ներսէս Մանչէսթըր կը գտնուէր միշտ, հոն բազմադրակ կեանք մի կ'անցունէր, և անգուլ աշխատութեանց մէջ կը ճգնէր Արաքսիայի յիշատակը թաղել: Գործողութիւններէ գուրս պարապոյ ժամերն ուսման կը նուիրէր, գիտողութեանց անսահման գաշտին մէջ կը կորսուէր, կը հետախուզէր, կ'ուսումնասիրէր, կ'ուսանէր, և միտքը չարաչար յոգնեցնելով կը կարծէր սիրան հիւժեղ, և միանգամ ընդ միշտ անչարժութեան դատապարտել զայն:

Երիտասարդը կ'զգուշանար սակայն սրտին վիճակին վրայ որոշ գաղափար մ'ստանալէ: Դատապարտած էր զայն, առանց անոր դատը լսելու տրամադրութեան. ինք մահուան ենթարկած էր զիւր սիրտ իրօք, բայց պատճառ մ'էր արդեօք որ իւր սիրտը չբողբէր ու մեռնէր:

Ներսէս կը խաբուէր ինքզինքն ի սիրոյ բուժած համարելով. նոյն իսկ ճգունքն զոր կ'ընէր մտացն անընդհատ ճարակ մատուցանելու համար՝ ապացոյց մ'էր այն երկիւղին որով համակուած էր սրտին իշխանութեանն հպատակելու:

Արգարեանի որդին կը թղթակցէր իւր երկու փոքրիկ քոյրերուն հետ. այդ թղթակցութիւնը թէեւ հաճոյալից էր իրեն, վասն զի անկեղծ և սիրայորդ զգացմանց արտայայտութիւնը կը տեսնէր հոն, միւս կողմանէ իւր աննպաստ կողմն եւս ունէր. զի տղայք՝ որոնց սրտին մէջ վառ մնացած էր իրենց վարժուհոյն գաղափարն, ամեն անգամ անոր վրայ կը խօսէին անմեղ հոգւոյ մի մասնաւոր գորովանօքն և խանդիւր: Զյիշատակ անցեալ օրերու կը զարթուցանէին Ներսէսի մտաց մէջ, յիշատակելով այն բարերաստ ժամանակն ուր իրենք երջանիկ կ'ապրէին երկու սերելեաց ընկերակցութեամբ:

Երիտասարդ Արգարեանը կը յուզուէր, ընթեռնելով զայդ տողեր, և այդ յուզումն առաւել արգահատական զգացում մի կը համարէր քոյրերուն նկատմամբ քան թէ վաղեմի համակրութեան մի հետքը: Բայց սա ստոյգ է որ տղայոց նամակները միշտ տըլբախառն գոհունակութիւն մի կ'ազդէին իրեն, որում կը յաջորդէր զգալի սելամազճոտութիւն մի:

Ներսէս խոյս կուտար ընկերութենէ և ամեն երիտասարդական հեշտութիւններէ: Զինքն իբր իբր վայրենի անձ մի կը նկատէին ի Մանչէսթըր, թէեւ ամենուրեք իւր գործունէութիւնը կը գովէին և իւր յաջողակութիւնը՝ խորհրդոցն ու անոնց գործադրութեան մէջ:

Երիտասարդը կը յառաջդիմէր, ապագայն զգալի կերպիւ կը բաւոքէր, իւր անձնասիրութիւնը գոհ կը լինէր, նկատելով զարդիւնքն աշխատութեան, բայց իւր սիրտն օտար կը մնար այդ գոհունակութեան: Բանի մ'ամիս առաջ փափաքող էր Ռոչլիւի հարստութեան. բայց նոյն պահուն սիրտը նպատակ չունեալով՝ բազդին խորթ գաւակը կը համարէր ինքզինքը:

Արաքսիա կամ վարժուհին



կեանքը կը նկատէր իբր բռնաւոր տէր մի որում ծառայելու պարտաւորած էր, գասալիք չլինելու համար: Թուէր իրեն թէ պիտի սկսէր ապրիլ նոյն վայրկենէն որ մահուան զանգակն հնչէր ականջին: Դառնութեամբ կը նայէր կենաց, սրտին գատարկութենէն կը գանգատէր, երբ բնզհակառակն սիրայորդ էր այն, և երբ զիւր անձ մեռած կը համարէր սիրոյ համար, չգիտէր թէ կենդանութեամբ լի էր տակաւին:

Արաքսիա իւր կողմանէ կը տառապէր, զի կ'իմանար թէ ինքն թիւրիմացութեան խզճալի գոհն էր եղած: Կը յուսար տակաւին, զի վստահ էր իւր սիրեցեայ անձին ազնիւ զգացմանց վրայ. բայց սոսկալի կասկած մի կը նեղէր զինքն. այն էր թէ գուցէ Ներսէս նուիրէր վերջապէս զիւր սէր ուրիշի, իւր անմեղութեան վրայ անտեղեակ մնալով: Եթէ այդ զէպքը պատահէր, մտազիր էր նա ծնողացը նուիրել ամբողջ իւր կեանքն, առանց որ և է ուրիշ ամուսնութեան խորհուրդ բնելու:

Գ Լ Ո Ւ Խ Ե Խ Զ.

Տիկին Հարթմանեան՝ որում կ'ուղեկցէր Արաքսիա, վայելչագեղ անձ մ'էր, ազնիւ հոգի մի, պատուակիր և զգայուն արարած մի: Կը սիրէր հոգեով չափ ամուսին մի որ պարտազանցութիւնը քողարկելու բնաւ փոյթ չէր բներ: Ծնորհալի մանկամարդը չէր գանգատեր, այլ սիրտը կ'արիւնէր լսին և մարմինը կը վատթարանար զգալի կերպիւ: Բժիշկներն յորդորած էին զարտաբեկ տիկինը ճանրորութիւն մը բնելու, նա հեռացած էր ամուսինէն՝ սէրն ու վիշտն հետը տանելով:

Տիկին Հարթմանեան և Արաքսիա կապուեցան իրարու այն համակրանօք որ տեղի կ'ունենայ երկու վշտահար հոգիներու միջեւ: Երկուքն ալ իրենց տառապանաց վրայ խօսելէ կ'զգուշանային, բայց երկուքն ալ փոփոխակի իմացան թէ բախտէն հալածեալի մի ընկերացած էին:

Յաւը լուռ պերճախօսութիւն մ'ունի զոր շուտ կ'ըմբռնէ սղահար սիրտ մի: Ուստի երկու կանանց մէջ կարծես սգոյ համերաշխութիւնն հաստատուեցաւ, իրարու համար արգահատութիւն ունեցան, թէեւ իրենց գաղտնիքն իրարմէ պահեցին:

Եւրօպիոյ գլխաւոր մայրաքաղաքաց կ'այցելէին մեր երկու երիտասարդուհիք, այլ և այլ առարկայներ կը տեսնէին, կը զննէին, կը զարմանային, բայց ամեն ինչ անոնց համար սեւով նկարուած էր կարծես:

Հասան Լոնտոն ու հո՛ն Արաքսիա մասնաւոր յուզմամբ գրաւուեցաւ, գիտնալով իւր մերձաւորութիւնը Ներսէսի: Կը խորհէր թէ բողբոջ գուցէ զերթիտասարդն իւր ճանբուն վրայ կը զննէր, և թէ ինքն ուղղակի առ այն երթալով կը յաջողէր ինչպիսիքն արգարացնելու: Բայց ի գուր շուրջը կը նայէր, ի գուր հոգին կը տրոփէր երբ հեռուէն իւր պաշտած անձին նմանող մէկը կը նշմարէր. Ներսէս ոչ ուրեք էր, պատրանք:

Բուռն անձկութենէ մղեալ՝ Արաքսիա վայրկեան մի յօժարութիւն ունեցաւ յայտնել Տիկին Հարթմանեանի իւր հոգեւոյն գաղտնիքն, և խնդրել անկէ որ մինչև Մանչէսթըր ուղեւորին. վստահ էր որ իւր ազնուամիտ տիրուհին կը կատարէր իւր բաղձանքն, յենունով այն համերաշխութեան վրայ որ վշտակիր քոյր հոգիներու միջեւ կը տիրէ. բայց մտածեց թէ գուցէ Ներսէս ոչ եւս կը գտնուէր ի Մանչէսթըր, և եթէ էր տա-

կաւին, երկիւղ զգաց հաշտութեան փորձն ապարդիւն մնալուն վրայօք, որով իւր արժանապատուութիւնը մեծ հարուած մի կ'ընդունէր տիկնոջ առջեւ:

Արժանապատուութեան վերաբերող փափուկ խընդիրներ կան, զոր մարդ ոչ միայն այրոց կը դժկամակի յայտնել, այլ եթէ կարելի լինէր՝ անձէն իսկ կը ծածկէր:

Մինչ կը տատանէր Արաքսիա այդ առաջարկն ընելուն կամ չընելուն վրայ, ահա Տիկին Հարթմանեան որ հազիւ շաբթուան մի այցելութենէ վերջը, Լոնտոնի հրատեչտ տալու դիտաւորութիւնն յայտնեց, առարկելով սոյն մայրաքաղաքին չար ներգործութիւնն իւր առողջութեանը վրայ:

Ամեն յոյս մեռած էր ուրեմն Արաքսիայի համար. ու վայրկեան մի ներսէսի հետ հաշտութեան յոյսն աչացը փայլելէն վերջը մթազնեցաւ վերստին:

Անգլիոյ մայրաքաղաքին մէջ ամեն ինչ ահագին զղրղում և կենդանութիւն է. բայց Արաքսիայի թուէր ընդհակառակն թէ բոլորովին ամայութիւն էր իւր շուրջը: Հեռի էր իրմէ իւր պաշտած անձն, որով զուրկ էր կենսական տարրէն:

Գ Ա Ո Ւ Խ Ե Թ Է.

Յետ արձակման Արաքսիայի՝ աւելորդ համարեց Տիկին Աբգարեան հայ լեզուին ուսմունքն յառաջ վարել իւր որդւոց համար, քանի որ կը համարէր հայերէնն իբր մեռեալ բարբառ մի, որ օգտակար կրնար լինել միայն վարժապետի պաշտօնը վարելու սահմանւած անձանց, և ոչ թէ ընկերութեան մէջ փայլելու վիճակուած մեծատոհմ օրիորդաց. զի ըստ Տիկին Աբ-

գարեանի, կը բաւէր հարուստ լինիլ, տոհմային ցեղի մի բոլոր յաւակնութիւններն ունենալու համար: Ուստի գաղղիացի դասատուի յանձնեց իւր երկու աղջըրկանց գաղղիերէն սորվեցնելու հոգն, ինչպէս գերման վարժուհւոյ մի՝ գանոնք կրթելու և անոնց մօտ ապրելու պաշտօնն:

Գերմանուհին հասակաւոր աղջիկ մ'էր, անախորժ ու ցուրտ արարած մի, որ ոչ այլ ինչ գիտէր բայց մեքենայի ճշդութեամբ յառաջ վարել կեանքն, իբր թէ պարզ նիւթական գործիք մի լինէր այն: Հազուուէլու, քայլելու, խօսելու և գործելու եղանակն, ամեն ինչ մէկ խօսքով, կարծես կարկինով չափած էր: Երբեք չէր յայտներ յանկարծական բաղձանք մի, պէտք մի, խնդութիւն մի, տխրութիւն մի: Իւր կիրքերն այնպէս կարգադրած թուէր լինել որ միշտ չափաբերական ճշդութեամբ կը շարժէին առանց իրենց ընթացից մէջ անկանոն շարժում մ'ընելու: Բաց ի դասախօսութեան ժամանակէն, բառերը խիստ սակաւաթիւ էին, և բերանը կը բանար միայն երբ հարկը պահանջէր, դիտողութիւն մ'ընելու և կամ պատուէր մի տալու համար:

Այդ հասակաւոր աղջիկն երբեք գորովոյ բառ մի չունէր տղայոց համար. կարծես զինուորական մ'էր որ զօրացն հպատակութեան և ճշդութեան ակնդէտ էր միայն:

Տարիքոտ աղջիկները՝ գոզցես չեն ներեր ուրիշ կանանց իրենց ամուսնական և մայրական երանուկութիւնն, ու ինքզինքնին արհամարհած համարելով ոչ մէկու մ'ուշագրութիւնն ու սէրը գրաւած չլինելուն համար, իրենց դառնութիւնն ընկերութեան վրայ կը ժայթքեն, ու այնու եղանակաւ իրենց վրէժը կը լուծեն:

Յետ սրտագրաւ վարժունքին Արաքսիայի՝ դժուար էր տղայոց հաշտ աչօք նայիլ և առանց զգածուելու իրենց նոր վարժուհւոյն խիստ ձեւերուն: Բայց խեղճ արարածները բնաւ համարձակութիւն չունէին իրենց մօր գանգատ մ'ընելու գերման վարժուհւոյն խստութեան վրայօք, քանի որ մէն մի անգամ որ Տիկին Արգարեան իւր գծգոհութիւնն ուզէր յայտնել մանկանց, կ'ըսէր. «Անշուշտ Արաքսիայի նման բնաւորութեամբ թոյլ վարժուհի մ'ունենալնուդ համար է որ անկիրթ եղաք:»

Թող թէ Տիկին Արգարեան անտարբեր էր գիտնալու թէ ո՞ր եղանակաւ կը վարուէր վարժուհին իւր զաւակացր հետ, այլ եթէ նոյնիսկ ճանաչէր խստութիւնն գերմանուհւոյն, գո՞հ կը լինէր մանաւանդ, զի այնպէս կը մտածէր թէ տղայք խարազանաւ կը կըրթուին և ոչ թէ քաղցրութեամբ: Մանաւանդ որ մասնաւոր գոհունակութիւն մ'ալ ունէր նոր վարժուհւոյն նկատմամբ, այն էր անոր տղեղ և հասակաւոր լինելն, որով ի նա դարձեալ նախանձորդ մի գտնելու երկիւղէն ազատ էր:

Բայց Աղաւնի իբր փափուկ տունկ որ պէտք ունի արեղական ջերմութեան, կը գունատէր ու թարմութիւնը կը կորսնցնէր այդ կնոջ ստոած շունչին ներգործութեամբ: Արաքսիայի սիրալիր և ջերմ մթնալորտին շնորհիւ աղջիկն աճած էր և բարգաւաճած. այդ կենսատու մթնալորտէն զրկուելով՝ գլուխը ծոած ակնկոր կը քայլէր կենաց մէջ:

Արմինէ թէեւ ցաւ կ'զգար Արաքսիայէն հեռանալովն՝ այսու հանգերձ ոչ իւր գուարթութիւնը կը կորսնցնէր, և ոչ ալ իւր աւողմութեան վնաս կը հասցընէր: Փոքրիկը կը համակերպէր ամեն վիճակի, կ'երգէր, կը խայտար, կը ցատքուէր, որչափ որ կարելի էր խիստ հրամանատարութեան ներքեւ:

Չզայուն բնութիւնները քան գտնորական կազմութիւններն աւելի կ'զգան զամեն ինչ, և մանաւանդ վիշտը: Ճաւը վայրենի ու դառն հաճոյքներ ունի որ գոգին պեղելով կը հրճուեցնէ: Տառապանքն ունի իւր բանաստեղծութիւնն ինչպէս և ուրախութիւնը: Մին այնանային մութ գիշերուան եղերերգն է. միւսը գարնանային լուսազարդ և զեղեցկաբոյր է. առաւօտեան գուարթ երգն է: Խաւարն ունի իւր խորախորհուրդ և մութ նշտութիւնն, ինչպէս լոյսն ունի իւր սրտագրաւ և ուրախալից վայելքն: Առաջինն առաւել դժուար ըմբռնելի է, զի փափուկ և զգայուն հոգիներու առանձնաշնորհութիւնն է. մինչ միւսը ամենուն զիւրամատչելի է:

Աղաւնին կը մաշէր իւր նախկին վարժուհւոյն կարօտիւ. բայց ապահով էր թէ անհնար էր տեսնել զնա, քանի որ մայրը բացարձակ հակառակութեամբ կը խօսէր անոր դէմ: Գո՞նէ եթէ եղբայրն ունենար, բայց անկէ եւս զուրկ էր: Ուստի այդ կանխահաս մանուկն յինքն ամփոփուելով՝ տառապանաց գպրոցին տարիքին սեպհական անտարբերութեամբ կ'ապրէր:

Աղաւնին հասուն աղջիկն էր որ կը մտածէր, կը խորհէր, կը ցաւէր ու կը համակրէր: Արմինէն տղայութիւնն էր իւր անհոգութեամբն և աշխուժիւր. տղան չափահաս մտաց բարձրութեան չի հասնիր երբեք: Հետեւապէս Աղաւնին կը թողուր իւր քրոջ խինդն, աղմուկն և գոհունակութիւնն, անձին վերապահելով կարօտն ու սուգը:

Մելամաղձոտութիւնը գրաւեց զԱղաւնին և հետորդհետէ զօրանալով, տկարութիւնն յաջորդեց մելամաղձային այդ վիճակին, բայց վարժուհին իւր խըստութեանը մէջ ամփոփուելով տղուն կացութիւնը

բնաւ չէր նշմարեր: Իսկ Տիկին Աբգարեանի գալով, ուշադրութիւն անգամ չէր ըներ: Եւ երբ իւր ամուսինը, ճշմարիտ հօր մի անձկութեամբ, ահով կը յայտնէր զաւկին վտտիլը, Տիկինը կը պատասխանէր թէ Աղաւնի ոչինչ ունէր, և թէ տղայք աչնան ժամանակ ենթարկուած են այլ և այլ թեթեւ անհանգրստութեանց:

Աղաւնի եղբօրն ոչինչ գրած էր իւր վիճակին վրայօք, մտածելով թէ նա դառն կասկածանաց կրնար մատնուիլ: Եւ սակայն Ներսէս միակ անձն էր որ զինքը կրնար հասկնալ ու իւր պէտքը լրացնել: Այսպէս ուրեմն կը ցանուէին սերմունքն հիւժող հիւանդութեան մի որ աղիտաբեր պիտի լինէր շնորհալի մանկան:

Գ Լ Ո Ւ Խ Թ Ը.

Գրեթէ երեք ամիսներ յաջորդած էին Սիսակին յատկացեալ պայմանաժամին, և երիտասարդը տակաւին վերադարձած չէր ի Պոլիս: Ի՞նչ հանդիպած էր նմա:

Փոքր Ասիոյ կողմերը գաւառացի մը գատ մ'ունէր ու այդ գատ գնացած էր շահիլ Սիսակ:

Գաւառացի Պ. Գրիգորը զիւր փաստաբան ընդունեց մասնաւոր մեծարանօք ու հիւրընկալեց զնա իւր տան մէջ, հաշուելով թէ մեծարանաց սաստկութիւնը կրնար նպաստել դրամ հատուցանելու մասին նուազ առատաձեռն լինելու:

Պ. Գրիգոր հասակաւոր այրի մարդ մ'էր որ իւր երրորդ կնոջմէն միայն զաւակ մ'ունեցած էր. բայց աղուն ծնունդը մօրը մահը պատճառած էր:

Պ. Գրիգոր իրեն հասակակից այրի քրոջը յանձնած էր որդւոյն իննամատարութեան պաշտօնն իւր տան մէջ. ու մանուկն աճեցաւ այնպիսի զեղով, որ շնորհաց իրը հրաշալիք կը ներկայանար երբ տասն և հինգ տարեկան էր՝ այսինքն նոյն ժամանակին ուր Սիսակ զինքը տեսաւ առաջին անգամ, գաւառացւոյն հիւրը լինելով:

Բազում փեսայացուներ ինդրած էին զօրիորդն ի կնութիւն, բայց Պ. Գրիգոր մերժած էր զամենքն ալ, մասնաւոր նպատակ ունենալով իւր դուստրը բազդակից ընելու այնպիսի մարդու մի՝ որուն փայլուն վիճակէն ինքը կարենար մեծ շահեր ակնկալել: Այդ մարդը միակ զլիսաւոր նպատակ մ'ունէր երկրիս վրայ՝ պատուութիւն, զամեն ինչ կը զոհէր իւր արծաթապատուութիւն, զամեն ինչ կը զոհէր իւր արծաթապատ ճաշակին: Միշտ այլոց զէմ գատ բանալու առիթ կը փնտռէր, ու չկար որ և է միջոց զոր արձամարձէր, իրաւունք ստանալու համար:

Ահա բաւական մեծ գումար մի վտանգի ենթարկած էր նոյն պահուն, ու մեր գաւառացւոյն հակառակորդն ազդեցութեամբ զօրաւոր մարդ մի լինելով, Պ. Գրիգոր խոհեմութիւն համարեց յանձնել զիւր գատ պոլսեցի փաստաբանի մը ճարտարութեան, ու այդ նպատակաւ Պոլսոյ ծանօթներէն ինդրեց մի մասնապէտ՝ այնու պայմանաւ սակայն որ պահանջումները չափաւոր լինէին:

Սիսակ յանձնարարուեցաւ ուրեմն Պ. Գրիգորի, ու ներկայացաւ նմա իր օրինաւոր փաստաբան, ձեւերն առնելով անձի մի որ վտտահ էր ըրածին վրայ, ու տեղեակ արուեստին ամենայն նրբութեանց:

Մեր փաստաբանն այն ինչ տեսաւ զերիտասարդուն հին, շլացաւ անոր զեղեցկութենէն ու մտադիր

կղաւ գրաւելու զայն : Գծուարին փորձ մի չէր անոր համար երբ գեղեցիկ սեռն որսալու արուեստին մէջ նշանաւոր հանդիսացած էր, նա մանաւանդ որ անմեղ ազջիկ մի գլխէ հանելու վրայ էր խնդիրը :

Իրօք հագիւ երկու շաբաթներ անցած էին, ու անփորձ գեղանին սինարութեան ալեկոծութեան մէջ անկամ էր արդէն : Սիսակ խոստացաւ անոր հեռն ամուսնանալ, ու յայտնեց թէ մասնաւոր պատճառներու համար հարկադրած էր նշանտուութիւնն յետաձգելու : Առանց դժուարութեան հաւատացուց ազջկան թէ ամեն ջանք պիտի ընէր փութացնելու իրենց ամուսնութիւնն, և թէ ընդ փոյթ յաջողելու համար իւր գազտնապահութեան կը կարօտէր :

Անփորձ արարածն ոչ միայն խոստացաւ իրմէ պահանջուածն, այլ անխիղճ երիտասարդին սիրոյ թակարդին մէջ անկաւ ամբողջապէս :

Իսկ Սիսակ մոռցաւ թէ իւր պայմանաւորութեամբ լրացած էր ի Պոլիս. մոռցաւ իւր շահերն, և այն բուռն եռանդեամբ և ծայրայեղութեամբ որ յատուկ էր իւր անասնձ բնաորութեան, սիրոյ ազմկալից կենաց մէջ թաւաբեցաւ գլխիկոր : Բայց ինչպէս ամեն կիրք որ չափազանց է՝ Սիսակի տրփանքը շատ շուտ սպառեցաւ : Եւ երբ զլաց թէ իւր բողձանքներն յագեցած էին, երկարածգած գատը փութաց յաջողութեամբ աւարտել, և իրեն խոստացուած չափաւոր գումարը ստանալէն վերջը նոյն իսկ անոր ձեռքէն որուն ի փոխարէն ազջկանն անպատուութիւնը կը թողուր, բնդ փոյթ վերադարձի խոստմամբ ու յարատեւ ուէր խոստանալով գեղանուոյն, մեկնեցաւ Սիսակ, արատուք և սուգ թողլով իւր քմահաճութեանց զխրախարհ գոհին :

Անխիղճ մարդիկ կան որք սրտերու հետ կը խա-

զան ինչպէս ազալք իրենց խաղալիքներուն հետ, զորս քիչ ժամանակ վայելելէն վերջը, կը ջախջախեն մէկ կողմ նետելով, զնորանորս ստանալու ակնկալութեամբ :

Սիսակ այդ կարգի մարդկանց տխուր պատկերն էր. միայն իւր շահն և հաճոյքը կը ճանաչէր, անփոյթ այն ազետից զորս իւր քմահաճ և վաղանցուկ կիրքերը կրնային յարուցանել : Իւր մէկ վայրկեանական հեշտութեանն համար մշտապէս արտասուաց ազրիւր մի բանալու բնաւ խիղճ չէր բներ :

Գ Լ Ո Ւ Թ ԹԹ.

Առաւել քան երեք ամիսներ սահած էին երբ Արաքսիա վերադարձաւ ի Պոլիս յետ իւր ուղեորութեանն յերոպա, առանց իւր բարոյական վիճակը փոփոխութիւն կրած և առանց մասնաւոր ուշադրութեան դէպք մի պատահած լինելու :

Արաքսիայի համար ամեն կարեւորութեան արժանի նիւթ յանձին ներսէսի բոլանդակուած էր. քանի որ անոր չէր հանդիպած, իւր ճանրորդութիւնն ոչ այլ ինչ նպատակ ունեցած կը լինէր, եթէ ոչ ծնողացը նիւթական պիտոյքն հայթայթած լինելու գոհունակութիւնն, և բարեկամուհի մի շահած լինելու զիտակցութիւնն յանձին ազնուասիրտ Տիկին Հարթմանեանի :

Արաքսիայի վերադարձին օրն իսկ Սիսակ պատահմամբ ի մայրաքաղաքս կուգար, քաջայոյս լինելով ծածկել սուտով մի յաջաց վարդանոյշի իւր երկար բացակայութեան պատճառը :

Մարդիկ կան որ ոչ միայն խարէութեան մէջ

ամօթ չեն տեսներ, այլ ընդհակառակն ճարպիկութիւն կը համարին այդ անարդ միջոցաւ յաջողիլ:

Իսկ Վարդանոյշի գալով, վշտահար աղջիկն որ վիրաւորեալ էր իւր արժանապատուութեան մէջ, յուսաց զիւրաւ բուժիլ անարժան սիրոյ մարտիրոսութենէն: Բայց նկատելով իւր անկարողութիւնը՝ ջրնջելու զիւր հոգին գրաւող յիշատակը, սկսաւ վհատիլ, հիւժիլ, տկարանալ, և վերջապէս այնպիսի յուսահատ կացութեան մէջ անկանիլ մինչեւ ամեն բժշկական ջանքերն ապարդիւն թողլու:

Պարոն և Տիկին Երանեան անհուն մտատանջութեան մատնուած էին, ու գորովագութ ծնողաց յատուկ սրտայուզութեամբ կը տանջուէին: Իրենց զբոստեր հիւանդութիւնը Միսակի բացակայութեան վերադրելով, մեծ անհամբերութեամբ անոր վերադարձին կը սպասէին: Մանաւանդ որ ոչինչ զիտէին ո՛չ Միսակի ո՛ւր գտնուելուն վրայ, ո՛չ իրենց զտեր զբժոյցութեան մասին երիտասարդին նկատմամբ, և ո՛չ անոր հետ չամուսնանալու խորհրդոյն վրայ:

Վարդանոյշ ամեն ինչ ծածկած էր ծնողքէն, հարկ եղած ժամանակն իմացունելու համար անոնց թէ ոչ ևս յօժարամիտ էր իւր փափաքած ամուսնութիւնն ի կատար հասցնելու, ատանց սակայն յայտնելու անոնց այն մատնութիւնն որուն զո՞հ եղած լինել կը կարծէր, զի կ'ամջնար խոստովանելու թէ խաղաղիկ եղած էր այն բարեկամուհւոյն իսկ զոր ոգուով չափ պաշտած էր, ինչպէս և այն սիրահարին որում ամէն ինչ զոհելու պատրաստ էր:

Սիրոն ունի իւր արժանապատուութիւնն, և պարտեալ կը թուի երբ պատրանաց կ'ենթարկուի:

Բայց Վարդանոյշին վիճակն օր աւուր այնպէս ծանրացաւ որ աղետալի վերջի մի սպասել կուտար:

Թէև անկողնոյ չէր ծառայեր, սակայն գրեթէ անկարող էր նստարանէն վար իջնել առանձինն, ու նիհարութեան սոսկալի աստիճանի հասած էր:

Արաքսիա իւր կողմանէ կը շարունակէր ծածկել ծնողքէն ամուսնութեան յոյսերուն տապալումը, խնայելով անոնց ծերութեան, մանաւանդ լաւ գիտնալով թէ հօրը մարտիրոսութիւնն անմիջապէս պիտի սկսէր, իւր կնոջը դառնութեան նշաւակ լինելով, այդպիսի դժբախտ պատահարի մ'առթիւ:

Արաքսիա հարց ու փորձ ըրաւ Երանեան ընտանեաց ինչպէս և Միսակի վրայօք: Այս վերջնոյն բացակայութեանն երկարածգուելու մասին զարմանք յայտնեց, ինչպէս և ցաւ՝ Վարդանոյշի կացութեանը վրայ: Իւր վերադարձին հետեւեալ առաւօտուն գնաց փութով այցելելու զհիւանդ բարեկամուհին զոր կատարելապէս կը սիրէր միշտ, թէև պատճառ էր իւր աղէտից, իբր մայր որ ներելով իրեն տաղնապ հասցնող զաւկին, ներքնապէս կը ցաւի այլ լիովին կը պաշտէ:



Պ Լ Ո Ւ Ս Մ.

Երբ Արաքսիա մտաւ Վարդանոյշի սենեակն ուր նա առանձին էր նոյն միջոցին, սաստիկ սարսափեցաւ անոր զիմական փոփոխութենէն, և առ այն ընթանալով թեւատարած, փորձեց գրկացը մէջ առնուլ զայն, երբ հիւանդ աղջկան խիստ շարժումն ու խոժոռ նայուածքը կասեցուց զինքը կեցած տեղին վրայ:

— Ի՞նչ է այդ դժոհ՞ ձեւդ, Վարդանոյշ, ըսաւ, Արաքսիա կատակի եղանակաւ, զուրս երթալով մոռցուեցա՞յ արդեօք:

Եւ երբ կրկին անգամ Արաքսիա մերձեցաւ Նիւանդին՝ զինքն սղջագութեամբ համար, դառնացած աղջիկը նոյն դժգոհ կերպարանօք գլուխն ետ քաշեց, առանց բնաւ կարենալ բառ մ'արտասանելու, այնչափ յուզեալ էր ի տես արարածին զոր կը կարծէր իւր երջանկութեան աւերիչը:

Յայց Արաքսիա նկատելով որ Նիւանդն ոչ միայն կատակ չէր ըներ այլ ընդհակառակն խիստ զգածուած կը թուէր, հարցոց պատճառն այդ ցուրտ բնորոնելու թեան, ըսելով.

— Վարդանո՛յշ, դքեզ ոչ եւս կը ճանաչեմ սառնապատ ձեւերուդ ներքեւ:

Աղջկան կռքձքին խիստ զգալի ելեւէջներն ու լուծիւնը շատ իսկ կը յայտարարէին իւր ներքին վիճակին անձկութիւնը:

— Կը թախանձեմ քեզ, սիրելի՛ս, յարեց Արաքսիա աղերսագին, հանգարտէ՛ և պատմէ ինձ շուտ զրժգոհութեանդ պատճառը:

Հիւանդը դատն ժպտով մը միայն պատասխանեց.

— Կարդանո՛յշս, ըսաւ Արաքսիա, ի՞նչ ունիս, ի՞նչ եզար, ինչո՞ւ կը ծածկես ինձմէ՛, ունեցածդ, միթէ ո՞չ եւս եմ քու բարեկամուհիդ:

Վարդանոյշ դառնալից նայուածք մ'ուզելով իւր ընկերուհեանքն և ձայնով մի որ սրտմտութենէ կը դուրս գար, գոչեց.

- Դո՛ւ, բարեկամուհի՛ս:
- Յայց ի՞նչ եմ, եթէ ոչ մտերիմդ և քոյրդ:
- Դո՛ւ:
- Չեմ հասկնար, խօսէ՛ բացարձակապէս:
- Խօսի՛մ:
- Այո՛, խօսէ՛, կը խնդրեմ:

— Կը ներեմ քեզ, ա՛նա խոտովանութիւնս:

— Կը ներե՞ս, գոչեց Արաքսիա, բարկութեամբ կարմրելով, բայց դու ի՞նչ բանի կը ներես արդեօք:

— Երջանկութեան բաժակիս կուլ տուած լինելուդ համար:

— Վարդանո՛յշ, խնդրեմ, որոչապէս խօսէ, սչինչ կը հասկնամ:

— Հարցուր խղճիդ և այն կը պատասխանէ քեզ:

— Խղճի՛ս:

— Այո՛, խղճիդ:

— Գուցէ ուրիշ մ'իրաւունք ունենայ խղճիս գիմելու, բայց ոչ դու, Վարդանո՛յշ:

— Ո՛չ երբեք ուրիշի փնտսելիք որչափ ինձ:

— Գուցէ կը մեղադրես զիս շատ խղճովին քեզ ծառայած լինելու համար:

— Խղճովի՛ն:

— Յայց դու կը մեղադրես զիս առանց յանցանքս յայտնելու, ուստի ես ոչ եւս կը պատասխանեմ քեզ, յանցաւորի զիրք մի կուտաս ինձ երբ յանցանքս գուցէ դքեզ շատ սիրելիս է:

— Չարմանալի սէր որ մահս կը պատճառէ սակայն:

— Ե՛ս, քեզ մահ կրտամ, Վարդանո՛յշ, խօսէ, զի ընդհակառակն դու մահ կուտաս ինձ այս վայրկենիս:

— Կ'զգամ թէ կեանքը խոյս կուտայ ինձմէ, և չեմ ուզեր մեռնիլ, ատելութիւնս հետս տանելով:

— Ո՛հ, խնդրեմ, բարեկամուհիս, յայտնէ ինձ զամեն ինչ, ոչ եւս կրնամ համբերել այդ խօսելու եղանակիդ:

— Արաքսիա, երջանկութիւնս յափշտակեցիր, զիս խարեցիր, բայց երջանիկ եղիր Սխալիդ հետ:

— Ե՛ս երջանիկ լինիմ Սխալիին հետ. ի՞նչ կ'ուզես ըսել, ըսաւ Արաքսիա այլագուհեւրով:

— Կ'ուզեմ ըսել որ մինչ դու ինձ համար աշխատիլ կը ձեռացնէիր, քու հաշւոյդ համար կը գործէիր:

— Ե՞ս:

— Այո՛, դու, զՍիսակ ինձ տալ կը ձեռացնէիր՝ զայն լաւ եւս քեզ պահելու զիտաւորութեամբ:

Ահաքսիա ոչ եւս կարողանալով տոկալ անիրաւ յանդիմանութեանց, գլուխն ձեռացը մէջ առաւ և սկսաւ լալ ողորմագին:

Նոյն միջոցին Տիկին Երանեան ներս մտնելով զարմացաւ այդ վիճակին մէջ տեսնելով զԱրաքսիա, և կասկածելով թէ Վարդանոյշի վիճակն էր պատճառն այդ յուզման, ըսաւ այլայլութեամբ իմն զոր ի զուր կը ջանար ծածկել:

— Ինչո՞ւ կուլաս, Արաքսի՛աս, Վարդանոյշնիս՝ փա՛ռք երկնից, կարծածիդ չափ հիւանդ չէ, ու գայն բազկացը մէջ առնելով՝ բարի գալուստ մաղթեց անոր: Եւ հիւանդին յուզեալ ձեւը նկատելով՝ ջանաց հանգարտեցնել զայն, և ապա ամենայն զգուշութեամբ իմացուց թէ Սիսակ եկած էր իրմէ լուր առնելու:

Վարդանոյշ կարծես պիտի նուազէր այդ լուրն իմանալով, բայց Արաքսիա որ ոչինչ գիտէր երիտասարդի մասին, զայդ իբր երկնային շնորհք համարեց, և արտաքոյ կարգի այլայլութեամբ ըսաւ:

— Տիկին, հաճեցէք իմացնել Պ. Սիսակի որ անմիջապէս հոս գայ:

Վարդանոյշ անկարող էր դէմ գնել այդ հրաւերին, մանաւանդ որ կը փափաքէր անհունապէս զերիտասարդը տեսնել, կասկածներն հաստատելու կամ ցըրուելու մտօք:

Բայց զգուշաւոր մայրը վախնալով որ Սիսակի ներկայութիւնը կրնար նոր յուզում պատճառել աղ-

ջկանը, տեղացը չէր շարժեր, այլ անձկանօք հիւանդին մօտ կեցած, անոր երեսը կը նայէր:

Զայս զիտելով Վարդանոյշ՝ իւր մօրն անհամբերութեամբ ըսաւ:

— Մա՛յր իմ, հաճէ Պ. Սիսակի իմացնել որ Արաքսիա զինքը կը խնդրէ:

Վաղեմի վարժուհին լիովին զգաց այդ ակնարկութեան խտուրթիւնը, բայց ոչինչ պատասխանեց:

Հեռացաւ Տիկին Երանեան և յայնժամ Վարդանոյշ հարցուց:

— Խոստովանէ՛, Արաքսիա, միատե՞ղ ձամբօրդ եցիր:

— Ո՛հ, դուչեց գատապարտեալ կոյսն, որչա՛փ անիրաւ ես դու: Աստի մեկնելէս ի վեր չեմ տեսած զինքն, և իւր վերադարձն անգամ կ'անդիտանայի:

— Կա՛ւ, լա՛ւ:

— Բայց ըսէ, Վարդանոյշ, ո՞ր սատանն ազդեց քեզ այդ զժոխային կասկածներն, ի՞նչ է անուշ:

— Այդ իմ գաղանիքս է, պատասխանեց հիւանդը, մինչ ակնդէտ դրան՝ անհամբերութեամբ Սիսակին կը սպասէր, և յանկարծ Արաքսիայի գառնալով, ըսաւ նախանձու զգացմամբ:

— Գուցէ եկաւ զքեզ տեսնելու:

Եւ մինչ Արաքսիա՝ բուռն դառնութեամբ համակուած, իբր արձամարհեալ արժանապատուութեան պատկեր կը հանդիսանար, դուռը բացուելով՝ Արաքսիան ներս մտաւ:



Արաքսիա կամ Վարժուհին

Գ Լ ՈՒ Խ Շ Ս.

Երիտասարդն ոչ նուազ քան զԱրաքսիա զարհուրեցաւ ՚հիւանդ աղջկան այլակերպութիւնը նշմարելով, և խղճի խայթ մ'զգաց, կասկածելով թէ իւր բացակայութիւնն եղած էր պատճառ այդ աղիտից: Մօտեցաւ Սիւակ, ձեռք տալու համար Վարդանոյշի, բայց սա փոխանակ զիւր ձեռք կարկատելու՝ դէմքը գոցեց և սկսաւ լայ հեծկրտանօք:

— Սիւակ, գոչեց Արաքսիա, ուրախ եմ որ ժամանակին վերադարձար, զիս սոսկալի զրպարտութենէ մը ազատելու համար:

— Ի՞նչ զրպարտութիւն:

— Պատմէ նախ ի՞նչպէս հանդիպեցաւ որ այս առաւօտ դու եկար Երանեան ընտանեաց այցելելու:

— Խիստ բնական զրգմամբ, պատասխանեց երիտասարդին: Երէկ իրիկուն Պոլիս հասայ յետ բացակայութեան մի որ դժբաղդարար շատ երկարեցաւ կընձուտս գատի մի պատճառաւ:

Անշուշտ Սիւակ կ'զգուշանար իւր վերադարձին յապաղման բուն պատճառը խոստովանիլ:

— Շարունակէ, ըսաւ Արաքսիա, անհուն վրդովմամբ, մինչ Վարդանոյշ կարծես Սիւակին շրթունքներէն վար կախուած՝ կը փափաքէր ի սրտէ որ նա իւր դժոխքներ կասկածները կարենար ցրուել վերջնական կերպիւ:

— Այս առաւօտ, շարունակեց Սիւակ, Արաքսիայի ու զղելով խօսքերը, ձեզ տեսութեան գնացի, և մայրդ տուաւ ինձ վերադարձիդ ուրախառիթ լուրն և օրիորդ Վարդանոյշի հիւանդութեան գոյժը: Բնականաբար մեծ անձկութիւն մ'զգացի, և անհամբերութեամբ համայն-

ուած փութացի անմիջապէս գալ՝ ես անձամբ տեղեկանալ օրիորդին կացութեան վրայօք:

— Եւ ի՞նչպէս եղաւ որ վեր ելար:

— Տիկին Երանեան տեսաւ զիս մինչ գրան առջև էի և հրաւրեց զիս ներս մտնելու:

Արաքսիա նշանակութեամբ լի նայուածք մ'ուղղեց Վարդանոյշի, նայուածք՝ որ թուէր կշտամբել զինքը կասկածանացն անիրաւութեան համար:

— Չեմ հասկնար, ըսաւ Սիւակ, ինչո՞ւ այս հարցուփորձը:

— Ո՛հ, Սիւակ, գոչեց Արաքսիա, գիտես դու թէ որպիսի սիրով լցուած է սիրտս Վարդանոյշի համար, և ձայնը նուազեցաւ յուզմանը սաստկութենէն:

— Եւ միթէ տարակո՞չս ունի օրիորդ Վարդանոյշ այդ անուրանալի ճշմարտութեան վրայ, ըսաւ Սիւակ, հիւանդին նայելով:

Վարդանոյշի բերանը կը լսէր, բայց իւր սիրտն ահագին բարախմամբ կը խօսէր:

— Սիւակ, ըսաւ Արաքսիա, բարբառելու կարողութիւնը վերստանալով, ո՛չ միայն կը տարակուսի այլ զիս կը նախատէ մինչև իսկ զիւր թշնամին, զիւր նախանձորդն համարելով:

— Թշնամի՛ն, նախանձո՛րդը, ի՞նչ կ'ըսես, Արաքսիա՛, հարցուց Սիւակ զարմացմամբ:

— Այո՛, հաւտացուցած են իրեն թէ ես գքեզ կը սիրեմ:

— Ո՛վ անօրէնութիւն:

— Թէ ես գինքը կը խաբեմ, և թէ իրեն համար աշխատել ձեռացնելովս՝ իմ անձիս շահը ի նկատի կ'առնում միայն:

— Օրիորդ Վարդանոյշ, այդպիսի սոսկալի ենթա-

գրութիւն մ'ընելու կարողացա՞ք անձի մի համար որ ձեզ կատարելապէս անձնուէր է, ըսաւ Սիւսակ:

Վարդանոյշ կը լսէր, կը լսէր, կ'սպասէր, մինչ սիրտը կարծես պիտի դուրս ժայթքէր: Բայց տակաւին իւր կասկածանայ անհիմն լինելուն վրայ փաստ մի չունենարով, կարծիք չէր յայտնեւր ամենեւին:

— Ես, յարեց Արաքսիան, անունը կը խնդրեմ այն անօրէնին որ դիւ թշնամանեց, և Վարդանոյշ կը յամառի ծածկել յինէն զայդ անուն:

— Ես իմացնեմ քեզ այդ անունն, ըսաւ Սիւսակ, վստահ կերպիւ:

— Ուրեմն քանի որ գիտէք ո՛վ լինելն, ըսաւ Վարդանոյշ, որ առաջին անգամ կը խօսէր, կը հաստատէք թէ անհիմն չեն իմ կասկածներս:

— Ձեր կասկածները բոլորովին անտեղի են, օրիորդ, և զանոնք ձեզ ազդողը Տիկին Արգարեանն է:

Արաքսիա զարհուրմամբ կը հաստատէր թէ այդ կինն էր իւր գաղտնի թշնամին, քանի որ Վարդանոյշ հակառակը չէր ըսեր, և կը կասկածէր թէ նոյն անձն էր անչուչտ որ զՆերսէս հեռացուց իրմէն. իսկ Վարդանոյշ անհուն անձկութեամբ հարցուց.

— Տիկին Արգարեան ի՞նչ շահ ունէր արատաւորելու զԱրաքսիան, և եթէ հիմնաւոր պատճառներ չունենար, ի՞նչպէս կրնար ուղղել իւր վարժուհոյն այս արհամարհոտ նամակն ըսաւ, անկողնոյն մերձ տուփէ մը թուղթ մի հանելով և զայն ներկայելով երկուքին:

Անմիջապէս որ տեսաւ զայդ և պարունակութիւնը կարդաց, Արաքսիա հարցուց զարմացմամբ Վարդանոյշի թէ ի՞նչպէս զայդ ձեռք ձգելու յաջողած էր:

— Եզանակաւ իմն որ պատուաւոր չէ, գիտե՛մ, ըսաւ Վարդանոյշ, բայց կասկածով մաշող հոգւոյ հա-

մար ամեն միջոց լաւ է, ուստի սենեակդ մտնելով տեսայ զայն և առի:

— Բնաւ գրեզ չեմ մեղադրեր, պատասխանեց վարժուհին:

— Այդքանը չի բաւեր ինձ, բացառէ՛, ի՞նչ կը նշանակէ նամակս այս:

Նոյն պահուն Սիւսակ փութաց պատասխանելու փոխանակ Արաքսիայի և ըսաւ.

— Օրիորդ, այդ նամակին մեկնութիւնը տալու հոգը ինձ կը պատկանի:

— Ինչո՞ւ ձեզ, պարոն, և ոչ օրիորդին:

— Վասն զի դժուարին խոստովանութիւն մ'ընել հարկ է ինձ ի սէր արդարութեան, խոստովանութիւն զոր վստահ եմ թէ օրիորդ Արաքսիա ոչ երբեք յանձն կ'առնու, մատնութիւն մի չկատարելու համար:

— Պատրաստ եմ ամեն ինչ լսելու, ըսաւ հիւանդը:

— Տիկին Արգարեան զիս կը սիրէր: Ես, թէեւ զհոգիս ձեզ նուիրած էի և եմ, օգուտ քաղեցի երկտասարդական անկախութենէս, քանի որ ձեզի հետ ամուսնացած չէի:

Վարդանոյշ եթէ ցաւեցաւ այդ անհաստարմութեան մասին, միւս կողմանէ եւս սիրտն սփոխեցաւ:

— Սակայն, հարցուց նա, ի՞նչպէս Տիկին Արգարեան կրնար գիտնալ մեր յարաբերութիւններն և Արաքսիայի իմ խորհրդակիցս լինելն, եթէ դուք ձեր բոլոր գաղտնիքն յայտարարած չլինէիք իրեն՝ իբր ձեզ սիրելի անձի:

— Ես ոչինչ յայտնած էի իրեն, վասն զի բնաւ համարում չունէի անոր վրայ, և եթէ կը ներէք ինձ խօսիլ ազատօրէն, կը նկատէի իբր անարգ խաղալիք մի և ոչ թէ իբր արժանաւոր բարեկամուհի:

— Ուրեմն ի՞նչպէս տեղեակ էր ձեր գաղտնեաց :

— Նոյն գիշերն որ Արաքսիա ընդունեցաւ զիս Արգարեան տան մէջ, մինչ կը կարծէինք մեր խօսակցութեան վկայ չունենալ, կ'երեւայ թէ Տիկին Արգարեան ունկնդիր եղած էր մեր ամեն բառերուն, և նկատելով որ Արաքսիա ջանադիր կը լինէր անհուն եռանդեամբ ձեր գատը վարելու սիրայորդ սրտի մը առջև որ անհամբեր էր իւր բաղդը միացնելու ձերինն, Տիկին Արգարեան՝ ի վրէժխնդրութիւն Արաքսիայի ընթացից՝ անմիջապէս արձակեց զայն հետեւալ օրն իւր :

— Ո՞վ անխիղճ կին, գոչեց Արաքսիա, եւս քան զեւս հաստատուելով թէ նա հեղինակն էր բոլոր իւր աղիտից :

— Ես չիտակը խօսելով, յարեց Սիսակ, ուրախացայ Արաքսիայի հեռանալուն վրայօք այնպիսի կնոջմէ, թէեւ ես իրեն բնաւ բան չխօսեցայ, և ոչ իսկ գիտցածս իմացուցի, պարապ տեղը զինք չվշտացնելու համար :

Վարդանոյշ իւր յանցանքը կը հասկնար, ու թէ՛ կը ցաւէր իւր բարեկամուհւոյն անիրաւած լինելուն, և թէ՛ կ'արիւնէր հաստատելով Սիսակի անհաւատարմութիւնը, բայց ի՞նչ կրնար ըսել երբ արք ամեն ազատութիւն կը շնորհեն իրենց անձին, մանաւանդ երբ տակաւին ամուսնացած չեն :

— Սակայն, հարցուց Վարդանոյշ հետաքրքրութեամբ, ի՞նչ պէտք ունի Տիկին Արգարեան զԱրաքսիա արատաւորելու երբ կրնար ուրիշ նախանձորդ մի յարուցանել իմ առջևս :

— Տիկին Արգարեան ուզեց որ ես հրաժարիմ ձեզմէ անպատճառ, և զայդ մերժեցի կատարելապէս, զի զձեզ հաստատապէս կը սիրէի և կը սիրեմ, ըսաւ

խորամանկ երիտասարդը ձեռով մի որ կատկածանաց տեղի չէր տար : Խոստացայ Արաքսիայի ոչ եւս յաճախել սոյն կնոջ, քանի որ ակնկալու էի պայմանաւոր ժամանակի մէջ ձեր վճիռն ընդունելու, և զայդ իմացաւ Տիկին Արգարեան :

Ժպտեցաւ Վարդանոյշ ժպտով մի որ ցոյցացումն էր հոգւոյն բոլոր երջանկութեան, և զղջմամբ ու խոր երախտագիտութեամբ խօսեցաւ բարեկամուհւոյն՝ և հաստատեց թէ մայրական գորովով մի գործած էր իւր նկատմամբ :

— Ես չուզելով վերստին վերագոռնալ ի տուն Տիկին Արգարեանի, ըսաւ Սիսակ, ուխտեցի հաւատարիմ մնալ ձեզ և մեկնեցայ, առանց հրաժեշտ առնելու անկէ : Կ'երեւայ թէ այդ չար կինն որոչած էր իմ երջանկութեանս չէնքը քանդել, և վախնալով թէ Արաքսիա կը վերաչինէ զայն՝ ձգներ է ամեն փրկարար միջոց խափանել, զայն հեռացնելով ձեզմէ :

— Խեղճ, խեղճ, Արաքսիաս, կրկնեց Վարդանոյշ, և թեւերն բանալով, եկո՛ւ, եկո՛ւ, շնորհէ ինձ իմ ներումս, ըսաւ :

Զիրար գրկեցին երկու կոյսերն, իրենց արտասուքը միացնելով, իսկ Սիսակ ոտք ելնելով և խնդրելով Վարդանոյշի ձեռքը, ըսաւ :

— Քիչ մի յառաջ մերժեցիք զայն, իսկ արդ վերստին կը խնդրեմ, երիտասարդական յանցանքիս թողութիւնը խնդրելով :

Վարդանոյշ երկնցուց իւր ձեռքը, մինչ բոլոր անձը կը գողար անհնարին յուզմամբ :

Եւ զայն առնելով ձեռացը մէջ, Սիսակ սիրայորդ նայուածքով և սրտառու զգանակաւ մի հարցուց .


— Օրի՛որդ, կրնամ ձեր ձեռքն ընդ միշտ պահել իմ ձեռացս մէջ :

Աղջիկն չփոթած ու կարմրած մինչ ըսելիքն կորուսած էր, աճա դուռը բացուեցաւ և Տիկին Երանեան որ դուրսէն ամբողջ խօսակցութեան ունկնդիր եղած էր, ներս մտնելով րատ .

— Այո՛, ալ ձեռքը այսուհետեւ իբր քու սեպհական ստացուծքդ կրնաս համարել, իմ և ամուսնոյս հասնութեամբ, զաւակս Սիսակ :

Վարդանոյշ զօճուակութեանն սասակութենէն կարծես կը վերածնէր, մինչ Արաքսիա ուրախութեան արտասուք կը հոսէր : Իսկ Սիսակ որ ամեն պարագայի համեմատ ձեւեր ունէր, արժանավայել եղանակաւ յայանեց որ նոյն օրէն պիտի ապրէր օրիորդ Վարդանոյշի երջանկութիւնն ապահովելու համար միայն՝ ձօնելով անոր ամբողջ իւր կեանքը :

Տիկին Երանեան երջանիկ էր աղջկանը գէմքին զարմանալի փոփոխութիւնը նշմարելով, և կը ցնծար մօր մի սրտով, վստահ լինելով թէ իւր սիրելի զաւակն ի կեանս պիտի վերադառնար :



Գ Լ Ո Ւ Խ Ծ Բ .

Եթէ Վարդանոյշ հուսկ ուրեմն իւր սիրոյ յոյսերուն մօտակայ պակամանը վրայ կը ցնծար, Արաքսիա սրտին ճանրութեան սիւփանք կը գտնէր, մտածելով որ ազատօրէն կրնար իւր անձն արդարայնել ներսէսի առջեւ, Վարդանոյշի յարարերութեանց նկատմամբ ամեն պարագայները մանրամասնաբար իւր սիրահարին պատմելով, ինչպէս և հոն իւր խաղացած ամբողջ գերը, քանի որ երկու երիտասարդաց նշանատութիւնն ամենուն յայտնուեցաւ : Ուստի փութաց երկ-

րորդ նամակն յղել ի Մանչէսթըր, բայց սա յետ սակաւաթիւ աւուրց ետ եկաւ պատճառաւն բացակայութեան ներսէսի՝ աւ որ ուղղեալ էր : Այդ անակնկալ գէպքն ի խոր խոցեց զԱրաքսիան, բայց համբերութեան և համակերպութեան խիստ զպրօցին իբր հաւատարիմ աշակերտուհի՝ իւր ցաւն յինքն ամփոփելով սառապեցաւ լոռիայն ինչպէս յանցելումն :

Տիկին Հարթմանեան որ զնահատած էր ամեն ձիւքերն Արաքսիայի և մասնաւոր համակրութիւն մը ունեցած էր նմա, առաջարկեց աղջկան իւր տան մէջ իբր կենսակից օրիորդ (Տամ սր գօմբանի) հեան ապրելու : Երիտասարդուհին խիստ զօճ էր այդպիսի պաշտօն մի վարելու իրեն սիրելի եղած պատուակիր տիկնոջ մօտ, մանաւանդ երբ ստանալու նիւթական վարձատրութեամբն իւր ընտանեաց գիւրակեցութիւնը պիտի ապահովէր : Ուստի փութաց իւր պաշտօնավարութիւնը ժամ յառաջ սկսել է Տիկին Հարթմանեանի տան մէջ հաստատուելով :

Տիկին Հարթմանեանի ընտանիքը կը բաղկանար իրմէ և ամուսինէն : Մինչ պատանուհի կորուսած էր զիւր ծնողք, ժառանգելով անոնցմէ գեղեցիկ հարստութիւն մի : Լաւ ուսում առած էր նա, միտքն ու պիտան նոյնչափ մշակուած էին : Գեղեցիկ էր, ազնիւ, զգայուն և երիտասարդ, կ'ապրէր ընդ հսկողութեամբ ծեր մօրաքրոջ մի երբ որք մնաց : Անթիւ փեսաներ ներկայացան, ոչ այնքան օրիորդին բարոյական և մտաւորական ձրից համար, որչափ հարստութեանն որ գլխաւոր հրապրցն էր անոր : Ամենքը մերժուեցան, և Պ. Հարթմանեանի վիճակուած էր օրիորդէն և մօրաքրոջմէն հաւնուելու բազըր, ու իրօք զամեն ինչ ռահր գրաւելու համար խելք, ուսում, ընկերական ունէր վրաւելու համար : Խելք, ուսում, ընկերական չիւրք, հարստութիւն, գէմք համակրելի և վայելուչ

ձեւեր : Պ. Հարթմանեան սիրահարուեցաւ երիտասարդուհւոյն և բաղձանացը կատարման հասաւ , հետն ամուսնանալով :

Երկու նորապսակ ամուսնայից երջանակ էին կատարելապէս , և եթէ Տիկին Հարթմանեանի մօրաքրոջ մահը տեղի չունենար , մանկամարդ կինը պիտի կարծէր զիւր անձ կատարեալ երջանկութեան անձնաւորութիւնը :

Բայց ինչպէս կը պատահի բոլոր այն երիտասարդաց որք նախ աղմկալից կենաց մէջ կը գլորին յախուռն կերպիւ , և յետոյ իրենց հեշտասէր կրից կատարելապէս զոհացում տալով՝ կը փորձեն ընտանեկան անզորբաւէտ կենաց մէջ երջանկութիւն մի փնտոել որ խոյս կուտայ իրենցմէ . այսպէս Պ. Հարթմանեան հազիւ վեց ամսէ ի վեր ամուսնացած էր երբ ձանձրացաւ ամուսնական կեանքէն , և բուսն ետանդեամբ վերատին նետուեցաւ իւր նախկին մեղադրելի ընթացքին մէջ :


Մանկամարդ կիներն որ հազիւ հազ քսան տարեկան էր երբ ամուսնացաւ և ամուսինն քսան և եօթն , միայն վեց ամսուան ամուսնական երանութիւն վայելեց , ապա գատապարտուեցաւ լքման և ստանձնութեան :

Կարեւոր էր կինն փոխանակ ընկերութեան աղմկի մէջ մխիթարութիւն փնտոելու իւր ցաւոց՝ առանձնութեան մէջ ընդհակառակն փակուեցաւ և զրոց մէջ որոնեց իւր տառապանաց սփոփանք :

Հազիւ չորս տարիներ անցած էին և Տիկին Հարթմանեան յոգնած էր կանքէն , վհատած , սիրոյ պատրանքը ճաշակած էր , բայց անկարող եղած փոխադարձ անտարբերութեամբ պատասխանել ամուսնոյն : Մեյրամաղձային վիճակի մէջ անկաւ՝ յետ որոյ ճամբորդութիւն կատարեց ընկերութեամբ Արաքսիայի :

Երբ Պոլիս վերադառնալով արձակեց իւր ուղևորութեան ընկերուհին՝ Տիկին Հարթմանեան սոսկալի դատարկութիւն մ'զգաց իւր շուրջը , զի պակսեցաւ հոգին այն որ քոյր էր իրենին՝ վշտին ազգականութեամբ : Իրենց անխօս զաշնադրութեան մէջ իւր ցաւոց սփոփանք կը գտնար Տիկինն , և կը տեսնէր Արաքսիայի աչաց մէջ արգահատութեան և համակրանաց արտայայտութիւն մի որ սպեղանի մ'էր իւր վշտահար սրտին :

Ուստի յայտնեց ամուսնոյն այդ աղջիկ իրեն ընկերուհի ունենալու բաղձանքն , և նա ծափահարեց կերուհի ունենալու բաղձանքն , և նա ծափահարեց մանաւանդ այդ խորհրդոյն , զի նուազ խիղճ կ'ընէր յայնմամ ամբողջ գիշերներն իւր երիտասարդ կիներ թողու տան մէջ առանձին : Ստոյգ է թէ ինչ որ զբամական խնդրոց կը վերաբերէր՝ Պ. Հարթմանեան խնամալուծութիւն չէր ընէր , այլ ընդհակառակն կը փափաքէր կնոջը կեանքը հաճելի ընել , զի ըստ ինքեան բարի սիրտ մ'ունէր . միայն թէ իրեն անհնար էր հրաժարիլ իւր քմահաճ և փոթորկալեց վայելքներէ խաղի և կնորսութեան , երկու անտանելի մոլութիւնք՝ որոնց մին արդէն կը բաւէ մարդուս՝ և իրեն յարակից գտնուող անձանց թշուառութիւնն ընելու : Երկու մոլութիւնք որ զմարդ օր քան զօր գերի կ'ընեն , և որչափ նա կարծէ խոյս տալ անոնցմէ , նոյնչափ և աւելի իւր առջև բացուած վհին մէջ անսանձ կը գահավիժէ :



Գ Լ Ո Ւ Խ Մ Գ.

Արաքսիա գո՛ճ կացութեամբ պիտի ապրէր Տիկինն
Հարթմանեանի ընկերակցութեամբ անոր հետ մերթ
ընթեռնելով, կարգացածին վրայ խորհելով և վիճելով,
խօսակցելով մտերմութեամբ, շրջադայելով և տնական
անշշուկ կեանքը վայելելով, և թէ վիճակին անորոշու-
թիւնն և դատնալից կասկածներ չպաշարէին զինքը:

Տիկինն Հարթմանեան լաւ կ'զգար թէ աղջիկն մեծ
զաղտնիք մ'ունէր սրտին վրայ, բայց փափուկ զգաց-
ման ամեն ազնուականութեամբ զգուշացած էր որ և է
ակնարկութիւն ընելէ այդ մասին:

Օր մի սակայն Արաքսիա ընտանեացն այցելու-
թեան գնացած լինելով ուզած էր իւր երջանիկ բա-
րեկամուհւոյն հետ եւս տեսակցիլ. վարդանոյշ շրջա-
գայտի թեան գնացած էր մօրը հետ: Ուստի նոյն պահուն
որ տան դռնէն ներս չմտած կը պատրաստուէր մեկ-
նելու՝ նշմարեց զԻսկուհին բակին մէկ անկիւնը նրս-
տած: Թէեւ այդ կիներն իրեն դէմ դաւակցած էր, զինքն
Սիտակի իբր սիրուհին ներկայելով վարդանոյշի, բայց
անոր դէմ հակառակութիւն չունէր. զի վարդանոյշ
հաւատացուցած էր թէ նա ազիտութեամբն գործիք
եղած էր Տիկինն Արգարեանի, և մինչեւ անգամ չէր
ուզած նա հաւատալ թէ այդ տիկինը նենգութեան և
նախանձու զգացմամբ հեղինակած էր Արաքսիայի մե-
ղաւորութեան պատմութիւնն:

Ուստի անմիջապէս որ Արաքսիա նշմարեց զԻս-
կուհին՝ ներս մտաւ և մերձենալով այդ կնոջ, ամենայն
անձկութեամբ հարցուց թէ ի՞նչպէս էր իւր սիրեցեալ
Աղաւնին՝ որուն անձնական վիճակին վրայօք ցաւալի
լուրեր կ'առնուր: Որչա՛փ կը փափաքէր երխտասար-

դուհին հսկել այն գողտրիկ հրեշտակին վրայ որուն
նկատմամբ մայրական գութ մի զգացած էր միշտ:
Բայց Արգարեան գուն իրեն համար անմատչելի էր,
դի ապահով էր թէ Տիկինը զինքը կը վանէր, և թէ
նոյն իսկ գոհն ընէր առ իւր Աղաւնին սուբալու:
Ուստի Իսկուհին ձեռով մի որ բոլոր իւր հակակրու-
թիւնը կը յայտնէր, քթին տակէն պատասխանեց թէ
Աղաւնի վիճակը ծանր էր:

— Ինչո՞ճ հրեշտակս, գոչեց Արաքսիա արտաս-
ուելով:

Բայց խնդրեմ, յարեց զգայուն աղջիկը, ըսէ ինձ,
կը քայլէ՞ թէ անկողնոյ կը ծառայէ նա:

— Անկողնոյ մէջ է, պատասխանեց Իսկուհի,
խրոխտ կերպարանօք:

— Ի՞նչ կ'ընէ, կը խօսի՞, կը ճանաչէ՞ իւր վի-
ճակը, խնդրեմ, յայտնէ՛ ինձ զայդ ճշմարտօրէն:

Կինը սրտմտելով ըսաւ.
— Ինչո՞ւ կ'ուզես որ քեզմէ պահեմ, երբ գու-
վերջապէս օտարական մ'ես:

— Այո՛, օտարական եմ արեամբ բայց ոչ սրտով:
Կ'աղաչեմ ըսէ ինձ, ի՞նչ կ'ընէ, զիս կը հարցնէ՞

արդեօք երբեմն:

— Քեզ ինչո՞ւ պիտի հարցնէ, պատասխանեց կինն
արհամարհանօք: Զիւր եղբայր՝ զՊ. Ներսէս կը փնտոէ

չարունակ, և նա չի կրնար գալ շուտով, զի կ'ըսեն
թէ անպուհոյ մի հետ ամուսնացեր է մօտերս:

Արաքսիա վերջին յայտնութիւնը Ներսէսի նկատ-
մամբ լսելով շանթահար եղաւ, խօսքը բերնին մէջ
խեղդուեցաւ, և իբր յիմար անմիջապէս բակը թող-

լով գոնէն դուրս ելաւ ու մեկնեցաւ:
Իսկուհին աղջկան ապուշ կտրիլը նկատելով յիշեց

որ Տիկին Արգարեան ըսած էր իրեն թէ Արաք-
սիան իւր աչերը մինչեւ ցներսէս բարձրացնելու յան-
դգնած էր անգամ, և հաստատուեցաւ տիկնոջ յայտ-
նութեան սուգութեան վրայ, ինչպէս համոզուած
էր Սիսակին վերաբերող խոստովանութեան նկատ-
մամբ:

Ողորմելի Արաքսիա վերագարձաւ ուրեմն Տիկին
Հարթմանեանի տունն, և հոն իւր խուցը մտնելով
յուսահաստութեամբ իւր սրտին կորուստը լացաւ:

Տիկին Հարթմանեան լսելով ընկերուհոյն հեծ-
կլտանքն իւր սենեկէն իսկ, փութաց յօգնութիւն
աղջկան, և խնդրեց անկէ որ ոչ եւս ծածկէ էր այն
զաղտնիքն իրմէ որուն գոյութեան վրայ շատնեց
ի վեր աներկբայ էր:

Փամանակ կայ որ եթէ սիրտը խոստովանութեամբ
չյորդէ ցաւոց լի բաժակէն, անհնար է իրեն առանց
ծանր փնտնու տակալ այլչափ բեռի: Ուստի Արաքսիա
պատմեց բոլոր իւր թշուառ անցքերը մի ըստ միով,
իւր սէրը ներսէսի համար, վարդանոյշի զէպքերն,
իւր մատուցած ծառայութիւնը բարեկամուհւոյն տա-
ռապանաց մէջ, իւր կրած ամբաստանութիւնը Տիկին
Արգարեանի չարութեան պատճառաւ, և վերջապէս ներ-
սէսի ամուսնութիւնն որով ինքը կը մեռնէր ապագայ
երանութեան համար:

Պ Ա Ո Ւ Ն Խ Մ Դ.

Սիսակի նշանատութեան լուրն հասած էր ական-
ջին աղջկան Պ. Գրիգորի՝ իբր ձայն բօթաբեր: Երի-
տասարդուհին իմանալով վերջապէս թր իւր սիրահարը
զինքն կատարելապէս խարած էր, խոստովանեցաւ
զամեն ինչ իւր հօրաքրոջն և սա սարսափահար եղած
զամեն ինչ պատմեց իւր եղբօրը:

Հայրը ստակալի հարուած մ'ընդունեցաւ նկատե-
լով թէ տանը պատիւն աղարտուած էր. բայց իւր
ցաւոց վերջ տալով՝ մտածեց ընդ փոյթ գործելով սա-
նալ զաւկին պատիւը, բռնաբարողէն խնդրելով որ
և է հատուցում բարոյապէս թէ նիւթապէս, ուստի
անմիջապէս թողուց հայրենիքը և արտորնօք ուղեւո-
րեցաւ ի Պոլիս:

Պ. Գրիգոր վաղեմի բարեկամն լինելով Պ. Արգար-
եանի՝ այս վերջնոյն տունն օթեւանեցաւ ու յայտնեց
անոր ինչպէս և տիկնոջն՝ իւր ճամբորդութեան չար-
ժառիթը: Կ'իմացնէր որոշապէս մտադիր լինելն կա՛մ
զՍիսակ պարտաւորելու իւր գտտեր հետ ամուսնանա-
լու կամ երեք հարիւր սակի տուժելու, և կամ անոր
զէմ դատ բանալու:

Տիկին Արգարեան այս յայտնութեան առջեւ ցըն-
ծաց բոլոր հոգւովն: Իմացած էր արդէն Իսկուհիէն իւր
չար մեքենայութեանց ի զերեւելնելը, բայց երգուած
էր նորանոր գժուարութիւնք յարուցանելով արգիլել
անպատճառ ամուսնութիւնը Սիսակի: Կը խորհէր շա-
րուհակ թէ որպիսի՞ եղանակաւ կրնար հասնիլ նպա-
տակին. ու սաստիկ կը նեղանար յարմար եղանակ մի
գտած չլինելուն համար իւր զէնքերը չարժելու ընդ-
զէմ երիտասարդին: Բայց ահա բաղդը իրեն նպաստա-

ւոր առիթ մի կը հայթայթէր. ուսկից փութաց օգտիլ անմիջապէս :

Տիկին Արզարեան լաւ գիտէր թէ Սիւսակ գրամ չունէր. նոյնչափ եւս համոզուած էր որ նա դաւաճացի աղջկան մի հետ ամուսնանալու բնաւ հակամէտ չէր կրնար լինել քանի որ շահ մը չունէր հոն : Լաւ կ'ըմբռնէր նաև թէ Սիւսակ օգնութիւն չէր կրնար խընդրել իւր նշանածին ընտանիքէն եղբուրեան մի համար որ իրեն համար բոլորովին աննպաստ էր : Ուստի երիտասարդին ուրիշ միջոց չէր մնար բայց եթէ կամ զգաւառացի աղջիկն առնուլ ի կնութիւն, և կամ գատաստանական խիստ պատժոց ենթարկուիլ : Տիկինը ճանաչելով մեծամտութիւնը իւր նախկին սիրահարին՝ չուտ վերահասու կը լինէր թէ Սիւսակ անել վիճակի մէջ կը գտնուէր եթէ յանձնառու չլինէր գաւառացւոյն հետ ամուսնանալու : Այդ սիրամոլ կինը կ'ուզէր որ և է ամուսնութիւն արգիլել, և գերիտասարդը փրկելով կաշկանդել զայն վերատին իւր անձին :

Գ Լ Ո Ւ Ս Յ Ե .

Պ. Գրիգոր կանգնեցաւ Սիւսակի առջև իբր վրիժառու ոգի մի որ նախանձախնդիր պատուոյ մասին, համար կը պահանջէր այն անպատուութեան համար զոր մտցուցած էր իւր տան մէջ ընդունած հիւրընկալութեան փոխարէն :

Նախ մեղապարտ երիտասարդն այլագունեցաւ և ջանաց ուրանալ իրեն վերագրուած յանցանքը : Բայց երբ ամեն մանրամասնութիւն անոր յիշեցուց վիրաւորեալ հայրն, անկարող եղաւ Սիւսակ իւր պախարա-

կելի ընթացքն այլ եւս ծածկելու : Ուստի Պ. Գրիգոր հարկադրեց զնա անմիջապէս որոշելու երեք պայմանաց մէջէն այն՝ որ հաճելի կը թուէր իրեն. այսինքն կամ իւր դատեր հետ ամուսնանալ, կամ երեք հարիւր ոսկի հատուցանել և կամ ի դատ կոչուիլ :

Սիւսակ յուսահատական վիճակի մէջ կը գտնուէր : Եթէ այդ գայթակղական եղբուրեանն երեւան ելնէր, իւր ամուսնական խորհրդոց վերջ տալու էր վարդապետին հետ : Կը մակարերէր որ Երանեանի գուստրն իրեն չպիտի ներէր իւր երկրորդ անհաւատարմութիւնն, երբ ինքն մանաւանդ բերնովը խոստովանած էր թէ Տիկին Արզարեանէն հեռանալը պատշաճ գատեմ էր նոյն վայրկեանէն որ իրեն մէկ ամսուան ամառ էր անցը գեմ գործած էր առաւել ծանր կերպիւ նոր սիւսահարութիւն մ'ուսնենալովն, այլ և յայտնի էր թէ իւր վերադարձն յապաղեցուցած էր, հեշտութեանց մէջ լողալու համար :

Ուստի այդ գայթակղալից գէպքը խեղդելու էր անպատճառ. բայց ի՞նչ եղանակաւ, քանի որ գրամ չունէր, և ո՞ւսկից կրնար փոխառութիւն մ'ընել երբ վճարման մասին անպահովութիւն տալու միջոց չունէր :

Գաւառացիին առնուլ, այդ մտքէն իսկ չէր անցնէր : Ինքը զամենքը կը ծաղրէր, և նշաւակելի պիտի լինէր գաւառացի աղջկան մի թակարդին մէջ ինչպէս լավ : Իսկ գատին գալով կը խորհէր թէ այդ հաւանականութիւն իսկ հեռացնելու էր, քանի որ իւր խայտառակութիւնը հոչակ պիտի գտնէր :

Սիւսակ կատարեալ խորհրդապահութիւն խնդրած էր Պ. Գրիգորէն և խոստացած մինչև մէկ շաբաթ իւր վերջնական որոշումն յայտնելու :

Անհնարին տագնապաւ կը տատանէր մեր երիտասարդը : Արախիս կամ վարժուհի

սարդն. ի՞նչ որոշում ընել, ի՞նչ եղանակաւ խարել նախատեալ հայր մի և ի կատար հասցնել իւր երազած ամուսնութիւնը վարդանոյշի հետ, ամուսնութիւն որով հանդիստ և ապահով ապագայ մի պիտի ունենար: Կ'անիծէր նոյն միջոցին իւր կ'սորսութեան ձգտումներն, ինչպէս և կ'անիծէր իւր յաղթանակները կանացի աշխարհին մէջ: Կը խոստանար անձին ապագային մէջ կանոնաւոր կեանք մը վարել, եթէ սակայն խոյս տար նոյն անգամ իւր վրայ ծանրացած անեղ վտանգէն:

Գ Լ Ո Ւ Խ Ս Ձ.

Այս մտատանջութեան մէջ կ'ալեկոծէր մեր կնասէր երիտասարդն, երբ անա նամակ մը կ'ընդունի որուն պարունակութեանը տեղեկանալով զիւրին է հասկնալ թէ ո՞վ էր անոր հեղինակն ասանց ստորագրութիւնը կարգալու:

«Սիրեցեալ Սիսակս,

«Տեղեակ եմ ամբողջ սիրային պատմութեանդ ընդ գտեր Պ. Գրիգորի, որ իմ հիւրս է: Գիտեմ նաև անոր առաջարկած երեք պայմաններն որոց և ոչ մին նպաստաւոր է քեզ համար:

«Վստահ եմ որ նոր բարեկամներդ որոց համար զիս ուրացար, ոչ երբեք պիտի հաճին քեզմէ պահանջուած գումարը մատուցանելու. իրենց աղջկան գէմ բացարձակ անհուստարմութիւն ըրիր: Ուստի հից բարեկամուհիդ պատրաստ է՝ ուղած վայրկենիդ խկ, երեք հարիւր ոսկի արամազրութեանդ ներքև գնել, բայց այն պայմանաւ որ ամեն ամուսնական խորհրդոցդ

վերջ պիտի տաս: Այդ փոքրիկ գումարն իբր բարեկամական նուէր մի կրնաս համարել իմ կողմանէս:

«Նշանաւորութիւնդ ոչնչացու՛ւ վարդանոյշի հետ, խոստացիր Պ. Գրիգորի իւր խնդրած գումարն, և յետոյ եկուր ընդունիլ ինձմէ քու վարձատրութիւնդ:

«Միշտ քու անկեղծ և հաւատարիմ սիրուհիդ
(Տ. Ա.)»

Տիկին Արգարեանի խոստացած նպատան եթէ մէկ կողմէն զՍիսակ կ'աղաւտէր անձոյ զիրքէ մի գաւառացու այն նկատմամբ, միւս կողմէն կ'ոչնչացնէր Սիսակի երազած ապագայն Պ. Երանեանի փեսայն լինելու:

Այնչա՛փ խտոված էր մեր անասակ երիտասարդն, այնչա՛փ մտացը խորհուրդք զիրար ջնջելով անկարող կ'ընէին զինքն որ և է որոշում մի տալու՝ որ վերջապէս յիշեց թէ բարեկամուհի մ'ունէր որուն թէ՛ զգաստութեան վրայ վստահութիւն ունէր, և թէ՛ անոր աջակցութեանն՝ ի պահանջել հարկին իւր յոռի դատը վարելու վարդանոյշի առջև: Այդ բարեկամուհին Արաքսիան էր:

Եւ իբր մարդ որ ալետանջ տարուբերելով անորոշութեան ովկիանին մէջ, վերջապէս յուսադրող տախտակի հանդիպելով անոր կը պլլուի իբր փրկութեան միջոց, նոյնպէս և Սիսակ Արաքսիայի գաղափարին առջև շունչ առաւ ու անով արիացաւ սակաւ ինչ:

Մտածեց երիտասարդը թէ երբ ուզէր Տիկնոջ կրնար գիմել օժանդակութիւնը խնդրելու համար, և այդ իբր վերջին միջոց վերապահելով իւր անձին, այդ իբր վերջին միջոց վերապահելով իւր անձին, զգուշացաւ որ և է պատասխան մի տալէ ընդունած նամակին, յառաջ քան Արաքսիայի հետ տեսակցելու և անոր հետ խորհրդածելու: Ուստի երիտասարդը փութաց երթալ յայցելութիւն Արաքսիայի ի տան Տիկին Հարթմանեանի:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ծ Է .

Աղաւնիի վիճակն օր քան զոր կը սաստկանար . խեղճ աղջիկը կ'զգար թէ մերձ էր ի մահ, և իւր ցաւը կը զօրանար այն գաղափարաւն թէ պիտի մեռնէր, առանց իւր երկու սիրելիները տեսնելու, այսինքն զԱրաքսիան և զԵրեմիայ :

Տիկին Արգարեան, որ մայր էր անուամբ այլ ոչ զգացմամբ, գերազոյն անձնուիրութեան օրինակ մը եղած կը կարծէր, օրը քանի մա'նդամ այցելելով իւր զաւկին, և ճարտար բժշկի մի հանապազօրեայ խնամոց յանձնելով զայն : Մանաւանդ որ ձիւրքերն եւս կը չափազանցէր գեման վարժուհւոյն, որուն խնամոց յանձնած էր զիւր գուստր :

Պ. Արգարեան կը հալէր, կը մաշէր, զաւկին վհատեցուցիչ վիճակը նկատելով . կը մաշէր այո՛, ոչինչ կը խնայէր նորա համար, բայց ի՛նչ օգուտ, զաւկին վիճակն օր աւուր կը վատթարանար :

Արմինէ քրոջն հիւանդութեան պատճառաւ վայրիկ մի կը տխրէր, ապա իւր աշխոյժ բնաւորութիւնը կը յաղթանակէր, և փոքրիկ հիւանդը զուարթացնելու համար հազարումէկ խաղեր կ'ընէր՝ հակառակ գերման վարժուհւոյն խիստ ակնարկներուն որք կը հրաւիրէին զինքն հանդարտելու : Արմինէի մտքէն երբեք չէր անցնէր թէ իւր սիրեցեալ քոյրը կրնար մեռնիլ :

Տղայք կը կարծեն թէ մահն օտարաց համար է, և երբեք չեն կրնար ըմբռնել թէ մահն իրենց մերձակայներուն եւս կրնայ մօտենալ : Գեղեցիկ ցնորք մանկութեան :

Աղաւնի կը նայէր քրոջն ունեցած ապահովութեան վրայ իւր մասին և կ'ուրախանար, առանց

բնաւ այս աշխարհէս իւր մեկնելուն վրայօք ակնարկութիւն մ'ընելու : Այդ քնքոյշ արարածն երբեք տղայութիւն չէր ունեցած, զի մատաղ տիոցը մէջ յարրունս հասած էր : Նա խաղալու և զբօսնելու համար ծնած չէր, ինչպէս ամեն մանուկ, այլ խորհելու, սիրելու, զգալու և տառապելու :

Օր մի երբ Աղաւնի զգաց թէ վիճակն յոսի էր . — Ո՛հ, ըսաւ քրոջն, կը փափաքիմ եղբայրս տեսնել, և անոր ներկայութեամբը գոնէ քիչ մի ժամանակ մխիթարուիլ :

Արմինէ չըմբռնելով անոր խօսքերուն ներքին իմաստն՝ այսինքն թէ կ'ուզէր հրաժեշտի վերջին ողջոյնը տալ Ներսէսի, ըսաւ .

— Բո՛յր, զրէ՛ մեր եղբօր, և վստահ եմ որ նա կուգայ :

— Գիտեմ որ կուգայ, զի այնչա՛փ զմեզ կը սիրէ : — Ուրեմն զրէ՛ շուտ և կոչէ զայն քու քովդ . որչա՛փ ուրախ պիտի լինիմ զինքը տեսնելով :

— Կը փափաքէի ես եւս շատ խել, բայց ի՞նչպէս զինքն անհանդիստ ընեմ :

— Վստահ եղիք, Աղաւնի՛, որ մեր եղբայրը չպիտի ներէ ինձ, եթէ քու անզուսպ բաղձանքդ չհաղորդեմ իրեն :

— Ուրեմն կը յորդորե՞ս զիս իմ բաղձանքս յայտնելու իրեն :

— Ոչ միայն կը յորդորեմ այլ կ'ապահովեմ քեզ որ եթէ զու չգրես, ես քարտուղարութիւն պիտի ընեմ՝ քու անուամբդ զինքն հոս հրաւիրելով :

— Եւ սակայն գիտնայիր որչա՛փ մեծ է կարօտս :

— Հապա ի՞մս, ես ալ քու պատճառաւ կ'օգտիմ :

Արմինէ գրիչն ու թուղթը քրոջն անկողնին վրայ դնելով, մղեց զնա անյապազ գրելու :

Հիւանդը զողջօջուռն ձեռամբ գրիչն առաւ, և ամենայն դժուարութեամբ յաջողեցաւ այս միակ տողերը գրելու .

« Սիրելիդ իմ եղբայր,

« Եկե՛ւ շուտ, կ'ուզեմ անգամ մի եւս գրելդ տեսնել, զի կ'զգամ թէ ժամանակս սուղ է : »

Տկար արարածն ողեսպառ եղած՝ յանձնեց զթուղթն իւր քրոջ, որ անոր պարունակութեան վերահասու չլինելով՝ յանչափս ուրախացաւ զիւր եղբայր ընդհուպ տեսնելու յոյսով :

Արմինէ պահարանի մէջ դնելով նամակն յանձնեց սպասաւորին որ զայն թղթատարին յանձնէ, ինչպէս սովոր էր գործելու . զի Տիկին Արզարեան ընաւ փոյթ չէր ընել թէ իւր գտերք իրենց եղբորն հետ կը թղթակցին, և մանաւանդ անտարբեր էր զիանալու անոնց գրութեանց իմաստն : Հետեւապէս անհոգ մայրն անգիտացաւ հրաւերն իւր աղջկան առ Ներսէս :

Գ Լ Ո Ւ Ս Մ Ը .

Սիսակ գնաց ուրեմն Տիկին Հարթմանի տունն և հարցնել տուաւ Արաքսիայի եթէ ազատ էր զինքն ընդունելու :

Աղջիկը կասկածեցաւ անմիջապէս թէ իւր ազգականը գուցէ կարելոր խօսք մ'ընելու համար իրեն եկած էր ի տեսութիւն, քանի որ առաջին անգամ էր որ կ'այցելէր իրեն . փութաց ուրեմն ինքն անձամբ

պատասխանել հարցման երիտասարդին, և անոր դէմքին նայելով շուտ հասկցաւ թէ մասնաւոր մտատանջութեան պատճառ մ'ունէր :

Արաքսիա տարաւ զինքն առանձին սենեակ մի, և մեծ անձկութեամբ հարցուց թէ ինչ էր պատճառն իւր այլայլեալ կերպարանքին :

— Գիտեմ, Արաքսի'ա, ըսաւ երիտասարդն, որ ընաւ համարմանդ և արգահատութեանդ արժանի չեմ, և եթէ արդարանալու կէտ մ'ունիմ՝ իմ երիտասարդական հասակս է, ինչպէս և եթէ քու համակրանացդ իրաւունք մ'ունենալս կրնամ կարծել՝ վարդանոյշի համար ունեցած անձու իրութիւնդ է :

— Այդ յառաջարանդ կատարելապէս աւելորդ է, պատասխանեց Արաքսիա . բուն եղելութեան գանք :

Յայնժամ Սիսակ պտոմեց իւր յարաբերութիւնները գաւառացի աղջկան հետ և իւր յանցանքը թեկեցնելու համար՝ երիտասարդուհոյն գործած հրապուրանաց վերագրեց իւր գրաւուիլն և անկէ հետեւած ծանր պարագայները :

— Ի՞նչ պարագայ, հարցուց Արաքսիա, գող ելնելով :

Յայնժամ Սիսակ յայտնեց իւր վրայ ծանրացող պայմաններն, ինչպէս և Տիկին Արզարեանի նամակն :

— Ի՞նչ պատասխանեցիր, ըսաւ աղջիկն երկիւզիւ :

— Ոչինչ տակաւին :

— Լու՛ր ինձ, Սիսակ, ոչ միայն իմ արգահատութեանս արժանի չես, այլ և ամենեւին արժանի չես վարդանոյշի նման աղջիկ մի ընկերակից ունենալու :

— Արաքսի'ա, ինչպէ ինձ, յանցանքս կը ճանաչեմ, բայց այս վերջինն է, կրնաս վստահիլ ինձ :

— Արդեօք քանի՞ անգամ նոյն ապօրինաւոր ընթացքին մէջ պիտի անկանիս դարձեալ :

— Երբեք, պատասխանեց Սիսակ, վստահութեամբ մի որով կ'ուզէր նոյն ապահովութիւնն ազգել Արաքսիայի :

— Երանի թէ այդպէս լինէր :

— Եւ պիտի լինի, կը խոստանամ քեզ : Երիտասարդ մի մինչեւ որ մի քանի անգամ փորձանայ չհանդիպի, չզգաստանար :

— Դու կը կարծես զգաստացած լինել :

— Ծանր եղաւ ինձ այս վերջին դասը :

— Լո՛ւր ինձ, ըսաւ աղջիկը, մի կարծեր որ հաւատք ունիմ ի քեզ, և ապացոյցն այն է որ երբեք նպաստաւոր չեղայ վարդանոյշի ամուսնութեանն ընդ քեզ :

— Ձայդ գիտեմ արդէն :

— Հանդերձ այսու պիտի աշխատիմ՝ որ հնարաւոր է ինձ, օգնելու քեզ :

— Բիւր չնորհակայիք, սիրու՞ն քոյրս :

— Շնորհակալ մի լինիր ինձ ի զուր, զի քեզ ծառայելու համար չեմ գործեր՝ այլ միայն այն հէք աղջկան որ գերախոսութիւնն ունեցաւ զքեզ յիմարարար սիրելու :

— Ինչ որ ըսես կ'ընդունիմ, զի իրաւունքդ է զիս խոսիլ կշտամբել, սակայն պիտի յայտնեմ քեզ որ անարժան չեմ ո՛չ քու բարութեանցդ, և ո՛չ ալ վարդանոյշի ամուսնոյ անունը կրելու :

— Տա՛յր երկիրնք :

— Երկիրնք վկայ քեզ թէ պատուակիր ամուսին մի պիտի լինիմ՝ կնոջս երջանկութիւնը միայն նպատակ ունենալով :

Արաքսիա թէեւ մեծ արժէք չէր բնծայեր երգման Սիսակի, բայց սա նոյն միջոցին այնպէս անկեղծ կ'երևար՝ որ Արաքսիա նորա տրամադրութեանց վրայ չտարակուսեցաւ բոլորովին :

Ստոյգ է որ Սիսակ նոյն պահուն խիստ անկեղծօրէն կը խօսէր, բայց վտանգի մասնուած մարդու մի ո՛չ տրամադրութիւնքն և ո՛չ ալ խոստումները մեծ բան կ'արժեն :

Հանդերձ այսու Արաքսիա քիչ մի յուս մնալէ և մտածելէ վերջն ըսաւ .

— Մտադիր եմ վիճակդ Տիկին Հարթմանեանի յայտնել և անկէ ինչդրել երեք հարիւր ոսկին :

— Կը յուսամ որ յօժարի վճարելու այդ գումարը :

— Կը յուսամ :

— Ո՛վ փրկիչս գու, ի՞նչպէս պիտի հատուցանեմ ընելու բարիքդ :

— Լաւ ամուսին մի լինելու խոստմամբ :

— Երբում ըրի քեզ արդէն պատուոյս վրայ :

— Ապա պէտք է պարտամորհակ մի տալ Տիկին Հարթմանեանի՝ պահանջած գումարիդ ի փոխարէն :

— Պատրաստ եմ կատարելու ամեն պայման :

— Եւ եթէ կարելի լինի՝ առ առաւելն պիտի ջանամ ստանալ Տիկին՝ զմէն երկու տարուան միջոց մի, թէեւ այդ պայմանաւորմէն շատ յառաջ կրնար պարտքդ վճարել, քանի սը Պ. Երանեան զքեզ իւր գործողութեանց ընկեր ընելու մտադիր է :

— Ամեն ջանք պիտի ընեմ, վստահ եղիր :

— Ուստի կը յուսամ թէ Տիկին Հարթմանեանէ այդ գումարը կ'ստանաս իմ երաշխաւորութեամբս :

— Ո՛վ անգոյգ աղջիկ, ըսաւ Սիսակ, անոր ձեռքն համբուրելու փորձ փորձելով ի նշան երախտագիտութեան :

Բայց Արաքսիա ձեռքը քաշելով, ըսաւ .

— Այդպիսի արտաքին ցոյցերու թշնամի եւ, գիտես արդէն :

— Բայց այդ երախտապարտ սրտիս բերմունքն էր, ըսաւ Սիսակ, աչերուն մէջ արտօսը մի փայլեցնելով :

Երբ մարդս կը հանդիպի մէկու մի որ զինքն անխուսափելի վտանգէ կ'ազատէ՝ նոյն պահուն գոհունակութեան սաստկութեանէն իւր անձնասիրութիւնն զգայնութեան կը փոխուի, մինչեւ ամենէն փափուկ սրտերու երախտագիտութիւնն զգարու չափ :

— Սա եւս աւելցնեմ քեզ, Սիսակ, ըսաւ Արաքսիա, որ եթէ երբեք անփոյթ լինիս յետ ամուսնութեանդ և անվճար թողուս պարտքդ առ Տիկինն Հարթմանեան, եթէ սակայն կը յուսամ հաճի զայդ զումար վճարելու, ե՛ս մինչեւ ցվերջ կենացս պիտի աշխատիմ հատուցանելու համար քու ստանձնած պարտքդ :

— Արաքսիա, եթէ յանցաւոր եմ իբր երիտասարդ, սակայն զիս այդչափ անպատիւ կարծելու իրաւունք տուած չեմ քեզ իբր մարդ, որպէս զի դու նախատինքն երեսին նետես :

Արաքսիա չպատասխանեց, այլ ըսաւ միայն .

— Երբեք չեմ ներեր քեզ եթէ իմանամ թէ Տիկին Արգարեանի պատասխանած ես, կամ մօտէն ո՞հեռուէն որ և է յարաբերութիւն ունեցած ես հետը :

Սիսակ զայդ եւս պատուոյն վրայ խոտացաւ և կատարելապէս խոտոււմը պահեց :

— Ուրեմն վազն առաւօտ եկո՛ւ հոս, ըսաւ աղջիկը, վերջնական պատասխանն ընդունելու համար :

Սիսակ հրաժեշտ առնլով իւր ազգականէն՝ մեկնեցաւ, մինչ աղնուասիրտ աղջիկին՝ իւր սրտին սուզը մէկ կողմ թողլով՝ գնաց Տիկինն Հարթմանեանի փոխառութեան առաջարկն ընելու :



Պ Լ ՈՒ Խ Ս Փ.

Ներսէս վիէննա գնացած էր գործով, երբ Արաքսիա իւր երկրորդ նամակն ուղղեց առ նա, և այդ պատճառաւ էր որ թուղթն առ ինք վերադարձաւ :

Տակաւին ի մայրաքաղաքն Աւստրիոյ էր և կը պատրաստուէր ի Մանչէսթըր վերադառնալ, երբ ձեռքն հասաւ Աղաւնիի երկտողը :

Ներսէս, որ մինչեւ նոյն ժամանակ կ'անդիտանար քրոջն ախտին ծանրութեան աստիճանը, սարսափեցաւ, մահու չափ ցաւեցաւ, և մտադիր եղաւ անմիջապէս ճամբայ ելնել, թէեւ ուխտած էր ոչ եւս ոտք կոխել ի Պոլիս, մանաւանդ այցելել այն տան ուր անհուն երջանկութիւն վայելած էր, և ուր թողած էր իւր վաղամեռիկ բարեբաատութիւնը :

Ուստի նամակն ընդունելով երկրորդ օրն իսկ ճանբայ ելաւ, և չորս օր վերջը կարողացաւ իւր փոքրիկ սիրեցեալ հիւանդը բազկացը մէջ սեղմել, զարհուրմամբ նկատելով սակայն տղուն աւերակացեալ դէմքն :

Աղաւնի չէր կրնար յագենալ ի տես իւր եղբոր. կը նայէր անոր անհուն գորովանօք՝ կը սեղմէր սրտին վրայ անոր ձեռքերն և կ'ըսէր շարունակ .

— Եղբա՛յրս, չգիտես որչափ երախտագէտ եմ քեզ որ բաղձանացս մին կատարեցիր :

— Եւ որո՞նք են միւս բաղձանքներդ, քուրի՛կս :

— Պիտի իմանաս զայդ վազն առաւօտ :

— Ինչո՞ւ ոչ այսօր :

— Վասն զի այսօր քու գաղափարաւդ և քեզմով միայն կ'ուզեմ զբաղելի :

— Լաւ :

— Բայց դու չուտով երթալու գիտաւորութիւն ունի՞ս դարձեալ :

— Աղաւնի՛ս, կը կենամ ցորչափ պէտք ունե- նաս ինձ :

— Երկար ժամանակ քեզ չպիտի կարօտիմ, ըսաւ մանուկը գաղտնի հաստացանօք մի զոր նշմարեց Ներսէս, առանց սակայն գիտած լինելն յայտնելու :

Երիտասարդին սիրտը կ'արիւնէր, ու այդ սիրուն արարածն ազատելու համար չկար զո՞՞ որ յանձն չառնուր կատարելու : Եւ արդէն սկսած էր իւր առջին զո՞՞ն՝ բնակելով վայրերուն մէջ որք իւր անցեալ երջանիկ օրերու յիշատակը կը զարթուցանէին իրեն. և մինչ թմրած կը կարծէր Արաքսիայի գաղափարն՝ ա՜հա կը զարթուր զօրութեամբ մի որ զինքը ցուցնելով կը զարմացնէր :

Տզուն յիշատակը յարակից էր իւր վարժուհւոյն յիշատակին, զի Աղաւնի և Արաքսիա երկու էակներն էին զորս՝ յետ իւր մօր, քան զամեն ոք աւելի սիրած էր : Դառնութեամբ կը մտածէր թէ ինքն գատապարտուած էր կորսնցնելու ինչ որ պաշտած էր : Աւերակաց ոգի՞ն էր ուրեմն որ նախասահմանուած էր ողբալու փլատակաց վրայ :

Արմինէ Ներսէսի շուրջը կ'ոտանուր իբր թռչուն գայլայլելով, յայտնելու համար իւր ուրախութիւնն եղբօրը վերադարձին համար. ու թէեւ սրտովին կը գուրգուրար Ներսէս փոքրիկ Արմինէի վրայ, սակայն լաւագոյն պիտի համարէր եթէ առանձին լինէր՝ այդ նուիրական հիւանդին մէն մի շունչը և մէն մի բազմանքը կատարելու :

Ստոյգ է որ գերման վարժուհին կը հեռանար երբ Ներսէս հիւանդին սենեակը կուգար, անոր և քրոջը մտերմական տեսութեան արգելք չլինելու հա-

մար. բայց նոյն իսկ Արմինէ կարծես աւելորդ կ'երեւար այն երկու հեղեմաչ էակաց ընդ մէջ որուն մին իւր վազածամ վերջին վրայ կը թուէր ողբալ, և միւսն՝ իւր անցեալ ինչպէս և ներկայ աղիտից վրայ :

Յաւն զցաւ կ'որոնէ, զի ուրախութիւնը թուի թշնամալից նենգութիւն խաւարապատ վիճակի մի :

Գ Լ Ո Ւ Թ Յ.

Ներսէսի յանկարծական գալուստն իբր բօթ հընչեց Տիկին Արգարեանի ականջին : Այդ հրէշ մայրն՝ անտարբեր՝ տղուն ծանր վիճակին, իւր վատ մեքենայութեանց ու սիրահարական խորհրդոցն էր հետամուտ :

Յաջողած էր հաւտացնելու Իսկուհին Ներսէսի ամուսնութիւնն՝ որպէս զի նա Երանեանց հաղորդելով զայդ լուր, մինչեւ Արաքսիայի հասնէր, վերջնական հարուածը տալով անոր յոյսերուն : Բայց փոխանակ անուղղակի կերպիւ՝ Իսկուհին ուղղակի զուժած էր խեղճ Արաքսիայի ականջին՝ Ներսէսի անտեղի ամուսնութիւնն :

Երիտասարդին վերադարձն ի գերեւ կը հանէր բոլոր հաշիւները Տիկին Արգարեանի, և այդ տեղի կ'ունենար անմեղ արարածի մի միջոցաւ որ կարծես վրէժխնդիր կը կանգնէր անմեղութեան արդար գատին :

Տիկին Արգարեան ոչինչ գիտէր թէ հրաւիրանօք իւս գտերն եկած էր Ներսէս ի Պոլիս, և կ'անիծէր իւր չար հոգեմղն այդ ուղեւորութեան շարժառիթը :

Մանաւանդ որ տիկինը չարաչար կը տանջուէր, նկատելով որ իւր առաջարկն առ Սիսակ երկու օրէ

ի վեր անպատասխանի կը մնար: Եթէ Սիսակ յաջողէր, կը մտածէր նա, Պ. Գրիգորի դրամական պահանջումն առանց իւր միջամտութեան գոհացնելու, անշուշտ անոր ամուսնութիւնը կը կատարուէր Վարդանոյշի հետ, զի կարող չէր արդիւլելու զայն՝ Սիսակի և օրիորդ Գրիգորի միջեւ տեղի ունեցած գայթակղական դէպքն երեւան հանելով, քանի որ փաստ մի չունէր: Միակ օրինաւոր վկայն որ իրեն կրնար օժանդակել Պ. Գրիգորն էր, և նա իւր սան պատուոյն համար պարտաւորեալ էր անշուշտ լռելու՝ եթէ խնդիրը վերջանար առանց որ և է ազմուկ յարուցանելու:

Եւ եթէ Սիսակի պակասարթութիւնը կատարուէր՝ հետեւաբար ենթադրելու էր թէ Արաքսիայինն եւս տեղե պիտի ունենար Ներսէսի հետ, զի այս վերջինն ամեն իրաւունք պիտի ունենար կասկածելու թէ Արաքսիա գուցէ ի նպատակ ըստ բարեկամուհւոյն գործած էր. կասկածէն մինչեւ ստուգութիւն քայլ մի կար միայն, և եթէ այդ քայլն առնուիր, բոլոր իւր լարած թակարդներն ապարդիւն կը մնային, և իւր հոգով չափ առած ազջիկն իրեն կրամ անունը կ'ստանար:

Չներսէս չիտիւթելու համար միակ միջոց մի կար, այն էր օրիորդ Գրիգորի սիրահարութիւնն Սիսակի հետ՝ երեւան հանելով հաստատել տալ զայն կերպով մի Պ. Գրիգորէն, քանի որ տակաւին գործը վերջացած չէր և մարդը Պոլիս կը գտնուէր: Բայց այդ մասնութիւնն անկարող էր ընելու ցորչափ չընդունէր Սիսակի բացարձակ մերժումն իւր առաջարկած դրամին վերաբերութեամբ, ուստի առժամանակեայ կերպիւ անգործութեան գատապարտած էր Տիկին Արգարեան և այդ վիճակը մահառիթ էր կարծես իրեն համար, երբ ամեն վայրկեան իրենց վիճակը կրնար փոփոխիլ ի վնաս իրեն:

Նոյն իրիկունն գալստեան օրուան Ներսէսի ի սան հայրենի, երիտասարդը զնաց ընդունելու հիւրերն որք եկած էին իրեն բարի գալուստ մաղթելու. նոյն սենեկին մէջ կային Պ. և Տիկին Արգարեան: Այլ և այլ խօսակցութեան նիւթեր իրարու յաջորդելով, խնդիրն ինկաւ Սիսակի մտալուտ ամուսնութեան վրայ, Վարդանուշի յարատեւութեան վրայ իւր սիրոյ զգացմանց մէջ, որով և պարտաւորութեանն անոր ծնողաց ոչ ոք ամուսնութեան համար վերջապէս իրենց հաւանութիւնը տալու:

Պ. Գրիգոր ներկայ էր այդ խօսակցութեան և բուրովին լուռ կեցաւ: Բնականապէս նոյնն ըրաւ Պ. Արգարեան, իսկ Տիկինն անկարող եղաւ որ և է աննպատակ նարկութիւն մ'ընել նոյն իսկ հետուէն հետո ի մասին օրիորդ Գրիգորի, որով կարենար ենթադրել տալ Ներսէսի թէ ինչպէս գաւառացի օրիորդին նոյնպէս և Արաքսիայի հետ սիրահարական յարաբերութիւններ ունենալէ վերջը՝ Սիսակ օրիորդ երանեանի հետ կ'ամուսնանար վերջապէս:

Բայց Ներսէս Վարդանոյշի վերաբեալ տեղեկութիւններն իմանալով, և լաւ ճանաչելով սերտ բարեկամութիւնն Արաքսիայի անոր համար, քանի որ զայդ բազմիցս յայտնած էր իրեն իւր սիրուհին, յուսադրող ուրախութեամբ համակուեցաւ, մտածելով թէ ինքը գուցէ թիւրիմացութեան գոհ եղած էր, և թէ Արաքսիա կորուսեալ չէր իրեն համար:

Յուսահատ հոգի մի որ ի յոյս կը վերադառնայ, կը կարծէ սակեզօժ երազի ներգործութեան ներքեւ լինել, և իրաց ստոյգ վիճակին վրայ ապացոյց մի ստանալէն կը վախնայ իբր գառն զարթումէ մի:

Ներսէս կը վայելէր այդ յայտնութեամբ ներքին ցնծութիւն մի՝ որուն սաստկութենէն իսկ կը կասկածէր թէ վաղանցուկ պիտի լինէր:

Վիրաւոր հոգիները կասկածոտ են, և նոյն իսկ իրենց նպատաւոր հանդիսացած իրողութեանց մէջ բաղդին գաւազրութիւնը կը տեսնեն:

Ներսէս անհամբեր էր առանձնանալու, խորհելու համար և առարկելով իւր ճամբորդութեան ազդած յոգնութիւններն՝ հրաման խնդրեց իւր հիւրերէն սենեակ քաշուելու:

Տիկին Արգարեան որ ամեն ինչ գիտած էր՝ նըշմարեց նախ գոհունակութեան շողն որով Ներսէսի գէմքը վայրկան մի փայլած էր և ապա այդ գոհունակութեան սեւ անդրադարձութիւն մ'ունենալն: Իւր հոգին կը մոնչէր, կ'ուզէր հնարել ուրիշ չար միջոցներ, միանգամ ընդ միշտ վերջնական կերպիւ հարուածը տալով Արաքսիայի բաղդին, և այդ նպատակին հասնելու համար մտադիր էր հետեւեալ օրն իսկ գրել Սիսակի, անոր որոշումն իմանալու համար:

Գ Լ Ո Ւ Յ Կ Ս.

Ներսէս յառաջ քան իւր սենեակը քաշուելու, գնաց այցելելու իւր սիրելի հիւանդին: Աղաւնի արթուն էր, ըստ իւր սովորականին, զի շատ անգամ տքնութիւններ ունէր, և գիշերուան լուսութեան և առանձնութեան մէջ միայնակ անքուն կը հսկէր. յայնժամ կը մտածէր շատ նիւթերու վրայ և մանաւանդ ի մայրենի սիրոյ զուրկ յինելուն վրայ, և այդ զրկումը խիստ ծանր էր իւր զգայուն հոգւոյն:

Փոխարինութիւն մ'ունէր իւր քրոջը գորովոյն մէջ. բայց այն որոտող աղայական զգացումը բաւական չէր յագեցնէր յինքն այն մեծ պէտքն զոր կ'զգար սի-

րելու և սիրուելու: Կը փնտռէր ինչ որ ծանր և խորունկ էր, և զայդ կերպով մի գտած էր Ներսէսի և Արաքսիայի սիրոյն մէջ: Բայց մին ինչպէս և միւսն հեռացած էին իրմէ, և ինք մատնուած էր ի ձեռս օտարաց, անհոգ անձանց անտարբերութեան հանդիպած էր, այնպէս որ չէր համարձակեր արթնցնելու գիշերուան մէջ իւր քով հսկող աղայինն, եթէ խիստ տագնապեցուցիչ վիճակ մի գինքն չմղէր առ այդ:

Նոյն գիշեր Աղաւնի զեղբայրն իւր քով ունենալու գիտակցութեամբ ուրախ էր, գոհ անհունապէս, և այդ գոհունակութեան սաստկութենէն իսկ իւր ջղերը զրգուած էին, որով անկարող էր ննջելու:

Ներսէս Աղաւնիին սենեակը մտաւ առանց ձայն հանելու և ամենայն զգուշութեամբ անոր անկողնին մօտեցաւ: Մանուկը զեղբայր իւր տեսնելով՝ ըսաւ ցնծութեամբ.

— Ա՛, գօ՛ւ ես, եղբա՛յրս:

— Չես քնանար, քուրի՛կս:

— Այնչափ երջանիկ եմ զալտեանդ պատճառաւ որ անհնար է ինձ աչերս գոցել:

Ներսէս յուզուելով այդ արտայայտութենէն, ձուլուցաւ տղուն մահճին վրայ և համբոյր մի տուաւ փոքրիկ հիւանդին:

— Որչա՛փ ուրախ եմ, եղբա՛յրս, մտածելով թէ իմ հետս պիտի բնակիս ցորչափ պէտք ունենամ քեզի:

— Ապահով եղիւր և գիտցիւր թէ ամեն կամքերդ կատարելու պատրաստ եմ:

— Ամե՛սքը, հարցուց մանուկն, աղերսագին անոր նայելով:

— Ամենքն, Աղաւնի, և ինչ որ խնդրես:

— Լաւ ուրեմն. խոտացիր զԱրաքսիա տեսնելու առիթ մի հայթայթելու ինձ, ըսաւ եղբօրն, անոր

Արաքսիա կամ Վարժուհին

ականջէն վար ցած ձայնիւ խօսելով , զի կը կատկածէր որ աղախինը կամ իւր քոյրն արթննալով առաջարկը կը լսէին : Ոչ թէ Արմինէին վրայ վստահութիւն չունէր , այլ կը վախնար որ չափազանց աշխուժին մէջ թեթեւութեամբ կը մատնէր իւր գազանիքն և յայնժամ գիտէր որ իւր մայրն ամեն անողորմ պատերազմ յարուցանելու կարող էր , քանի որ նա արգիլած էր որ Արաքսիայի խօսքն անգամ ընեն տան մէջ :

Ներսէսի թուեցաւ նոյն միջոցին որ Ազաւնի երկնառաք հրեշտակ մ'էր , զի ինքն ևս կը մտածէր թէ ի՞նչպէս կրնար Արաքսիայի հետ տեսութիւն մ'ունենալ , կասկածելի թուած խնդիր մի լուսաբանելու համար : Ուստի ամենայն եռանդեամբ պատասխանեց .

— Պատրաստ եմ կամքդ կատարելու :

— Եղբայրս , օրհնեալ լինիս :

— Սակայն , ո՛ւր կրնաս տեսակցիլ հետը , Ազաւնի'ս :

— Այս տան մէջ անհնար է :

— Տարակոյս չկայ : Ուրեմն ի՞նչպէս յաջողինք :

— Պատուիրած է բժիշկը կասքով երթալ շրջագայութեան . ևս յօժարամիտ չէի այդ պատուէրը գործադրելու , զի աշխարհ իւր բոլոր ազմուկներով , ուրախութեան ցոյցերով ու կեանքով և առաւել ևս տխրութիւնս կ'աւելցնէ . և քանի որ մայրս բնաւ հոգ չէր տաներ դուրս ելնելուս կամ չելնելուս , նախապատիւ կը համարէի տան մէջ փակուած մնալ :

— Հասկցայ , սիրո՛ւն հրեշտակս , կ'ուզես որ տեղ մի ժամադրութիւն ունենամ օրիորդ Արաքսիայի հետ :

Առաջին անգամն էր որ Ներսէս այդ անունը կը հնչէր , և սիրտը զօրաւոր բաբախում մ'ունեցաւ :

— Ճիշդ այդ է խնդրածս քեզմէ , եղբայրս : Միայն թէ դուն ու ևս տեղեակ լինինք այդ խորհրդին գոր-

ծադրութեանը : Կը փափաքէի որ քոյրս ևս տեսնէր մեր սիրելի օրիորդը , բայց կը վախնամ որ չկարողանայ լուի :

— Իրաւունք ունիս , Ազաւնի'ս : Արմինէ տղայ մ'է տակաւին , իսկ դու կարծես ծերացած ես , տղայ լինելէ յառաջ :

— Որով և կեանքս վերջանալու վրայ է , ըստ ազջիկը , դասն ժպտով մի :

— Եթէ չես ուզեր զիս վիրաւորել , հալածէ այդ սոսկալի գաղափարներն . ևս ևս զայդ կը խնդրեմ քեզմէ՝ իմ ընելու ծառայութեանս փոխարէն :

— Պիտի ջանամ , եղբայրս :

— Կ'ուզեմ որ յաջողիս մանաւանդ , կ'իմանա՞ս , եթէ չես ուզեր սիրտս ցուցնել :

— Ես բնոյճակառակն գրեզ երջանիկ տեսնելու կը փափաքիմ , եղբայրս :

— Եթէ դու գոհ և ուրախ լինիս , ևս այ նոյնը կը լինիմ :

— Սակայն , եղբայրս , կը փափաքիմ որ վաղն առաւօտ իսկ երթաս ի տեսութիւն մեր վարժուհւոյն , իմացնես իրեն թէ միշտ զինքը սիրած եմ , և թէ կը փափաքիմ զինքը տեսնել ժամ յառաջ :

Խեղճ ազջիկը կը վախնար որ գուցէ ժամանակ չունենար այդ տեսութիւնն ընելու , եթէ գործն երկարաձգուէր : Եւ հիւանդաց յատուկ անհամբերութեամբ , խնդրեց Ներսէսէն որ առաւօտուն գայ զինքն ողջունելու Արաքսիայի այցելութեան երթալէն վերջն , որով և անոր պատասխանն հաղորդէ իրեն :

Ազաւնիի անհամբերութիւնը կը համապատասխանէր Ներսէսի սրտին անձկութեան . եթէ կարելի լինէր երթաւորելին՝ գիշերուան մէջ իսկ պիտի գիմէր Արաքսիայի , անկէ ճշմարտութիւնն իմանալու համար :

Ուստի ներսէս իմացաւ Աղաւնիէն թէ երիտա-
սարգուհին Տիկինն Հարթմանեանի տան մէջ կը բնակէր :

— Արդեօք կրնա՞ս զրուցել ինձ հասցէն Տիկին
Հարթմանեանի , հարցուց ներսէս :

— Այո՛ , եղբայր :

— Բայց դու ամեն ինչ կ'իմանաս ուրեմն , հետա-
քրքի՛ր քուրիկ , գոչեց երիտասարդն ուրախութեամբ :

— Հետաքրքիր եմ ինձ սիրելի անձանց նկատմամբ :

Ներսէս ուզածն իմանալէն վերջը քիչ մի եւս հի-
ւանդին քով կեցաւ , խօսակցեցաւ անոր հետ , և երբ
աղջիկն աչերը գոցեց՝ հեռացաւ անձայն , առանց երկու-
քնացողներուն քունը վրդովելու , մտաւ իւր սենեակն ,
ու հագիւ հազ կարողացաւ ննջել մէկ երկու ժամ ,
այնչափ յուսադրող և կասկածալից՝ միմեանց ներձակ
զազափարներ միտքը կ'զբազեցնէին :

Փ Լ Ո Ւ Խ Ե Բ .

Առաւօտուն արշալոյսին հետ ելաւ ներսէս , մաս-
նաւոր խնամօք զանձն իւր զարդարեց , և այլ և այլ
բաներով աշխատեցաւ , որպէս զի յաջողի երկու երեք
ժամեր անցնելով՝ մինչև որ առաւօտեան վայելուչ
ժամու մի կարենար ներկայանալ Տիկինն Հարթմանե-
անի տունը : Նոյն առաւօտ Արաքսիա եւս քան զսո-
վորականն կանուխ ելած էր , ընդունելու համար՝
զՍիսակ :

Մեր երիտասարդն անհամբերութեամբ իմն զո՛ր
զիւրին է երեւակայել , ներկայացաւ Արաքսիայի , իմա-
նալու համար , թէ յաջողած էր զինքը փրկելու : Աղ-
ջիկն ամեն ինչ ի կատար հասուցած էր . ուստի Սիսակ

ընդունեց անկէ երեք հարիւր ոսկին՝ յանձնելով նմա-
պարտամուրհակ մը զոր անմիջապէս գրեց և ստորա-
գրեց : Ապա Սիսակ նախընթաց օրուան խոստումներն
գրեց : Ապա Սիսակ նախընթաց օրուան խոստումներն
և բուռն շնորհակալիքն երկրորդելէ յետոյ , փութաց
մեկնելու , ժամ յատաջ Պ. Գրիգորի հետ իւր գործը կար-
գադրելու համար , վերջնական կերպիւ մի անգամ ընդ
միշտ խոստանալով անձին ոչ եւս կնճոտտ պարագայ-
ներու մէջ գանուիլ :

Մինչ վարդանոյշի նշանածը գուռը բացաւ դուրս
ելնելու համար՝ երես առ երես գանուեցաւ ներսէսի հետ :
Սա խիստ անախորժ զգացում մ'ունեցաւ , նշմարելով
զա՛յն որ իւր նախանձորդն համարած էր այնչափ ժա-
մանակ , և նեղացաւ հաստատելով թէ նա այդքան
կանուխ այցելած էր Արաքսիայի :

Սիսակ կ'անգիտանար ներսէսի վերադարձն , որով
զարմանքն յայտնեց զինքը տեսնելուն վրայ :

• Սիրահարները սովոր են կասկածանաց առարկայ
տեսնել ամենէն պարզ պարագայի մէջ անգամ . ուստի
ներսէս այդ զարմանքը զժգոհութեան ծածուկ զգաց-
ման մի վերագրելով՝ իւր անհանգստութիւնն և դառ-
նութիւնը սաստկացաւ , և խօսքը կարճ կապելով հար-
ցուց եթէ այդ տունը Տիկինն Հարթմանեանի՞նն էր .
և Սիսակէն հաստատական պատասխան մ'ընդունելով
ներս մտաւ զօրիորդ Արաքսիան ինդրելով սպասաւորէ
մի որ ներկայացաւ իրեն :

— Եթէ չեմ սխալիր , օրիորդը սա խուցն է , ըսաւ ,
սենեակ մի մատնանիչ ընելով . բայց կը հաճի՞ք , պա-
րո՛ն , ձեր անունն յայտնել որպէս զի այցելութիւնն
խմացնեմ օրիորդին :

— Հարկ չկայ , ըսաւ ներսէս , և արտասովոր սր-
տայուզութեամբ քայլեց դէպ այն կողմ ուր կը գրտ-
նուէր սրահն թագուհին :

Աննեակին զուոր բացաւ սպասաւորն ու ետ քաշուեցաւ անմիջապէս, մինչ Ներսէս ներս մտնելով՝ գէմ առ գէմ գանուեցաւ աղջկան հետ :

Արաքսիա ոտքի վրայ էր, և քայլ մի ետ առնելով նստարանին վրայ անկաւ անխօս :

Ներսէս, ոչ նուաձ յուզուած, կը նայէր անո՛ր զօր այնչա՛փ սիրած էր, և զօր կը սիրէր տակաւին հակառակ իւր կամաց : Բայց յաջողելով յաղթելու իւր յուզման, և չգիտնալով եթէ Արաքսիա յանցաւո՛ր էր թէ անմեղ, պաշտօնական ձեւով մի ըսաւ .

— Օրիո՛րդ, կուզամ նուիրական պարտք մը կատարելու :

— Պատրաստ եմ ունկնդիր լինելու ձեզ, պատասխանեց աղջիկն հանդարտութեամբ մի զօր կը ստէր իւր աղմկալից սիրտը :

— Կը փախաքիմ հաղորդել ձեզ գուցէ վերջին կամքն ողբացեալ Աղաւնիի, ըսաւ երիտասարդն յժգմամբ :

— Ո՛վ իմ պաշտելի Աղաւնիս, մրմնջեց օրիորդը, զու չմոռցա՛ր զիս գոնէ : Բայց ինչդրեմ այնչա՛փ անյոյս է ուրեմն այդ պաշտելի արարածին յիծակը :

— Դժբաղդաբար այնպէս կ'երեւի :

— Ո՛վ աղէտք : Խնդրեմ, ի՞նչ կը պահանջէ Աղաւնիս :

— Կ'ուզէ ձեզ տեսնել վերջին անգամ մի, ըսաւ Ներսէս նուաղեալ ձայնիւ :

Արաքսիա սկսաւ լալ յորդառատ : Թէեւ սատոիկ զգածուեցաւ Աղաւնիի յայտնած փախաքէն, այդ լաւ պատրուակ մ'էր առանց ամաչելու և խոնարհելու, իւր արտասուաց հոսելու ազատութիւն տալու համար :

Ներսէս դժուարաւ կը յաղթէր իւր արտասուաց, և կը կարծէր գտնել վերստին զիւր սրտին հա-

տորը : Բայց Արաքսիա ընդհակառակն զայն ամուսնացած կարծելով, զիւր կորուստը կուլար :

Օրիորդն սակաւ ինչ հանդարտելով, հարցուց .

— Ո՛ւր արդեօք հնարաւոր է ինձ տեսնել զԱղաւնին :

— Ոչ տանը մէջ :

— Այդ անհնար է արդէն, գիտեմ, զի դժբաղդաբար թշնամութիւն յարուցած եմ ինձ գէմ, առանց սակայն մէկու մի վիսաս հասնելու եթէ ոչ իմ անձիս :

Ներսէս այնպէս յուզուած էր աղջկան անարուեստ և սրտառուչ ձեւերէն որ անգիմադրելի բաղձանք մ'ունեցաւ անոր ոտքն իջնալու :

— Այսի՞նքն, օրիո՛րդ, հարցուց :

— Գո՞ն եմ որ այսօր առիթ կ'ունենամ, թէև այսպիսի տխուր պարագայի մի շնորհիւ, արդարացնել զանձն իմ ձեր առջեւ, զի վստահ եմ որ թիւրիմացութեան առարկայ եղած եմ :

Երանի՛ թէ այնպէս լինէր, օրիո՛րդ, և ես յանցանքս, եթէ հարկ է, արեամբս իսկ կը քաւեմ :

— Ի՞նչ հարկ, շատ ուշ է, պատասխանեց աղջիկն :

— Երբեք ուշ չէ արդարութեան համար իւր փըրկարար պաշտօնն ի գործ դնելու : Բայց կը խնդրեմ, օրի՛որդ, խօսեցէք շուտ, և յայտնեցէք թէ ո՞ր թըշնամութեանց կ'ակնարկէք :

— Ո՛հ, պատասխանեց, Տիկին Աբգարեանին կ'ակնարկեմ :

— Ի՞նչ ըրաւ նա ի վիսաս ձեզի :

— Ի՞նչ ըրաւ, կ'ուզէք իմանալ, ուրեմն ունկընդիր եղէք :

— Անհամբեր եմ ամեն ինչ իմանալու :

— Ես երբեք չյայտնեցի ձեզ ի պատիւ ձեզ և ձեր հօր, թէ այդ տիկինը սիրահարեալ էր Պ. Սիսակի :

— Սիրահարեալ, ի՞նչ կ'ըսէք :

— Այո՛, և այնպէս սիրահարեալ որ ամենէն ան-
լուր անիրաւութիւնը գործելու փոթ չըբաւ :

— Ի՞նչ անիրաւութիւն, հարցոց երիտասարդն,
ուրախութեան յուզմամբ մը զոր զիւրին էր ըմբռնել,
զի կը յուսար որ հասած էր վայրկեանն ամեն ինչ
լուսարանելու : Բայց յանկարծ միտքն անկաւ դարձեալ
գիշերային ժամադրութիւնն, ու ճակատը մթնցաւ :

— Սիւսակի սիրահարուած էր նաեւ, յարեց աղ-
ջիկը, վարդանոյշ բարեկամուհիս, և այդ ամուսնու-
թիւնն արգիլելու համար ձեր մօրուն օգուտ քաղեց
իմ և Սիւսակի բացակայութենէն, հաւատացնելու հա-
մար վարդանոյշի թէ ես գաղտնի յարաբերութիւններ
ունէի իմ ազգականիս հետ, թէ զինքն անօրինաբար
կը խաբէի: Եւ ո՞ գիտէ եթէ նոյնը չըբաւ և ձեզ
նկատմամբ :

Սա տարբերութեամբ որ փոխանակ խօսքերու,
գործ ներկայացոց ինձ :

— Չեմ հասկնար :

— Գիշեր մի մինչ կը ննջէի, եկաւ զիս արթնցոց,
տեղացս հանեց, և յորդորեց զիս սպասելու և հայելու :
Եւ երբ կ'ուզէի իմանալ թէ ի՞նչ կ'ուզէր ըսել, ահա
տեսայ զձեզ որ գիշերուան մէջ ճրագ ի ձեռին սենեկէ
մի դուրս կ'երնէիք Սիւսակին հետ առանձին :

— Ապիրա՛տ կիսնն :

— Այս մասին յանցաւոր չեմ գտներ զինքը :

— Յանցաւոր չէ՞ք գտներ : Ինչո՞ւ ուրեմն խօ-
սակցութեանս ունկնդիր չըբաւ զձեզ նաեւ, եթէ մաս-
նաւոր նպատակ մի չունէր զձեզ խաբելու :

— Այո՛, պատուիրեց ինձ դրանս առջեւէն չհե-
ռանալու :

— Ես ձեզի պատճառն իմացնեմ, վասն զի եթէ

ըսածներս դուք իմանայիք, մեղադրութեան տեղի չէր
մնար, քանի որ պիտի լսէիք թէ ի նպաստ վարդա-
նոյշի դատ կը վարէի. առաւելն կայ՝ պիտի իմանայիք
նաեւ Տիկին Արգարեանի սիրահարութիւնը Սիւսակի հետ :

— Այդ սուկալի հրէշին խաղալի՞քն եղայ ուրեմն :

— Եւ ես անոր զո՞ր գժբախտաբար :

— Բայց խնդրեմ սա եւս յայտնեցէք ինձ թէ ի՞նչ
պէտք ունէիք մութին զՍիւսակ հիւրընկալելու :

— Վասն զի վարդանոյշ անհնարին կասկածներէ
և տատապանքներէ տանջուելով՝ խնդրած էր ինձմէ
որ անպատճառ հետեւեալ առաւօտն իրեն լուր մի տամ
Սիւսակի խորհրդոց վրայ, եթէ չէի ուզեր որ մեռնի :
Ուրիշ միջոց չունէի բայց ժամադրութեան մի գիմելու
խաւարի ժամանակ, Տիկին Արգարեանի կասկածները
չըրգուելու համար :

— Ո՞վ իմ Արաքսիաս, կը գտնե՞մ գրեց ուրեմն
վերստին, ըսաւ Ներսէս, անհուն խանդիւ, և մերձե-
նալով աղջկան, ուզեց ձեռքերը համբուրել :

Վարժուհին ետ քաշուելով ըսաւ .

— Այդ իրաւունքն ոչ եւս ունիք :

— Ո՞հ, արգեօք ուրիշի՞ խոստացար սիրտդ,
Արաքսիա :

— Ես ս'չ, բայց դուք, քանի որ ամուսնացած էք,
պէտք է որ հաւատարիմ մնաք ձեր կնոջ :

— Ե՛ս, ամուսնացած, ո՞վ ըսաւ քեզ այդ սուտը :

— Աստուած իմ, գոչեց աղջիկն, սո՛ւտ է ուրեմն :

— Կատարելապէս, Արաքսիաս, զի սիրտս՝ հա-
կատակ բոլոր ջանիցս, քու կը մնայ, քու կը է և պիտի
լինի միշտ :

— Արգեօք կ'երազե՞մ, դու ի՞նչ ես վերստին,
Ներսէ՛ս :

— Ո՞չ, երազ չէ, այլ երկնային իրականութիւնս

Թիւն : Բայց յայտնէ ինձ, ո՞վ հաւատացուց քեզ թէ
ես ամուսնացայ :

— Կ'իմանա՛մ, կ'իմանա՛մ :

— Ի՞նչ կայ :

— Դարձեալ Տիկին Արգարեանի նենգաւորութեան
փաստ մի :

— Չեմ հասկնար :

— Իսկուհին կամաւոր թէ ակամայ գործիքն եղած
է Տիկին Արգարեանի. նա ըստ ինձ թէ դու ամուս-
նացեր ես անդուհուոյ մի հետ :

— Ին՞չ՞ հայրս, որպիսի՞ ճիւղի ձեռք ինկած է :

— Ի՞նչ զարհուրելի կին :

— Բայց ներքէ ինձ վերջին հարցում մի, Արաքսիաս :

— Խօսէ, Ներսէ՛ս :

— Ի՞նչ պատճառաւ այս առաւօտ կանուխ Սիտակ
այցելութեան եկած էր քեզ :

— Դարձեալ կը կասկածիս :

— Ո՛հ, ո՛հ, պայց պարզ հետաքրքրութիւն մ'է :

Ի պատասխանի այդ հարցման՝ Արաքսիա գրպա-
նէն երկու թուղթեր հանելով զանոնք երիտասարդին
մատոյց. մին՝ նամակն էր Տիկին Արգարեանի առ
Սիտակ՝ որով 300 ոսկի կ'առաջակէր անոր. և միւսն
պարտամուրճակն էր Սիտակի :

Առաւ զանոնք Ներսէս և հետզհետէ կարգալով,
առաջինը ինչդրեց Արաքսիայէն, և երկրորդը վերա-
դարձնելով բացատրութիւն ու զեց կարգացածին վրայ՝
Աղջիկը պատմեց օրիորդ Գրիգորի պարագայն, և իւր
միջամտութիւն՝ զՍիտակ ազատելու համար անել վի-
ճակէ մի :

Ներսէս եւս քան եւս հիանալով աղջկանը վրայ
և սոսկալով այն անդառնալի կորստեան վրայ զո՞ր
պիտի ընէր նենգութեան խաղալիք լինելով, կ'օրհնէր

զիւր Աղաւնին որ պատճառ եղած էր իւր կորուսեալ
սիրելին վերադարձնելու :

Աղաւնի անունը լսելով՝ Արաքսիա յիշեց երախ-
տագիտութեամբ այն հրեշտակն զոր մոռցած էր վայ-
րիկ մի, իւր անձն արգարացնելու համար, և հարցուց
անձկութեամբ թէ ե՞րբ և ո՞ւր տեղի պիտի ունենար
իրենց տեսութիւնը :

— Ե՞րբ, չգիտեմ, պատասխանեց Ներսէս. սա-
կայն կրնամ հաստատել թէ նոյն իսկ հօրս տան մէջ
պիտի տեսնուիս քրոջս հետ :

— Հօ՞րդ ասն մէջ, հարցուց, Արաքսիա գար-
մանօք :

— Եթէ Տիկին Արգարեան չուզեր որ իւր գա-
ւերը, խայտառակութիւններն և նամակներն երեւան
հանեմ, պարտական է բնաւ ամենափոքրիկ զժուա-
րութիւն չյարուցանելու քու այցելութեանց մասին,
ըսաւ Ներսէս եղանակաւ մի, որ չայտնի էր թէ խօս-
քերը կատակ չէին :

Երկու երիտասարդներն իրարու երկրորդելով
յորդառատ և սիրալառ սրտերնուն ուխտերը, բաժ-
նուեցան, Արաքսիա ընդ փոյթ Տիկին Հարթմանեանի
աւետելու համար իւր երանութիւնն, և Ներսէս տուն
վերադառնալու մտօք :



Գ Լ Ո Ւ Ծ Ա Գ.

Անհամբերութեամբ կ'սպասէր Աղաւնի եղբօրը վերադարձին, իմանալու համար եթէ հանգիստած էր Արաքսիայի, և եթէ հանգիստած ի՞նչ հետեւանք ունեցած էր իւր առաջարկը:

Բայց երբ Ներսէս սենեակէն ներս մտաւ, հիւանդն անմիջապէս իմացաւ որ նա աւետարեւր մ'էր, ու քրոջն առջեւ ոչինչ յայտնելու համար, աչերովն հարցուց ինչ որ կ'ուզէր հաստատապէս իմանալ: Ներսէս մօտենալով մանկան և զայն զրկացը մէջ առնելով՝ հօգերուղիս համբոյր մի առաւ անոր, ըսելով.

— Կամքդ պիտի կատարուի, ս'՛վ դու իմ երջանկութեանս պատճառը:

Աղաւնի այդ խօսքերէն սա միայն հասկցաւ թէ պիտի տեսնէր վերջապէս զօրիորդն որուն տեսութեան կարօտ էր:

Ներսէս տակաւ ինչ երկու քոյրերուն հետ կենարէն վերջը, երբ ոտք ելաւ անոնցմէ հեռանալու համար, Արմինէ ուղեց խափանել ընթացքը հազար մանկական ստատանութիւններով, մինչ Աղաւնի կշտամբայից ձեւով մ'ըսաւ.

— Եղբա՛յրս, այսչա՛փ անհամբեր ես ուրեմն զիս թողլու:

— Հրեշտակս, պատասխանեց նա, ցաւ է ինձ թողուլ զքեզ այսչափ շուտ. բայց կարգադրելիք գործ մ'ունիմ, և անմիջապէս որ կատարեմ զայն, կուզամ քեզ և Արմինէի խիտտ ուրախառիթ լուր մի տալու:

— Իմացուր զայդ այժմէն, գոչեց Արմինէ:

— Ո՛չ, անկարելի է:

— Կ'սպասենք, եղբա՛յրս, ըսաւ Աղաւնի, համակերպութեամբ:

— Կեցցե՛ս ուրեմն, իմ սիրո՛ւն փոքրիկս, ըսելով, համբոյր մի եւս առաւ հիւանդին, ուրիշ մ'ալ Արմինէին, և փութաց սենեկէն դուրս ելնելու:

Ներսէս հարցուց ազախնոյն եթէ Տիկինն արթընցած էր, և իմանալով որ նա իւր սենեակն էր, և թէ իւր հայրն եկեղեցի գնացած էր՝ կիրակի լինելով նոյն օրը, քայլեց զէպ ի խուց Տիկին Աբգարեանի, և հարցուց անոր եթէ ներելի էր ներս մտնել:

Տիկինն հաճեցաւ, սակայն մեծ սրտայուզութիւն մ'զգաց, նկատելով թէ ամուսնոյն որդին ոչ երբեք այդպիսի քայլ մ'առած էր մինչեւ նոյն օրն, և թէ կարեւոր պատճառ մ'ունէր անշուշտ, իւր սենեկին մէջ հետը խօսելու արտօնութիւնը խնդրելով:

Ներսէս սենեկէն ներս մտաւ ու դուռը դոցելով իմացուց թէ առանձին խօսակցութիւն մի կը խնդրէր:

— Կրնաք վստահ լինել, ըսաւ տիկինը, թէ ոչ ոք հոս կը մտնէ առանց հրամանիս, եթէ ոչ ամուսինս:

— Լաւ ուրեմն, ըսաւ երիտասարդն, և վայրկեան մի կանկ առնլով սկսաւ այսպէս իւր խօսակցութիւնը.

Չգիտեմ ի՛նչ պատճառ ունիք, Տիկին, օրիորդ Արաքսիայի զէմ ատելութիւն ունենալու համար:

— Խնդրեմ, պատասխանեց գոռոզ կինն, երբեք զինքն ատելութեամբս չեմ պատուած, և դուք զարմանալու չէք այդ բանին վրայ:

— Դուք, Տիկին, ինչպէս և ես կ'երեւայ թէ թիւրիմացութեան զո՞՞ եղած ենք:

— Կ'երեւայ թէ այդ խարդախ աղջիկն յաջողած է զձեզ կրկին անգամ խաբելու:

— Ես անձս և ոչ անգամ մի սխալած կը համարիմ, որպէս զի երկրորդ անգամ սխալելէ զգուշանամ:

— Ես, յօգուտ ձեր, յայտնեցի այդ վարժուհւոյն

որպիսի՛ անբարոյական անձ լինելը, զի հասկցած էր որ թակարդ կը լարէր ձեզ, և ջանացի փրկել զձեզ: Ես խղճովին պարտքս կատարեցի, իսկ եթէ դուք կը յամառիք անպատուութեան գիրկն անկանիլ՝ ես անպարտ եմ:

— Տիկին, յամառութիւնս այնչափ հեռու կը մղեմ մինչեւ անդամ յայտնելու ձեզ, այս միջոցիս իսկ թէ օրիորդ Արաքսիա Վարսամեան իմ նշանածս է:

Տիկին Արգարեան զեղնեցաւ իբրեւ զմահ, և գառնութեան սաստկութեանէն զոչեց:

— Ես երբեք այդ անպիտան վարժուհին իբր Տիկին Արգարեան չեմ ճանաչեր:

— Ճանաչէք թէ ոչ, այդ փոյթ չէ ինձ, միայն թէ կը պահանջեմ որ առաւել ակնածութեամբ խօսիք այսուհետեւ անձի մի վրայ որ քիչ ժամանակէն կինս պիտի լինի, և որ ամենայն պատուոյ արժանի է իւր բարի վարքովը:

— Դուք չէք կրնար փոխել իմ աննպատակ գաղափարս անոր վրայօք, և ոչ իսկ կրնաք արգիլել որ խօսիմ:

— Այո՛, Տիկին, կրնամ արգիլել:

— Ի՞նչ եղանակաւ արգեօք, հարցուց կինն, արհամարհոտ ժպիտով մը:

— Յայտնելով թէ ինչ որ զրուցեցիք օրիորդ Արաքսիայի վրայօք, պարզապէս զրպարտութիւն մ'էր:

— Ի՞նչ փաստերով արգեօք պիտի ապացուցանէք զայդ:

— Ի շնորհս այս նամակին, ըսաւ երիտասարդը, գրպանէն հանելով Տիկինոջ նամակն առ Սիսակ, և զայն ցոյց տալով նմա:

Տիկին Արգարեան շանթահարելով լռեց առջի բերան, և ապա ուզեց ուրանալ թէ այդ գիրն ինքը գրած էր:

— Տիկին, ըսաւ երիտասարդն, ուրանալը բանի մի գոյութիւնը ջնջել չէ, ահա ձեր գիրն, ամենքս եւս կը ճանաչենք, և եթէ յամառիք ուրանալու դրութեան մէջ մնալու, պիտի պարտաորիմ նոյն իսկ Պ. Սիսակի գիմել, ճշմարտութիւնն յայտնել տալու համար անոր:

Կինն հասկցաւ թէ Սիսակ բացարձակ թշնամի դարձած էր իրեն դէմ, քանի որ իւր նամակը թշնամեացը ձեռքը մատնած էր:

— Տիկին, ըսաւ Ներսէս, հայրս իրօք զձեզ պաշտած է մինչեւ ցարդ. բայց կուրօրէն հաւատարով ձեզ, իւր անունն ամեն տեսակ անպատուութեան մատներ է:

Կուս կը կենար ստրտափած կինը:

— Սա ստոյգ է, յարեց Ներսէս, որ զձեզ պաշտելովն հանդերձ եթէ իմանար թէ որպիսի՛ եղանակաւ դորձածած էք ձեր վայելած աղատութիւնը, վայրկեան մ'իսկ զձեզ իւր յարկին ներքեւ չէր պահեր ապահովապէս. որով մէկ վայրկեանի մէջ կը զրկուէիք բոլոր ձեր վայելած պատիւներէն իբր Տիկին Արգարեան ու կենաց մեծութիւններէն:

Տիկինն եւս քան զեւս կ'այլադուռէր, և անձը կը մաչէր, նկատելով խոնարհ վիճակն որում ենթարկուած էր:

— Սակայն, տիկին, ըսաւ Ներսէս, ես հօրս ախարութեանը կ'ուզեմ խնայել, ինչպէս և տղայոցն պատուոյն, վասն զի ընկերութեան մէջ շատ յանցանաց կը ներուի, բաւ է որ արտաքին ցոյցերն ըստ բանականի լաւ պահպանուած լինին. բայց երբ այդ յանցանքն երեւան ելնելով մինչեւ գայթակղութեան կը հասնի յարուցած աղմկովն՝ յայնժամ ընկերութիւնն անխիղճ կերպիւ զգառապարտեալը կը զեղչէ իւր ծոցէն:

Տիկին Արգարեան լաւ գիտէր թէ իւր ամուսնոյն անունն իբր պաշտպանող քօղ կը տարածուէր իւր վրայ :

— Ուստի, Տիկին, ես կը լռեմ ձեր մասին՝ ինչպէս ըսի՝ հօրս և քոյրերուս խնայելու բաղձանօք, զի ձեր յանցանաց մրուրը մինչեւ այն անմեղ էակաց վրայ կրնայ ժայթքել : Բայց եթէ զօրիորդ Արաքսիան, այսինքն իմ նշանածս, համարձակիք երբեք պախարակել և զրպարտել, յայնժամ ես եւս ի սէր այն արգարութեան զոր կը պարտիմ Արաքսիայի, պէտք է որ զամեն ինչ հօրս յայտնեմ. զի ներելի չէ անմեղն Արաքսիա աւելի երկար ժամանակ անիրաւուի իւր պատուոյ մասին :

Տիկին Արգարեան իմացաւ թէ անագին սպառնալիք մի կը գոռար իւր գլխուն վերեւ, որուն գործարութեան վրայօք բնաւ չէր տարակուսեր. զի լաւ կը ճանաչէր Ներսէսի բնաւորութիւնն : Ուստի խորամանկ եղանակաւ մի ըսաւ .

— Քանի որ դուք զօրիորդ Արաքսիան ընտրեցիք իբր ձեր ապագայ կենսակիցն, ոչ այլ ինչ կը մնայ ինձ եթէ ոչ ճանաչել զինքն այժմէն իբր մեր ընտանեաց անդամ :


— Բայց այս եւս կ'աւելցնեմ որ ես կը պահանջեմ թէ այսուհետեւ մեր անունն առաւել արժանապատուութեամբ կրէք, զի ես պիտի հսկեմ ձեր վրայ, ըսաւ Ներսէս :

Տիկին Արգարեան կը լռէր թէեւ, բայց հողին կը գոռար :

— Հօրս տակաւին ոչինչ խօսած եմ ամուսնական խորհրդոցս մասին, ըսաւ երիտասարդը, զի կը փախաքէի նախ ընդ ձեզ խօսակցել այս նիւթին վրայ :

Բայց անմիջապէս որ նա եկեղեցիէն վերադառնայ, պիտի խնդրեմ իւր օրհնութիւնը :

Նոյն միջոցին Պ. Արգարեանի ձայնը լսուելով Ներսէս դուրս ելաւ Տիկինոջ խուցէն, գնաց հօրն ընդ առաջ, և ընդունուեցաւ անկէ՝ ինչպէս միշտ, բիրաւ լի բղանակաւ :



Պ Լ Ո Ւ Խ Ե Պ

Պ. Արգարեան այցելութեան կ'երթար իւր հիւանդ զստեր, ուստի առաջարկեց Ներսէսի՝ հետն երթալու. բայց սա ըսաւ իւր ծնողին .

— Հա՛յր իմ նախ կը փախաքիմ ընդ քեզ առանձին խօսակցութիւն մ'ունենալ, և յետոյ միատեղ կ'երթանք Աղաւնին տեսնելու, եթէ կամիս :

— Լաւ, որդեա՛կս, պատասխանեց Պ. Արգարեան, և մտնելով անմիջապէս առաջին խուցին մէջ՝ որդին և տեսնեցաւ անոր՝ սենեկին դուռը գոցեց, ու հանդէպ ծնողին նստելով ըսաւ .

— Հայր իմ, գիտեմ որ դու իմ երջանկութեանս նախանձախնդիր ես :

— Այդ բանին տարակոյս կա՞յ միթէ :

— Ուստի գտած լինելով այն էակը զոր ինձ բողդակից ընելով կրնամ երջանկութիւնս ապահովել, կուզամ խնդրել ի քէն քու հաճութիւնդ ամուսնութեանս մասին :

— Ո՞վ է ընտրելիդ, տեսնենք, վստահ եմ որ անվայել ընտրութիւն մ'ըրած չես :

— Օրիորդ Արաքսիան է :

— Գո՞հ եմ ընտրութենէդ, որդեա՛կ, զի ըստ ամենայնի լաւ աղջիկ մ'է այն, ըսաւ հայրը ցնծութեամբ :

— Ուրեմն հաճէ տալ ինձ քու օրհնութիւնդ :

— Որդեա՛կ , երջանիկ լեր բոլոր կենացդ մէջ , և հաստատուէ նոր ընտանեօրդ հանդերձ :

— Այսինքն , հա՛յր , իմ սիրելիացս թուոյն վրայ ուրիշ սիրելի մ'ալ պիտի աւելցնեմ :

— Երթանք հաղորդել այդ լուրը Տիկին Արգարեանի նաև , ըսաւ Պ. Արգարեան , տեսակ մի անհանգըստութեամբ , զի գիտէր արդէն որ իւր կինը ընտանգաստաւոր չէր նմա :

— Աւելորդ է , հա՛յր , զի երբ իմացայ քու բացակայութիւնդ՝ փութացի նմա հաղորդել այդ լուրն :

— Որդեա՛կ , կ'երեւայ որ սրտիդ անհամբերութիւնը խիստ մեծ էր , ըսաւ , բարի հայրը , խնդարով : Բայց ի՞նչ ըսաւ կինս , հարցուց ապա նա անձկութեամբ :

— Իւր գոհունակութիւնն յայտնեց :

Թէև Պ. Արգարեան զարմացաւ գոհունակութեան բառը լսելով , բայց շատ ուրախ եղաւ , նկատելով թէ կինը ընտա իւր տնայնութիւնը չէր յայտնած :

Տիկին Արգարեան ծածկած էր ամեն ինչ որ Արաքսի վերաբերութիւն ունէր , այսու հանդերձ անոր հետ և անոր վրայօք խօսելու եղանակէն յայտնի էր որ ինք մասնաւոր հակակրութիւն մ'ունէր անոր դէմ :

Ներսէս յայնժամ հարցուց հօրը թէ երբ կրնար նշանածն իրեն ներկայացնել , ձեռքն համբուրելու համար :

Պ. Արգարեան խիստ ուրախ էր իրօք իւր որդւոյն մօտայլուտ ամուսնութեան վրայ , հետեւապէս ըսաւ .

— Որդեա՛կ , բեր զայն երբ կ'ուզես , և որչափ չուտ որ ուզես :

— Յոտամ , հա՛յր , որ պիտի ներես միանգամայն օրիորդին մօր ուղեկցիլ իրեն . իսկ հայրն անկարող է չարժելու :

— Անտարակոյս , թող գայ :

— Արդ , եթէ կամիս , երթանք , հա՛յր , քոյրերուս այցելելու :

— Եւ միանգամայն մասնակից ընել զանոնք մեր ուրախութեան , զի գիտեմ թէ որքա՛ն կը սիրէին զԱրաքսիան , և որչա՛փ իրենց գէմքը սղով վարագուրուած էր երբ մեկնեցաւ նա աստի : Երանի՛ թէ չմեկնէր , զուցէ Աղաւնիս չէր հիւանդանար :

Այս խօսքերն ըսելով զգածեալ հայրը խոր հոտաչանք մ'արձակեց :

Մտան աղջկանց խուցը : Աղաւնի վերջին աստիճան տկար կը թուէր անկողնոյն մէջ :

— Որդեակք իմ , ըսաւ հայրը , կը բերեմ ձեզ լուր մի որով խիստ գո՞հ պիտի լինիք , վստահ եմ :

— Ապահովապէս , գոչեց Արմինէ , մեր եղբօր խոստացած լուրն է :

Իսկ Աղաւնի բերանարաց , բայց անխօս կ'սպասէր որ եղելութիւնն իմանայ :

— Կ'աւետեմ ձեզ ուրեմն թէ ձեր սիրեցեալ օրիորդ Արաքսիան մեր հարսը պիտի լինի :

— Ինչպէ՞ս , ըսաւ Աղաւնին ապշած , արդեօք մեր եղբօր հետ պիտի ամուսնանայ :

— Այո՛ , զուակս :

Արմինէ գոհունակութեան սաստկութենէն սկսաւ ստանուլ և ձեռքերն իրարու բարախել : Իսկ Աղաւնի

Քիչ մնաց նուազէր , ուրախութեան սաստկութենէն :

— Չբա՛ի՞ քե՛զ , Ներսէ՛ս , որ յանչափս պիտի ուրախանան զուկներս :

Երիտասարդին սիրտն յուզուեցաւ այդ անկեղծ սիրոյ արտայայտութեան առջև , մինչև իսկ աչքերը խոնաւելու աստիճան :

Երբ Աղաւնին հանդարտեցաւ , յայնժամ հարցուց

իւր եղբօրը թէ ե՞րբ ուրեմն պիտի տեսնէր զիւր սիրելի օրիորդը :

— Հոս և որչափ շուտ կարելի է , քուրի՛կս :

— Աշխատէ եղբա՛յրս , որ այսօր իսկ գայ , զի թուի ինձ որ եթէ տեսնեմ զինքը՝ պիտի բժշկուիմ :

— Ուրեմն , ըսաւ Պ. Աբղարեան , գնա՛ Ներսէս և նշանածդ հոս բեր , թող Աղաւնիիս կամքը շուտ կատարուի :

Մեծ ստիպման հարկ չկար մղելու համար զՆերսէս այդպիսի յանձնարարութեամբ մի վաղ զբաղելու : Ուստի մեկնեցաւ , որչափ կարելի էր ընդ փոյթ վերագառնալու խոստմամբ :

Գ Լ Ո Ւ Խ Կ Ե .

Ներսէս ընթացաւ վերատին ի տուն Տիկին Հարթմանեանի , և փութաց զամեն ինչ մասնաւորաբար հարդրելու Արաքսիայի : Օրիորդին ուրախութեան չափը լի էր կարծես : Բայց յիշելով որ Տիկին Հարթմանեան չէր ճանաչեր զերթասարդը , խնդրեց որ ներկայացնէ զինքն Տիկնոջ , և Ներսէս ոչ միայն ընդունեց այդ խիստ բնական առաջարկն , այլ մանաւանդ հարկաւոր համարեց զայն :

Տիկին Հարթմանեան գոհունակութիւն յայտնել զՆերսէս տեսնելով , և մեծ գովութեամբ խօսեցաւ Արաքսիայի վրայօք , ու բոլոր ուրախութիւնն յայտնեց յաջողութեամբ պսակուելուն վրայ օրիորդին սէրը , զի , կը յարէր , Արաքսիա թշուառագոյն անձն եղած էր ինքը զինքն լքեալ կարծելով :

Ներսէս իւր բոլոր շնորհակալիքը յայտնելէն վերջն այն համակրութեան համար զոր ցոյց տուած էր Արաք-

սիայի , հրաման խնդրեց Տիկնոջմէ ազատել զօրիորդն այն բարոյական երաշխաւորութենէն զոր ստանձնած էր Սիսակի գործին մէջ , և երեք հարիւր ոսկի հանելով զբպանէն մատոյց զանոնք Տիկնոջ :

Ապա խնդրեց տան տիրուհիէն որ նոյն վայրկենէն արձակէ զԱրաքսիան , որպէս զի նա կարողանայ պարսպիլ մօտալուտ ամուսնութեան պատրաստութեամբ :

Տիկինը գրկացը մէջ առնելով նշանած աղջիկը , սրտին վրայ սեղմեց , ըսելով .

— Բարեկամուհի՛ս , քեզ կը պարտիմ շատ մի սփոփիչ վայրկեաններ , քու բացակայութիւնդ ինձ համար զառն կորուստ մի պիտի լինի , բայց ես սիրով կը համակերպիմ այդ հարկին , բաւ է որ դու երջանիկ լինիս :

Արաքսիա՝ իւր կողմանէ եղանդապին շնորհակալութեամբ՝ յայտնեց երախտագիտութիւն այն ամեն վայելած համակրանաց ցոյցերուն համար , յետ որոյ արտօրնօք պատրաստուելով կառք մը նստաւ Ներսէսի հետ և հասաւ իւր ծնողաց տունը :

Երբ վարսամեանք տեսան իրենց դուստրը Ներսէսին հետ , անբացատրելի ուրախութիւն մ'զգացին , զի թէև Արաքսիա ոչինչ ըսած էր , իրենք կասկած ունէին թէ գուցէ անախորժ գէպք մը պատահած էր աղջկան և Ներսէսին միջև , և թէ Արաքսիա կը ծածկէր զայդ՝ ինչպէս լի իրենց :

Երբ մանաւանդ իմացաւ Տիկին վարսամեան թէ ինքն հրաւիրեալ էր նոյն միջոցին իսկ ի տուն Պ. Աբղարեանի , կարծես թէ պիտի յիմարէր կինն ուրախութեան սաստկութենէն . զիւր ամուսին կ'ողողէր իսկ նոյն միջոցին ամեն տեսակ հոգատարութեամբ և քաղցր բառերով :

Կը մտածէր Տիկինը թէ վերջապէս պիտի հոչակէր ի լուր աշխարհի ստացած փեսայացուն: Եւ մինչ գնաց պատրաստուելու զոնէ քիչ մի վայելուչ զգեստիւք ներկայանալու համար Արզարեան ընտանեաց, կը խորհէր թէ Երանեանք սրջափ արդեօք պիտի նախանձէին հաստատելով տարբերութիւնն ընդ մէջ իրենց բոկոտն փեսայուին և իւր հարուստ Ներսէսին:

Իսկ Արաքսիա կը վայելէր իւր երջանկութիւնը լիաթոք, և վարանմամբ կը մտածէր թէ իւր սիրելի Վարդանոյշ իրեն չափ բարեբաստիկ պիտի լինէ՞ր արդեօք:

Բնաւ որ չէր սնուցաներ սրտին մէջ Տիկին Արզարեանի համար. ինքն երջանիկ էր և ամենուն կը ներէր:

Երեքը միատեղ կառք մտնելով հասան Արզարեանց տունը:

Գ Լ Ո Ւ Խ Կ Զ.

Երբ Տիկին Վարսամեան տեսաւ ճոխութիւնը տան Արզարեանց, հիացաւ, սքանչացաւ, կարծես զոհունակութենէն փքացաւ, մտածելով թէ իւր աղջիկն այդ պիտի փարթամ ընտանեաց պիտի վերաբերէր:

Պ. Արզարեանի ընդունելութիւնը Տիկին Վարսամեանի մասին խիստ վայելուչ էր. իսկ զԱրաքսիան հայրական գորովով ընդունեց, զի այդ միջոցին իւր ամուսինը տակաւին ներկայ չէր սենեակին մէջ:

Բայց Տիկին Արզարեանի հիւրընկալութիւնը ցուրտ էր և անտարբեր: Իսկ Արաքսիա ամենայն արժանա-

պատուութեամբ և պարզութեամբ վարուեցաւ այն կնոջ հետ:

Ներսէս թուէր երջանիկ, երջանիկ՝ բառին ընդարձակագոյն ասմամբ: Մերթ ընդ մերթ գազտագողի ակնարկ մի կ'արձակէր Տիկին Արզարեանի, և վերահասու կը լինէր թէ այդ կինը զիւր հոգին կը կրծէր, և թէ չարաչար կը տանջուէր այն հարկին առջեւ ճանաչելու զԱրաքսիան իոր ընտանեաց անդամ: Փոխանակ բացարձակ նախատալից ձեւերով՝ պարտական էր հանդուրժել անոր ներկայութեան իսկ զոր հոգով կ'ատէր, և այդ պարտականութիւնը զինքը կը մահացնէր:

Արաքսիա հանգիստ չէր իւր նստած տեղը. աչքերովն և շարժմամբը կը յայտնէր թէ անձկութիւն մ'ունէր, թէ բան մի կ'որոնէր:

Ներսէս որ կը հետամտէր ամեն շարժմանց օրիորդին՝ հասկցաւ թէ նա անհամբեր էր այցելելու փոքրիկ հիւանդին:

Հետևապէս քանի մի բառ փոփոսուէն վերջը հօրը ականջին՝ սա օրիորդին առաջարկեց որ երթայ տղայոց սենեակը:

Հազիւ հազ տեսաւ Աղանի զԱրաքսիան և իսկույն հալած թեւերը բանալով ընդգրկեց զայն անհուն կարօտիւ:

Աղջիկն ուրախութեան սաստկութենէն սակաւ ինչ մնասուեցաւ, և չէր ուզեր թողուլ ձեռքն իւր վաղևմի վարժուհւոյն զոր շարունակ շրթանցը կը տանէր, մինչ միւս ձեռքն Արմինէ բռնած էր և իւր ուրախութիւնն սրտտալից կերպիւ կը յայտնէր:

Արաքսիա կատարելապէս զգածուած հիւանդին անտանելի կերպարանափոխութենէն, անկարող էր սկզբան բառ մ'արտասանելու, և կը շտտանար գաղջիկն սրտին վրայ սեղմելով. բայց սպա երբ յուզումն հանդարտեցաւ սակաւիկ մի, ըսաւ.

— Կը գտնեմ զքեզ ուրեմն վերստին, ո՞վ իմ Աղաւնիս, դո՛ւ որ պատճառ ես այս վայրկենիս վայելած երջանկութեանս :

Տղան չէր հասկնար թէ աղջիկը կ'ակնարկէր այն հրաւերին զոր ըրած էր եղբօրն՝ Պոլիս գալու, և առանց ոչինչ հարցնելու կը վայելէր տեսութիւնն իւր սիրելի օրիորդին :

— Դու իմ հա՞րսս պիտի լինիս ուրեմն, ըսաւ Աղաւնի սրտազին եղանակաւ : Մեզք որ զքեզ վայելելու ժամանակ չպիտի ունենամ, մրմնջեց զգայուն աղջիկն, մինչդեռ լսիկ արտասուք աչերէն վար կը զլորէին :

— Ո՛հ, մի՛ այդպէս խօսիր, ըսաւ Արաքսիս, յուզմամբ մի զոր հաղիւ կարող էր ծածկել. դու պիտի ապրիս երկարօրէն :

Ներսէս Արաքսիայի ետեւը կեցած, աչերը կը սրբէր առանց բնաւ բառ մ'արտասանելու. իսկ Արմինէ մտածելով թէ մօտալուտ հարսանիք մի պիտի ունենային, կ'ուրախանար իւր յարուցած աղմկին մէջ, ու չէր լսեր հողեմաչ խօսքերն իւր քրոջ :

Պ. Արզարեան հիւանդին խուցը մտաւ, առաջնորդելով Տիկին Վարսամեանի, մինչ Տիկին Արզարեան կը վերագտնար իւր սենեակը՝ կրած գառնութիւնը մարտելու համար հոն առանձինն :

Աղաւնի ժպտեցաւ Տիկին Վարսամեանի, և սպասօրը գառնալցով ըսաւ .

— Հայր իմ, որչա՛փ երջանիկ եմ տեսնելով իմ սիրեցեալ օրիորդս, կարծես թէ կը վերածնիմ :

— Աղջիկս, պատասխանեց հայրը, կը խնդրենք օրիորդէն որ ամեն օր գայ զքեզ տեսնէ : Յուսամ թէ Տիկին Վարսամեան ընդդիմութիւն չընէր առ այդ :

— Ընդհակառակն, շատ ուրախ կը լինիմ, պա-

պատասխանեց Տիկինն որ չգիտէր ինչպէս վարուիլ, այդպիսի մեծափարթամ անձի համակրութիւնը վայելելու համար :

— Ուստի պիտի գա՞ք, օրիորդ, հարցուց Աղաւնին, աղերսալից նայուածք մի արձակելով անոր :

— Կը տարակուսի՞ս արդեօք, հրեշտակս :

— Ո՛հ, շնորհակալ եմ, օրիորդ, ըսաւ հիւանդը նուազեալ ձայնիւ :

— Հայր, ձայնեց անուշ աղջիկն, խնդիրք մի եւս :

— Խօսէ՛, գաւա՛կս :

— Կը փափաքէի, որ մօտ օրերս կատարուի ամուսնութիւնն իմ եղբօրս, մի մերժեր ինձ զայդ :

— Լաւ, գաւա՛կս, պատասխանեց հայրը, մինչեւ հողւոյն խորը վիշտ զգալով, զի կարծեց հասկնալ թէ աղջիկն կ'իմանար իւր մօտալուտ վերջն :

— Ուրեմն, կը խոստանա՞ս, հարցուց :

— Քեզ ի՛նչ կրնամ մերժել :

— Շնորհակալ եմ, հայրիկս :

— Բայց, ըսաւ Պ. Արզարեան, չբուեր քեզ իմ հաւանութիւնս միայն : Պէտք է որ ստանաս նաեւ Տիկին Վարսամեանի, ինչպէս և երկու նշանածներուն հաւանութիւնը :

Եւ այս երկու վերջնոց նայելով՝ մասնաւոր ժըպտով մի ժպտեցաւ : Տիկին Վարսամեան որ ամեն ժամանակ պատրաստ էր համակարծիք գտնուելու իւր ապագայ մեծատուն խնամւոյն հետ, այս պարագայիս մէջ մանաւանդ փութաց իւր հաւանութիւնը կրկին եռանդեամբ տալու :

Ներսէսի հաճութիւնն ստանալը դժուար ինչ չէր, քանի որ իւր նիւթական վիճակը տարիէ մ'ի վեր խիստ զգալապէս բարւոքած էր, մանաւանդ իւր մէկ մօրեղբօրը թողած հարստութիւնը ժառանգելով, ուստի

այդ ամուսնութիւնն անմիջապէս կատարելու բնաւ արդեւք չկար:

Իսկ Արաքսիայի հաւանութիւնն ստանալու ոչ ոք փոյթ ըրաւ: Կոյսը կարծես ոսկեղօծ երազ մի կը տեսնէր որ զիւր գէմք կը պայծառացնէր:

Որոշուեցաւ հետեւապէս որ երկու շաբաթէն տեղի ունենայ ամուսնութիւնը Ներսէսի, թէև այդ կարճ պայմանաժամն իսկ երկար կը թուէր Ադանիի: Բայց Արաքսիայի մասին այլ և այլ պատրաստութիւններ զգեստուց վերաբերեալ, ժամանակի կը կարօտէին, որով դժուար ինչ էր, առաւել փութացնել հարսնիքը:

Աւելորդ է ըսել թէ Ներսէս ունեցաւ մատակարարութեան հոգն օժտին իւր սիրեցեալ Արաքսիայի:

Վերջապէս Տիկին Վարսամեան իւր աղջկան հետ հրաժեշտ առաւ Արգարեան ընտանիքէն: Եւ երբ մեկնելու վայրկենին ուղեց բարեւել գտան տիկինն՝ սա իւր սենակը փակուած էր, և պատասխան զրկեց՝ թէ զլիսուն ցաւուն պատճառաւ անկարող էր թողուլ զիւր խօսց:

Տիկին Արգարեան կը մխիթարուէր մինչև վերջին վայրկեանն իսկ իւր Վանտարբերութիւնն յայտնելով Արաքսիայի և իւր մօր՝ և չարաչար կը յուզուէր այն առ երեւոյթս քաղաքավարական ընդունելութեան համար զոր հարկադրեցաւ ի գործ գնել:



Փ Լ Ո Ւ Խ Ա Ե Է.

Սիսակ արձակած էր զՊ. Գրիգոր՝ անոր դրամական պահանջմանց գործադրութեամբն, որով ինքզինքն ազատ համարելով ամեն վտանգէ, ջանագիր էր անձնուիրութեամբն ջնջելու յանձին Վարդանոյշի ամեն հեռք ցաւոց:

Սա եւս կը վայելէր իւր երջանկութիւնն, երկու տասարդական սիրալիր հողոց մի բոլոր սաստկութեամբը:

Բայց երբ իմացաւ նշանախօսութիւնն իւր մտերմին ընդ Ներսէսի, ուրախութիւնը չափ չունեցաւ:

Արդէն փոքրիկ կասկած մ'ունեցած էր թէ Արաքսիա անտարբեր չէր երիտասարդ Արգարեանի նկատմամբ, բայց երբեք չէր ուզած կասկածն ստուգել որ և իցէ հարցմամբ, քանի որ իւր բարեկամուհին կատարեալ լսութիւն պահած էր այդ մասին:

Արաքսիա ներկայացուց Վարդանոյշի զիւր խօսնայր, որ շուտով հին բարեկամի մը կերպարանքն առաւ անոր առջև:

Օր մի երբ երեքը սենեկի մէջ առանձին նստած էին, Երանեանի դուտը կը պատմէր իւր ցաւագին արկածներն որ զինք մահուան դուռը տարած էին, առանց սակայն ընաւ Տիկին Արգարեանի անուշը տալու ի պատիւ Ներսէսի հետ ունեցած ազգականութեան, և կը յարէր թէ ինք անօրէնութիւն ունեցած էր կասկածելու նոյն իսկ Արաքսիայէն, երբ սա ժրջան կերպիւ աշխատած էր զիւր երջանկութիւնն ապահովելու Սիսակի հետ:

— Գուցէ պարագայ մի կայ որ կ'անդիտանաք, ըսաւ Ներսէս:

— Ո՞րն է, հարցուց Վարդանոյշ:

— Այն է իմ դժբախտութիւնս՝ ձեզ նման զո՞ն լի-
նելով նուաաստ և անօրէն մեքենայութեանց :

— Ի՞նչ կերպիւ , հարցուց Վարդանոյշ :

— Ճիշդ , իբր ձեզ , այս առաքինի Արաքսիայէն
կասկածելով :

— Խնդրեմ , բացատրութիւն տուէք :

— Մինչ Արաքսիա ձեզ ի նպաստ կը գործէր՝ այն
անձն իսկ որ ձեզ ուղեց թշնամանք հասցնել , յաջող-
եցաւ հաւատացնելու ինձ եւս թէ Արաքսիա գրու-
ածան մ'էր , և թէ կը մատնէր մեր սէրը , զՊ. Սիսակ
սիրելով : Եւ ես յայնժամ յուսահատութեանս սաստ-
կութենէն թողուցի Պոլիս և հեռացայ :

— Ո՞վ իմ պաշտելի Արաքսիա , գոչեց Վարդանոյշ ,
և սակայն երբեք գանգատ մի չըրիր , ոչինչ իմացու-
ցիր ինձ , և առանձին հանգուրժեցիր ցաւոցդ սաստ-
կութեան :

— Ի՞նչ հարկ կար , Վարդանոյշ , զքեզ եւս տան-
ջելու , ըսաւ Արաքսիա :

— Բայց ես էի հեղինակը տառապանացդ , որով և
բնական էր որ մաս մ'ունենայի իմ յառաջ բերած
դժբաղդութենէս :

— Կը տեսնե՞ս , Վարդանոյշ , որ ամեն ինչ յա-
ջողութեամբ վերջացաւ :

— Ինչպէ՞ս արդեօք պիտի կարենամ փոխարինել
բոլոր բարիքդ ինձ նկատմամբ :

— Պարզապէս զիս սիրելովդ :

— Արաքսի'աս , նոր բան ստացած չպիտի լինիս :
Բայց ցաւօք կը նկատեմ որ զիս միշտ անարժան կը
համարիս գաղտնիքէդ բաժին մ'ունենալու :

— Ի՞նչ բանի կ'ակնարկես , բարեկամուհի'ս :

— Պ. Ներսէսի խօսելու եղանակէն իմացայ որ ձեր
սիրահարութիւնը նոր բան չէ :

— Իրօք տարուան մի խնդիր է :

— Եւ սակայն զամեն ինչ ծածկեցիր ինձմէ :

— Յանցանքն իմս չէ , ես խիղճ ըրի այդպէս գոր-
ծելու , հաւատա՛ ինձ :

— Ուրե՛մն :

— Օրի՛որդ , յարեց Ներսէս , ե՛ս խնդրած էի զայդ
Արաքսիայէն , և եթէ յանցաւոր մի կայ , ես եմ :

— Կ'ըմբռնեմ . զիս չճանաչելով , ձեր վստահու-
թեան արժանի չդատեցիք զիս :

— Ես ալ իմ պատճառներս ունէի , օրի՛որդ , այդ
լուծութիւնը խնդրելու համար :

— Սակայն նկատեցէք որ եթէ այնչափ խորհրդա-
պահ չլինէիք , թէ՛ ձեզ և թէ՛ ինձ մեծ աղէտներ կը
խնայէիք :

— Առաւելութիւնն ունեցանք , օրիորդ , վէպի
նիւթ մի հայթայթելու , ըսաւ Ներսէս ժպտելով :

— Սակայն հաւատացէք , պարո՛ն , թէ նախա-
պատիւ կը համարէի որ ուրիշներ մատակարարէին

վէպի նիւթը քան թէ մենք : Աւելի հեշտին է հան-
դիսական լինել քան թէ տխուր թատերախաղի մի
հերոսները :

— Կենաց բեմին վրայ ոչ ոք կրնայ գիտնալ թէ
ո՞րդերը խաղալու սահմանեալ է , օրի՛որդ :

— Ինչպէս , զոր օրինակ մենք՝ մինչ ողբերգակ
էինք , յաջողեցանք այդ դերը լաւագուցնին հետ փո-
խելու , ըսաւ Վարդանոյշ :

— Մաղթելով սակայն , յարեց Արաքսիա խնդա-
լով , որ կատակերգութեամբ չվերջանան մեր դերերը :

Մինչ այսպէս կը խօսէին , սպասաւորը նամակ մի
բերաւ տուաւ Վարդանոյշի :

Կոյսը բացաւ և երբ կը կարդար զայն , զէմքն այ-
լագուցնեցաւ :

— Ի՞նչ կայ, հարցուց Արաքսիա այլայլելով :

— Ա՛ն և կարգա՛, ըստ յուզեալ աղջիկը :

Յետ կարգալուծն՝ Արաքսիա գոչեց .

— Ճիշդ անա կատակերգութիւնն սրում կ'ակնարկէի :

— Ի՞նչ կը նշանակէ Սիսակի վերագրուած յանցանքը, հարցուց Վարդանոյշ անձկութեամբ :

— Չե՞ս հասկնար թէ վերջին ճիգն է թշնամոյն՝ զբեզ նպատակիդ հնացնելու համար, բարեկամուհի՛ս :

— Եւ ես արդեօք չե՞մ կարող իմանալ պարունակութիւնը նամակին, ըստ Ներսէս, կատակի եղանակաւ :

— Ահաասիկ թուղթն, ա՛ն, կարգա՛, գոչեց Արաքսիա իւր նշանածին, նշանակութեամբ լինայուածք մը ուղղելով :

Ներսէս աչքէ անցնելով զայն խնդաց, և արհամարհանօք նամակը մէկ կողմ նետելով, ըստ .

— Յայտնի է որ ձեր թշնամին վերջին ճգամբ ուզած է ձեր ձեռքէն յափշտակել զՊ. Սիսակ, ապօրինաւոր յարարերութիւններ վերագրելով գաւառացի աղջկան մի հետ :

— Բայց այսպիսի զրպարտութիւն մի ի՞նչպէս կրնայ լինել, հարցուց Վարդանոյշ, տագնապալից եղանակաւ :

— Շատ շուտ մոռցաք, օրիս՛րդ, թէ նոյնչափ ծանր մեղադրանաց ենթարկեցաւ նոյն իսկ Արաքսիան, որ առաքինութեան տիպար է :

— Այսինքն կ'ուզէք ըսել թէ Սիսակ օրինակելի անձ մի լինելէ հետո՞ւ է :

— Գրտաւորութիւնս այդ ըսել չէր Պ. Սիսակի մասին : Սակայն պատասխանեմ ձեր խօսքերուն :

Ընկերութիւնը չի խնդրեր այր մարչէն այն առաքինութիւնը զոր կը պահանջէ ձեր սեռէն, օրիս՛րդ :

— Այսինքն, ըստ Արաքսիա, ընկերութիւնը կը պահանջէ մեզմէ անարատ սիրտ և անարատ կեանք, փոխադարձաբար ընդունելու համար աղարտեալ հոգի և բարք :

— Իրաւացի է ցատումդ, Արաքսի՛ա, ըստ Ներսէս, այդ անհաւասարութեան առջեւ :

— Եւ սակայն այդ խոստովանութեամբդ հանդերձ, դո՛ւ առաջինն ես նախանձախնդիր լինելու այրական իրաւանցդ, Ներսէ՛ս :

— Տե՛ս ինչ է : Գարաւոր նախապաշարմամբ լըցուած են մեր սիրտն ու միտքը : Թէեւ բանականութիւնն և արդարութիւնը կը բողոքեն, հանդերձ այսու դժուարին է արմատախիլ ընել մէկէն ի մէկ այն գաղափարներն որով անած ենք :

— Վասն զի անոնք նպատաւոր են ձեզ :

— Գուցէ մարդս որչափ ալ արդարասէր լինի, միշտ անձնասէր կը մնայ :

— Ո՛ւր է ուրեմն ձեր արդարասիրտութիւնը, քանի որ անձնասիրտութիւնը զայն կը չեզոքացնէ :

Վարդանոյշի միտքը թուէր այլուր լինել : Չայդ դիտելով Արաքսիա ըստ .

— Վարդանոյշ, ազահով եմ որ միտքդ այդ անձոտնի նամակաւ զբաղեալ է :

— Չգիտեմ ինչո՞ւ, պատասխանեց նա, մակարերելովս հանդերձ որ նոր դաւ մ'է ինձ դէմ, յուզուեցայ առաւել քան զոր կ'ուզէի :

Արաքսիա թուղթն անոր ձեռքէն անելով կտոր կտոր ըրաւ, ըսելով .

— Խոստացի՛ր ոչինչ ըսել Սիսակի այս նամակին վրայօք :

— Կը խոստանամ քանի որ կը խնդրես, բարեկամուհիս :

Յայնժամ Ներսէս այսպէս խօսեցաւ :

— Օրիորդ, շատ դիւրին էր ինձ ապահովապէս երեւան հանել թէ այս նամակն ուղղեալ է ձեզ անօրէն անձէն որ հեղինակած է բոլոր մեր անցեալ աղէտքը : Բայց ի՞նչ օգուտ որ այդ անարժան անձն հօրս անունը կը կրէ, և թէ աւելոր հայրս ողջ ողջ սպաննել է, եթէ իմացնեմ իրեն կնոջը բոլոր անպատիւ գործերը :

— Ո՛չ, ո՛չ, գոչեց Վարդանոյշ, ի՞նչ պէտք այլոց թշուառութիւն պատճառել մեր շահուց համար :

— Մանաւանդ ինչ որ կը վերաբերի Տիկին Արգարեանի գործոց՝ պէտք է գաղտնի մնայ՝ Արգարեան անունն պատիւը պահելու համար, յարեց Արաքսիա :

— Կը փախաքէի այդ կնոջ հատուցանել ըրած չարիքը թէ՛ ամուսնոյն անունն և թէ՛ զաւակացը պատուոյն. բայց անգործութեան դատապարտեալ եմ զօրաւոր նկատմանց առջեւ, ըսաւ Ներսէս վշտանալով :

— Ներսէս, գոչեց Արաքսիա, թո՛ղ որ իրերն իրենց ընթացքը շարունակեն, վստահ եղիր որ ամեն ոք իւր սերմանածը կը քաղէ :

Նոյն միջոցին Սիրակ սենեկէն ներս մտնելով ուրախ և զուարթ կերպարանօք՝ ցրուեց Վարդանոյշի տխրութեան յետին հետքերն. և երբեք երիտասարդուհին ապագային մէջ չգիտցաւ թէ այդ դաւառական գայթակղական դէպքը տեղի ունեցած էր իրօք :

Տիկին Արգարեան՝ հեղինակն առ Վարդանոյշ ուղղեալ նամակին՝ փորձեց վերջին փորձով մի թունաւորել աղջկան երանութիւնը, եթէ նոյն իսկ չյաջողէ՛լ անոր ամուսնութեան արգելք կանգնելով ձեռք անցնել վերստին զիւր սիրահար :

Գ Լ Ո Ւ Ք Կ Ը.

Կիրակի առաւօտ մ'էր Պ. Արգարեանի տան սպասարաց մէջ մեծ շարժում մի կար, զի երեկոյեան ճաշի և սրակի պատրաստութիւն կը լինէր :

Տիկին Արգարեան իւր սենեկին մէջ փակուած, գանաթեանը սաստկութենէն արտասուք կը թափէր : Ուրեմն այդ անպիտան վարժուհին Արգարեանց անունը պիտի կրէր հակառակ բոլոր ճգանցն, և մանաւանդ պատկի հանդէսը տանը մէջ պիտի կատարուէր, կը խորհէր նա :

Արգարեան այդ հանդէսը. բայց ի՞նչ կրնար առարկել երբ Ներսէս իւր ամուսնոյն գտական էր վերջապէս, և երբ յանձին երիտասարդին ահաւոր թշնամի մ'անէր. մանաւանդ որ իւր գրած նամակն առ Սիրակ Ներսէսի ձեռաց մէջ էր : Ուրեմն եթէ բացարձակ ընդհիմութիւն մ'ընէր, իւր ամուսնոյն որդին կրնար իրեն զէմ զէմ վրէժը լուծել, զինքը թշնամանելով հօրն առջեւ վերջապէս : Մինչև նոյն միջոցին լիակատար իշջեւ վերջապէս : Մինչև նոյն միջոցին վրայ : Բայց Պ. Խանութիւն ունեցած էր ամուսնոյն վրայ : Բայց Պ. Արգարեան զինքն իբր կին առաքինի նկատած էր միշտ, և տիկինն լաւ համոզուած էր որ եթէ իւր անցեալ ամեն ընթացից տեղեկանար իւր այրն, ինքն ոչ միայն իւր բոլոր ազգեցութիւնը կը կորսնցէր մէկ վայրկեանի մէջ, այլ ծանրադպէս հետեւանքներ եւս յատուց կուգային : Ուստի հարկ էր տիկնոջ լսել, և թոյլ տալ որ սրակի խոչնորդը տան մէջ իսկ տեղի ունենայ :

Որչա՛փ անտանելի է վրէժխնդիր և չար հպուստի հաստատել զիւր զինաթափ լինելն : Վրէժխնդրուածութիւնը զնոյն վեր ի վայր կը տապալէ, կը յուզէ, կը փոթորկէ, կը մղէ գործելու. և երբ այդ բուսն տրա-

Արաքսիա կամ Վարժուհին

մազրու թեան մէջ լինելով հոգին յանկարծ արդելք կը
դանէ սաստիկ կրիցը դորձադրու թեան մասին, կը
խորտի յայնմամ ինքզինքը կրծելու համար միայն, և
անկարողութեան առջև վհատելով կը յուսահատի:

Մտածեց ներսէսի մօրուն որ հիւանդութիւն մը
առարկելով ներկայ չգտնուի ո՛չ հացկերոյթի և ո՛չ ալ
պակի արարողութեան: Բայց ապա իւր սրտմտու-
թիւնն և նախանձը զԱրաքսիան ներկայեցին աչացն
իրը զշտոյ նոյն զիշերուան: Թողօ՛ւյ ուրեմն ամեն
յազթանակ իւր ստիսին, ո՛չ, ո՛չ:

Ազեց գտնէ իւր ներկայութեամբը թունաւորել
հարսին ուրախութիւնը, զի վասնօգի կինը կը կարծէր
թէ երիտասարդութիւն զինքը բոլոր գօրութեամբն ատե-
լու էր: Չէր կրնար ըմբօնել թէ ազնիւ սրտերու հա-
մար հաճոյք մի կայ անչիշաչարութեան մէջ, քանի որ
ամեն ոք ուրիշներն ինքզինքէն կը գատէ և չկրնար
հասկնալ ինչ որ ինքը չզգար:

Ուրեմն այս գաղափարէն սղեւորեալ, ելաւ տեղէն
Տիկին Արգարեան, և զարգարուեցաւ անբացատրելի
չքեզութեամբ գարգուց և ազամանդից, ջանադիր լինե-
լով նսեմացնել զիւր ստիս բացարձակ առաւելու-
թեամբ իւր պերճանաց:

Երեկոյեան զէմ հասաւ Վարսամեան բնտանիքն
Արգարեանց տունը: Հարսը շրայուցիչ գեղեցկութեամբ
կը փայլէր սպիտակ հարսանեաց զգեստուց և պարզու-
թեանը մէջ: Չայց հաստատելով ասն տիկինը՝ շըր-
թունքները կրծեց, ու չորս կողմը նայեցաւ հարսին
ըրաձ տարւորութիւնն իմանալու համար. կատղելով
հաստատեց թէ ամենքն հիացման մէջ էին:

Հանդիսականաց թիւր խիտ սահմանաւոր էր
Ազաւնիի հիւանդութեան պատճառաւ, զի սրբեմէր
հայրը կը փախաքէր որդւոյն միայն հանգէսը առնել:

առանց միւսին որ և է անհանգստութիւն պատ-
ճառելու:

Ազաւնի երկայն նստարանի մէջ տարածուած էր
սպիտակ զգեստներով, և թուէր լինել մօտայում հար-
սընցուն մահուան իւր դալուկ և հայած աշտերայն՝
որոնց վրայ տխուր գուարթութիւն մի կը տարածէին
իւր գոճ բայց նուազուն աչերը:

Պ. Վարսամեան անգամայոյժ վիճակին պատճառաւ
նոյնպէս հանդիստ բազմոցի վրայ նստած էր. խեղճ
մարդն աչաց խոնարիլը կ'զգար շարունակ՝ հաստատե-
լով այց շրայուցիչ բազդն որուն հասած էր գուտորը:

Տիկին Արգարեան իւր գրացի երիտասարդին գառ-
նալով, ըսաւ.

— Կարծես թէ հիւանդանոցի մէջ ենք, անկո-
զինները միայն պակաս են:

— Սակայն, ըսաւ երիտասարդը, ձեր չքեզու-
թիւնն և հարսին սքանչելի շնորհքները կը բաւեն յի-
շեցնելու համար մեզ թէ գեղեցիկ երեկոյթի մը հրա-
ւիրեալ ենք:

Տան տիկինը դառնացաւ, նկատելով թէ Արաքսիա
մեծ մաս մ'ունէր այց սղաքալից խօսքերէն, և վրէժն
ստաւ, անոր մայրը ծաղրելով.

— Հարսին մօրը նայեցէք, ըսաւ, կարծես թէ
պիտի պայթի, այնչափ ուտեր է զօճանակութենէն,
ծաղրելի՛ կին:

Երիտասարդը ժպտեցաւ ասանց բան մ'ըսելու:

— Բայց, յարեց ասն տիկինն, հարկաւ այց չուն
և անչուք կնոջ համար երազ կը թուի մեր բնտանեաց
հետ խնամութիւն ունենալը, մտածեցէք որ իւր
գուտորը թոշակաւոր աղջիկ մ'էր տանս մէջ, վար-
ժունի մ'էր վերջապէս:

Երիտասարդը չուտ հասկցաւ թէ տիկինը դառնու-

թեան ներդրածութեամբ կը խօսէր, և քանի որ ներսէս իւր բարեկամն էր, զգուշացաւ վարսամեան ընտանեաց նկատմամբ աննպաստ գառնորութիւն մ'ընելէ՝ տիկնոջ հասնելի լինելու նպատակաւ, ուստի հեռացաւ անկէ ամենայն վայելչութեամբ:

Կոչունքը տեղի ունեցաւ ոչ զարմանալի կենդանութեամբ: Աղանի յաւալի վիճակն ինչպէս և տան տիկնոջ զժգոճ կերպարանքն կարծես ամենուն վրա՛ խոր ներդրածեցին: Բայց ոչինչ կրնար խափանել հարսին ու փեսին հանդարտ գոհունակութիւնը:


Յաւարտ պակին՝ ամենքը զրուեցան, և ներսէս զիւր նորապսակ հարսը տարաւ առժամանակեաց կերպիւ պատրաստուած փոքրիկ վայելուչ յարկին մէջ, մինչեւ որ պատրաստուէր իրեն յատկացեալ գեղեցիկ տունն ուր պիտի փոխադրուէր կնոջը ծնողաց հետ, ինչպէս խոստացած էր արդէն ի սկզբան:

Նորապսակ Տիկին ներսէսի լուսաւոր կրանութիւնը ստաւեր մ'ունեցաւ նոյն գիշեր, նախ Աղանիին անյոյս հիւանդութեան պատճառաւ, յետոյ վարդանոյշի և Տիկին Հարթմանեանի բացակայութեան համար:

Վարդանոյշ բնականապէս մուտք չէր կրնար ունենալ այդ տան մէջ: Իսկ Տիկին Հարթմանեան չէր ուզեր երբեք վերարեթիւն ունենալ Տիկին Արքարեանի հետ, որուն անպատիւ գործոց ու մեքենայութեանց տեղեկացաւ, երբ Արաքսիան ինքզինքը բուրովին լքեալ համարելով ներսէսէն, պարտաւորեցաւ զամեն ինչ պատմել անոր, և կրկին առթով մնացածն իմացաւ, փրկելու համար զՍխտակ գաւառացւոյն ձեռքէն, երբ իւր գործակցութիւնն հարկաւոր եղաւ:

Երկու շաբաթ վերջն յետ ամուսնութեան ներսէսի, տեղի ունեցաւ Սխտակի պսակադրութեան հանդէսը:

Արաքսիայի և վարդանոյշի երջանկութիւնը չէր ճանաչեր: Վերջապէս երկուքն ևս փոթորիկներու մէջէն անցնելէ յետոյ կը հասնէին սիրոյ նաւահանդիսոր:



Ք Լ Ա Ի Ծ Կ Պ.

Ինչպէս խոստացած էր հարսն Պ. Արգարեանի, ամեն օր կ'երթար այցելութեան Աղանիին՝ որուն վիճակն օր աւուր աւելի սպառնացող դիրք մի կ'առնէր:

Արաքսիա կը հսկէր անոր վրայ իբր ճշմարիտ մօր մի խանդաղատանօք, մինչ բուն մայրը կը շտտանար, օրուան մէջ քանի մ'այցելութիւններ ընելով:

Ամիս մ'անցած էր հարսանեաց օրէն ի վեր, երբ յանկարծ Աղանիի վրայ չարագուշակ վճռողական նշաններ երևան ելան:

Օր մի մանաւանդ մօտայլուտ վախճանի մի տարակոյս չէր մնար. ներսէսի հարսը փոքրիկ տատապելոյն մահճին քով նստած էր, ձեռքին մէջ ունենալով մանկան ձեռքը, երբ զգաց թէ հիւանդը իւր ձեռքը կը սեղմէր տակաւին իրեն մնացած ուժովը:

Արաքսիա տեղէն ելնելով ծոցեաց ղեպի հիւանդն, հարցնելու համար եթէ բանի մի կը կարօտէր:

— Ո՛չ, ըսաւ, բան չեմ ուզեր, միայն թէ երջանիկ եմ որ դու պիտի աչերս զօրցես փոխանակ գերման վարժուհւոյն զոր՝ զատով կը խոստովանիմ, երբեք չկարողացայ սիրել, թէև ջանացի իրեն համակրելու: Նոյն միջոցին սենեկին մէկ անկիւնը նստած, ձե-

ապարծով մի կ'զբաղէր ծեր սղջիկն, Արմինէի վրայ
հակելով միշտ զօրավարի սովորական ճշգուծեամբ:

— Միրեղեա՛ւ հարսս, մրմնջեց հիւանդը, փափա-
քելի էր ինձ ազատ լինել ամեն օտար ներկայութենէ,
և շրջապատուիլ միայն իմ սիրեղեալներէս:

— Լա՛ւ, սիրո՛ւն Ազաւնիս, բոտ կամացդ ամեն
ինչ կը անօրինեմ:

Եւ զայս ըսելով Արաքսիա խնդրեց վարժուհիէն
որ ուրիշ սենեկի մէջ վարէ իւր հակոզութեան պաշ-
տօնն Արմինէի վրայ, առարկելով թէ հիւանդն յու-
թեան պէտք ունէր:

Մինչ Արմինէ սենեկէն դուրս ելնելու կը պաա-
րաստուէր գերմանուհւոյն հետ, Ազաւնի քովը կանչեց
իւր քոյրն և ամենայն գործով կրկին և կրկին ան-
գամ համբուրելն վերջն՝ արձակեց զայն արտասուա-
լից աչօք:

Գիտեց զայց նորապսակ կինն և իւր աչքէն հո-
տած լեզի չիթը սրբեց:

Երբ ասանձին մնաց հիւանդն իւր հարսին հետ,
բսաւ.

- Ետե՛՛, որպէս զի ձայնդ լսեմ:
- Ի՞նչ կ'ուզես որ պատմեմ քեզ, Ազաւնի՛ս:
- Փոյթ չէ ինձ այդ, բաւ է որ ձայնդ լսեմ:
- Համբուրեց զնա մանկամարդ կինն ի պատասխանի:
- Ահա վերջապէս մեռնելու ժամանակ ունեցայ

մեծագոյն մխիթարութիւնը, այն է՝ զքեզ և եղբայրս
տեսնել:

— Ի՞նչո՞ւ, հրեշտակս, այդպիսի տխուր գաղա-
փարներ ունիս:

- Ի՞նչ օգուտ ճշմարտութեան ասջեւ կոյր լինել:
- Չե՞ս մտածեր որ հոգիս կը յօշտես:
- Լաւագոյն է սերնմն որ նախապատրաստուիս

մեր բաժանման:

— Մ'չ երբեք, պիտի ապրիս, որպէս զի վայե-
լինք զքեզ:

— Կը փափաքէի ապրիլ, այո՛, բայց ի՞նչ օգուտ:
Եթէ ապրէի, ոչ եւս քեզմէ ու եղբորմէս բամբուկու
կը դատապարտուէի, և ոչ եւս զուրկ կը մնայի ի սի-
րոյ, զի հաստատ ինձ որ հոգիս չի կրնար անանիլ
ստանց գորովոյ:

— Վասն զի գու՛ իրր ամեն աղնիւ հոգի, բարձր
անունդի կը կարօտէիր:

— Յաւարի է ինձ թողուլ իմ պատուական հայրս,
զի գիտեմ որ սաստիկ պիտի զղածուի: Սիրած է զիս
միշտ և ես երախտապարա եմ անոր, բայց հօր մի
զգացումը չի բաւեր լեցնելու սիրտենչ սրտի մի
պէտքը այն պատճառաւ որ յարաբերութիւններն քիչ
են ընդ մէջ հօր և իւր զակին, առաջնոյն հանապա-
գօրեայ բացակայութեանց և գործոց պատճառաւ:

Կանգ առաւ փափուկ էակն, խօսելէն յոգնելով, և
ապա շարունակեց նորէն՝ քիչ մ'ոյժ ստանալով.

— Մայրս ջանացած է մեր ամեն պէտքերն հո-
գայ, չնորհակալ եմ իրմէ: Իսկ քուրիկս իմ սակա-
ւամեայ սիրուն ընկերոհիս եղած է: Գիտեմ որ ես
իրեն դատարկութիւն մի պիտի թողում, զոր կը խընդ-
բեմ քեզմէ լեցնել քու սիրովդ ու խնամքովդ:

— Վաստ'ի լեր, պաշտելի Ազաւնիս, բսաւ Արաք-
սիա հեծկրտանօք:

— Արդ, բսաւ հիւանդն, թող տուր ինձ համբու-
րել զքեզ, կրկին և կրկին անգամ յանձնելով քեզ՝
էղբօրս երջանկութիւնն և հօրս ախարութիւնը:

Բացաւ թեւերն և Արաքսիա գլուխը անոր կուրծ-
քին վրայ դնելով սկսաւ լայ յորդաստաւ:

— Կը փափաքէի տեսնել իմ հայրս, բայց ծանր
պիտի թուէր անոր այս իմ վերջին վայրկեանս տեսա-

բանը : Մասով նմա բոլոր իմ սէրս , ինչպէս և քուրիկիս բոլոր սիրտս :

— Ո՛ւր է եղբայրս , հարցուց , նա բաւական ուժով է , մահուանս վկայ լինելու համար :

Նոյն միջոցին Ներսէս սենեկէն ներս կը մտնէր :

— Մօտեցի՛ր ինձ , եղբայրս սիրեցեալ : Քեզ կը յանձնեմ իմ հարսս երջանիկ ընելու պարտքը . սիրէ՛ զայն ինձ համար եւս , և յիշեցէ՛ք զիս երբեմն , զի գձեզ չատ սիրած եմ :

Ներսէս գրկեց իւր փոքրիկ քոյրն և համբուրեց զայն մեծ գորովանօք , առանց կարենալ պատասխանելու :

— Եղբայրս , խոտտացիր խնդրածս :

— Կր խոտտանամ , ըսաւ երիտասարդը , հազիւ իմանալի եղանակաւ՝ այնչափ մեծ էր իւր յուզումը :

Նոյն միջոցին ներս՝ մտաւ նաեւ Տիկին Արգարեան որ ի նշան սպոյ իւր սենեկին մէջ փակուած էր :

Օրհասական ազդիկն տեսնելով գմայրն , ըսաւ .

— Մա՛յր , տուր ինձ համբուրելի քու ձեռքդ , զի՛ վերջին մնաս բարեաւն է այս :

Տիկինը մօտեցաւ իւր որդւոյն՝ համբուրեց ինքն եւս գնա , և պատճառելով իւր ջղածգութիւնը՝ քաշուեցաւ զարձեալ իւր սենեկին մէջ , իբր թէ անկարող ականատես լինելու որդւոյն մահուան . ուստի ազդկանք վերջին վայրկեաններուն վրայ հսկելու պաշտօնն անտարբերներու թողուց ըստ իւր բացատրութեան , որք կ'ըսէր , ոչինչ զգալով՝ կարող են այդպիսի տխուր պաշտօններ լաւ կատարել :

Յետին ճգամբ մի հիւանդն իմացուց Արաքսիային որ իրեն մօտենայ : Մանկամարդ կիինը տղուն զլուրտ վերցնելով թեւին վրայ կօթնցուց . օրհասական էակն

նայեցաւ իւր եղբօր նուազուն աչօք , յետին նայուածք մ'ալ ուղղեց առ Արաքսիա և ապա շունչն աւանդեց :

Արաքսիա սրտին վրայ կը սեղմէր տակաւին էակն այն որ ոչ եւս էր , այնքան զայն կորուսած լինելու զաղափարն անհնարին կը թուէր իրեն :

Բայց Ներսէս հետացնելով զայն այդ սրբազան նըշխարէն , ցոյց տուաւ ողորմելի հայրն որ կը մօտենար և որ ամեն մխիթարութեան կը կարօտէր :

Երեքը միատեղ խառնեցին իրենց սուգը , ևրեքը միատեղ լացին այն անշունչ մարմնոյն վրայ , երբ Արմինէ սենեկէն ներս վազելով տղու մի անզուտպցաւով եկաւ ողբալու իւր քրոջն , իւր ընկերուհւոյն վրայ :

Մայրը միայն հեռու էր , զի կ'առարկէր իւր զգացման անչափութիւնն , և իւր անկարողութիւնը հանդիսական լինելու իւր զաւկին անշունչ մարմնոյն :

Գ Լ Ո Ւ Ն Ծ Է .

Արաքսիա Բերայի բնորեւագոյն փողոցի գեղեցիկ տուներէն միոյն մէջ հաստատուած էր , հետն ունենալով հայրն ու մայրը : Կը վայելէր ոչ միայն անբիծ և մշտատեւ սիրոյ ամուսնական երանութիւնն , այլ այն անբացատրելի գոհունակութիւնն ունէր , նկատելով թէ իւր ծնողաց կեանքը թշուառութեանէ ի բարեբաւտութիւն փոխարկած էր :

Վարդանոյշ եւս երջանիկ էր Սիսակին հետ . մեր երիտասարդն թէեւ ամեն ջանք կ'ընէր իրբեւ զՆերսէս հաւատարիմ ամուսին լինելու , այլ մերթ ընդ մերթ շեղելով անձին գծած առաքինութեան խիստ ընթացքէն՝ խիղճ ընելու ստիթներ կ'ունենար :

Ստույգ է որ անընդհատ շարաբերութիւններ ունե-
նալի կ'զգուշանար, բայց արանց չ'նորհուած թայլ-
տուութիւններէն զեղծանելով՝ իւր քմահաճ բնութեան
նոր սնունդներ կը հայթայթէր:

Սակայն իւր ի պատիւ խոստովանելու ենք որ լա-
աշխատաւոր մ'եղաւ որով կարողացաւ մէկ տարուան
միջոցի մէջ երեք հարիւր սկիւղ պարտքը հատու-
ցանել Ներսէսին:

Տիկին Արզարեան իւր սեւ զգեստաց չ'նորհի ջա-
նաց վշտահար ձեւ մ'առնուլ և որսալ վերստին զՍի-
սակ երբ առիթն գնա առ ինքն կը բերէր, բայց վար-
դանայչի ամուսինը քաջութիւն ունեցաւ նեոու կենա-
լու այդ կնոջմէն:

Տարի մի բոլորած էր ամուսնութեան օրէն ի վեր
Ներսէսի, և եթէ մեր երիտասարդ փեսին ամեն ինչ
կը չաջողէր ոչ միայն բարոյական այլ և նիւթական
կենաց մասին, նոյնպէս չէր Պ. Արզարեանի նկատմամբ:

Տիկին Արզարեանի շուայութիւնքը բաւական մեծ
հարուած էին ամուսնոյն հարստութեան: Եթէ սա հա-
մարձակէր մերթ րնոյ մերթ գլխողութիւն ընել կնոջն՝
չափազանցութեամբ մխտամ գրամոց մասին, կինն ան-
միջապէս կտատայի ձեւ մ'առնելով կը պատասխանէր
որ եթէ հասակաւոր մարդու մի նեա ամուսնանալու
յանձնատու եղած էր՝ գոնէ ճոխութեամբ ապրելու փո-
խարինութիւնն ունենալու էր:

Մարդը կը լսէր հասաչելով և կը ջանար նոր միջոց-
ներ գտնել կնոջը պահանջմանց համոնելու համար: Հե-
տեւապէս իւր սովորական զգուշաւորութիւնը մէկ
կողմ թողլով յանդուգն ձեռնարկներ ըրաւ, յատկա-
ցաւ ևս քան ևս, այնպէս որ Փարիզու սեղանաու-
բաց ազևաալի կորստեան առթիւ ինքն ևս եղաւ

այդ անթիւ զոհերուն մին, և մէկ աւուր մէջ կորոյս
հարստութիւնը, հարկադրուելով բոլոր իւր գոյքերն
վաճառել, կրած վնասները գոցելու համար:

Ներսէս փութաց յօգնութիւն իւր հօր, յայտնելով
նմա թէ արամադրութեանը ներքեւ կը գնէր բոլոր
իւր ունեցածն:

Արաքսիա ոչ միայն սրտովն կը ցաւէր անբոջը
կրած անպարճանելի կորստեան վրայ, այլ կ'ողբար
անկեղծապէս իւր ստիսին վրայ՝ այլինքն Տիկին Ար-
զարեանի, մտածելով թէ խիստ անտանելի վիճակ մ'էր
մեծամիտ կնոջ մի համար բնկերական սանդուղէն
վար գլորելը:

Տիկին Արզարեան որ վարժ էր խնկարկու և չո-
ղբորթ անձանց բանակ մի տեսնելու չարջն ու ամեն
պատիւ և մեծարանք ընդունելու՝ ցորչափ հարստ էր
և ճոխ կեանք կը վարէր, տեսաւ յանկարճ այդ բա-
նակին անյայտ լինելն իրը մոզական իմն գօրութեամբ:

Կանայք առ երեսս չէին դադրել ներբողել նորա
վարքը, մինչ ներքնապէս շատերը կը հատաչէին մին-
չեւ նոյն ժամանակ Տիկին Արզարեանի վարած կենաց
և անոր ստացած պատիւներուն վրայ:

Արք բարձրագոյ հոչակեցին թէ նա շուայու-
թեամբը պատճառ եղած էր ամուսնոյն զժրխատ-
թեան, և ամեն այր օգուտ քողեց այդ առիթն իւր կնոջ
խնայողութեան և անտեսապիտութեան գաւ մի տալու
համար:

Իսկ երիտասարդք որք պաշտպի դեր խողացած
էին՝ արհամարհանօք կը խօսէին անոր թեթեւ բա-
րուց վրայօք և սմանք կը պարծենային նաեւ անտեղի
չ'նորհքներ վայելած լինելուն վրայ: Քանի մի խրոջ-
մտաւոր և պատուաւոր անձինք միայն որք իրօք յա-
տաջացած էին Տիկնոջ մտերմութեան մէջ, լուս կեցան:

և եթէ զինքը չպաշտպանեցին՝ զէթ լսելու քաջութիւնն ունեցան մեղադրանաց այդ բնոյճանութեամբն մէջ:

Տիկին Արգարեանի գոռոզութիւնը թէև սաստկապէս հարուածեցաւ, այսու հանդերձ ոչինչ յայտնեց և այդ պարսաւանաց աշխարհին մէջ մնաց միշտ սէր և գոռոզ:

Պ. Արգարեան իւր ունեցած ձախորդութենէն քանի մ'ամիս վերջը յանկարծամահ կը լինէր, պարտքեր թողլով:

Ներսէս ներկայանալով իւր մօրուն, իմացուց անոր որ թէ՛ իրեն և թէ՛ կնոջը պարտքն էլ ամենայն կերպիւ նպաստել հօրն այրուոյն և անոր զաւկին. ուստի խնդրեց այրի տիկնոջմէն որ յայտն իրեն թէ ի՞նչ եղանակաւ պէտք էին վարուիլ իրեն նկատմամբ:

Պ. Արգարեանի այրին պատասխանեց թէ քան որ իրենք յօժարամիտ էին օգնելու իւր դասեր՝ իրեն կը թողուր բոլորովին անոր հոգատարութիւնը, ինչ ձախորդութիւնն յոռաջ բերելով:

— Այսինքն, Տիկին, բաւ Ներսէս, կուտաք ինչ հօր մի կատարեալ իրաւունքը քրոջս վրայ, մինչև վերջը:

— Կատարելաւէս, քանի որ կը կամիք, և լուտ զաւկիս, բաւ կեղծաւոր եղանակաւ մի:

— Զայդ կ'ընդունիմ, զի վստահ եմ որ կինս մի խնամք պիտի մատակարարէ նմա, բաւ Ներսէս:

— Ես եւս գիտնալով զայդ, աղջիկս ձեզ կը վրաժարուի, բաւ կեղծաւոր հրէջ մայրը:

— Բայց ձեզի համար ի՞նչ կրնանք բնել, հացուց երիտասարդն, եղանակաւ մի որ կը յայտնէր կ'ուզէր անյիշաչար լինել հօրն այրուոյն համար:

— Ես, պատասխանեց, գոռոզ կինն, ոչինչ կրնամ ընդունիլ ձեզմէ, երբ մտածեմ թէ ձեր կինն իմ քուս վարժուհի էր:

— Եւ սակայն խորհեցէք միանգամայն թէ այն անձն որ չամաչեց աշխատելու՝ գնահատուեցաւ ինձմէ. հասաւ մինչև ձեր երբեմն վայելած բնկերային բարձրութեան աստիճանին: Կը տեսնէք ուրեմն թէ աշխատիլը կ'ազնուացնէ: Տիկին, լաւ համոզուեցէք այդ բանին վրայ:

— Եթէ աշխատութիւնը կ'ազնուացնէ բաւ ձեզ, զեղեցկութիւնը թաղաւորել կուտայ, և ես կ'ուզեմ թաղաւորել:

— Սա տարբերութեամբ, Տիկին, որ աշխատութիւնը կը բարձրացնէ մինչև ցվերջ կենաց, մինչդեռ ձերինն նման գահակալութիւնը նուստու և ամօթաւից անկմամբ կը վերջանայ:

Վ Ե Ր Զ



ՄԱՆՕՆ ԼԵՍՔՕ

ԵՒ ԳԱՄԵԼԻԱԶԱՐԴ ԿԻՆԸ

Այեքանոր Տիւմա Արզին իր աշխարհանշակ վկայր — «Գամեղիազարդ Կինը» — գրած ստեղծ ներշնչուած է Ապէ Բրէվոյի գլուխ գործոցը եղող «Մաննոն Լեւրօ» հրաշայլի վկայէն: Այսօր, մեր մէջ, շատ քիչեր միայն կարողացած չեն «Գամեղիազարդ Կինը»: Բայց աւելի յաւրմտնելու համար Տիւմայի գեղանշին է յուզիչ վկայր, պէտք է նախապէս կարդայ «Մաննոն Լեւրօ»ն, գրական ճշմարիտ վայելք մը ունենալու համար:

Արեւնէ, փաթեղէ՛ք օգտուելի առիթէն, քանի որ «Մաննոն Լեւրօ» սպասելու վրայ է, ու գինը պիտի կրկնապատկուի: Բոլոր ծանօթ գրատուններուն մէջ կը գտնուի: Գինն է 100 դրոշ: Կեղքոնաակցի՝ Հայկ Կոչկարեան Գրատուն, Սալթան Համամ, Պարտիզ պաննան Խան, Թիւ 2:

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

ԹԱՊԱՔԵԱՐ ՓԻԼԻՔ ԱՂԲՈՐ ԱՂԶԻԿՏԵՐ

ՉԱՏԵԱԿԱՆ ՆՈՒԷՐԸ ԵՒ ՀԱՐՄՆԻՔԸ

ԻՆՉՊԷՍ ՆԱԵԻ

ԵՐԱՆՈՍ ԱՂԲԱՐ ԿԱՄ ԹԱՊԱՔԵԱՐ ՎԱՐՃԱՊԵՏԸ

ՄԻԱՍԻՆ ԿԱԶՄՈՒԱԾ ԳԻՆ 25 ՂՐՈՒՇ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԿԸ ՅԱՆԶՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻՑԱՎ ԳԻՐՔԵՐԸ

	ԳՐԾ.
ԾԻԱԾԱՆ ՆՈՐ ՏԱՂԵՐ — Մ. Մեծարեեց	100
ՍԻՐԱՆՈՅՇ — Ս. Տիւապ	150
ԱՐԱՔՍԻԱ կամ ՎԱՐՃՈՒՇԻՆ — Ս. Տիւապ	100
ՄԱՆՕՆ-ԼԵՍՔՕ — Ապէ Բրէվօ	100
ԿԱՐՄԻՐ ԱՐԳՌՈՅ ԵՐԳՈՒՄԸ — Բ. Տիւրերայլ	150
ՄԱՏՆԻԶԸ — Ե. Օսեան	50
ՖՕՄԱ ԿՈՐՏԻՅՅ — Մախիմ Կարփի	100
ՏՐԻԼԻՔ — Տրամ 5 արար	30
ԳԻՏՈՒԹԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՆ	50
ԴԱՏԱՍ. ԽՈՐՀՈՒՐԳԻՆ ԱՌՋԵԻ — Ե. Օսեան	50
ԳԵՐԱՍԱՆՈՒՇԻՆ — Լ. Շանր	50
ԵՐԱԶԱՀԱՆ	25
ԵՐԲ ԱՅԼԵՒ ՉԵՆ ՍԻՐԵՐ — Զապէլ Եսայեան	75
ԶԻԿՕՄԱՌ — Աւիարեաննշակ Աւազակապէս	50
ԹԱՂԱԿԱՆԻՆ ԿՆԻԿԸ — Ե. Օսեան	130
ԻՆՉ ԿԸՍԵՆ ՉԵՌՔԻ ԳԾԵՐԸ — Թօլայեան	50
ԼԵՊԼԵՊԻՃԻ ԹԵՐԱՐԱՐԱՆ Ուրախ օրերէք	30
ԽԱԶԱԳՈՂԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ — Ռաֆիի	140
ԽՂՃՄՏԱՆՔԻ ՉԱՅՆԵՐ — Գրիգոր Զօհրայ	50
ԿԵԱՆՔԸ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է — Գրիգոր Զօհրայ	50
ԿԻՆԸ — Լեւոն Շանր	25
ՀԱՅ ՏՕՆ ՔԻՇՈՒԸ	50
ՀՈՍ ԲԱՐԱԿ ՄԵԿ ԳԻՆ Է — Կալուօ	50

ՀԱՄԱԷ ՇԱՔԱՐ ԾԱՄԷ — Եր. Թօլալեան	50
ՀԱՄԱՐՈՒՆ ՎՐԱՅ. — Լեւոն Շանթ	40
ՄԻՔԷԻ ՍԻՐԱՐԿԱՆՆԵՐԸ — Եր. Օսեան	25
ՄԱՍՍ ՄԷՋՆ Է — Երուանդ Թօլալեան	50
ՄԻԼԻՈՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ, — Մ. Լրպլան	75
ՄԱՅՏԱ. — Սրբուհի Տիւաթ.	75
ՄԻՋՆՈՐԿ ՏԷՐ ՊԱՊԱՆ — Երուանդ Օսեան	130
ՅԻՄԱՐ ԿՈՅՍ — Հ. Պարալլ	60
ՄԵՐԿ ԿԻՆԸ — » » »	60
ՆԻՔ ՔԱՐԹԸՐ (11 պրակ)	220
ՆԱԹ ՓԻՆՔԷՐԹՈՆ (20 պրակ)	200
ՇԷՐԼՕՔՕ ՀՕՄՍ — Արկաձնեւր	40
ՈՍԿԻ ԱՔԱՂԱԳ. — Ռաֆֆի	50
ԱՆՈՒՇ (Պոլեմա) — Յ. Թումանեան	25
ՌԱՄՔՈՒԹԻՆ — Ուիլիեմ Լր Քեօ	50
ՏԱՍԵՐԿՈՒ ՏԱՐԻ ՊՈԼՍԷՆ ԴՈՒՐՍ Ե. Օսեան	130
ՏԱՄՆՕՐԵԱԿ — Պօպալիօ	60
ՏԱՅԸ ԿԱՐԱՊԵՏ կամ Ամերիկահայ փեսացուն	25
ՓՈՅՏԱՄԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ Ուիլիեմ Լր Քեօի	60

Գիմեյ՝ Յ. ԱՔՐԱՀԱՄԵԱՆԻ, Պապր Ալի, Թիւ 43

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է

ՊԱՍԵԼԻԱԶԱՐԴ ԿԻՆԸ



ԳԻՆ 100 ՂՐՈՒՇ — 75 ՍԷՆԹ

ՀՀ Ազգային գրադարան



NL0371020

58.858